891 71
S-99

ԳՐԱԴԱՐԱՆ

ИМ. А. Мясникяна



(1818—1883)

Ի. Ս. ՏՈՒՐԳԵՆԵՎ

891.71
Տ-99
19 NOV 2010

# ՌՈՒԴԻՆ

Ռուսերենից թարգմանեց
Հ. ՍԱՌՈՒԿՅԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1939

24.08.2013
14446
1909

## Ի. Ս. ՏՈՒՐԳԵՆԵՎ

(Մ. Կլեմանի առաջաբանից)

### I

*Իվան Սերգեևիչ Տուրգենևը ծնվել է Օրյոլ քաղաքում 1818 թվականի նոյեմբերի 28-ին ազնվականի ընտանիքում, որը բարձր ազնվականության շարքերում չէր, բայց հարուստ կամ, ինչպես այն ժամանակ էր ասվում, «մեծահողի» կալվածատերերի թվին էր պատկանում։ Նրա մանկության տարիներն անցան օրյոլյան կալվածքում, Սպասկո-Լուտովինովո գյուղում, ազնվականական տան մեջ, որ բնակեցված էր բազմաթիվ սպասավորներով, ձրիակյացներով ու կոմպանյոնուհիներով։ Սրանց բանակը կերպով կառավարում էր զարգացած, կարգացած, բայց խիստ ու կամակոր կալվածատիրուհի Վարվարա Պետրովնան—գրողի մայրը։ Նա մեծացավ «տնային դաստիարակների, շվեյցարացի և գերմանացի ուսուցիչների, տնաբույս վերակացուների ու ճորտ դայակների խնամքի տակ»։*

*Հազար ութհարյուր քսանյոթ թվին ընտանիքը փոխադրվեց Մոսկվա, և ինը տարեկան Տուրգենևին տվին Վեյդենգամերի մասնավոր պանսիոնը, հետո էլ Հայկական ինստիտուտի պանսիոնը։ Այդ պանսիոննե-*

րում նա մնաց մոտ յերկուսուկես տարի, իսկ հետագա ուսումնական պատրաստությունը շարունակեց տնային ուսուցիչների ղեկավարությամբ։ Ազնվականական ընտանեկան փայլուն կրթություն ստանալով, որի սիստեմում առանձնահատուկ ուշադրություն էր դարձվում օտար լեզուներ յուրացնելու և գեղարվեստական կրթության վրա, Տուրգենևը դեռ յերեխա ժամանակ տիրապետում էր ֆրանսերեն, գերմաներեն, հետագայում անգլիերեն խոսակցական լեզուներին. սրա հետ միաժամանակ նաև հիմնավորապես ծանոթացավ օտար կլասիկների աշխատություններին։ Գրողի կենսագրության համար ուշագրավ է զարգացած գրական հետաքրքրության առկայությունը Տուրգենևների ընտանիքում, որ անձնական հարաբերություններ էր պահպանում մի շարք գրականագետների հետ (Վ. Ա. Ժուկովսկի, Մ. Ն. Զագոսկին)։ Տուրգենևի մայրը (նրա հայրը վաղ մեռավ, 1834 թվականին) մոլեռանդ ընթերցասեր էր, և թեպետ նախապատվությունը ֆրանսիական գրականությանն էր տալիս, բայց լավ էր ճանաչում ռուս հեղինակներին — ոչ միայն Սումարոկովին, Լոմոնոսովին, Դերժավինին և Կարամզինին, այլև Ժուկովսկուն, Պուշկինին, Գոգոլին, հետագայում էլ Լերմոնտովին։

Դեռ նույնիսկ տասնուհինգ տարեկան չդարձած՝ Տուրգենևը մտավ Մոսկվայի համալսարանը, շուտով փոխադրվեց Պետերբուրգ, որտեղ 1836 թվականին ավարտեց փիլիսոփայական ֆակուլտետի գրականական բաժանմունքը՝ իբրև «իսկական ուսանող», իսկ մեկ տարուց հետո, կրկնակի քննություններից հետո, կանդիդատի կոչում ստացավ, որ վկայում էր նրա լա-



վագույն գիտական պատրաստության մասին և ծառայության ասպարեզում մեծ արտոնություններ էր տալիս։

Հազար ութ հարյուր յերեսունութ թվականի գարնանը Տուրգենևը ճորտ վերակացուի ուղեկցությամբ գնաց Գերմանիա ուսումն ավարտելու՝ դասախոսություններ լսելով Բեռլինի համալսարանում։ Այդ համալսարանը հեգելյան փիլիսոփայության մշակման և ավանդման կենտրոնատեղին էր համարվում։ Գերմանիայում ընդմիջումներով անցկացրած (1838—1839 և 1840—1841 թթ.) տարիներն առանձնապես նշանակալից յեղան յերիտասարդ Տուրգենևի կենսագրության մեջ։ Դրանց մասին նա «Գրականական հիշողություններում» գրում է. «Յես գլխիվայր ընկա «գերմանական ծովը»... և յերբ վերջապես այնտեղից դուրս յեկա, յես արդեն «արևմտապաշտ» (западник) էի, և այդպիսին մնացի ընդմիշտ»։ Պատրաստվելով պրոֆեսորական գործունեության՝ Տուրգենևը Բեռլինում պատմության և կլասիկ լեզվաբանության (հույն և լատին լեզուներ ու գրականություն) դասախոսություններ էր լսում։ Բայց Տուրգենևի համար այնքան էլ ուշագրավ չէին այս պարապմունքները, և ոչ էլ հիմնական մասնագիտության՝ փիլիսոփայության պարապմունքները. թեպետ հենց հեգելականությունը յուրացնելու ճանապարհին ռուսական ազնվականական ազատամտության տեսաբաններն իրենց աշխարհայացքը տարբեր կերպով էին ձևակերպում։ Տուրգենևի համար այդ բոլորից ավելի կարևոր հանդիսացավ Բեռլինի ռուս ուսանողական գաղութի անդամների հետ մոտենալը։

Դեկաբրիստների ապստամբությունը ջախջա-

քննելուն հաջորդած խոր ռեակցիայի շրջանի ռուս հասարակական զարգացման պատմության մեջ մեծ դեր խաղացին փիլիսոփայական խմբակները, վորոնք իրենց գործունեությունը բացառապես Մոսկվայում եյին ծավալել։ Յերեսնական թվականների յերկրորդ կեսում Ն. Վ. Ստանկևիչի խմբակի ծաղկման շրջանն էր, վորի շուրջն եյին խմբվել,—յեթե միայն ամենախոշոր անունները թվենք,—Վ. Գ. Բելինսկին, Մ. Ա. Բակունինը, Տ. Ն. Գրանովսկին, Վ. Պ. Բոտկինը, Կ. Ս. Ակսակովը։ Իր Մոսկվայում յեղած ժամանակ Տուրգենևն այդ խմբակը չմտավ. դրա համար նա շատ էր ջահել, իսկ Ն. Վ. Ստանկևիչի հետ էլ հազիվ էր ծանոթ։ 1840 թվականին այդ խըմբակը քայքայվեց՝ նրա անդամների քաղաքից մեկնելու պատճառով, սակայն նրա մի փոքրիկ խմբակը—Մ. Ա. Բակունինը, Ա. Պ. Յեֆրեմովը, Յա. Մ. Նեվերովը նորից միացան Բեռլինում։ Հենց սրանց էլ 1840/41 թվականին միացավ Տուրգենևը, վոր մի փոքր առաջ մոտեցել էր Ստանկևիչին՝ նրա կյանքի վերջին ամիսներին Հռոմում։ Իր բարեկամների մասին Տուրգենևը իդեալիստական խմբակի նոր անդամի հիացմունքով է արտահայտվում։ Բակունինին ուղղած նամակում նա բացականչում էր. «Վորքա՜ն նշանակալից էր ինձ համար 40-ական թվականը։ Վորքա՜ն բան եմ տեսել 9 ամսում... Հռոմում գտա Ստանկևիչին... Ի՜նչ ագահությամբ եյի լսում նրան, յես, վոր նախորոշված եյի նրա վերջին ընկերը լինելու, վորին նա իր օրինակով, իր կյանքի բանաստեղծականությամբ, իր ճառերով—ճշմարտության սպասարկելու նվիրաբերեց... Ստանկևի՜չ, քե՛զ եմ պարտական յես իմ վերածնունդը. դու ինձ ձեռք մեկնեցիր և ցույց տվիր նպատակը... Յես յեկա Բեռլին և նվիրվեցի գիտությանը—իմ յերկնքում առաջին աստղերը վառվեցին և, վերջապես, ճանաչեցի քեզ, Բակունին... յես վորքան եմ պարտական քեզ, հազիվ թե կարողանամ ասել»։

Դեռ չկազմորոշված, խորասուզված փիլիսոփայական ուսմունքի մեջ, յերիտասարդ Բակունինը Տուրգենևի ամենամոտ բարեկամն էր Բեռլինի համալսարանում։ Հետագայում նրանց ճանապարհները խիստ բաժանվեցին։ Տուրգենևը հեռացավ խռովարար Բակունինից, վորն անցավ ավստրիական և ռուսական բանտերով և սիբիրյան աքսորից փախավ Ամերիկայի վրայով, վորպեսզի ճորտատիրական բարեփոխումներից կողոպտված գյուղացիներին կոչ անի «կացին վերցնելու»։ Սակայն 1840 41 թվականին նրանք անբաժան եյին. ամբողջ օրերով Հեգելի «Տրամաբանության» վրա եյին անցկացնում—բացատրելով ու վերաբացատրելով նրա յուրաքանչյուր. ֆրազը։

Տուրգենևը 1841 թվականին վերադարձավ Ռուսաստան, իսկ հաջորդ գարնանը հաջող կերպով մագիստրոսի քննություն տվեց Պետերբուրգի համալսարանում։ Բայց հենց դրանով էլ նրա գիտական կարյերան վերջացավ։ Գերմանական փիլիսոփայությունը հասկածի տակ առնվեց Նիկոլայի կառավարության կողմից, վորը Բելինսկու օրինակից համոզվել էր, վոր խմբակներում տեղի ունեցող տեսական վեճերը դեպի հասարակական կործանիչ քննադատություն են տանում։ Փիլիսոփայության ամբիոնները ռուսական համալսարաններում լուծարքի յենթարկվեցին։

Հազար ութհարյուր քառասուներկու թվի աշնանը մի ճամբորդություն ես կատարելով դեպի Գերմանիա,

Դրեզդեն՝ հատկապես խորհրդակցելու Բակունինի հետ, վորը կապված էր գերմանական հեղափոխականների հետ ու վճռել էր ընդմիշտ մնալ արտասահմանում, Տուրգենևը միքանի տարի հիմնավորվեց Պետերբուրգում: «Սովորելու և թափառելու տարիները» վերջացել եյին. գործնական աշխատանք պետք էր սկսել:

Տուրգենևը հոգ. տարով ծառայության մտնելու ներքին գործոց մինիստրության մեջ և միքանի ձեվական քաշքշուկներից հետո 1843 թվականի հունիսի 8-ին հաստատվեց վորպես մինիստրի հատուկ գրասենյակի առանձին հանձնարարությունների պաշտոնյա, և այդ պաշտոնում նա մնաց յերկու տարի և հրաժարական տալով՝ դուրս յեկավ 1845 թվականի գարնանը: Ճիշտ այնպես, ինչպես ակադեմիական կարյերան, բյուրոկրատականը ևս անհաջող անցավ դրողի համար. ծառայելու միջադեպը նրա կենսագրության մեջ պատահական բնույթ ունեցավ, իսկ հուշագիրները նրա ծառայության մտնելու փաստը բացատրեցին կամ մոր պնդումներով, կամ նիկոլայան շրջանի առանձնահատուկ պայմաններով, «յերբ ծառայելն ուղղակի անհրաժեշտ էր և առաջ էր գալիս ինքնապաշտպանության զգացումից, մանավանդ այն մարդու համար, վոր գործում էր գրական ասպարեզում»:

Տուրգենևի կենսագրության մեջ 1842/43 թվականի ձմեռը շատ ավելի կարևոր էր այլ տեսակետից: Այդ ձմեռը նա մոտեցավ Վ. Գ. Բելինսկու շուրջը համախմբված Պետերբուրգի գրականագետներին և ծանոթացավ հենց իրեն՝ «մոլեգնած Վիսսարիոնի» հետ, վորը «իրականության հետ հաշտվելու» կարճ ժամանակաշրջանից հետո իր՝ փիլիսոփայության և հասա-



րակական քննադատության հասուն շրջանն էր մտել: Այնուհետև դրան հաջորդող Բելինսկու մտերմությունը Տուրգենևի հետ տարակուսելի չպետք է համարել: Մինչև հիսնական թվականների յերկրորդ կեսը, այսինքն՝ մինչև այն ժամանակը, յերբ ճորտատիրական հարաբերությունների վերացման հարցը դեռ միանգամայն կոնկրետ հողի վրա չէր դրված և չեյին նշված այդ հարցը լուծելու յերկու հնարավոր ճանապարհները: Ռեակցիոն ճորտատիրական իրավակարգի դեմ մղվող ընդհանուր պայքարում տարբեր տարրերը միացել եյին: Հենց դրա համար էլ հնարավոր համարվեց այն հանգամանքը, վոր քառասնական թվականներին վաթսունական թվականների հեղափոխական գյուղացիական դեմոկրատների նախորդ ռադիկալ ռազնոչինեց Բելինսկու բարեկամական խմբակը մտան վոչ միայն Գերցենը, Բակունինը, Նեկրասովը, այլև զգույշ ազնվական ազատամիտ Պ. Վ. Աննենկովը և ամրացող բուրժուազիայի տեսաբան Վ. Պ. Բոտկինը: Բելինսկու շուրջը խմբվեցին ռուս «արևմտապաշտները»,—մի հասարակական խմբավորում, վոր բաղկացած էր բավական տարրեր, դեռևս վերջնականապես չշերտավորված տարրերից, վորոնք կապված եյին իրար հետ՝ ճորտատիրական իրավակարգի հանդեպ շատ կամ քիչ չափով ատողեցին դիրք ունենալով: Համամիտ լինելով և ընդունելով Ռուսաստանի զարգացման անհրաժեշտությունն ու ցանկալիությունն այն ճանապարհով, վորով գնում եյին յեվրոպական պետությունները (թե ինչումն էր կայանում այդ ճանապարհի առանձնահատկությունը, «արևմտապաշտների» տարբեր խմբեր տարբեր կերպով եյին բացատրում), «արևմտապաշտները» իրենց հակադրում եյին «սլա-

վոֆիլներին»—ազնվականության պահպանողական ագրարային խմբակի տեսաբաններին։ «Գերմանական ծովից արևմտապաշտ» դուրս գալով՝ Տուրգենևը, բնականորեն, հարեց Բելինսկու «արևմտապաշտական» խմբակին։

Վերջապես, հենց նույն 1842/43 թվականների ձմեռն էլ սկսվեց Տուրգենևի լուրջ գրական աշխատանքը։

«Записки охотника»-յի հեղինակի գրական հետաքրքրությունն արթնացավ նրանում դեռ համալսարանում յեղած ժամանակ։ Երեսնական թվականներին սկսեց ձևավորվել ռուսական ռեալիզմը, որ նշված էր Պուշկինի վերջին աշխատություններում և զարգացվեց Գոգոլի կողմից, բայց 30-ական թվականները ռուսական ռոմանտիզմի ծաղկման տասնամյակ էին, և ազնվական ընթերցողների լայն շրջաններում Մարլինսկու վեպերը, Բենեդիկտովի ոտանավորները և Կուկոլնիկի դրամաները սիրված էին քան Գոգոլին, քան Պուշկինին։ Իր վերջին հոդվածներից մեկում Տուրգենևը տալիս էր ռուսական ռոմանտիզմի բնութագիրը՝ բանալով նրա սոցիալական բնույթը և նրա մի շարք ներկայացուցիչների ռեակցիոն ուղղությունը, սակայն յերեսնական թվականներին ինքը Տուրգենևը նրա լիակատար իշխանության տակ էր գտնվում։ Տուրգենևի առաջին մանկական ուժեղ գրական տպավորությունը Զագոսկինի «Юрий Милославский» վեպից էր. համալսարանում նա «համբուրում էր մի ժուռնալի փաթեթների վրա դրված Մարլինսկու անունը, Գրանովսկու հետ գրկախառնվելով՝ լաց էր լինում Բենեդիկտովի ոտանավորների գրքույկի վրա»։



Տուրգենևը 1834 թվականի վերջին գրեց „Стено“ պոեմը, որի մեջ, հեղինակի խոստովանությամբ, «մանկական անկարողությամբ ստրկական նմանողություն էր արտահայտվում բայրոնյան Մանֆրեդին», իսկ համալսարանի վերջին կուրսերում մի քանի պոեմներ ևս, որոնք միայն անունով են հայտնի և մոտ հարյուր մանր ոտանավորներ. դրանցից միայն յերկուսը տպագրվեցին։ 1838 թվականի գարնանը «Современник» ամսագրի առաջին գրքույկում, որ հիմնել էր Պուշկինը և նրանից հետո խմբագրում էր Պ. Ա. Պլետնյովը, «---» ստորագրությամբ լույս տեսավ «Вечер» «խոհը».—այս ոտանավորով Տուրգենևը մամուլի մեջ առաջին անգամ հանդես էր գալիս որպես բանաստեղծ։ Երկրորդը «К Венере Медицейской» յերևաց նույն թվականին «Современник»-ի վերջին, չորրորդ գրքում։ Տուրգենևի արտասահման մեկնելով նրա գրական գործունեությունը չդադարեց, բայց մամուլի մեջ նա սակավ էր յերևում—չորս տարվա ընթացքում 1839—1842 թվականը—նա «Отечественныя записки»-ում միայն յերեք ոտանավոր տպագրեց (Տ. Լ., այսինքն «Տուրգենև-Լուտովինով» ստորագրությամբ. հեղինակը միացրել էր հոր և մոր ազգանունների սկզբնատառերը)։ Համառ աշխատանքը և պարբերական հրապարակումները սկսվեցին Գերմանիայից վերադառնալուց և Պետերբուրգում հաստատվելուց հետո։

Տուրգենևը մինչև 1847 թիվը հրապարակ էր գալիս առավելապես որպես բանաստեղծ։ Նա տպագրեց չորս պոեմ—«Параша» (1843), «Разговор» (1844), «Помещик» (1845), «Андрей» (1845) և մոտ յերեք տասնյակ ոտանավորներ։ Տուրգենևի առաջին արձակ գործը,

յեզավ «Андрей Колосов» վիպակը (1844), վորին հաջորդեցին «Три портрета» (1845), «Бреттер» (1846) և «Петушков» (1847) պատմվածքները։ Բացի դրանից Տուրգենևը գրեց «Безденежье» կոմեդիան և մոտ տասը քննադատական հոդվածներ ու գրախոսականներ։ Այս բոլոր աշխատություններում, վորոնք քիչ բացառությամբ հրատարակվեցին «Отечественныя записки»-ում, դեռ գրական աշակերտության կնիք եր դրոշմված։

Հազար ութ հարյուր քառասուն յերկու թվականին Տուրգենևը վաղուց եր ձեռք քաշել ռուսական ռոմանտիզմի ռեակցիոն թևով, կամ ինչպես ինքն եր նրան անվանում՝ «կեղծ վեհապանծ դպրոց»-ով հափշտակվելուց։ Նա այս ռոմանտիզմի դեմ Բելինսկու հետ միասին անհաշտ պայքար եր մղում։ Վորպես գրական հեղինակություններ, վորոնց նշանակությունն իր հոդվածներում բացատրում եր Բելինսկին, մնում եյին Պուշկինը, Գոգոլը և Լերմոնտովը—վերջինս՝ թե վորպես բանաստեղծ, թե վորպես արձակագիր։ Իր ուղու վորոնումներում Տուրգենևը հետևում է այս հեղինակների ռահմանած տրադիցիաներին։ Այսպես, «Разговор» պոեմում, գրված բոլորովին լերմոնտովյան «Մցիրի»-ի բանատողով (стих), ռեֆլեկսիաներով մաշված և աշխատելու անընդունակ ժամանակակից սերունդը հակադրվում է ավագ սերնդին, վոր գիտեր ապրել և պայքարել։ Լերմոնտովի պրոզայից կատարյալ կախում է զգացվում «Три портрета» և «Бреттер» պատմվածքներում։ Գոգոլյան ձևով են գրված «Петушков»-ը և «Безденежье»-ն։ Յեթե այս աշխատություններից միքանիսներն ել Բելինսկու խրախուսիչ գրախոսականին արժանացան, այդ արված եր առավելապես



յերիտասարդ հեղինակին քաջալերելու համար։ Մոսկվայի «արևմտապաշտների» խմբակի անդամներից Վ. Պ. Բոտկինը Տուրգենևի հնգամյա աշխատանքի արդյունքն ավելի զսպված կերպով եր գնահատում.—«Տուրգենևի տաղանդը տարօրինակ վիճակի յե. Նա վոչ գեղարվեստագետ է, վոչ վիպասան։ «Современник»-ի (1847 թ.) № 1-ում տպված նրա վոտանավորները կատարյալ միջակություններ են... Ինձ թվում է, թե Տուրգենևը դեռ իր տաղանդի (յեթե նա ունի) համար ձևեր չի գտել։ Իր կատակ-պոեմներում վորքան ել նրանք աղքատ են բանաստողի ու կատարվածքի վարպետությամբ, նա, իմ կարծիքով, շատ ավելի խելացի ու սրամիտ է, քան իր արձակ գրվածքներում»։

## 2

Հազար ութ հարյուր քառասուն թվականը ռուսական լրագրության պատմության մեջ նշանակալից է դառնում մի կարևոր դեպքով։ Քառասնական թվականների առաջին կեսի ընթացքում Բելինսկու խմբակի գրողները և ինքը Բելինսկին գլխավորապես աշխատակցում եյին «Отечественные записки»-ին, վոր ասես «արևմտապաշտների» հիմնական որգանն եր հանդիսանում։ Ամսագրի գաղափարական ներշնչողը Բելինսկին եր, սակայն հրատարակչի—բուրժուական տիպի գործարար հրատարակչի—Ա. Ա. Կրայեվսկու ագահությունը խանգարում եր «արևմտապաշտների» ազատ աշխատանքին՝ այդ ամսագրում։ Կրայեվսկին, մի կողմից՝ իր հաշիվներն ուներ հասարակական հո-

սանքների հետ, վորոնք յերևան եյին գալիս լրագրության մեջ և ըստ այդմ էլ ուղղություն ստանում բանակռիվները, մյուս կողմից էլ վախենում եր կառավարական խստություններից ու գործադրվող ներքին դաժան գրաքննությունից։ Դրության ծանրությունն ավելի յեր խստանում Կրաեվսկու շահագործողական հակումներից։ Այստեղից էլ առաջ յեկավ «արևմտապաշտների» վաղուց թաքցրած ցանկությունը — սեփական տպագրական օրգան ունենալ։ Այս ձգտումը իրականացավ 1846 թվականի աշնանը, յերբ Ի. Ի. Պանայևը և Ն. Ա. Նեկրասովը Պլետնյովից ձեռք բերին նրա խմբագրության տակ թուլացած «Современник»-ը (Նիկոլաևյան գրաքննության պայմաններում նոր հրատարակություն ունենալ անկարելի յեր), իսկ 1847 թվականի հունվարից ամսագիրն սկսեց լույս տեսնել նոր խմբագրությամբ և Բելինսկու մերձավոր աշխատակցությամբ։ Տուրգենևը, վոր նպաստել եր անցյալ հարյուրամյակի միջին շրջանի ամենաառաջավոր ժուռնալի՝ «Современник»-ի վերանորոգումը կազմակերպելու գործին, 13 տարի աշխատակցում եր նրան, և այդ նրա գրական գործունեության ամենաառաջադեմ և արդյունավետ շրջանը յեղավ գեղարվեստական տեսակետից։ 1847 թվականի «Современник»-ի հենց առաջին գրքից սկսեց տպագրվել «Записки охотника»-յի պատկերների մի ամբողջ սերիա, վորը միանգամից Տուրգենևին ռուս ամենախոշոր ու ամենաժողովրդական գրողների շարքը դասեց։

«Записки охотника»-յի գնահատման գործում, վորի ուսումնասիրությանը նախահեղափոխական քըն-



նադատական գրականությունը բացառիկ ուշադրություն եր նվիրում, առանձին սրությամբ հանդես յեկան ազատամիտ բուրժուական գրականագիտության հրապարակախոսական դիրքորոշումները։ Տասնիններորդ դարի ռուս գրականության վերաբերյալ հատուկ աշխատություններում և ընդհանուր գործերում ազատամիտների և ճորտատիրության կողմնակիցների պայքարի ջատագովման համար Տուրգենևի գիրքը սիրած առիթ եր հանդիսանում. տխրահռչակ պայքար, վորն «ճոխացնելու» և «զարդարելու» գործում լիբերալ և լիբերալ-նարոդնիկական պատմագիրներին դիմակազերծ արեց Լենինը։ Մարքսիստական գրականագիտությունը կործանելով «Записки охотника»-յի շուրջը տասնյակ տարիներով հորինված լեգենդները, բացեց Տուրգենևի պատկերների «ազատագրական» տենդենցների իսկական ակունքներն ու սահմանները։ «Записки охотника»-յում ազատագրորդային տենդենցներ, իհարկե, կան, բայց այդ վոչ նրա համար, վոր Տուրգենևը հրաժարվել եր իր դասակարգի շահերից, այլ հենց նրա համար, վոր նա կատարելապես առողջամիտ կերպով գիտակցում եր նրանց։

Դրան վորպես լուսաբանում ե ծառայում դեռևս հատուկ գրասենյակը ծառայության մտնելուց առաջ Տուրգենևի կազմած պաշտոնական զեկուցագիրը՝ «Մի քանի խոսք ռուսական տնտեսության և ռուս գյուղացու մասին», վորի մեջ ճորտատիրական հարաբերությունների վերացումը պատճառաբանվում ե կալվածատիրական տնտեսության ռացիոնալացման պահանջներով, աճող ազնվականական արդյունաբերության կարիքներով։

«Մոսկվա կալվածատերերն ավելի ու ավելի յեն աշխատում ձևափոխել նախկին հնացած հարաբերությունները։ Նրանք արդեն համոզվել եյին, վոր իրենց գործարանները, չնայելով մարդկանց չնչին աշխատավարձին, չնայելով գործարանային արտադրանքը անփող հայթայթելու հնարավորությանը, քիչ դեպքերում են դիմանում վաճառականների գործարանների մրցմանը։ Նրանք համոզվեցին, վոր բանվորին չվարձատրող աշխատանքը չի վարձատրում նաև աշխատել հարկադրողին»։

Այս դիտողության մեջ կատարյալ պարզությամբ յերևան են գալիս բուրժուական հարաբերությունների շրջանառության մեջ ներգրավված լիբերալ կալվածատիրական ազնվականության «ազատագրական» տենդենցների պատճառները, այն ազնվականության, վորի խաղաղ նկրտումը դեպի կապիտալիզմ խանգարում եյին ճորտատիրական հարաբերությունների կապանքները։ Այս կապանքների անհարմարությունը 1847 թվականի սկզբներին նրա համար եր ավելի ուժեղ զգացվում, վոր 1846 թվականի սովից հետո ընդհանուր համաշխարհային կոնյունկտուրան խթանում, առաջ եր մղում գյուղատնտեսության բարգավաճումը։

Հատկանշական ե, վոր Տուրգենևը, ինչպես և ազատամիտ ազնվականության մյուս տեսաբանները, ճորտատիրական հարաբերությունների բարեփոխումը հասկանում եր միայն վորպես բարեփոխում «վերևից», այդ պատճառով ել նա իր պատկերներում խնամքով խուսափում եր իրեն՝ գյուղացիության հեղափոխական նախաձեռնության մասին ամեն տեսակ ակնարկներից, թեպետ քառասնական թվականների գյուղա-



ցիական խռովությունների և ապստամբությունների խրոնիկան այդ տեսակետից նրան հարուստ նյութ կարող եր մատակարարել։

«Записки охотника»-ն կարդալիս և ուսումնասիրելիս մի հանգամանք պետք ե հաշվի առնել։ Պատկերների հիմնական թիվը (25-ից 22-ը) գրված են 1846 և 1851 թվականների միջև ընկած ժամանակաշրջանում։ «Записки охотника» աշխատությունը գրելիս Տուրգենևը հանդիպեց 1848 թվականին, վորը նշանավոր դարձավ Ֆրանսիայի, Գերմանիայի և Ավստրիայի հեղափոխություններով։ Արևմտա-յեվրոպական դեպքերը զգալի դեր խաղացին ռուս ազատամիտների քաղաքական կողմնորոշումները պարզելու գործում՝ խթան հանդիսանալով «արևմտապաշտների» բանակի ներքին շերտավորման համար։ Այդ բանակում վերջնական պառակտումը տեղի ունեցավ գյուղացիական բարեփոխման շրջանում։ Ազատամիտ գույնի «արևմտապաշտները», նրանց թվում և Տուրգենևը, վորպես ականատեսներ դիտելով փետրվարյան հեղափոխության բոլոր փուլերը, հիմնավորապես դեպի աջ թեքվեցին։ 1847 թվականի աշնանը գրած («Бурмистр», «Контора», «Два помещика», «Бирюк», «Малиновая вода») պատկերների ազատագրական տենդենցների սրությունը նշանավոր չափով հարթվեց, յերբ «Записки охотника»-յի հեղինակը ծանոթացավ արևմուտքի դասակարգային մարտերին։ 1848 թվականին գրած եպիզոդներում Տուրգենևը հեռանում ե «կալվածատերեր և գյուղացիներ» նյութից («Певцы», «Свиданье», «Бежин луг», «Касьян с Красивой

Мсчи») և գտնում է դեպի «ավելորդ մարդկանց» պրոբլեմը («Гамлет Щигровского уезда»)։

«Записки охотника»-յի համարյա բոլոր ակնարկները Տուրգենևը գրել է արտասահմանում, ուր նա ապրեց անընդհատ յերեք տարուց ավելի—1847 թվականի հունվարից մինչև 1850 թվականի հունիսը։

Դեռ 1843 թվականի նոյեմբերին Տուրգենևը ծանոթացավ Պետերբուրգում գաստրոլների յեկած ֆրանսիացի հռչակավոր յերգչուհի Պոլինա Վիարդոյի հետ։ Նրա անձնական կենսագրության մեջ այս հանդիպումը բացառիկ նշանակություն ունեցավ։ Հետագայում, վաթսունական թվականների սկզբից, մոտիկանալով դերասանուհու ընտանիքի հետ, Տուրգենևը մշտապես ապրում էր արտասահմանում՝ Փարիզում, Բադեն-Բադենում, Լոնդոնում, այնտեղ, ուր Վիարդոներն էյին ապրում։ Յերգչուհու ամուսինը՝ թարգմանիչ և գեղարվեստական քննադատ Լուի Վիարդոյին, Տուրգենևը վորպես արևմուտքում ռուսական գրականության մասին պրոպագանդ մղող, ի միջի այլոց օգնեց թարգմանելու ռուս կլասիկներ Պուշկինի, Գոգոլի, Լերմոնտովի գրվածքները։ Դրանից առաջ, դերասանուհու յերկրորդ անգամ Ռուսաստան գալու ժամանակ, 1845 թվականի գարնանը, Տուրգենևը, ձգելով ծառայությունը, նրա հետևից գնաց Ֆրանսիա, իսկ այնտեղից վերադարձավ միայն ուշ աշնանը։ Նույնքան անակնկալ յեղավ նրա Գերմանիա գնալը 1847 թվականի հունվարին, յերբ լուր առավ Պ. Վիարդոյի Բեռլինում ունենալիք գաստրոլների մասին։

Ֆրանսուհի դերասանուհի Պոլինա Վիարդոյի հետ ունեցած սեփական ռոմանը, վոր տակն ու վրա արեց



Վարվարա Պետրովնա Տուրգենևայի՝ իր վորդու բյուրոկրատական արագ կարյերայի և փայլուն ամուսնության վերաբերյալ հաշիվները, մշտական կոնֆլիկտ առաջ բերեց գրողի և իր մոր մեջ, իսկ արտասահմանում յերկար ժամանակ մնալը նրանց հարաբերությունները վերջնական խզման հասցրեց։ Վ. Պ. Տուրգենևան դադարեցրեց վորդուն ամեն տեսակ նյութական օգնություն՝ նրան դնելով յերես առած տիրոջ անօգնական դրության մեջ, վորը հանկարծ անձամբ աշխատելու և գոյության միջոցներ հայթայթելու անհրաժեշտության առաջ կանգնեց։ Ընտանեկան յերկպառակությունը Տուրգենևը վորպես սոցիալական կոնֆլիկտ համարեց։ Իր նկատմամբ մոր գործադրած վճռական միջոցի մեջ նա տեսնում էր նույն կալվածատիրական կամայականությունը, վորի ճնշումը ճորտ սպասավորության վրա նա տվել է «Записки охотника»-յի մի շարք պատկերներում և ավելի ուշ գրած (1852 թվականին) «Մումու» պատմվածքում։

Տուրգենևը յերեք տարուց ավելի շարունակ մնաց արտասահմանում, գլխավորապես Փարիզում, վերջին տարվա ընթացքում մի կերպ գոյություն պահելով առավելապես բարեկամների օգնությամբ (դարձյալ նույն Վիարդոների, վորոնց քաղաքից դուրս գտնվող Կուրտավնելա վիլլայում նա շատ ամիսներ ապրեց)։ 1850 թվականի հունիսին Տուրգենևը վերջապես հարկադրված յեղավ վերադառնալ Ռուսաստան, ընդամենը միքանի ամիս մոր մահից առաջ, վորը մեկեն նրան դրեց հարուստ ժառանգի, 5500 դեսյատին հող և 2000 «ճորտեր» ունեցող տիրոջ անկախ դրության մեջ։

Յերեք տարի արտասահմանում անցկացրած ժամա-

նախաշրջանում Տուրգենևը բացի «Записки охотника»-յից գրել է իր պիեսների մեծ մասը—«Нахлебник» (1848), «Где тонко, там и рвется» (1848), «Холостяк» (1849), «Завтрак у предводителя» (1849), «Месяц в деревне» (1850): Պետերբուրգում գրվել են՝ «Разговор на большой дороге» (1851), «Провинциалка» (1851), Вечер в Сорренте» 1852): Դրանք զանազան դրամատիկական ժանրի՝ ազնվական թատրոն ստեղծելու փորձեր էին: Ոստրովսկու դրամաների և կոմեդիաների փայլուն հաջողությունը դրամատուրգ Տուրգենևին հետ քշեց երկրորդ պլանի վրա:

3

Հազար ութ հարյուր հիսունյերկու թվականի փետրվարի 21-ին Մոսկվայում մեռավ Գոգոլը: Այս անցքի լուրը ցնցող տպավորություն գործեց առաջադեմ գրական շրջաններում, սակայն Նիկոլայան կառավարությունը, որ յուրաքանչյուր հասարակական ելույթից ավելի յեր վախենում, քան կրակից, տրամադիր չեր վշտի խիստ ուժեղ արտահայտություն թույլ տալու: Այս հիման վրա գրաքննությունն արգելեց Գոգոլի մահվան մասին Տուրգենևի գրած հոդվածը, որ պետք է տպվեր «С. Петербургския ведомости»-ում, իսկ յերբ հոդվածն այնուամենայնիվ հեղինակի կամքից անկախ, լույս տեսավ «Московския ведомости»-ում, Տուրգենևն «անհնազանդության և գրաքննական կանոնները խախտելու համար» մեկ ամսով բանտարկվեց, իսկ հետո, 1852 թվականի մայիսին, աքսորվեց իր կալվածքը—Սպասսկոյե գյուղը, ուր մեկուկես տարի, այսինքն՝ մինչև 1853 թվականի դեկտեմբերը, ապրեց վարչական հսկողության տակ:

Տուրգենևի գյուղական աքսորն իր ժամանակով զուգադիպեց գրողի ստեղծագործական ճանապարհին տեղի ունեցած շրջադարձի հետ: 1852 թվականի սկզբից նա վերջնականապես հրաժարվեց դրամատիկական գործունեությունից. միաժամանակ նկատվում է նաև, որ նա հեռանում է ակնարկների ձևով գրելուց: Հենց այս տարվա վերջին էլ Տուրգենևն անցավ իր առաջին վեպի վրա աշխատելու գործին, որ վոչնչացվեց բարեկամների հայտնած կարծիքի հետևանքով և հայտնի յե միայն «Собственная господская контора» հատվածով:

Վեպի պրոբլեմը Տուրգենևի առաջ ծառացավ վորպես սոցիալական իրականության ծավալուն «օբյեկտիվ» պատկերացման պրոբլեմ: Հաճախ սայթաքելով ժանրային սահմանումներում և իր խոշոր գործերը վիպակներ անվանելով, Տուրգենևն այնուամենայնիվ պարզ տարբերություն էր սահմանում ընթացիկ ժամանակաշրջանի լայն հասարակական հոսանքները գեղարվեստական պատկերներով արձանագրելու նպատակ հետապնդող վեպերի և հոգեբանական նովելների ու էտյուդների մեջ:

Նրա վեպերը բնորոշ են նրանով, որ նա ընտրում էր այժմեական, առօրյա հասարակական թեմատիկա և ձգտում էր իրականության պատմականորեն նշանակալից, բեկումնային յերևույթների ռեալիստական վերարտադրման, մի հանգամանք, որ մոտեցնում էր նրանց յեվրոպական բուրժուական ռեալիստական վեպին՝ վերջնականապես ձևակերպված Անգլիայում և Ֆրանսիայում XIX դարի կեսերին, այսինքն՝ այն

նակաշրջանում Տուրգենևը բացի «Записки охотника»-յից գրել է իր պիեսների մեծ մասը—«Нахлебник» (1848), «Где тонко, там и рвется» (1848), «Холостяк» (1849), «Завтрак у предводителя» (1849), «Месяц в деревне» (1850)։ Պետերբուրգում գրվել են՝ «Разговор на большой дороге» (1851), «Провинциалка» (1851). Вечер в Сорренте» 1852)։ Դրանք զանազան դրամատիկական ժանրի՝ ազգային թատրոն ստեղծելու փորձեր էին։ Օստրովսկու դրամաների և կոմեդիաների փայլուն հաջողությունը դրամատուրգ Տուրգենևին հետ քշեց երկրորդ պլանի վրա։

### 3

Հազար ութ հարյուր հիսունյերկու թվականի փետրվարի 21-ին Մոսկվայում մեռավ Գոգոլը։ Այդ անցքի լուրը ցնցող տպավորություն գործեց առաջադեմ գրական շրջաններում, սակայն Նիկոլայան կառավարությունը, որ յուրաքանչյուր հասարակական շարժումից ավելի յեր վախենում, քան կրակից, տրամադիր չէր վշտի խիստ ուժեղ արտահայտություն թույլ տալու։ Այս հիման վրա գրաքննությունն արգելեց Գոգոլի մահվան մասին Տուրգենևի գրած հոդվածը, որ պետք է տպվեր «С. Петербургския ведомости»-ում, իսկ յերբ հոդվածն այնուամենայնիվ հեղինակի կամքից անկախ, լույս տեսավ «Московския ведомости»-ում, Տուրգենևն «անհնազանդության և գրաքննական կանոնները խախտելու համար» մեկ ամսով բանտարկվեց, իսկ հետո, 1852 թվականի մայիսին, աքսորվեց իր կալվածքը—Սպասսկոյե գյուղը, ուր մեկուկես տարի, այսինքն՝ մինչև 1853 թվականի դեկտեմբերը, ապրեց վարչական հսկողության տակ։

Տուրգենևի գյուղական աքսորն իր ժամանակով զուգադիպեց գրողի ստեղծագործական ճանապարհին տեղի ունեցած շրջադարձի հետ։ 1852 թվականի սկզբից նա վերջնականապես հրաժարվեց դրամատիկական գործունեությունից, միաժամանակ նկատվում է նաև, որ նա հեռանում է ակնարկների ձևով գրելուց։ Հենց այս տարվա վերջին էլ Տուրգենևն անցավ իր առաջին վեպի վրա աշխատելու գործին, որ վոչնչացվեց բարեկամների հայտնած կարծիքի հետևանքով և հայտնի յե միայն «Собственная господская контора» հատվածով։

Վեպի պրոբլեմը Տուրգենևի առաջ ծառացավ որպես սոցիալական իրականության ծավալուն «օբյեկտիվ» պատկերացման պրոբլեմ։ Հաճախ սայթաքելով ժանրային սահմանումներում և իր խոշոր գործերը վիպակներ անվանելով, Տուրգենևն այնուամենայնիվ պարզ տարբերություն էր սահմանում ընթացիկ ժամանակաշրջանի լայն հասարակական հոսանքները գեղարվեստական պատկերներով արձանագրելու նպատակ հետապնդող վեպերի և հոգեբանական նովելների ու էտյուդների մեջ։

Նրա վեպերը բնորոշ են նրանով, որ նա բռնում էր այժմեական, առօրյա հասարակական թեմատիկա և ձգտում էր իրականության պատմականորեն նշանակալից, բեկումնային երևույթների ռեալիստական վերարտադրման, մի հանգամանք, որ մոտեցնում էր նրանց յեվրոպական բուրժուական ռեալիստական վեպին՝ վերջնականապես ձևակերպված Անգլիայում և Ֆրանսիայում XIX դարի կեսերին, այսինքն՝ այն

ժամանակ, յերբ Տուրգենևը վոտք դրեց վիպասանի ճանապարհի վրա։

Վեպի վրա աշխատելու գործին Տուրգենևը համեմատաբար ուշ անցավ, յերբ իր հետևում համարյա քսանհինգ տարվա գրողի ստաժ և արդեն փայլուն նովելիստի հաստատուն հռչակ ուներ։ 1852 թվականին «Записки охотника»-յի առաջին համատեղ առանձին հրատարակությունից անմիջապես հետո Տուրգենևն սկսեց պատկերից վեպի անցնելու ճանապարհնե-րի համառ վորոնումներ կատարել՝ իր վորոնումների հա-ջողությունը կախված համարելով վոչ միայն անձնա-կան ընդունակություններից, այլ այն հանգամանքից, թե իր ժամանակի սոցիալական իրականությունը վորքան նյութ էր տալիս ծավալուն վիպասանու-թյանը։ Ցելնելով գրական նմուշներից, յեվրոպա-կան սոցիալական վեպի արդեն կազմված տրադի-ցիաներից, Տուրգենևը մեծ պարզությամբ էր գիտակ-ցում, թե ռուսական հողի վրա պրոբլեմային սոցիա-լական վեպ ստեղծագործելու հնարավորությունն ամ-բողջովին պայմանավորվում է այդ հողի դրությամբ։ Այս բանի կապակցությամբ մեծ հետաքրքրություն է ներկայացնում 1852 թվականի նրա քննադատական հոդվածը Ցեվգենիա Տուրի «Племянница» վեպի մա-սին։ Այդ հոդվածը գրված է գրական վորոնումների, պատկերներ և նորավեպեր գրողի «հին ձևից» հեռանալու շրջանից դեպի խոշոր յերկասիրություններ ստեղծելու շրջանը։ Ժխտելով Ա. Դյումա-հոր վոճով հե-տաքրքիր արկածային վեպի տարածման նպատակա-հարմարությունը, Տուրգենևը հրաժարվում է նաև պատմական թեմատիկայի մշակումից, ռոմանտիկ պատմական վեպից, վորը լայն կերպով տարածված էր յեվրոպական գրականության մեջ XIX դարի առաջին յերրորդում և ամեն տեղ հյուսվում էր Վալտեր Սկո-տի իր ուժով բացառիկ ազդեցության տակ։

Ռուսական հողի վրա միակ հնարավոր բան Տուր-գենևը համարում էր այն վեպերը, վորոնք նա գլխա-վոր ներկայացուցիչների անունով կոչում է սանդյան և գիկենսյան (այսինքն սոցիալական վեպերը, վորոնք ժամանակակից թեմատիկա յեն մշակում)։ «Այս վեպերը հնարավոր են մեզնում և կարծես կըն-դունվեն»։ Հենց ժամանակակից թեմատիկայի մշակումը Տուրգենևից, վորպես իր սոցիալական խմբակի տեսա-րանից, պահանջողն ազատամիտ ազնվականության գործելակերպն էր՝ նախաբարենորոգչական շրջանի դասակարգային պայքարում։ Յեթե ազնվականության ռեակցիոն ազդարարային խմբակը մինչև վորոշ բաց պայքարում էր հին տնտեսական և հասարակական ձևերի կատարյալ անսասանության համար՝ նրանց կայունության մեջ իրենց տիրակալական դրության պահպանման գրավականը տեսնելով, ազատամիտ միջ-կալվածատիրական ազնվականությունն էլ նոր պայ-մաններին հարմարվել էր ուզում, յենթադրելով, թե տնտեսական հարաբերությունների և հասարակական ապարատի իր ժամանակին կատարված մասնակի վերակառուցումը լավագույն չափով ազնվականու-թյան համար կապահովի տիրապետող դիրքերը։ Անցյալ յերեսնական և քառասնական թվականնե-րի ռուսական ռեակցիոն պատմական ռոմանը և պատմական վողբերգությունը (Լաժեչնիկով, Զագոս-կին և Կուկոլնիկ) հիմնավորել էյին ազնվակա-

ության իրավունքը՝ տիրապետելու անցյալի «փառավոր» ավանդներին և պատմական թեմաներին վերադարձը զուգակցված էին «ուղղափառությունը, ինքնակալությունը և ազգայնությունը» ջատագովելու հետ: Տուրգենևը, որպես ազատամիտ ազնվականության տեսաբան, իր քննադատական հոդվածներում պայքարում էր ռուսական ռոմանտիզմի տեսակետի թե՛ և այդ ռոմանտիզմի մեջ պատմական ստեղծագործություն գրելու դեմ (տես նրա հոդվածները Կուկոլնիկի և Գեդեոնովի ողբերգությունների մասին), իսկ իր ստեղծագործական պրակտիկայում ռեալիստական վեպի ճանապարհներ և ձգում, որ ձգտում էր ոչ թե անցյալն իդեալականացնելուն, այլ ներկան հասկանալուն, այլ ընթերցողի կողմնորոշմանը՝ բեկման ժամանակաշրջանի հասարակական հարաբերությունների բարդ հյուսվածքում: Ազատամիտ ազնվականության հարմարվելը կապիտալիստական հարաբերություններին՝ պահանջում էր, որ նրա տեսաբանները պարզ կերպով հասկանան նոր նշվող հասարակական պրոցեսները:

Տուրգենևի՝ տպագրված առաջին վեպը «Ռուդին»-ն էր: Այս գրվածքի առանձնահատկությունը՝ սրան հաջորդած վեպերի հետ համեմատած՝ այն է, որ հիմնական գործող անձի՝ Դմիտրի Ռուդինի մեջ տրված են ժամանակակիցների կողմից հեշտ ճանաչվող կենդանի պատմական անձնավորության՝ Բերլինի համալսարանից Տուրգենևի բարեկամ Միխայիլ Բակունինի պատկերը (իհարկե, թերի և աղավաղված): Այս հանգամանքը վեպի բացատրության մեջ խառնաշփո-



թությունն է մտցրել և նրան այնպիսի իմաստ է տվել, որ հեղինակը դույզն չի էլ կռահել:

Գրական ուսումնասիրության մեջ գործող անձնավորությունների նախատիպերը փնտրելը սովորաբար երկրորդական խնդիր է, որովհետև միանգամայն պարզ է, որ յուրաքանչյուր ոբրազ կառուցված է լինում որոշ ռեալ տվյալների վրա, և բնավ այն չէ կարևոր, թե ինչպես գրողն ինչ նյութ է օգտագործել, այլ թե՝ ինչպես է օգտագործել. կենդանի բնավորության տիպացումն ինչ ուղղությամբ է առաջ տարվել,—այն բնավորության, որ գեղարվեստական ընդհանրացման համար ելակետ է ծառայել: Սակայն «Ռուդինի» աղբյուրների խնդիրն առանձին հետաքրքրություն է ստանում՝ ի նկատի ունենալով վեպի հերոսի ռեալ նախատիպի պատմական նշանակությունը, որի շնորհիվ ինքը գրվածքը կարող էր քաղաքական պամֆլետի բնույթ ստանալ: «Ռուդին»-ի վրա գրողն աշխատելիս (1855 թվի ամառը) Բակունինը, որ դրեզդենյան ապստամբության մասնակցելու համար անցել էր սաքսոնական ու ավստրիական բանտերը և հանձնվել էր ռուսական կառավարությանը, փակված էր Շլիսելբուրգյան բանտում: Այս բոլորը շատ լավ հայտնի էին Տուրգենևին:

Վեպի հիմնական նյութը փիլիսոփայական իդեալիստական խմբակի անդամ, պերճախոս հռետոր և դիալեկտիկ Դմիտրի Ռուդինի ընդհարումն է ռուս կալվածատիրական իրականության հետ և նրա կատարյալ պարտությունն այդ իրականության հետ ընդհարվելիս: Հայտնվելով կալվածատիրուհի Լասունսկայայի «սալոնում», Ռուդինն իր լսողներին արագ

կերպով հմայում է իր հռետորական հանպատրաստից ճառերով («импровизация»), բայց շուտով նրա շուրջը խուլ թշնամություն է առաջանում, իսկ նրան ամեն տեղ քայլ առ քայլ հետևող Լեժնյովը «մերկացնում է» հերոսին, լուսաբանելով, բացատրելով նրա յուրաքանչյուր քայլը յուրաքանչյուր բառը, և վարկաբեկող տեղեկություններ է հաղորդում նրա անցյալ կենսագրությունից, վորը վեպում ընդգրկված չէ։ Բայց հերոսի սոցիալական սնանկությունը, ինչպես սովորաբար Տուրգենևն է անում (այս բանը փայլուն կերպով բացել է Չերնիշևսկին՝ «Ասիա»-ն վերլուծելիս), դրսևորվում է վոչ թե հասարակական ընդհարումները մերկացնելիս, վորոնք «Ռուդին»-ում միայն թռուցիկ կերպով են նշված, այլ սիրային բանսարկության մեջ։ Վեպի հերոսի կատարյալ սնանկությունը ցուցադրվում է Նատալիայի հետ ունեցած հարաբերություններում՝ Ավդյուխինի լճակի մոտ տեղի ունեցած նշանավոր տեսակցության ժամանակ, վորի յեզրափակիչ եպիզոդներում Ռուդինը հանդես է գալիս վորպես մի խղճուկ, ինքն իրենով հափշտակված ֆրազյոր ու վախկոտ։

«Ռուդին» վեպը տպագրվելուց առաջ յերկարատև ուղղումների յե յենթարկվել, վորովհետև իր սկզբնական վիճակում վեպն իր գլխավոր հերոսի նախատիպի ակնհայտ լինելու կապակցությամբ ընդհուպ պամֆլետի յեր մոտենում (պետք է նկատել, վոր վեպն իր նախնական խմբագրության մեջ «Հանճարեղ բնավորություն» ծաղրական վերնագիրն է ունեցել)։ Սկզբնական բնագրի հետագա վերամշակումն այն հետևանքն ունեցավ, վոր յերևան յեկան տասներկույերորդ գլխի յեզրափակիչ տեսարանը և վողջ եպիլոգը, ուր ավելի ընդարձակ, քան վեպի մեջ, ցույց է տրված հերոսի հասարակական գործունեությունը, իսկ նրա անհաջողությունը պատճառաբանված է «միջավայրի» անկազմակերպությամբ («դժվար է, յեղբայր, կառուցելը, յերբ վոտքի տակ հող էլ չկա, յերբ ինքդ պետք է քո սեփական հիմքն ստեղծես»)։ Պակաս նշանակալից չեր վեցերորդ գլխի յեզրափակման մասի վերջնական խմբագրության յերևալը։ Դա Լեժնյովի յերկրորդ խոսակցությունն է Լիպինայի հետ Ռուդինի մասին և Պոկորսկու խմբակի մասին (հեղինակի սեփական խոստովանությամբ Ստանկևիչի խմբակի մասին) արած պատմությունն է։ Այս լրացումն եական կերպով անդրադարձավ վողջ վեպի ընդհանուր իմաստի վրա։ Պոկորսկու—Ստանկևիչի խմբակի հետ ավելացրած պատմության եպիզոդում Ռուդինը նկարագրված է վորպես Մոսկվայի փիլիսոփայական խմբակի մի անդամ։ Այսպիսով, հիմնական գործող անձն ամրակցված է վորոշ պատմական միջավայրի։ Պոկորսկու մասին յեղած պատմվածքը մի այլ խնդիր էլ է լրացնում —Նրանում կապ է սահմանվում նույն փիլիսոփայական խմբակի և մյուս գործող անձի—Լեժնյովի մեջ։ Դրանով վեպի բոլոր էջերում հանդես յեկող Լեժնյովի դատաստանը Ռուդինի նկատմամբ այնպիսի դատաստանի նշանակություն է ստանում, վոր բղխում է նույն հասարակական միջավայրին պատկանող անձից, վորին նաև մեղադրվողն է պատկանում։ Խմբակի մի անդամի վրա ընկնող դատապարտությունը չի տարածվում լիբերալ-ազնվական նոր սերնդի վողջ խմբակի վրա։

Վերջում դրված սոցիալական թեզիսի մերկացումն անհրաժեշտ է Ռուդին-Բակունինի տիպացման բնավորության և ուղղության մեջ փնտրել Հիմնական թվականների կեսերին Բակունինին վորպես խաչերազույն հեղափոխական գործչի չհամարելով և ջանջահելով նրան յերեսնական-քառասնական թվականների լիբերալ ազնվականական խմբակների շարքային մասնակիցներից, Տուրգենևն, իր կարծիքով աղքիկ նյութից կառուցել է միջկալվածատիրական — լիբերալ-ազնվականության տեսարանի բարոշ Փիգուր, վոր իր տեղը չեր գտնում հետամնաց ճորտատիրական Ռուսաստանի հասարակական պրոցեսում: Վերցրած նյութն ադապտացրել և նրանից ընդհանրացած հեղափոխականի օբրազ ստեղծել Տուրգենևը չէր կարողացել և չեր կարող: Այդ բանը շատ դեղեցիկ կերպով նկատել է Պիսարևը, վորը հարևանցիորեն հետևյալ սրամիտ նկատողությունն է արել. «Ասում են, վորպես թե հանձին Ռուդինի Տուրգենևն ուզեցել է նկարել Բակունինի պատկերը: Սակայն Ռուդինը Բակունինի մի քանի գծերը հազիվ է հիշեցնում: Տուրգենևը, տարված բիբլիական սովորությամբ, Ռուդինին իր պատկերով ու նմանությամբ է ստեղծել: Ռուդինը Տուրգենև է 2-րդն է, վոր շատ բան է լսել Բակունինի փիլիսոփայական ժարգոնից» «Ռուդին» վեպը լիբերալ ազնվականության հիմնական թվականներին գրված գրքերից վերջնայուն է և իր անցած ճանապարհը, այն փուլը, վոր յերեսնական-քառասնական թվականների փիլիսոփայական խմբակներում ձևակերպել եր իր իդեոլոգիայում:

«Ռուդինը», տպված 1856 թվականի «Современ-



ник»-ի առաջին գրքերում, գրվել է 1855 թվականի ամառը, Ղրիմի պատերազմի ամենալարված ամիսներին, յերբ պատերազմ վորի վախճանը վորոշեց վոչ միայն Ռուսաստանի արտաքին քաղաքական դրությունը, այլև ուժերի եյական վերախմբավորում առաջ բերեց յերկրի ներսում:

---

# Թ Ո Ւ Դ Ի Ն

# I

Ամառային խաղաղ առավոտ էր։ Արևն արդեն բավականին բարձրացել էր ջինջ յերկնքում, սակայն դաշտերը դեռ փայլում եյին ցողով. Նոր միայն արթնացած հավքերից անուշաբույր թարմություն էր փչում, և դեռ խոնավ ու անաղմուկ անտառում վազեն թռչնակներն եյին ուրախ յերգում։ Զառիվեր բլրի գագաթին, որ վերևից մինչև ներքև դեռ նոր փթթած հասմիկով էր ծածկված, մի փոքրիկ գյուղակ էր յերևում։ Նեղ գյուղամիջյան ճանապարհով դեպի այդ գյուղակն էր գնում մի յերիտասարդ կին՝ սպիտակ մարմաշե հագուստով, ծղոտե կլոր գլխարկով և հովանոցը ձեռքին։ Կապույտ հագուստով սպասավորը հեռվից հետևում էր նրան։

Կինը գնում էր տանից շտապելով և, կարծես, զբոսանքից հաճույք զգալով։ Ճամփը բարձր ու ծփուն հաճարի կողքով, որ շողշողում էր մերթ արծաթ-կանաչ, մերթ կարմրավուն ծածանումներով, մեղմ սոսափյունով յերկար ալիքներ եյին վազում. վերևում ճախրում եյին արտույտները։ Յերիտասարդ կինը գնում էր իր սեփական գյուղից, որ մի վերստից ավելի հեռու չէր այդ գյուղակից, դեպի ուր նա ուղղել էր իր ընթացքը։ Նրան Ալեքսանդրա Պավլովնա Լիպինա եյին անվանում։ Նա այրի էր, անզավակ և բավական հարուստ, ապրում էր իր յեղբոր՝ պաշտոնաթող շտաբ-ռոտմիստր

Սերգեյ Պավլովիչ Վոլինցևի հետ, վորն ամուսնացած չէր և նրա կալվածքն էր կառավարում։

Ալեքսանդրա Պավլովնան հասավ գյուղակին, կանգ առավ ծայրի չափազանց հին ու ցածր խրճիթի մոտ և մոտ կանչելով իր սպասավորին՝ կարգադրեց ներս մտնել և տանտիրուհու առողջության մասին հարցնել։ Սպասավորը շուտով վերադարձավ սպիտակ մորուքավոր մի պառաված շինականի հետ։

— Հը՛, ինչպե՞ս է,— հարցրեց Ալեքսանդրա Պավլովնան։

— Դեռ կենդանի յէ,— ասաց ծերունին։

— Կարելի՞ յէ ներս գալ։

— Ինչու չէ, կարելի յէ։

Ալեքսանդրա Պավլովնան մտավ խրճիթը։ Այնտեղ և՛ նեղվածք էր, և՛ տոթ, և՛ ծուխ... Մեկը շարժվում ու տնքում էր վառարանի վրա։ Ալեքսանդրա Պավլովնան նայեց և կիսախավարում տեսավ պառավի վանդակավոր թաշկինակով կապած դեղին ու կնճռոտված գլուխը։ Մինչև կուրծքն արմյակով ծածկված՝ նա շնչում էր դժվարությամբ, թույլ կերպով տատանելով նիհար ձեռքերը։

Ալեքսանդրա Պավլովնան մոտեցավ պառավին և մատները հպեց նրա ճակատին, վորն ուղղակի այրվում էր։

— Ինչպե՞ս ես զգում քեզ, Մատրյոնա,— կռանալով դեպի վառարանը, հարցրեց նա։

— Ո՜խ,— Ալեքսանդրա Պավլովնային ճանաչելով հառաչեց պառավը։— Վատ, վատ, սիրելի՛ս։ Մահիս ժամն է մոտեցել, ո աղավնյակս։

— Աստված վողորմած է, Մատրյոնա, գուցե կառողջանաս։ Ուղարկածս դեղն ընդունե՞լ ես։



Պառավը թախծալից տնքաց ու չպատասխանեց։ Նա հարցը լավ չլսեց։

— Ընդունել է,— խոսեց դռան մոտ կանգնած ծերունին։

Ալեքսանդրա Պավլովնան դարձավ վերջինիս։

— Քեզնից բացի՝ սրա մոտ վոչ վոք չկա՞,— հարցրեց նա։

— Մի փոքրիկ աղջիկ կա,— սրա թոռնիկը, վորը միշտ այսպես բացակայում է։ Չի նստում— անհանգիստ մեկն է։ Նույնիսկ ծուլանում է իր տատիկին խմելու ջուր տալ։ Յես էլ ծեր եմ. ինչ կարող եմ անել։

— Տեղափոխե՞նք ինձ մոտ՝ հիվանդանոց։

— Վո՛չ. ինչու հիվանդանոց։ Մեռնելու միևնույն է։ Բավական ապրել է։ Ինչպես յերևում է՝ աստծուն այդպես է հաճելի։ Վառարանից չի իջնում։ Ի՞նչ նրա բանն է հիվանդանոցը։ Հենց վոր ուզենան բարձրացնել, իսկույն կմեռնի։

— Ո՜խ,— հառաչեց հիվանդը.— գեղեցկուհի տիրուհի, վորբուկիս չթողնես. մեր տերերը հեռու յեն, իսկ դու...

Պառավը լռեց։ Նա դժվարությամբ էր խոսում։

— Մի անհանգստանա,— ասաց Ալեքսանդրա Պավլովնան,— ամեն ինչ կարվի։ Այ, քեզ համար թեյ ու շաքար եմ բերել։ Յեթե կուզես, խմիր... ինքնայեռ էլ հո ունե՞ք,— ծերունուն նայելով՝ ավելացրեց նա։

— Ինքնայեռ. ինքնայեռ չունենք. բայց ճարել կարելի յէ։

— Ուրեմն ճարիր, յեթե վոչ՝ յես իմը կուղարկեմ։ Թոռնիկին էլ հրամայիր, վոր չհեռանա։ Ասա, վոր ամոթ է։

Ծերունին չէր պատասխանում, իսկ թեյ ու շաքարի փաթեթը յերկու ձեռքն առավ։

— Դե, մնաս բարև, Մատրյոնա,— ասաց Ալեքսանդրա Պավլովնան.— յես դարձյալ կգամ քեզ մոտ, իսկ դու մի՛ հուսահատվիր, դեղն էլ կանոնավոր կերպով ընդունի՛ր։

Պառավը գլուխը բարձրացրեց և ձգվեց դեպի Ալեքսանդրա Պավլովնան.

— Ձեռքդ տուր, տիրուհի՛,— թոթովեց նա։

Ալեքսանդրա Պավլովնան ձեռքը չտվեց նրան, կռացավ ու համբուրեց նրա ճակատը։

— Նայիր հա՛,— դուրս գալիս ասաց նա ծերունուն.— դեղն անպատճառ տվեք նրան՝ ինչպես գրված է... թեյ էլ խմցրեք...

Ծերունին դարձյալ վոչինչ չէր պատասխանում և միայն գլուխ տվեց։

Թարմ օդ դուրս գալով՝ Ալեքսանդրա Պավլովնան ազատ շունչ քաշեց։ Նա հովանոցը բացեց և ուզում էր տուն գնալ, յերբ հանկարծ խրճիթի անկյունից ցածրիկ արշավակառքով յիսուն տարեկան մի մարդ դուրս յեկավ՝ մոխրագույն կամլոտե հին վերարկուով և նույնպիսի գլխարկով։ Ալեքսանդրա Պավլովնային տեսնելով՝ նա իսկույն ձին կանգնեցրեց և յերեսը դարձրեց դեպի նա։ Նրա լայն, կարմրությունից զուրկ դեմքը՝ մանրիկ, գորշ գունատ աչքերով ու սպիտակավուն բեխերով՝ համաձայն էր գալիս հագուստի գույնին։

— Բարև ձեզ,— խոսեց նա ծույլ քմծիծաղով,— թույլ տվեք իմանալ՝ այս ի՞նչ եք շինում այստեղ։

— Յես հիվանդի եմ այցելում... Իսկ դուք վորտեղից, Միխայլո Միխայլիչ։



Միխայլո Միխայլիչ կոչվող մարդը նայեց նրա աչքերին և նորից քմծիծաղ տվեց։

— Այդ դուք լավ եք անում,— շարունակեց նա,— վոր այցելում եք հիվանդներին. բայց միթե ձեզ համար ավելի լավ չի նրան հիվանդանոց փոխադրել։

— Նա չափազանց թույլ է, նրան շարժել չի կարելի։

— Իսկ դուք մտադիր չե՞ք ձեր հիվանդանոցը վոչնչացնել։

— Վոչնչացնե՞լ։ Ինչու։

— Հենց այնպես։

— Ի՜նչ տարօրինակ միտք։ Այդ վորտեղի՞ց մտավ ձեր գլուխը։

— Ո՛չ, դուք շարունակ ծանոթություն եք պահպանում Լասունսկայայի հետ և կարծես նրա ազդեցության տակ եք գտնվում։ Իսկ նրա ասելով՝ հիվանդանոցները, դպրոցները — այդ բոլորը դատարկ, անպետք, հնարովի բաներ են։ Բարեգործությունը պետք է անձնական լինի, լուսավորությունը՝ նույնպես. այս բոլորը հոգու գործ է... կարծեմ այսպես է արտահայտվում նա։ Ում ձայնով է նա այսպես յերգում — կուզեյի իմանալ։

Ալեքսանդրա Պավլովնան ծիծաղեց։

— Դարյա Միխայլովնան խելոք կին է. յես նրան շատ եմ սիրում ու հարգում. բայց նա էլ կարող է սխալվել, և յես նրա վոչ ամեն խոսքին եմ հավատում։

— Յեվ շատ լավ եք անում,— վրա բերեց Միխայլո Միխայլիչը՝ շարունակելով չիջնել կառքից.— վորովհետև նա ինքն իր խոսքերին վատ է հավատում։ Իսկ յես շատ ուրախ եմ, վոր հանդիպեցի ձեզ։

— Ո՞նչ կա վատ։

— Լավ հարց։ Կարծես ձեզ հանդիպելը միշտ էլ հաճելի չէ։ Այսօր դուք նույնքան թարմ եք և սիրելի, վորքան այս առավոտը։

Ալեքսանդրա Պավլովնան զորձյալ ծիծաղեց։

— Ինչի՞ վրա յեք ծիծաղում։

— Ինչպե՞ս թե ինչի վրա։ Յեթե դուք կարողանայիք տեսնել, թե դեմքի ինչպիսի՜ անկեղծ ու սառն արտահայտությամբ արտասանեցիք ձեր հաճոյախոսությունը։ Զարմանում եմ, թե վերջին խոսքի վրա ինչպես չհորանջեցիք։

— Սառն արտահայտությամբ... Ձեզ միշտ կրակն է հարկավոր, իսկ կրակը վոչ մի բանի պետք չէ։ Կբոցավառվի, կծխա և կհանգչի։

— Յեվ կտաքացնի,— վրա բերեց Ալեքսանդրա Պավլովնան։

— Այո... և կայրի։

— Ե, ի՞նչ անենք, վոր կայրի. այդ էլ ցավ չէ։ Համենայն դեպս ավելի լավ է, քան...

— Այ. կտեսնեմ, նույնը կասեք, յերբ դուք մեկ անգամ լավ այրվեք,— սրտնեղած ընդհատեց նրան Միխայլո Միխայլիչը և յերասանով խփեց ձիուն։— Մնա՛ք բարև։

— Միխայլո Միխայլիչ, սպասեցե՛ք,— գոչեց Ալեքսանդրա Պավլովնան.— յե՞րբ կլինեք մեզ մոտ։

— Վաղը. բարևեցեք ձեր յեղբորը։

Յեվ կառքը սլացավ։

Ալեքսանդրա Պավլովնան նայում եր Միխայլո Միխայլովիչի հետևից։

«Ի՜նչպես պարկանման է»,— մտածում եր նա։ Կուչ յեկած, փոշոտ, գլխարկը ծոծրակի վրա, վորի տակից անկարգ կերպով ցրված են դեղին մազահյուսերը, նա, ճիշտ վոր, մեծ ալրապարկի յեր նման։

Ալեքսանդրա Պավլովնան հանդարտ վերադարձավ դեպի տուն տանող ճանապարհով։ Նա գնում եր աչքերը ցած գցած։ Ձիու մերձակա դոփյունը հարկադրեց նրան կանգ առնել և գլուխը բարձրացնել... Ձիով նրա դիմացն եր գալիս նրա յեղբայրը։ Նրա հետ միասին գալիս եր մի յերիտասարդ՝ կարճահասակ, կոճակներն արձակ, թեթև սերթուկով, թեթև փողկապով և թեթև գորշ գլխարկով. ձեռքին փոքրիկ յեղեգնացուպ։ Նա դեռ վաղուց եր ժպտում Ալեքսանդրա Պավլովնային, թեպետ տեսնում եր, վոր նա գնում է մտախոհ, վոչինչ չնկատելով, և հենց վոր վերջինս կանգ՛ առեց, մոտեցավ նրան և ուրախ կերպով, համարյա քնքշաբար արտասանեց.

— Բարև ձեզ, Ալեքսանդրա Պավլովնա, բարև ձեզ։

— Ա՜, Կոնստանտին Դիոմիդիչ, բարև ձեզ,— պատասխանեց նա,— դուք Դարյա Միխայլովնայի մոտի՞ց եք գալիս։

— Ճիշտ այդպես, ճիշտ այդպես,— ավելացրեց յերիտասարդը փայլող դեմքով.— Դարյա Միխայլովնայի մոտից։ Դարյա Միխայլովնան ինձ ուղարկել է ձեզ մոտ. յես գերադասեցի վոտքով գալ... Առավոտն այնպես հրաշալի յե, ընդամենը չորս վերստ տարածություն։ Յես յեկա, դուք տանը չեյիք։ Ձեր յեղբայրն ինձ ասաց, վոր դուք Սեմյոնովկա յեք գնացել, ինքն էլ պատրաստվում եր դաշտ գնալ... և ահա յես յեկա նրա հետ՝ ձեզ ընդառաջելու։ Այո, վորքա՜ն հաճելի յե այդ։

Յերիտասարդն ռուսերեն խոսում եր մաքուր և ճիշտ, բայց ոտարերկրյա արտասանությամբ, թեպետ

ջմշվար էր վորոշել, թե վորտեղից։ Նրա դիմագծերում ինչ-վոր ասիական բան կար։ Ցից, կեռ կորացած քիթ, մեծ, անշարժ ու դուրս ընկած աչքեր, խոշոր կարմիր շրթունքներ, թեք ճակատ, կուպրի պես սև մազեր,— այս բոլորը՝ բաց ոչ՛ եվրոպական ծագումն էին ցույց տալիս, բայց յերիտասարդը Պանդալևսկի ազգանունն էր կրում, իր հայրենիքն անվանում էր Օդեսսան, թեպետ կրթվել էր մի ինչ-վոր տեղ Բելոռուսիայում, մի բարեբար և հարուստ այրու հաշվին։ Մի այլ այրի նրան անկավորել էր ծառայության։ Առհասարակ՝ միջին տարիքի այրիները հաճույքով էին հովանավորում Կոնստանտին Դիմիտրիչին, վորը կարողանում էր հաճոյանալ, դուր գալ նրանց։ Նա հենց հիմա էլ ապրում էր հարուստ կալվածատիրուհի Դարիա Միխայլովնա Լասունսկայայի մոտ՝ վորպես տնի բժիշկ կամ կերոթիկ (нахлебник)։ Նա շատ սիրալիր էր, հաճոյակատար, զգայուն և գաղտնաբար վավաշոտ. հաճելի ձայն ուներ, կարգին դաշնամուր էր նվագում և սովորություն ուներ մեկի հետ խոսելիս աչքերով ուտել նրան։ Նա շատ մաքուր էր հագնվում, հագուստը չափազանց յերկար էր կրում, խնամքով սափրում էր իր լայն կզակը և սանրում էր մազ առ մազ։

Ալեքսանդրա Պավլովնան մինչև վերջը լսեց նրա ճառը և դարձավ դեպի յեղբայրը.

— Այսօր ես անընդհատ հանդիպումներ եմ ունենում. հենց հիմա խոսում էի Լեժնյովի հետ։

— Ա, նրա՞ հետ։ Նա տեղ էր գնում։

— Այո, և յերևակայիր, մրցարշավի կառքով, ինչ-վոր քաթանե պարկ հագին, ամբողջովին փոշու մեջ... ինչ տարօրինակն է։



— Այո, կարող է լինել. բայց նա հիանալի մարդ է։

— Ո՞վ է այդ։ Պ. Լեժնյո՞վը,— կարծես զարմացած հարցրեց Պանդալևսկին։

— Այո, Միխայլո Միխայլիչ Լեժնյովը,— վրա բերեց Վոլինցևը։ Սակայն մնաս բարով, քույր. ժամանակ է, վոր դաշտ գնամ. քեզ համար արինջ (гречиха) են ցանում։ Պ. Պանդալևսկին քեզ տուն կհասցնի...

Ցեվ Վոլինցևը ձին չափ գցեց։

— Ամենամեծ բավականությամբ,— բացականչեց Կոնստանտին Դիմիտրիչը և իր թևն առաջարկեց Ալեքսանդրա Պավլովնային։

Սա էլ իրը տվեց նրան, և յերկուսով ճանապարհ ընկան դեպի Ալեքսանդրա Պավլովնայի կալվածքը։

---

Ըստ յերևույթին, Ալեքսանդրա Պավլովնային թևանցուկ տանելը Կոնստանտին Դիմիտրիչին մեծ բավականություն էր պատճառում. նա մանր քայլեր էր անում, ժպտում էր, նրա արևելյան աչքերը նույնիսկ խոնավությամբ ծածկվեցին, վորն, ի դեպ, նրան սակավ չէր պատահում։ Կոնստանտին Դիմիտրիչի համար հուզվելը և արտասուք թափելը վոչինչ չարժեր։ Ցեվ գեղեցիկ, ջահել ու վայելչակազմ մի կնոջ թևանցուկ տանելն ո՞ւմ համար չէր լինի հաճելի։ Ալեքսանդրա Պավլովնայի համար վողջ... նահանգն էր միաձայն ասում, թե նա հրաշալի է և... նահանգը չէր սխալվում։ Հենց միայն նրա ուղիղ, քիչ վեր ցցված քիթը կարող էր խելքահան անել յուրաքանչյուր մահկանացուի, էլ չխոսած նրա թավշյա թուխ աչքերի, վոսկեգույն-խարտյաշ մազերի, կլոր թշիկների վրայի

փոսիկների և այլ գեղեցկությունների մասին։ Սակայն ամենից լավը նրա գեղատեսիլ դեմքի արտահայտությունն էր — դյութական, բարեհոգի ու հեզ, նա և՛ հուզում, և՛ գրավում էր։ Ալեքսանդրա Պավլովնան յերեխայի պես էր նայում և ծիծաղում։ Տիկինները նրան հասարակ էին համարում... Կարելի՞ յեր ուրիշ բան էլ ցանկալ։

— Ասում եք՝ Դարյա Միխայլովնա՞ն է ձեզ ինձ մոտ ուղարկել,— հարցրեց նա Պանդալևսկուն։

— Այո-ս, ուղարկեց,— պատասխանեց նա, ս տառը անգլիական th-ի պես արտասանելով։ Նրանք անպատճառ ցանկանում են և պատվիրեցին թախանձանոք խնդրել ձեզ, որ դուք այսօր շնորհք բերեք նրանց մոտ՝ ճաշելու... Նրանք (Պանդալևսկին յերբ խոսում էր յերրորդ անձի, մանավանդ կնոջ մասին, խիստ կերպով պահպանում էր հոգնակի թիվը), նրանք իրենց մոտ նոր հյուր են սպասում, որի հետ անպատճառ ցանկանում են ձեզ ծանոթացնել։

— Ո՞վ է այդ։

— Վոն Մուֆֆել, բարոն, կամեր-յունկեր՝ Պետերբուրգից։ Դարյա Միխայլովնան նոր է ծանոթացել նրա հետ իշխան Գարինի մոտ և մեծ գովեստով են խոսում նրա մասին՝ որպես սիրալիր և զարգացած յերիտասարդի մասին։ Պ. բարոնը պարապում են նաև գրականությամբ, կամ ավելի լավ է ասել... ա՜խ, ի՜նչ չքնաղ թիթեռնիկ, բարեհաճեցե՛ք ձեր ուշադրությունը դարձնել... ավելի լավ է ասել՝ քաղաքատնտեսությամբ։ Նա հոդված է գրել մի շատ հետաքրքիր հարցի մասին, և ուզում է այդ հոդվածը յենթարկել Դարյա Միխայլովնայի դատաստանին։



— Քաղաքատնտեսական հոդվա՞ծ։

— Լեզվի տեսակետից, Ալեքսանդրա Պավլովնա, լեզվի տեսակետից։ Ձեզ, կարծում եմ, հայտնի յե, որ այդտեղ էլ Դարյա Միխայլովնան հմուտ է։ Ժուկովսկին նրանց հետ խորհրդակցում էր, իսկ իմ բարերարը, Օդեսսայում ապրող բարեգործ ծերունի Ռոկսոլան Մեդիարովիչ Քսանդրիկան... Ձեզ, անշուշտ, հայտնի՞ յե այս անձնավորության անունը։

— Բնավ. չեմ էլ լսել։

— Այդպիսի մարդու մասին չե՞ք լսել։ Զարմանալի յե։ Ուզում էի ասել, որ Ռոկսոլան Մեդիարովիչը ևս միշտ շատ բարձր կարծիքի յեր Դարյա Միխայլովնայի ռուսերեն լեզվում ունեցած գիտելիքների մասին։

— Իսկ այդ բարոնը բծախնդիր չե՞,— հարցրեց Ալեքսանդրա Պավլովնան։

— Ամենևին ոչ — ս. Դարյա Միխայլովնան պատմում են, որ ընդհակառակը նրանում իսկույն յերևում է աշխարհիկ մարդը։ Բեթհովենի մասին այնպիսի պերճանքով էր խոսում, որ նույնիսկ ծեր իշխանը հիացմունք զգաց... Յես այդ, խոստովանում եմ, լսել կուզեյի. ախր այդ իմ բնագավառին է վերաբերում։ Թույլ տվեք այս գեղեցիկ դաշտային ծաղիկը ձեզ առաջարկել։

Ալեքսանդրա Պավլովնան ծաղիկը վերցրեց, և մի քանի քայլ գնալուց հետո ճանապարհի վրա վայր գցեց... Մինչև տուն նրան մնում էր յերկուհարյուր քայլ, ոչ ավելի։ Այդ տունը, որ նոր էր շինած ու սպիտակացրած, իր լայն, լուսավոր պատուհաններից սիրալիր կերպով դուրս էր նայում հնորյա լորենիների ու թխկիների խիտ կանաչի միջից։

— Ուրեմն ինչպես կհրամայեք զեկուցել Դարյա Միխայլովնային,— խոսեց իր մատուցած ծաղկին հասցրած վիճակից թեթև կերպով վիրավորված Պանդալևսկին.— շնորհ կանե՞ք ճաշի գալու։ Նրանք ձեր յեղբորն էլ խնդրում են։

— Այո՛, մենք կգանք, անպատճառ։ Իսկ ինչպե՞ս է Նատաշան։

— Նատալիա Ալեքսեևնան, փառք աստծո, առողջ են... Բայց մենք դեպի Դարյա Միխայլովնայի տունը տանող վոլորանն արդեն անցանք։ Թույլ տվեք ինձ՝ հրաժեշտ տալ ձեզ։

Ալեքսանդրա Պավլովնան կանգ առավ։

— Իսկ մի՞թե դուք մեզ մոտ չեք անցնի,— անվճռական ձայնով հարցրեց նա։

— Հոգով կուզեյի, բայց վախենում եմ ուշանամ։ Դարյա Միխայլովնան ցանկանում է լսել Տալբերգի նոր էտյուդը. ուրեմն պետք է պատրաստվել ու սովորեցնել։ Բացի այդ, խոստովանում եմ, կասկածում եմ, վոր իմ զրույցը կարողանա ձեզ վորևե հաճույք պատճառել։

— Վո՜չ... ինչո՞ւ...

Պանդալևսկին հառաչեց և արտահայտիչ կերպով աչքերը ցած գցեց։

— Ցտեսություն, Ալեքսանդրա Պավլովնա,— ասաց նա, մի փոքր լռելուց հետո գլուխ տվեց և մի քայլ հետ գնաց։

Ալեքսանդրա Պավլովնան շուռ յեկավ ու տուն գնաց։

Կոնստանտին Դիոմիդիչը նույնպես մեկնեց դեպի



իր տուն։ Նրա դեմքից վողջ քաղցրությունն իսկույն չքացավ. ինքնավստահ, համարյա դաժան արտահայտություն յերևաց այնտեղ։ Նույնիսկ Կոնստանտին Դիոմիդիչի քայլվածքը փոխվեց. Նա այժմ և՛ ավելի լայն եր քայլում, և՛ ավելի ծանր եր վոտք կոխում։ Նա ձեռնափայտն ազատ կերպով շարժելով՝ անցավ յերկու վերստ և հանկարծ նորից ժպտաց. Նա ճանապարհի մոտ տեսավ մի ջահել, բավական նախշունիկ գյուղական աղջիկ, վոր հորթերը վարսակից դուրս եր քշում։ Կոնստանտին Դիոմիդիչը կատվի պես զգույշ կերպով մոտեցավ աղջկան և հետը խոսեց։ Վերջինս սկզբում լուռ եր, կարմրում ու ծիծաղում եր. վերջապես շրթունքները թևով ծածկեց, շուռ յեկավ և ասաց.

— Գնա՛, տեր, դրուստ...

Կոնստանտին Դիոմիդիչը մատով սպառնաց նրան և պատվիրեց, վոր իր համար կապույտ տերեփուկներ (васильки) բերի։

— Ինչի՞դ են պետք կապույտ տերեփուկները. պսակներ հյուսելո՞ւ, ինչ է,— վրա բերեց աղջիկը։ Դե լավ, գնա՛, դրուստ...

— Լսի՛ր, սիրելի նախշունիկս,— սկսեց Կոնստանտին Դիոմիդիչը...

— Դե, գնա՛,— ընդհատեց նրան աղջիկը. այ տիկնոջ տղաները գալիս են։

Կոնստանտին Դիոմիդիչը հետ նայեց։ Ճիշտ վոր, ճանապարհով վազում եյին Վանյան և Պետյան— Դարյա Միխայլովնայի տղաները։ Նրանց հետևից գալիս եր նրանց ուսուցիչ Բասիստովը— քսաներկու տարեկան մի յերիտասարդ, վոր դասընթացը նոր եր

ավարտել: Բասխատովը բարձրահասակ մի տղա էր, հասարակ դեմքով, մեծ քթով, խոշոր շրթունքներով և խորոցին աչքերով, տգեղ էր և վոչ-ճարպիկ, բայց բարի, ազնիվ և շիտակ: Նա հագնվում էր անփույթ, մազերը չէր խուզում — վոչ թե ոճնամոլությունից, այլ ծուլությունից. սիրում էր ուտել, սիրում էր քնել, բայց սիրում էր նույնպես լավ գիրք, տաք զրույց և ամբողջ հոգով ատում էր Պանդալևսկուն:

Դարյա Միխայլովնայի յերեխաները պաշտում եյին Բասխատովին և բնավ չեյին վախենում նրանից: Տանը մյուս բոլորի հետ նա մտերիմ էր. մի բան, վոր այնքան էլ դուր չէր գալիս տանտիրուհուն, վորքան էլ սա ասելիս լիներ, թե իրեն համար նախապաշարմունքներ գոյություն չունեն:

— Բարև ձեզ, սիրելիներս,— խոսեց Կոնստանտին Դիոմիդիչը:— Այսոր ինչ վաղ եք զբոսանքի դուրս յեկել: Իսկ յես,— ավելացրեց նա՝ դառնալով դեպի Բասխատովը,— վաղուց եմ դուրս յեկել. բնությունով հիանալն իմ մոլուցքն է:

— Մենք տեսնում եյինք, թե դուք ինչպես եյիք հիանում բնությունով,— քրթմնջաց Բասխատովը:

— Դուք նյութապաշտ եք. հենց այս րոպեյիս աստված գիտե, թե ինչ եք մտածում: Ձեզ ճանաչում եմ:

Յերբ Պանդալևսկին խոսում էր Բասխատովի կամ նրա նման մարդկանց հետ, հեշտ էր գրգռվում և ռ տառն արտասանում էր մաքուր, նույնիսկ թեթև սուլոցով:

— Ինչ, յերևի այդ աղջկանից ճանապարհն եյիք հարցնում,— ասաց Բասխատովը՝ աչքերն աջ ու ձախ դարձնելով:



Նա զգում էր, վոր Պանդալևսկին ուղիղ իր յերեսին է նայում, իսկ այդ նրա համար չափազանց տհաճ էր:

— Կրկնում եմ, դուք նյութապաշտ եք, և ուրիշ վոչինչ: Դուք ամեն բանում անպայման ուզում եք միայն պրոզայիկ կողմը տեսնել...

— Յերեխաներ,— հանկարծ հրամայեց Բասխատովը:— Տեսնում եք մարգագետնի ուռենին. տեսնենք ով ավելի շուտ վազելով կհասնի նրան... մեկ, յերկու, յերեք:

Յեվ յերեխաները բոլոր ուժով նետվեցին դեպի ուռենին: Բասխատովն ընկավ նրանց հետևից...

«Ռամիկ»,— մտածում էր Պանդալևսկին.— «կփչացնի նա այս յերեխաներին... Կատարյալ ռամիկ»:

Յեվ ինքնաբավական կերպով մի հայացք գցելով իր սեփական վայելուչ ու քնքույշ կերպարանքին, Կոնստանտին Դիոմիդիչն իր չաղ մատներով յերկու անգամ խփեց սերթուկի թևքին, ոձիքը թափահարեց և առաջ անցավ: Վերադառնալով իր սենյակը, նա հագավ իր հնամաշ խալաթը և մտախոհ դեմքով նստեց դաշնամուրի առաջ:

---

## II

Դարյա Միխայլովնա Լասունսկայայի տունը համարյա առաջինն էր համարվում ամբողջ... նահանգում։ Վիթխարի քարե, Ռաստրելլիի անցյալ դարի ճաշակի նկարներով կառուցված այս տունը փառահեղ կերպով բարձրանում էր բլրի գագաթին, որի ստորոտով հոսում էր միջին Ռուսաստանի գլխավոր գետերից մեկը։ Ինքը Դարյա Միխայլովնան ականավոր ու հարուստ տիրուհի էր՝ գաղտնի խորհրդականի այրի։ Թեպետև Պանդալևսկին նրա մասին պատմել էր, թե նա ամբողջ Եվրոպան ճանաչում է, Եվրոպան էլ նրան է ճանաչում, սակայն Եվրոպան նրան քիչ էր ճանաչում, նույնիսկ Պետերբուրգում նա կարևոր դեր չէր խաղում։ Բայց դրա փոխարեն՝ Մոսկվայում նրան ճանաչում էին ամենքը ու գնում էին մոտը։ Նա ամենաբարձր դասին էր պատկանում և մի փոքր տարօրինակ, ոչ բոլորովին բարի, բայց չափազանց խելոք կնոջ համբավ ուներ։ Ջահել ժամանակ շատ սիրուն էր եղել։ Բանաստեղծները նրան ոտանավորներ էին նվիրում, երիտասարդները նրա վրա սիրահարվում էին, իսկ դիրքի տեր պարոնները նրա հետևից քարշ էին գալիս։ Սակայն այդ օրից քսանհինգ թե երեսուն տարի էր անցել և նախկին հմայքից հետք անգամ չէր մնացել։ «Միթե»—ակամայից հարցնում էր իրեն առաջին անգամ նրան տեսնող ամեն մեկը,—միթե այս նիհարիկ, դեղնած, սրաքիթ ու դեռ չպառավված



կինը յերբևիցե գեղեցկուհի յե յեղել։ Միթե սա նա յե, նա ինքը, որի համար քնարներ են հնչել։ Եվ ամեն մեկը ներքուստ զարմանում էր ամեն հողեղեն բանի փոփոխական լինելու մասին։ Ճիշտ է, Պանդալևսկին գտնում էր, որ զարմանալի կերպով պահպանվել են Դարյա Միխայլովնայի չքնաղ աչքերը, բայց չէ՞ որ նույն Պանդալևսկին էլ պնդում էր, թե նրան ամբողջ Եվրոպան է ճանաչում։

Ամեն ամառ Դարյա Միխայլովնան իր գյուղն էր գալիս յերեխաների հետ (նա յերեք յերեխա ուներ. մի աղջիկ՝ Նատալյա—տասնյոթ տարեկան, և յերկու տղա՝ տասը և ինը տարեկան) և ապրում էր ազատ կերպով, այսինքն, տղամարդիկ էր ընդունում, հատկապես ամուրիների. գավառական տիրուհիներին նա տանել չէր կարողանում։ Փոխարենը հենց այդ տիրուհիներից էլ նրան էր հասնում։ Դրանց ասելով՝ Դարյա Միխայլովնան և՛ հպարտ էր, և՛ անբարոյական, և՛ սարսափելի բռնակալ. բայց, որ գլխավորն էր, խոսակցության մեջ նա իրեն այնպիսի ազատություն էր թույլ տալիս, որից սարսափել կարելի յեր։ Իրոք, Դարյա Միխայլովնան չէր սիրում իրեն ճնշել գյուղում, և նրա վարմունքի ազատ պարզության մեջ մայրաքաղաքյան էգ առյուծի արհամարհանքի գունավորում էր նկատվում դեպի իր շրջապատի բավական մութ ու մանր արարածները... Նա քաղաքի ծանոթների հետ էլ շատ ազատ, նույնիսկ ծաղրական կերպով էր վարվում, սակայն արհամարհանքի գունավորում չէր լինում։

Ի դեպ, ընթերցող, դուք նկատե՞լ եք, որ իր ստորադրյալների շրջանում անօրինակ ցրված մարդը յերբեք բարձրադիր անձերի նկատմամբ ցրված չի լինում։

Այդ ինչի՞ց է։ Ասենք՝ նման հարցերը մեզ վոչնչի չեն հասցնի։

Յերբ, վերջապես, Կոնստանտին Դիոմիդիչը, տալբերգյան ետյուդը սերտած, իր մաքուր և ուրախ սենյակից հյուրասենյակ իջավ, վորը տանու հասարակությունը հավաքված գտավ։ Սալոնն արդեն սկսվել եր։ Լայն ոթոցի վրա վոտները ծալած և ֆրանսերեն մի նոր գրքույկ ձեռքում պտտեցնելով՝ տեղավորված եր տանտիրուհին։ Պատուհանի առաջ, քարգահի մոտ նստած եյին՝ մի կողմում Դարյա Միխայլովնայի աղջիկը, իսկ մյուս կողմում m-elle Boncourt-ը՝ տնային դաստիարակչուհին—վաթսուն տարեկան մի ցամաքած ու պառավված աղջիկ, վորը սև մազերը ժողովել եր գույնզգույն գլխանոցի մեջ, ականջներն էլ բամբակ եր կոխել։ Դռան մոտ, անկյունում, տեղավորվել եր Բասիստովը և լրագիր եր կարդում. Նրա մոտ Պետյան և Վանյան տամա եյին խաղում, իսկ դեպի վառարանը կռացած և ձեռները մեջքին դրած, կանգնած եր մի ցածրահասակ պարոն—խճճված ու սպիտակ մազերով, թուխ դեմքով և, սև ու արագաշարժ աչքերով—վոմն Աֆրիկան Սեմյոնիչ Պիգասով։

Տարորինակ մարդ եր այս պարոն Պիգասովը։ Դառնացած ամեն բանի և ամենքի, մանավանդ կանանց դեմ նա առավոտից մինչև յերեկո հայհոյում եր,—յերբեմն շատ շեշտակի, յերբեմն բավական բութ, բայց միշտ հաճույքով։ Նրա դյուրագրգռությունը միշտ յերեխայության եր հասնում։ Նրա ծիծաղը, նրա ձայնը, նրա վողջ եյությունը կարծես մաղձով եյին լցված։ Դարյա Միխայլովնան Պիգասովին հաճույքով եր ընդունում։ Նա իր արտառոց վարմունքներով զվարճացնում եր



տիրուհուն։ Այդ վարմունքները, հիրավի, բավական զվարճալի եյին։ Ամեն ինչ չափազանցնելը նրա մոլուցքն եր։ Որինակ՝ ինչ դժբախտության մասին էլ նրա մոտ խոսեյին,—պատմեյին նրան, թե կայծակն այրել ե գյուղը, թե ջուրը քանդել ե ջրաղացը, թե մի գյուղացի կացնով կտրել ե իր ձեռքը,—նա միշտ կենտրոնացած դայրույթով հարցնում եր. «Իսկ ի՞նչ ե նրա անունը»,—այսինքն՝ ինչ ե այն կնոջ անունը, վորից ծագել ե այդ դժբախտությունը, վորովհետև նրա համոզմունքով ամեն մի դժբախտության պատճառը կինն ե, հարկավոր ե միայն լավ թափանցել գործի մեջ։ Մեկ անգամ նա ծունկ չոքեց իրեն համարյա անծանոթ մի տիրուհու առաջ, վորը ձանձրացնելու չափ հյուրասիրում եր նրան, և սկսեց արտասվախառն, բայց դեմքին աննկարագրելի դայրույթով աղաչել, վոր տիրուհին խնայի իրեն, վոր ինքը նրա առաջ յերբեք չի մեղանչել և յերբեք չի լինի նրա մոտ։ Մեկ անգամ ձին սարից ցած թռցրեց Դարյա Միխայլովնայի լվացարարուհիներից մեկին, գցեց փոսը և քիչ եր մնում սպաներ նրան։ Դրանից հետո Պիգասովը ուրիշ կերպ չեր անվանում այդ ձիուն, քան յեթե բարի, բարի ձիուկ, իսկ սարն ու փոսը համարում եր չափազանց գեղատեսիլ տեղեր։ Կյանքի մեջ Պիգասովի բախտը չեր բանել. նա այդ հիմարությունն էլ սովորություն եր դարձրել իրեն համար։ Նա ծնվել եր աղքատ ծնողներից։ Հայրը զանազան մանր պաշտոններ եր վարում, հազիվ գրագետ եր և չեր հոգում վորդու կրթության մասին։ Կերակրում, հագցնում եր նրան—ուրիշ վոչինչ։ Մայրը նրան յերես եր տալիս, բայց շուտ մեռավ։ Պիգասովը ինքն եր իրեն կրթում, ինքը մտավ գավառական դպրոց,

հետո էլ գիմնազիա. սովորեց ֆրանսերեն, գերմաներեն, նույնիսկ լատիներեն, և գիմնազիայից շատ լավ վկայագրով դուրս գալով, ուղևորվեց Դորպատ, որտեղ անընդհատ պայքարում էր կարիքի դեմ, սակայն յոթամյա դասընթացն ավարտեց։ Պիգասովի ընդունակությունները սովորականից չէին դուրս գալիս։ Նա աչքի չէր ընկնում համբերությամբ ու հաստատակամությամբ, սակայն նրանում առանձնապես ուժեղ էր փառասիրության զգացմունքը, լավ հասարակության մեջ ընկնելու և, բախտի ջգրու, ուրիշներից հետ չմնալու ցանկությունը։ Նա ջանասեր սովորող էլ էր, և Դորպատյան համալսարանը մտավ փառասիրությունից։ Աղքատությունը զայրացնում էր նրան և նրա մեջ դիտողականություն ու նենգություն զարգացրեց։ Նա յուրատեսակ էր արտահայտվում. նա փոքրուց թունոտ ու դյուրագրգիռ պերճախոսության առանձին տեսակ յուրացրեց։ Նրա մտքերն ընդհանուր մակարդակից չէին բարձրանում, սակայն այնպես էր խոսում, որ կարող էր ոչ միայն խելոք, այլ նույնիսկ շատ խելոք մարդ երևալ։ Կանդիդատի աստիճան ստանալով՝ Պիգասովը որոշեց իրեն նվիրել գիտական կոչման։ Նա հասկանում էր, որ ոչ մի այլ ասպարեզում չի կարող իր ընկերներին հասնել (նա աշխատում էր նրանց ընտրել ամենաբարձր շրջանից և կարողանում էր հարմարվել, նույնիսկ շողոքորթել նրանց, թեպետ շարունակ կռվում էր)։ Սակայն այստեղ, պարզ ասած, նյութ չուներ։ Ինքնուս՝ ոչ գիտությունը սիրելուց, Պիգասովը իսկապես շատ քիչ բան գիտեր։ Նա դիսպուտի ժամանակ չարաչար տապալվեց, մինչդեռ նրա հետ միասին միևնույն սենյակում ապրող մի այլ



ուսանող, որի վրա նա շարունակ ծիծաղում էր, չափազանց սահմանափակ, բայց կանոնավոր ու կայուն կրթություն ստացած մի մարդ, կատարելապես հաղթող հանդիսացավ։ Այս անհաջողությունը կատաղեցրեց Պիգասովին։ Նա կրակը գցեց իր բոլոր գրքերն ու տետրակները և ծառայության մտավ։ Սկզբում գործը վատ չէր գնում։ Թեպետ շատ էլ տնօրինիչ աստիճանավոր չէր, սակայն չափազանց ինքնավստահ էր ու ճարպիկ. բայց նա ցանկացավ շուտ մարդամեջ դուրս գալ. նա խճճվեց, սայթաքեց և ստիպված յեղավ հրաժարական տալ։ Երեք տարի նա նստեց իր աշխատանքով ձեռք բերած գյուղակում և հանկարծ ամուսնացավ մի հարուստ, կիսակիրթ կալվածատիրուհու հետ, որին որսաց իր սանձարձակ ու ծիծաղելի շարժուձևերի կարթիկով։ Բայց Պիգասովի բնավորությունն արդեն շատ դյուրագրգիռ էր դարձել ու թթվել. նա նեղվում էր ընտանեկան կյանքից... Նրա կինը մի քանի տարի նրա հետ ապրելուց հետո՝ ծածուկ գնաց Մոսկվա և իր կալվածքը վաճառեց մի ինչ-որ ՚աֆերիստի, մինչդեռ Պիգասովը այնտեղ հենց նոր էր դաստակերտ կառուցել։ Այս վերջին ծանր հարվածից մինչև հիմքը ցնցված, նա կնոջ դեմ դատ սկսեց, բայց ոչինչ չշահեց... Նա իր կյանքն անց էր կացնում միայնակ, գնում էր հարևանների մոտ, որոնց հայհոյում էր հետևներից, և նույնիսկ յերեսներին, որոնք նրան մի տեսակ լարված կիսաքրքիջով էին ընդունում, թեպետ նա լուրջ յերկյուղ չէր ներշնչում նրանց, և յերբեք ձեռքը գիրք չէր առնում։ Նա մոտ հարյուր շունչ ուներ։ Նրա գյուղացիները աղքատություն չէին քաշում։

— Ah! Constantin!—ասաց Դարյա Միխայլովնան, հենց վոր Պանդալևսկին հյուրասենյակ մտավ,—Alexandrine-ն կլինի՞։

— Ալեքսանդրա Պավլովնան պատվիրեցին շնորհակալություն հայտնել ձեզ և իրենց համար առանձին բավականություն են համարում,—վրա բերեց Կոնստանտին Դիոմիդիչը, հաճելիորեն ամեն կողմ գլուխ տալով և յեռանկյունավոր կտրած յեղունգներ ունեցող հաստ, բայց սպիտակ ձեռքը հիանալի կերպով սանրած մազերին քսելով։

— Վոլինցեն էլ կլինի։

— Նրանք ևս։

— Ուրեմն ինչ, Աֆրիկան Սեմյոնիչ,—դառնալով Պիգասովին՝ շարունակեց Դարյա Միխայլովնան,—ձեր կարծիքով բոլոր օրիորդներն անբնակա՞ն են։

Պիգասովի շրթունքները կողքի վոլորվեցին, և նա ջղայնորեն ցնցեց արմունկը։

— Յես ասում եմ,—շարունակեց նա (նա կատաղության ամենասուժգին մոլուցքի ժամանակ խոսում եր դանդաղ և պարզորոշ կերպով)—յես ասում եմ, վոր օրիորդներն ընդհանրապես,—ներկա յեղողների մասին, հասկանալի յե, լռում եմ...

— Բայց այդ չի խանգարում, վոր նրանց մասին ես մտածեք,—ընդհատեց Դարյա Միխայլովնան։

— Յես նրանց մասին լռում եմ,—կրկնեց Պիգասովը։—Ընդհանրապես բոլոր օրիորդները վերին աստիճանի անբնական են. անբնական են իրենց զգացմունքներն արտահայտելու մեջ։ Օրինակ, վախենա օրիորդը, թե մի բանի վրա ուրախանա կամ տխրի, նա անպատճառ ամենից առաջ իր մարմինն այսպիսի



մի նրբին բեկում կտա (և Պիգասովն իր իրանն ամենատգեղ կերպով ծռեց ու ձեռքերը չռեց) և հետո արդեն կգոչի՝ ախ, կամ կծիծաղի, կամ լաց կլինի։ Սակայն ինձ (և այստեղ Պիգասովն ինքնաբավական կերպով ժպտաց), այնուամենայնիվ, հաջողվեց մեկ անգամ զգացմունքի անկեղծ, վոչ-շինծու արտահայտություն ստանալ մի զարմանալի անբնական օրիորդից։

— Այդ ինչպես։

Պիգասովի աչքերը փայլեցին։

— Յես հետևից բարդու ցցով խփեցի նրա կողքին։ Նա այնպես ծվաց. իսկ յես նրան—կեցցես, կեցցես—ասի, այդ բնության ձայնն ե, դա բնական ճիչ եր։ Դուք այսուհետև ել միշտ այդպես վարվեցեք։

Բոլորը սենյակում ծիծաղեցին։

— Ի՞նչ դատարկ բան եք ասում, Աֆրիկան Սեմյոնիչ,—բացականչեց Դարյա Միխայլովնան։—Միթե կհավատամ, վոր դուք օրիորդի կողին ցցով կխփեք։

— Աստված վկա, ցցով, շատ մեծ ցցով, այնպիսի ցցով, վոր գործ են ածում ամրոցները պաշտպանելիս։

— Mais c'est une horreur ce que vous dites l'a, monsieur [1]),—աղաղակեց m-elle Boncourt-ը՝ սպառնալից նայելով հռհռացող յերեխաների վրա։

— Մի հավատաք նրան,—ասաց Դարյա Միխայլովնան.—միթե չեք ճանաչում նրան։

Բայց զայրացած ֆրանսուհին յերկար չեր կարողանում հանգստանալ և շարունակ ինչ-վոր բան եր փնթփնթում քթի տակ։

— Դուք կարող եք չհավատալ ինձ,—սառնարյուն ձայնով շարունակեց Պիգասովը—սակայն յես հաս-

1) Բայց ախր այն, վոր դուք եք պատմում, սարսափելի յե, պարոն (Ֆր.)։

տատում եմ, որ դուք ճշմարտություն ասացիք։ Ո՞վ կիմանա այդ, յեթե ոչ՝ յես։ Սրանից հետո, յերևի, նույնպես չեք հավատա, որ մեր հարևանուհի Չեպուզովա Յելենա Անտոնովնան ինքը, նկատեցեք, ինքն ինձ պատմել է, թե ինչպես է սպանել իր հարազատ ազգականին։

— Այ թե հնարեցիք, հա՜։

— Թույլ տվեք, թույլ տվեք։ Լսեցեք և դատեցեք ինքներդ։ Նկատեցեք, յես նրան զրպարտել չեմ ցանկանում. յես մինչև իսկ սիրում եմ նրան, այսինքն՝ վորքան կարելի յե կնոջը սիրել. նրա տանը, բացի օրացույցից, վոչմի գիրք չկա և նա միայն բարձրաձայն կարող է կարդալ. այդ վարժությունից նա թեթև կերպով քրտնում, հետո էլ գանգատվում է, թե դրանից աչքերը դուրս են պրծնում... Մի խոսքով՝ նա լավ կին է, նրա աղախիններն էլ հաստ են։ Յես ինչո՞ւ պետք է նրան զրպարտեմ։

— Դե,—նկատեց Դարյա Միխայլովնան,—Աֆրիկան Սեմյոնիչը հեծել է իր ձին, հիմա մինչև յերեկո էլ չի իջնի։

— Իմ ձին... Իսկ կանայք դրանից յերեքն ունեն, վորոնցից յերբեք չեն իջնում,—բացի միայն յերբ քնած են։

— Վորո՞նք են այդ յերեք ձիերը։

— Կշտամբանք, ակնարկ և յերեսծեծանք։

— Գիտե՞ք ինչ, Աֆրիկան Սեմյոնիչ,—սկսեց Դարյա Միխայլովնան,—դուք իզուր չեք այդքան չարացած կանանց վրա։ Յերևի մեկը ձեզ...

— Վիրավորել է, ուզում եք ասել,—ընդհատեց նրան Պիգասովը։

Դարյա Միխայլովնան մի փոքր շփոթվեց. նա հի-



շեց Պիգասովի դժբախտ ամուսնության մասին... և միայն գլխով արավ։

— Ինձ մեկ կին, ճիշտ վոր, վիրավորել է,—խոսեց Պիգասովը.—թեպետև բարի յեր, խիստ բարի...

— Իսկ դա ո՞վ է։

— Մայրս,—ասաց Պիգասովը՝ ձայնն իջեցնելով։

— Ձեր մա՞յրը։ Իսկ ինչո՞վ կարող էր նա ձեզ վիրավորել։

— Նրանով, վոր ծնեց...

Դարյա Միխայլովնան հոնքերը խոժոռեց։

— Ինձ թվում է,—ասաց նա,—մեր խոսակցությունը տխուր ընթացք է ստանում... Constantin, նվագեցեք մեզ համար Տալբերգի նոր էտյուդը... Թերևս յերաժշտության ձայները կմեղմացնեն Աֆրիկան Սեմյոնիչին։ Զե՞ վոր Որփեոսը մեղմացնում էր վայրի գազաններին։

Կոնստանտին Դիոմիդիչը նստեց դաշնամուրի առաջ և էտյուդը շատ բավարար կերպով նվագեց։ Սկզբում Նատալիա Ալեքսեևնան ուշադրությամբ էր լսում, հետո նորից ձեռնամուխ յեղավ իր գործին։

— Merci', c'est charmant [1],—ասաց Դարյա Միխայլովնան,—սիրում եմ Տալբերգին, Il est si distingué [2]։ Ի՞նչ եք խորհում, Աֆրիկան Սեմյոնիչ։

— Յես մտածում եմ,—դանդաղ կերպով սկսեց Պիգասովը,—վոր յերեք կարգի յեսամոլներ կան.—յեսամոլներ, վորոնք իրենք ապրում են, ուրիշներին էլ ապրել են թողնում. յեսամոլներ, վորոնք իրենք ապրում են, իսկ ուրիշներին ապրել չեն թողնում. վերջապես՝ յեսամոլներ, վորոնք իրենք էլ չեն ապրում, ուրիշնե-

1) Շնորհակալ եմ ձեզնից. այդ հմայիչ է (Ֆր.)։

2) Նա այնպես ազնիվ է (Ֆր.)։

րին էլ չեն թողնում... Կանայք մեծ մասամբ յերրորդ կարգին են պատկանում։

— Ինչպիսի սիրալիրություն։ Մի բանի վրա միայն զարմանում եմ, Աֆրիկան Սեմյոնիչ, թե ինչպիսի ինքնավստահություն ունեք դուք ձեր դատողություններում. կարծես դուք յերբեք չեք կարող սխալվել։

— Ո՞վ է ասում։ Յես էլ եմ սխալվում. տղամարդն էլ կարող է սխալվել։ Բայց գիտե՞ք, թե ինչ տարբերություն կա տղամարդու սխալի և կնոջ սխալի մեջ։ Չգիտե՞ք։ Ահա թե ինչ. տղամարդն, որինակ, կարող է ասել, թե յերկու անգամ յերկուսը չորս չէ, այլ հինգ կամ յերեք և կես, իսկ կինը կասի — յերկու անգամ յերկուսը ճարպամոմ է։

— Յես այդ, կարծեմ, ձեզնից արդեն լսել եմ... Բայց թույլ տվեք հարցնել՝ յերեք յեսամոլների մասին ձեր միտքն ինչ կապ ունի յերաժշտության հետ, վորը դուք հենց այժմ լսեցիք։

— Վո՜չ մի. յես յերաժշտությունը չեյի էլ լսում։

— Ո՜, բարեկամ, յես տեսնում եմ՝ դուք անուղղելի յեք, ինչ էլ լինի, — վրա բերեց Դարյա Միխայլովնան, թեթև կերպով աղավաղելով Գրիբոյեդովի վոտանավորը։ Էլ ինչ եք սիրում, յեթե յերաժշտությունն էլ ձեզ դուր չի գալիս։ Միթե գրականությունը։

— Յես գրականությունը սիրում եմ, միայն՝ վոչ այժմյանը։

— Ինչու։

— Ահա թե ինչու։ Մոտ ժամանակներս յես մի ազնվականի հետ լաստանավով կտրում եյի Օկան։ Լաստանավը մի զառիթափ տեղի դեմ առավ։ Պետք էր կառքերը ձեռքով վեր քաշել։ Ազնվականի կառքը շատ ծանր եր։ Մինչդեռ լաստավարները կառքը դեպի ափ քաշելուց ուժասպառ եյին լինում, տերը լաստանավի վրա կանգնած այնպես եր տնքտնքում, վոր նույնիսկ մեղքս յեկավ... Ահա, մտածում եյի յես, աշխատանքի բաժանման նոր սիստեմի կիրառում։ Այդպես էլ այժմյան գրականությունն է. ուրիշները կրում, գործ են անում, իսկ նա տնքտնքում է։

Դարյա Միխայլովնան ժպտաց։

— Յեվ այդ կոչվում է ժամանակակից կենցաղի վերարտադրություն, — շարունակում եր անխոնջ Պիգասովը. — խոր կարեկցանքով դեպի հասարակական խնդիրները և էլի ինչ-վոր... Ախ, այդ բարձրագոչ խոսքերը։

— Իսկ, այ, կանայք, վորոնց վրա դուք այդպես հարձակվում եք, նրանք գոնե բարձրագոչ բառեր չեն գործածում։

Պիգասովն ուսերը թոթվեց.

— Չեն գործածում, վորովհետև չեն կարողանում։

Դարյա Միխայլովնան թեթև կերպով կարմրատակեց։

— Դուք սկսում եք վիրավորական խոսքեր ասել, Աֆրիկան Սեմյոնիչ, — հարկադրված ժպիտով նկատեց նա։

Սենյակում ամեն ինչ լռեց։

— Ո՞ւր է այն Զոլոտոնոշան, — հանկարծ յերեխաներից մեկը հարցրեց Բասիստովին։

— Պոլտավայի նահանգում, իմ սիրելիս. հենց Խոխլանդիայում, — միջամտեց Պիգասովը (խոսակցությունը փոխելու առիթից նա ուրախացավ)։ Ա՜յ, մենք խոսում եյինք գրականության մասին, — շարու-

նակեց նա.—յեթե ես ավելորդ փող ունենայի, ես հենց հիմա մալոռուսական բանաստեղծ կդառնայի։

— Ա՞յդ էլ ինչ էր։ Լա՜վ բանաստեղծ եք,—վրա բերեց Դարյա Միխայլովնան.—միթե դուք մալոռուսերեն գիտեք։

— Բավական, բայց այդ պետք էլ չէ։

— Ինչպե՞ս պետք չէ։

– Հենց այնպես էլի, պետք չէ։ Հարկավոր է միայն մի թերթ թուղթ վերցնել և վերևը գրել... Дума. հետո սկսել այսպես.—гой, ты доля моя, доля! կամ՝ седе казачино Наливайко на кургане! մի այլ տեղ էլ՝ по-пид горою, по-пид зеленою, грае, грае воропае, гоп! гоп! կամ սրա նման մի ուրիշ բան։ Յեվ—պատրաստ է։ Տպիր ու հրատարակիր։ Մալոռոսը կկարդա՝ ձեռքին այտը հենած և անպատճառ լաց կլինի—այնքա՜ն զգայուն հոգի յէ։

— Ներեցե՜ք,—բացականչեց Բասիստովը։—Այդ ի՞նչ եք ասում. այդ ոչնչի համապատասխան չէ։ Յես ապրել եմ Մալոռոսիայում, սիրում եմ նրա լեզուն և գիտեմ. „грае, грае воропае"—կատարյալ անմտություն է։

— Գուցե, իսկ խոխոլն այնուամենայնիվ լաց կլինի։ Դուք ասում եք՝ լեզու... Բայց միթե մալոռուսական լեզու գոյություն ունի։ Յես մեկ անգամ մի խոխոլի խնդրեցի թարգմանել հետևյալ, ինձ պատահած, առաջին դարձվածքը. քերականությունն ուղիղ կարդալու և գրելու արվեստն է (грамматика есть искусство правильно читать и писать)։ Գիտե՞ք՝ ինչպես թարգմանեց նա... „храматыка е выскусьтво правыльно чытаты ы пысаты". Յեվ ինչ, ձեր կարծիքով այս լեզո՞ւ յէ. ինքնուրույն լեզո՞ւ։ Սրա հետ համաձայնելուց առաջ





յես ավելի շուտ կհամաձայնեմ իմ լավագույն բարեկամին մանրել սանդում։

Բասիստովն ուզեց առարկել։

— Թողեք նրան,— խոսեց Դարյա Միխայլովնան.— չէ՞ որ գիտեք, որ նրանից, պարադոքսներից բացի, ոչինչ չես լսի։

Պիգասովը խայթիչ կերպով ժպտաց։ Սպասավորը մտավ և զեկուցեց Ալեքսանդրա Պավլովնայի և նրա յեղբոր գալստյան մասին։

Դարյա Միխայլովնան յելավ հյուրերին դիմավորելու։

— Բարև ձեզ, Alexandrine,— խոսեց նա՝ մոտենալով նրան։— Ի՞նչ խելոք բան եք արել, որ յեկել եք։ Բարև ձեզ, Սերգեյ Պավլիչ։

Վոլինցևը սեղմեց Դարյա Միխայլովնայի ձեռքը և մոտեցավ Նատալիա Ալեքսեևնային։

— Իսկ ինչ. ձեր նոր ծանոթ այդ բարոնն այսօր կգա՞,— հարցրեց Պիգասովը։

— Այո՛, կգա։

— Նա, ասում են, մեծ ֆիլոզոֆ է. նրանից ուղղակի Հեգել է ցայտում։

Դարյա Միխայլովնան ոչինչ չէր պատասխանում։ Նա Ալեքսանդրա Պավլովնային նստեցրեց օթոցի վրա, ինքն էլ տեղավորվեց նրա մոտ։

— Փիլիսոփայությունը,— շարունակեց Պիգասովը,— բարձրագույն տեսակետ է։ Ահա սա ես իմ մահն է — այս բարձրագույն տեսակետները։ Եվ ինչ կարելի յե վերից տեսնել։ Երևի յերբ ցանկանաս ձի գնել, գիտանոցից չես նայի նրան։

— Այդ բարոնը ձեզ համար ինչ-որ հոդված էր ուզում բերել,— հարցրեց Ալեքսանդրա Պավլովնան։



— Այո՛, հոդված,— չափազանցված անփութությամբ պատասխանեց Դարյա Միխայլովնան.— Ռուսաստանում առևտրի և արդյունաբերության միջև յեղած կապի մասին... Բայց մի՛ վախենաք, մենք այստեղ չենք կարդալու այն... ձեզ դրա համար չեմ կանչել։ Le baron est aussi aimable que savant [1]։ Եվ ռուսերեն այնպե՜ս լավ է խոսում. C'est un vrai torrent... il vous entraîne [2].

— Ռուսերեն այնպես լավ է խոսում,— փնթփնթաց Պիգասովը,— որ ֆրանսիական գովեստի յե արժանանում։

— Փնթփնթացե՛ք, Աֆրիկան Սեմյոնիչ, էլի փնթփնթացե՛ք... Այդ շատ է սազում ձեր գզգզված սանրվածքին... Սակայն, ինչո՞ւ նա չի գալիս։ Գիտե՞ք ինչ, messieurs et mesdames [3],— շուրջը նայելով, ավելացրեց Դարյա Միխայլովնան.— գնանք պարտեզ... Մինչև ճաշ դեռ մոտ մի ժամ է մնում, իսկ յեղանակը հրաշալի յե...

Վողջ հասարակությունը վոտքի յելավ և ուղևորվեց դեպի պարտեզ։

---

Դարյա Միխայլովնայի պարտեզը մինչև գետն էր հասնում։ Նրանում լորենու շատ հին ծառուղիներ կային՝ ոսկեգույն-մթին ու անուշաբույր, վերջերում զմ-

1) Բարոնը նույնքան սիրալիր է, վորքան և գիտուն է (Ֆր.)։
2) Սա իսկական հեղեղ է... նա ձեզ հրապուրում է (Ֆր.)։
3) Պարոններ և տիկիններ (Ֆր.)։

բուխսերի ստարացվածքներով, լայն նաև ակացիայի և յասամանի շատ տաղավարներ։

Վոլինցևը Նատալիայի հետ միասին և m-elle Boncourt-ը չուշվեցին պարտեզի բոլորովին խորքը։ Վոլինցևը գնում էր Նատալիայի հետ կողք-կողքի և լուռ էր։ M-elle Boncourt-ը հետևում էր մի փոքր հեռվից։

— Ի՞նչ եք անում այստեղ,— վերջապես հարցրեց Վոլինցևը՝ ձգելով իր գեղեցիկ, մուգ-խարտյաշ բեխերի ծայրերը։

Նա իր դիմագծերով շատ էր նմանում իր քրոջը. սակայն նրանց արտահայտության մեջ ավելի քիչ խաղ ու կյանք կար. աչքերն էլ՝ գեղեցիկ ու փաղաքշիչ, նայում էին ինչ-որ թախծությամբ։

— Ոչինչ,— պատասխանում էր Նատալիան.— լսում էի, թե Պիգասովն ինչպես էր հայհոյում, ասեղնագործում էի հենքի վրա, կարդում էի։

— Իսկ ինչ էիք կարդում։

— Ես կարդում էի... խաչակրաց արշավանքների պատմությունը,— մի քիչ կմկմալով ասաց Նատալիան։

Վոլինցևը նայեց նրան։

— Ա՜,— ասաց նա վերջապես. այդ պետք է որ հետաքրքիր լինի։

Նա մի ճյուղ պոկեց և սկսեց պտտացնել օդում։ Նրանք քսան քայլ էլ անցան։

— Այդ ինչ բարոն է, որի հետ ձեր մայրը ծանոթացել է,— կրկին հարցրեց Վոլինցևը։

— Կամեր-յունկեր, յեկվոր է. maman-ը նրան շատ է գովում։



— Ձեր մայրն ընդունակ է հրապուրվելու։

— Այդ ցույց է տալիս, որ նա սրտով դեռ շատ յերիտասարդ է,— նկատեց Նատալիան։

— Այո։ Ես շուտով ձեզ կուղարկեմ ձեր ձին։ Նա համարյա բոլորովին վարժված է։ Ես ուզում եմ, որ նա հենց սկզբից քառատրոփ քայլի. և յես դրան կհասնեմ։

— Merci... [1]։ Սակայն յես ամաչում եմ։ Դուք ինքներդ եք նրան վարժեցնում... Այդ, ասում են, շատ դժվար է...

— Ձեզ ամենափոքր բավականություն պատճառելու համար, դուք գիտեք, Նատալիա Ալեքսեևնա, յես պատրաստ եմ... յես... ոչ միայն այդպիսի դատարկ բաների...

Վոլինցևը կմկմաց։

Նատալիան բարեկամաբար նայեց նրա վրա և մեկ անգամ ևս ասաց՝ merci։

— Դուք գիտեք,— յերկար լռությունից հետո շարունակեց Սերգեյ Պավլիչը,— որ չկա այնպիսի բան... Բայց ինչու համար եմ ասում այս։ Չէ՞ որ դուք բոլորը գիտեք։

Այդ ակնթարթում տանը զանգ հնչեց։

— Ah! la cloche du diner!— բացականչեց m-elle Boncourt-ը.— rentrons [2]։

„Quel dommage",— ինքն իրեն մտածում էր պառավ ֆրանսուհին՝ Վոլինցևի և Նատալիայի հետևից պատշգամբի աստիճանները բարձրանալով. „quel dommage, que ce charmant garçon ait si peu de ressources dans la conversation" [3], որը

1) Շնորհակալ եմ (ֆր.)։
2) Ա՜, ճաշի զանգը... վերադառնանք (ֆր.)
3) Ափսոս, որ այս հմայիչ տղան խոսելու մեջ այնքան թույլ է (ֆր.)։

կարելի չէ այսպես թարգմանել— դու, սիրելիս, սիրելի չես, բայց միջին վատ ես։

Բարոնը ճաշի չեկավ։ Նրան կես ժամի չափ սպասեցին։ Սեղանի շուրջը խոսակցությունը չէր կպչում։ Սերգեյ Պավլովիչը միայն նայում էր Նատալիային, վորի մոտ նստել էր, և յեռանդով ջուր էր լցնում նրա բաժակը։ Պանդալևսկին զուր էր ջանում զբաղեցնել իր հարևանուհուն— Ալեքսանդրա Պավլովնային.— Նա ամբողջովին յեռում էր քաղցրախոսությամբ, իսկ տիկինը քիչ էր մնում հորանջեր։

Բասիստովը հացի գնդա՛կներ էր գլորում և վոչ մի բանի մասին չէր մտածում։ Նույնիսկ Պիգասովը լուռ էր, և յերբ Դարյա Միխայլովնան նրան նկատեց, թե նա այսօր շատ է անսիրալիր, մռայլ կերպով պատասխանեց. «Իսկ յես յե՞րբ եմ սիրալիր լինում։ Այդ իմ գործը չէ...» և, դառը քմծիծաղ տալով, ավելացրեց. «Սպասեցե՛ք մի փոքր։ Ախր յես կվաս եմ, du prostoï ռուսական կվաս. իսկ, այ, ձեր կամեր-յունկերը...»։

— Բրավո,— գոչեց Դարյա Միխայլովնան,— Պիգասովը խանդում է, վաղորոք խանդում է։

Բայց Պիգասովը նրան վոչինչ չպատասխանեց, այլ միայն աչքի տակով նայեց։

Խփեց ժամի յոթը, և բոլորը նորից հյուրասենյակ հավաքվեցին։

— Ինչպես յերևում է՝ չի գա... ասաց Դարյա Միխայլովնան։

Բայց ահա կառքի թխթխկոց լսվեց. մի փոքրիկ ուղեկառք բակը մտավ, և մի քանի ակնթարթից հետո սպասավորը հյուրասենյակ մտավ և արծաթե փոքրիկ



սկուտեղի վրա մի նամակ տվեց Դարյա Միխայլովնային։ Նա նամակը մինչև վերջն աչքի անցկացրեց ու դառնալով դեպի սպասավորը՝ հարցրեց.

— Իսկ ո՞ւր է այս նամակը բերող պարոնը։

— Կառքում նստած է։ Կհրամայե՞ք ընդունել։

— Խնդրեմ։

— Սպասավորը դուրս յեկավ։

— Յերևակայեցե՛ք, ինչ ցավալի բան,— շարունակեց Դարյա Միխայլովնան.— բարոնը կարգադրություն է ստացել՝ իսկույն Պետերբուրգ վերադառնալ։ Նա իր մի բարեկամի՝ պարոն Ռուդինի հետ է ուղարկել ինձ իր հոդվածը։ Բարոնն ուզում էր նրան ինձ ներկայացնել. շատ էր գովում նրան։ Բայց ինչ անախորժ բան։ Հույս ունեյի, թե բարոնը մի քիչ կմնա այստեղ...

— Դմիտրի Նիկոլաևիչ Ռուդին,— զեկուցեց սպասավորը։

## III

Ներս մտավ յերեսունհինգ տարեկան մի մարդ՝ բարձրահասակ, փոքր-ինչ կորացած, գանգրահեր, սևորակ, անկանոն, բայց արտահայտիչ ու խելոք դեմքով, արագաշարժ ու մուգ կապույտ աչքերի թեթև փայլով, ուղիղ ու լայն քթով և գեղածիր շրթունքներով։ Հագուստը նոր չէր ու նեղ էր, կարծես յեկողը նրա միջից աճել էր։

Նա արագ մոտեցավ Դարյա Միխայլովնային և, թեթև գլուխ տալով, ասաց նրան, որ ինքը վաղուց էր ցանկանում նրան ներկայանալու պատիվն ունենալ, և թե նրա բարեկամ բարոնը շատ էր ցավում, որ չկարողացավ անձամբ հրաժեշտ տալ։

Ռուդինի բարակ ձայնը չէր համապատասխանում նրա հասակին և լայն կրծքին։

— Նստեցե՛ք, շատ ուրախ եմ,— ասաց Դարյա Միխայլովնան և ծանոթացրեց նրան վողջ հասարակության հետ, հարցրեց՝ այստեղացի՞ է, թե յեկվոր։

— Իմ կալվածքը Տ... նահանգումն է,— գլխարկը ձեռքերի մեջ պահելով պատասխանեց Ռուդինը,— իսկ այստեղ վաղուց չեմ։ Յես գործով եմ յեկել և առայժմ ապրում եմ ձեր գավառական քաղաքում։



— Ո՞ւմ մոտ։

— Բժշկի մոտ։ Նա իմ վաղեմի համալսարանական ընկերն է։

— Ա՜, բժշկի մոտ... Նրան գովում են։ Նա ասում են, իր գործը հասկանում է։ Իսկ բարոնի հետ դուք վաղո՞ւց եք ծանոթ։

— Յես նրան հանդիպեցի այս ձմեռ Մոսկվայում և այժմ մոտ մեկ շաբաթ անցրի նրա մոտ։

— Նա, բարոնը, շատ խելոք մարդ է։

— Այո՛ ։

Դարյա Միխայլովնան հոտոտեց ոդեկոլոնած թաշկինակի հանգույցը։

— Դուք ծառայո՞ւմ եք,— հարցրեց նա։

— Ո՞վ, յե՞ս։

— Այո՛։

— Ո՛չ... Յես պաշտոնաթող եմ։

— Փոքրիկ լռություն տիրեց։ Ընդհանուր խոսակցությունը նորոգվեց։

— Թույլ տվեք հետաքրքրվել,— սկսեց Պիգասովը՝ դառնալով դեպի Ռուդինը,— ձեզ հայտնի՞ է պարոն բարոնի ուղարկած հոդվածի բովանդակությունը։

— Հայտնի է։

— Այդ հոդվածը քննախոսում է առևտրի... բայց վո՛չ, սխալվեցի, արդյունաբերության և առևտրի հարաբերությունների մասին մեր հայրենիքում... Կարծեմ դուք այսպե՞ս բարեհաճեցիք արտահայտվել, Դարյա Միխայլովնա։

— Այո, դրա մասին է,— ասաց Դարյա Միխայլովնան և ձեռքը դրեց ճակատին։

— Յես, իհարկե, այդ գործերում վատ դատավոր եմ,— շարունակեց Պիգասովը,— սակայն պետք է խոս-

տովանեմ, վոր հոդվածի հենց վերնագիրն ինձ թվում է չափազանց… Ինչպես ավելի քաղաքավարի ասել… չափազանց մթին ու խճճված։

— Ինչո՞ւ չէ ձեզ այդպես թվում։

Պիգասովը քմծիծաղ տվեց և հարևանցիորեն նայեց Դարյա Միխայլովնային։

— Իսկ ձեզ համար պա՞րզ է,— ասաց նա՝ իր աղվեսի դեմքը նորից դեպի Ռուդինը դարձնելով։

— Ինձ համար պարզ է։

— Հըմ… Իհարկե, այդ դուք ավելի լավ կիմանաք։

— Ձեր գլուխը ցավո՞ւմ է,— հարցրեց Ալեքսանդրա Պավլովնան Դարյա Միխայլովնային։

— Վո՛չ։ Ինձնում այդ… C'est nerveux[1]։

— Թույլ տվեք հետաքրքրվել,— կրկին քթի մեջ խոսեց Պիգասովը,— ձեր ծանոթ պարոն բարոն Մուֆֆելը… այդպե՞ս էր, կարծեմ, նրանց անվանում։

— Ճիշտ այդպես։

— Պարոն բարոն Մուֆֆելը հատկապես քաղաքատնտեսությամբ է պարապում, թե՞ հենց այնպես, թե այդ հետաքրքիր գիտության իր պարապ ժամերն է նվիրում, վորոնք մնում են աշխարհիկ բավականություններից և պաշտոնի զբաղմունքներից։

Ռուդինը շեշտակի նայեց Պիգասովին։

— Բարոնն այդ գործում դիլետանտ է,— թեթև կարմրելով պատասխանեց նա,— բայց նրա հոդվածում արդարացի և հետաքրքիր շատ բան կա։

1) Ջղայնություն է (ֆր.)։



— Հոդվածը չիմացած չեմ կարող վիճել ձեզ հետ… Բայց համարձակվում եմ հարցնել,— ձեր բարեկամ բարոն Մուֆֆելի հեղինակությունը յերևի ավելի ընդհանուր դատողությունների, քան փաստերի՞ վրա է հիմնվում։

— Նրանում և՛ փաստեր, և՛ փաստերի վրա հիմնված դատողություններ կան։

— Այդպես, այդպես։ Զեկուցում եմ ձեզ, իմ կարծիքով… իսկ յես պատեհ առիթի այնուամենայնիվ կարող եմ իմ խոսքն ասել, յես յերեք տարի Դորպատում եմ անցկացրել… բոլոր այն այսպես կոչված ընդհանուր դատողությունները, հիպոթեզները, սիստեմները… ներեցե՛ք ինձ, յես գավառացի յեմ, սիրում եմ ճիշտն ասել… բանի պետք չեն։ Այդ բոլորը միայն խորհրդածություններ են— մարդկանց աչքերին թոզ փչել է… Պարոններ, փաստեր տվե՛ք, և այդքանը ձեզնից բավական կլինի։

— Իրո՛ք վոր,— վրա բերեց Ռուդինը։— Բայց փաստերի իմաստը հարկավո՞ր է տալ։

— Ընդհանուր դատողություննե՛ր,— շարունակեց Պիգասովը,— այդ ընդհանուր դատողությունները, տեսությունները, յեզրակացություններն իմ մահն են։ Այս բոլորը հիմնված է, այսպես կոչված, համոզմունքների վրա։ Յուրաքանչյուրն իր համոզմունքների մասին է խոսում. և դեռ պահանջում է հարգել դրանց և քարշ է տալիս իր հետ… Էհ։

Յեվ Պիգասովը բռունցքը թափահարեց ոդում։ Պանդալևսկին ծիծաղեց։

— Գեղեցի՛կ,— ասաց Ռուդինը,— ուրեմն ձեր կարծիքով համոզմունք չկա՞։

— Չկա— և գոյություն չունի։
— Այդ ձեր համոզմունքն է։
— Այո։
— Ուրեմն ինչպես եք ասում, թե նրանք գոյություն չունեն։ Ա՛յ, հենց առաջին անգամից ձեզ մեկ օրինակ։
Բոլորը ծիծաղեցին ու իրար նայեցին։
— Թո՛ւյլ տվեք, թո՛ւյլ տվեք, սակայն,— սկսեց Պիգասովը...
Բայց Դարյա Միխայլովնան ծափ տալով, բացականչեց. «Բրավո՛, բրավո՛, Պիգասովը ջարդված է, ջարդվա՛ծ», և կամացուկ գլխարկը հանեց Ռուդինի ձեռքերից։
— Մի՛ շտապեք ուրախանալ, տիրուհի՛, ժամանակ կունենաք,— սրտնեղած ասաց Պիգասովը։— Հաղթողի դեմքով սուր խոսք ասելը բավական չէ. հարկավոր է ապացուցել, հերքել... Մենք վեճի առարկայից շեղվեցինք։
— Թո՛ւյլ տվեք,— սառնարյուն կերպով նկատեց Ռուդինը,— շատ պարզ է։ Դուք չեք հավատում ընդհանուր դատողությունների օգտակարությանը, դուք չեք հավատում համոզմունքներին...
— Չեմ հավատում, չեմ հավատում, վոչնչի չեմ հավատում։
— Շատ լավ։ Դուք սկեպտիկ եք։
— Ես այդպիսի գիտական բառ գործածելու անհրաժեշտությունը չեմ տեսնում։ Ասենք...
— Դե մի՛ ընդհատեք,— միջամտեց Դարյա Միխայլովնան։
«Քը՛ս, քը՛ս, քը՛ս», այդ րոպեին ինքն իրեն ասաց Պանդալևսկին, և ամբողջովին ծիծաղ դարձավ։



— Այդ բառն արտահայտում է իմ միտքը,— շարունակեց Ռուդինը։ Դուք այդ բառը հասկանում եք, ինչու՞ ուրեմն գործ չածել։ Դուք վոչ մի բանի չեք հավատում... Ուրեմն փաստերին ինչու՞ եք հավատում։
— Ինչպես թե ինչու։ Այդ հիանալի է։ Փաստը հայտնի բան է, ամեն մեկը գիտե, թե ինչ է փաստը... Ես նրանց մասին դատում եմ իմ փորձով և սեփական զգացմունքով։
— Բայց միթե զգացմունքը ձեզ չի կարող խաբել։ Զգացմունքը ձեզ ասում է, թե արեգակը երկրի շուրջն է պտտվում... Կամ գուցե դուք համաձայն չե՞ք Կոպերնիկոսի հետ։ Դուք նրան էլ չեք հավատում։
Նորից ժպիտ անցավ բոլորի դեմքերով. և բոլորի աչքերը նորից դարձան դեպի Ռուդինը։ «Իսկ նա հիմար մարդ չէ», մտածում էր յուրաքանչյուրը։
— Դուք շարունակ հաճում եք կատակ անել,— խոսեց Պիգասովը։— Իհարկե, այդ շատ օրիգինալ է, բայց տեղին չէ։
— Մինչև այժմ իմ ասածում,— առարկեց Ռուդինը,— դժբախտաբար օրիգինալ շատ քիչ բան կա։ Այս շատ վաղուց հայտնի է և հազար անգամ ասվել է։ Բանն այդ չէ...
— Հապա վո՞րն է,— ո՛չ առանց լկտիության հարցրեց Պիգասովը։
Վեճի ընթացքում նա նախ ձեռք էր առնում հակառակորդին, հետո կոպտացավ, վերջապես նեղացավ ու լռեց։
— Այ թե վորն է,— շարունակեց Ռուդինը,— ես խոստովանում եմ, չեմ կարող անկեղծ կարեկցանք

չզգալ, յերբ խելոք մարդիկ ինձ մոտ հարձակվում են...

— Սիստեմների վրա՞,— ընդհատեց Պիգասովը։

— Այո, հենց թեկուզ սիստեմների վրա։ Այդ բառն ինչո՞ւ չի ձեզ այդպես վախեցնում։ Յուրաքանչյուր սիստեմ հիմնված է հիմնական օրենքները գիտենալու վրա, կյանքի սկզբունքների...

— Բայց նրանց ճանաչել, հայտնաբերել չի կարելի. ներեցեք։

— Թ՛ույլ տվեք։ Իհարկե նրանք յուրաքանչյուրին մատչելի չեն, և սխալվելը մարդուն հատուկ է։ Սակայն դուք ինձ հետ համաձայն կլինեք, վոր, որինակ՝ Նյուտոնն այդ հիմնական օրենքներից միքանիսը հայտնաբերեց։ Ասենք նա հանճար էր և հանճարների գյուտերը հենց նրանով էլ մեծ են, վոր ընդհանուրի սեփականություն են դառնում։ Մասնավոր յերևույթների մեջ ընդհանուր սկզբունքներ վորոնելու ձգտումը մարդկային խելքի արմատական հատկություններից մեկն է, և մեր ամբողջ կրթվածությունը...

— Ա՛յ թե ուր եք ձգտում,— ձգուն ձայնով ընդհատեց Պիգասովը,— յես գործնական մարդ եմ և այդ բոլոր մետաֆիզիկական նրբությունների մեջ չեմ ընկնում և ընկնել չեմ ուզում։

— Շատ գեղեցիկ, այդ ձեր կամքն է. բայց նկատեցեք, վոր բացառապես գործնական մարդ լինելու ձեր հենց այդ ցանկությունն արդեն յուրատեսակ սիստեմ, տեսություն է...

— Կրթվածությունը, ասում եք դուք,— վրա բերեց Պիգասովը։— Այ թե էլի ինչով մտածեցիք զարմացնել։ Շատ հարկավո՞ր է այդ, այդ գոված կրթվածությունը։ Մի ժանգոտ գրոշ չեմ տա յես ձեր կրթվածությանը։

— Բայց ինչ վատ եք վիճում դուք, Աֆրիկան Սեմյոնիչ,— նկատեց Դարյա Միխայլովնան, վոր ներքուստ շատ գոհ էր իր նոր ծանոթի հանդարտությունից և նրբին բարեկրթությունից.— «C'est un homme comme il faut»[1]), — մտածեց՝ բարյացակամ ուշադրությամբ նայելով Ռուդինի դեմքին։ «Սրան պետք է փայփայել»։ Այս վերջին բառերը նա մտքով ռուսերեն արտասանեց.

— Կրթվածությունը յես չեմ պաշտպանի,— մի փոքր լռելուց հետո շարունակեց Ռուդինը.— նա իմ պաշտպանության կարիքը չունի։ Դուք նրան չեք սիրում... յուրաքանչյուրն իր ճաշակն ունի։ Բացի դրանից, այդ մեզ շատ հեռու կտաներ։ Թույլ տվեք միայն ձեզ մի հին առած հիշեցնել.— «Յուպիտեր, դու բարկանում ես, ուրեմն՝ դու հանցավոր ես»։ Յես ուզում եյի ասել, վոր այս բոլոր հարձակումները սիստեմների, ընդհանուր դատողությունների և այլ բաների վրա հատկապես նրա համար են գրգռիչ, վոր մարդիկ սիստեմների հետ միասին ընդհանրապես ժխտում են իմացականությունը, գիտությունը և դեպի այդ ունեցած հավատը, ուրեմն և դեպի հենց իրենց, իրենց ուժերի նկատմամբ ունեցած հավատը։ Իսկ մարդկանց այդ հավատը հարկավոր է. նրանք չեն կարող միայն տպավորություններով ապրել. մտքից վախենալը և

[1]) Սա միանգամայն կարգին մարդ է (Ֆր.)։

նրան չվստահելը հանցանք է։ Սկեպտիցիզմը միշտ աչքի յե ընկել անպտղությամբ և անզորությամբ։

— Այդ բոլորը բառեր են,— քրթմնջաց Պիգասովը։

— Գուցե։ Բայց թույլ տվեք ձեզ նկատել, վոր «այդ բոլորը բառեր են» ասելով՝ հաճախ մենք ինքներս ենք ուզում ազատվել անհրաժեշտությունից՝ ասել վորևէ ավելի գործնական բան, քան բառերը։

— Ի՞նչ,— աչքերը կկոցելով հարցրեց Պիգասովը։

— Դուք հասկացաք, թե ինչ եյի ուզում ասել ձեզ,— առարկեց Ռուդինը ակամա, բայց հենց իսկույն էլ զսպված անհամբերությամբ։— Կրկնում եմ՝ յեթե մի մարդ չունի կայուն սկզբունք, վորին հավատում է, չունի հող, վորի վրա ամուր կանգնում է, ինչպես կարող է նա իրեն հաշիվ տալ իր ժողովրդի պահանջների, նշանակության և ապագայի մասին։ Ինչպես կարող է իմանալ, թե ինքն ինչ պետք է անի, յեթե...

— Պատիվ և տեղ,— կցկտուր կերպով ասաց Պիգասովը, գլուխ տվեց և առանց վոչ վոքի նայելու, մի կողմ քաշվեց։

Ռուդինը նայեց նրան, թեթև կերպով ծիծաղեց ու լռեց։

— Այ թե՛, փախուստի դիմեց,— ասաց Դարյա Միխայլովնան։— Մի անհանգստանաք, Դմիտրի...— ներեցե՛ք,— ավելացրեց նա սիրալիր ժպիտով,— ձեզ հայրանունով ինչպես կոչել։

— Նիկոլայիչ։

— Մի՛ անհանգստանաք, սիրելի Դմիտրի Նիկոլայիչ, նա մեզնից վոչ-վոքի չխաբեց։ Նա ուզում է ցույց տալ, թե այլևս վիճել չի ուզում։ Նա զգում է,



վոր ձեզ հետ վիճել չի կարող։ Իսկ դուք ավելի լավ է մեզ ավելի մոտ նստեցե՛ք, կզրուցենք։

Ռուդինն իր բազկաթոռը մոտեցրեց։

— Այդ ինչպես է, վոր մենք մինչև այժմ չենք ծանոթացել,— շարունակեց Դարյա Միխայլովնան,— այդ ինձ զարմացնում է... Դուք այս գիրքը կարդացե՞լ եք։ C'est de Tocqueville, vous savez[1])։

Յեվ Դարյա Միխայլովնան մի ֆրանսերեն գրքույկ մեկնեց դեպի Ռուդինը։

Ռուդինը ձեռքն առավ բարակ գրքույկը, միքանի յերես թերթեց և, յետ դնելով սեղանի վրա, պատասխանեց, թե իսկապես պ. Տոկվիլի այս աշխատությունն ինքը չի կարդացել, բայց հաճախ է խորհել նրա շոշափած խնդրի մասին։ Խոսակցությունն սկսվեց։ Ռուդինն սկզբում կարծես տատանվում եր, չեր ուզում արտահայտվել, բառեր չեր գտնում, սակայն՝ վերջապես տաքացավ ու խոսեց։ Մեկ քառորդ ժամից հետո սենյակում միայն նրա ձայնն եր հնչում։ Բոլորը նրա շուրջը խմբվեցին։

Միայն Պիգասովն եր մնացել հեռու, անկյունում, բուխարու մոտ։ Ռուդինը խոսում եր խելոք, տաքացած ու գործնական կերպով։ Ցույց տվեց, վոր շատ բան գիտե, շատ բան է կարդացել։ Վոչ վոք չեր սպասում, թե նրա մեջ նշանավոր մարդու կտեսնի... Նա հագնված եր միջակ կերպով, նրա մասին այնքան քիչ եյին խոսում։ Բոլորին անհասկանալի ու տարորինակ եր թվում, թե գյուղում հանկարծ ինչպես կարող եր այդպիսի խելոք մարդ հայտնվել։ Դրանով

[1]) Սա Տոկվիլի հեղինակությունն է, ինչպես գիտեք (ֆր.)։

ավելի զարմացրեց ու կարելի յե ասել հիացրեց բոլորին՝ սկսած Դարյա Միխայլովնայից: Վերջինս հպարտանում էր իր գյուտով և սրտին նախօրոք մտածում էր, թե Ռուդինին ինչպես մարդամեջ հանի: Նրա առաջին տպավորություններում, չնայելով նրա տարիքին, յերեխայական շատ բան կար. Ալեքսանդրա Պավլովնան, ճիշտն ասած, Ռուդինի բոլոր ասածներից քիչ բան հասկացավ, բայց շատ էր զարմացել և՛ ուրախացել. Նրա յեղբայրը նույնպես զարմացած էր: Պանդալևսկին դիտում էր Դարյա Միխայլովնային և նախանձում էր: Պիգասովը մտածում էր. «Հինգ հարյուր ռուբլի տամ, ավելի լավ սոխակ կգտնեմ...» Բայց ամենից շատ զարմացել էին Բասիստովն ու Նատալիան: Բասիստովի շունչը քիչ էր մնում կտրվեր. նա շարունակ նստած էր՝ բերանը բաց և աչքերը չռած ու լսում էր. ծնած որից նա այդպես վոչ-վոքի չէր լսել: Իսկ Նատալիայի դեմքը ծածկվել էր կարմիր ներկով. Ռուդինին անշարժ կերպով հառած նրա դեմքը մերթ մթնում, մերթ փայլում էր:

— Ի՜նչ հրաշալի աչքեր ունի,— շշնջաց նրան Վոլինցևը:

— Այո՛, լավն են:

— Ափսոս միայն, վոր ձեռքերը մեծ են ու կարմիր:

Նատալիան վոչինչ չէր պատասխանում:

Թեյ մատուցին: Խոսակցությունն ավելի ընդհանուր դարձավ, բայց հենց այն հանկարծակիությունից, վորով բոլորը լռում էին, և միայն Ռուդինն էր բերան բաց անում, կարելի յեր դատել նրա թողած տպավորության ուժի մասին: Դարյա Միխայլովնան



հանկարծ ուզեց ջգրացնել Պիգասովին: Նա մոտեցավ և կեսաձայն ասաց. «Ի՞նչ եք լռել և միայն խայթիչ կերպով ժպտում: Հապա փորձեցե՛ք, նորից բռնըվեցե՛ք նրա հետ», և առանց նրա պատասխանին սպասելու՝ ձեռքով մոտ կանչեց Ռուդինին:

— Դուք նրա մասին դեռ մի բան չգիտեք,— ասաց նա նրան՝ Պիգասովին ցույց տալով,— նա սոսկալի կնատյաց մարդ է, անվերջ հարձակվում է նրանց վրա. խնդրում եմ նրան ուղիղ ճանապարհի բերեք:

Ռուդինը նայեց Պիգասովի վրա... ակամայից բարձրից: Նա նրանից յերկու գլխով բարձր էր: Պիգասովը չարությունից համարյա կուչ յեկավ, նրա մաղձոտ դեմքը գունատվեց:

Դարյա Միխայլովնան սխալվում է,— սկսեց նա անհաստատ ձայնով.— յես միայն կանանց վրա չէ, վոր հարձակվում եմ. յես դեպի վողջ մարդկային ցեղն առանձնապես սեր չունեմ:

Ի՞նչը կարող էր նրա մասին այդպիսի վատ կարծիք տալ ձեզ,— հարցրեց Ռուդինը:

Պիգասովն ուղիղ նրա աչքերին նայեց:

— Հավանորեն սեփական սրտի ուսումնասիրությունը, վորտեղ յես որ-որի վրա ավելի ու ավելի վատ բաներ եմ հայտնաբերում: Յես ուրիշների մասին ինձանով եմ դատում: Գուցե և սա անիրավացի յե և յես շատ ավելի վատ եմ ուրիշներից, բայց ի՞նչ կհրամայեք անել: Սովորություն է:

— Յես հասկանում ու կարեկցում եմ ձեզ,— առարկեց Ռուդինը: Ի՞նչ առաքինի հոգի չի զգացել ինքնանվաստացման ծարավը: Բայց չպետք է կանգ առնել այդ անել դրության վրա:

— Խոնարհաբար շնորհակալ եմ իմ հոգուն առաքինության վկայական տալու համար,— առարկեց Պիգասովը,— իսկ իմ դրությունը, վոչինչ, վատ չէ. այնպես վոր յեթե նրանից յելք ել կա, աստված իրեն հետ, յես նրան փնտրողը չեմ։

— Իսկ այդ նշանակում է— ներեցեք արտահայտությանս համար— սեփական ինքնասիրությունը բավարարելը գերադասել ճշմարտության մեջ լինելու և ապրելու ցանկությունից...

— Դե՜ իհարկե,— գոչեց Պիգասովը.— ինքնասիրություն— այդ յես ևս հասկանում եմ,— դուք ևս, հույս ունեմ, հասկանում եք, ամեն մեկն ել հասկանում է, իսկ ճշմարտությունը, ի՞նչ բան է ճշմարտությունը. վո՞րտեղ է նա, այդ ճշմարտությունը.

— Դուք կրկնում եք, նախազգուշացնում եմ ձեզ,— նկատեց Դարյա Միխայլովնան։

Պիգասովն ուսերը բարձրացրեց։

— Ի՞նչ վնաս վոր։ Յես հարցնում եմ— ո՞ւր է ճշմարտությունը։ Նույնիսկ փիլիսոփաները չգիտեն, թե նա ինչ բան է։ Կանտն ասում է,— ա՛յ թե ինչ բան է, իսկ Հեգելը՝ թե՛ վո՛չ, սուտ ես ասում, ահա թե ինչ է։

— Իսկ դուք գիտե՞ք, թե նրա մասին ի՞նչ է ասում Հեգելը,— առանց ձայնը բարձրացնելու հարցրեց Ռուդինը։

— Յես կրկնում եմ,— շարունակեց տաքացած Պիգասովը,— վոր յես չեմ կարողանում հասկանալ, թե ի՛նչ է ճշմարտությունը։ Իմ կարծիքով նա աշխարհում չկա ել, այսինքն, բառը կա, իսկ ինքը չկա։

— Ո՛հ, ո՛հ— գոչեց Դարյա Միխայլովնան,— այդպիսի բան ասելն ամոթ չէ՞ ձեզ համար, հի՛ն մեղավոր՝





ճշմարտություն չկա։ Ուրեմն դրանից հետո էլ ինչո՞ւ ապրել աշխարհում։

— Յես կարծում եմ Դարյա Միխայլովնա, — սրտնեղած առարկեց Պիգասովը, — որ դուք, համենայն դեպս, առանց ճշմարտության ավելի հեշտ կապրեիք, քան առանց ձեր խոհարար Ստեփանի, որը մաջուր յեփելու այնպիսի վարպետ է։ Յեվ ինչներիդ է պետք ճշմարտությունը, ասացեք, չէ՞ որ նրանից գլխանոց չի կարվի։

— Կատակն առարկություն չէ, — նկատեց Դարյա Միխայլովնան, — մանավանդ, յերբ զրպարտանքի յե փոխվում...

— Յես չգիտեմ ճշմարտությունն ինչպես, սակայն ճիշտ ասելը, ինչպես յերևում է, աչք է ծակում, — փնթփնթաց Պիգասովը և սրտնեղած մի կողմ քաշվեց։

Իսկ Ռուդինը խոսեց ինքնասիրության մասին, և շատ բանիմացորեն խոսեց։ Նա ապացուցում էր, որ մարդն առանց ինքնասիրության ոչինչ է. որ ինքնասիրությունը արքիմեդյան լծակ է, որով յերկիրը կարելի յե տեղից շարժել. բայց որ միաժամանակ նա է մարդ կոչմանն արժանի, ով կարողանում է իշխել իր ինքնասիրությանը, ինչպես ձիավորն՝ իր ձիուն, ով իր անձնավորությունը զոհ է բերում ընդհանուրի բարիքին...

— Իրեն սիրելը, — այսպես յեզրակացրեց նա, — ինքնասպանություն է։ Իրեն սիրող մարդը չորանում է միայնակ, անպտուղ ծառի պես. իսկ ինքնասիրությունը, ինչպես յեռանդագին ձգտում դեպի կատարելագործում, աղբյուր է ամեն մեծության... Այո,



մարդը պետք է կտրի իր անձի համառ յեսասիրությունը, որպեսզի իր անձին իրավունք տա արտահայտվելու։

— Չե՞ք կարող ինձ մի փոքրիկ մատիտ տալ, — Պիգասովը դարձավ դեպի Բասիստովը։

Բասիստովն իսկույն չհասկացավ, թե ինչ հարցրեց Պիգասովը։

— Ինչներիդ է պետք մատիտը, — հարցրեց նա վերջապես։

— Ուզում եմ գրանցել Պ. Ռուդինի այս վերջին ֆրազը։ Չգրելով՝ հեշտ է մոռացվում։ Իսկ ինքներդ համաձայնեցեք, որ այդպիսի ֆրազը մեծ անհեթեթություն է։

— Այնպիսի բաներ կան, որոնց վրա ծիծաղելը և ձեռք առնելը հանցանք է, Աֆրիկան Սեմյոնիչ, — տաքացած ասաց Բասիստովը և շուռ յեկավ Պիգասովից։

Այդ միջոցին Ռուդինը մոտեցավ Նատալյային։ Նա վեր կացավ. նրա դեմքը շփոթմունք էր արտահայտում։ Վոլինցեվը, որ նստած էր Նատալյայի մոտ, նույնպես վեր կացավ։

— Յես դաշնամուր եմ տեսնում, — ճամբորդող արքայազնի պես փափուկ և սիրալիր կերպով սկսեց Ռուդինը։ — Արդյոք դուք չե՞ք նվագողը։

— Այո, յես նվագում եմ, — շշնջաց Նատալյան, — բայց ո՛չ շատ լավ։ Այ, Կոնստանտին Դիոմիդիչն ինձանից շատ ավելի լավ է նվագում։

Պանդալևսկին դեմքն առաջ մեկնեց և ատամները բաց արեց.

— Այդ զուր եք ասում, Նատալյա Ալեքսեյեվնա, դուք ինձնից բնավ վատ չեք նվագում։

— Գիտե՞ք արդյոք Շուբերտի «Erlkönig»-ը, հարցրեց Ռուդինը։

— Գիտե, գիտե,— ասաց Դարյա Միխայլովնան,— նստեցե՛ք, Constantin... Իսկ դուք յերաժշտություն սիրո՞ւմ եք, Դմիտրի Նիկոլայիչ։

Ռուդինը միայն թեթև կերպով խոնարհեց գլուխը և ձեռքը մազերին քսեց՝ կարծես լսելու պատրաստվելով... Պանդալևսկին սկսեց նվագել։

Նատալիան կանգնեց դաշնամուրի մոտ, ուղիղ Ռուդինի դիմաց, վորի դեմքը հենց առաջին ձայնից գեղեցիկ արտահայտություն ընդունեց։ Նրա մուգ-կապտագույն աչքերը դանդաղորեն թափառում եյին՝ յերբեմն կանգ առնելով Նատալիայի վրա։ Պանդալևսկին վերջացրեց։

Ռուդինը վոչինչ չասաց և մոտեցավ բաց պատուհանին։ Բուրավետ մշուշը փափուկ քողի պես նըստել եր այգու վրա, մերձակա ծառերը նիրհուն թարմություն եյին շնչում։ Աստղերը հանդարտ վառվում եյին։ Ամառային գիշերը և՛ քնքշանում, և՛ քնքշացնում եր։ Ռուդինը նայեց մութ այգուն և շուռ յեկավ։

— Այս յերաժշտությունը և այս գիշերը,— խոսեց նա,— հիշեցրին ինձ իմ ուսանողական ժամանակը Գերմանիայում, մեր ժողովները, գիշերերգները...

— Իսկ դուք Գերմանիայում յեղե՞լ եք,— հարցրեց Դարյա Միխայլովնան։

— Յես մեկ տարի Հեյդելբերգում և մոտ մեկ տարի ել Բեռլինում եմ անցկացրել։

— Յեվ ուսանողի պես եյիք հագնվում։ Ասում են նրանք այնտեղ մի տեսակ առանձնահատուկ ձևով են հագնվում։



— Հեյդելբերգում յես խթաններով կոշիկներ և վենգերական քղավոր բաճկոն եյի կրում, մազերս ել յերկարացրել եյի մինչև ուսերս... Բեռլինում ուսանողները հագնվում են՝ ինչպես բոլոր մարդիկ։

— Ձեր ուսանողական կյանքից մեզ մի բան պատմեցե՛ք,— խնդրեց Ալեքսանդրա Պավլովնան։

Ռուդինն սկսեց պատմել։ Պատմում եր վոչ բոլորովին հաջող։ Նրա նկարագրություններում պակասում եր ներկը։ Նա չեր կարողանում ծիծաղեցնել։ Բայց Ռուդինն իր արտասահմանյան արկածները պատմելուց շուտով անցավ լուսավորության ու գիտության, համալսարանների և ընդհանրապես համալսարանական կյանքի մասին ընդհանուր դատողությունների։ Նա լայն ու համարձակ գծերով մի հսկա պատկեր գծագրեց։ Բոլորը նրան մեծ ուշադրությամբ եյին լսում։ Նա խոսում եր վարպետորեն, գրավիչ և վո՛չ բոլորովին պարզ... բայց հենց այդ վո՛չ պարզությունը նրա խոսքին առանձին հրապույր եր տալիս։

Մտքերի առատությունը չեր թողնում, վոր Ռուդինը վորոշակի և ճիշտ արտահայտվի։ Պատկերները իրար եյին փոխարինում։ Մերթ անսպասելի համարձակ, մերթ զարմանալի ճիշտ համեմատությունները իրար եյին հաջորդում։ Նրա անհամբեր իմպրովիզացիան վոչ թե փորձված շաղակրատի ինքնաբավական արհեստականություն, այլ վոգևորություն եր շնչում։ Նա բառեր չեր փնտրում, այլ նրանք իրենք եյին հլու և ազատ կերպով հայտնվում նրա շրթունքներին, և յուրաքանչյուր խոսքը թվում եր թե հենց նրա հոգուց եր հոսում, նրա համոզմունքի բոցով եր հուրհրատում։ Ռուդինը համարյա գերագույն գաղտնիքն՝ յերաժշտական պերճախոսության եր տիրում։ Նա սըր-

տերևի մի լարին դիպչելով, կարողանում էր հարկադրել մյուս բոլորին՝ ազատ կերպով զողանջել ու դողալ։ Մի այլ լուռ գույն և ճշտությամբ չհասկանար, թե ինչի մասին է խոսքը։ Բայց նրա կուրծքը շատ էր բարձրանում. Նրա աչքերի առջև ինչ-որ վարագույրներ էյին բացվում, ինչ-որ ճաճանչափայլ բան էր այրվում առջևում։

Ռուդինի բոլոր մտքերը կարծես դեպի ապագան էյին դարձած։ Այդ հանգամանքը նրանց ինչ-որ շեշտակիություն ու ջահելություն էյին տալիս... Կանգնած պատուհանի առաջ, մանավանդ առանց վոչ վոքի նայելու, նա խոսում էր, և վոգևորված ընդհանուր համակրանքով և ուշադրությամբ, յերիտասարդ կանանց մոտիկությամբ, գիշերվա գեղեցկությամբ, հափըշտակված սեփական զգացմունքների հեղեղով, նա բարձրացել էր մինչև պերճախոսություն, մինչև պոեզիա... Նրա կենտրոնացած և խաղաղ ձայնի հենց հնչյունը հմայք էր ավելացնում. թվում էր, թե նրա շրթունքներով, նույնիսկ նրա համար անսպասելի, ինչ-վոր գերագույն բան էր խոսում... Ռուդինը խոսում էր այն բանի մասին, վորը մարդու ժամանակավոր կյանքին հավիտենական նշանակություն է տալիս։

— Մի սկանդինավյան առասպել եմ հիշում,— այսպես վերջացրեց նա։—Թագավորն իր ռազմիկների հետ նստած է մի մութ և յերկար սրահում, կրակի շուրջը։ Դեպքը տեղի ուներ գիշերը, ձմեռ ժամանակ։ Հանկարծ մի փոքրիկ թռչուն ներս է թռչում բաց դռնով և մյուսով դուրս է թռչում։ Թագավորը նկատում է, վոր այս թռչունը—ինչպես մարդն աշխարհում—թռավ յեկավ մթությունից և թռավ գնաց մթու-



թյունը, տաքի ու լույսի մեջ շատ չմնաց... «Թագավոր»՝ առարկում է զինվորներից ամենից ծերը. «Թռչունը մթի մեջ էլ չի կորչի և իր բույնը կգտնի...»։ Կարծես մեր կյանքն արագ է և չնչին, բայց բոլոր մեծ բաները մարդու միջոցով են կատարվում։ Բոլոր բարձր ուժերի գործիքը լինելու գիտակցությունը պետք է մարդու համար փոխարինի մյուս բոլոր ուրախությունները. հենց մահի մեջ նա կգտնի իր կյանքը, իր բույնը...

— Ռուդինը կանգ առավ և ակամա հուզմունքի ժպիտով աչքերը ցած գցեց։

—Vous êtes un poète[1])—կիսաձայն կերպով ասաց Դարյա Միխայլովնան։

Յեվ բոլորը ներքուստ նրա հետ համաձայնեցին, բոլորը, բացի Պիգասովից։ Չսպասելով Ռուդինի յերկար ճառի վերջին՝ նա գլխարկը կամացուկ վերցրեց և, դուրս գալով, չարացած կերպով շշնջաց դռան մոտ կանգնած Պանդալևսկուն՝

— Վո՜չ։ Կգնամ հիմարների մոտ։

Ասենք՝ վոչ վոք էլ նրան չպահեց և նրա բացակայությունը չնկատեց։

Սպասավորներն ընթրիք բերին, և կես ժամից հետո բոլորը ցրվեցին։ Դարյա Միխայլովնան Ռուդինին խնդրեց գիշերելու մնալ։ Ալեքսանդրա Պավլովնան յեղբոր հետ կառքով տուն վերադառնալով՝ միքանի անգամ սկսեց ախ քաշել և զարմանալ Ռուդինի անսովոր խելքի վրա։ Վոլինցովը համաձայնում էր նրա հետ, սակայն նկատեց, վոր նա յերբեմն մութ է արտահայտվում... այսինքն՝ վոչ բոլորովին դյուրըմ-

1) Դուք բանաստեղծ եք (Ֆր.)։

քրոնեկլի, ավելացրեց նա, յերևի ցանկանալով իր միտքն ավելի պարզել։ Բայց նրա դեմքը մռայլվեց, և կառեթի անկյունին հառած հայացքն ավելի թախծոտ էր թվում։

Պանդալևսկին քնելու պառկելով և իր մետաքսագործ շալվարակալը հանելով, լսելի ձայնով ասաց. «Շատ ճարպիկ մարդ է», և հանկարծ խիստ կերպով նայելով իր սենեկապանին՝ հրամայեց դուրս գալ։ Բասիստովը ամբողջ գիշերը չքնեց և չհանվեց. նա մինչև առավոտ նամակ էր գրում Մոսկվա՝ իր մի ընկերոջը. իսկ Նատալյան թեպետ և հանվեց ու անկողին մտավ, բայց նույնպես վոչ մի րոպե չքնեց և աչք չփակեց։ Գլուխը յենած թևքին, նա հառած աչքերով նայում էր դեպի խավարը. նրա մկանները տենդոտ կերպով զարկվում էին, և ծանր հառաչանքը հաճախ էր բարձրացնում նրա կուրծքը։



IV

Հաջորդ օրն առավոտյան Ռուդինը հագնվեց թե չէ, նրա մոտ Դարյա Միխայլովնայի կողմից մի մարդ հայտնվեց՝ նրա առանձնասենյակը գնալու և նրա հետ թեյ վայելելու հրավերով։ Ռուդինը նրան միայնակ գտավ։

Նա շատ սիրալիր բարևեց Ռուդինին, տեղեկացավ, թե գիշերը լավ է անցկացրել, թե վոչ, ինքը նրա համար մի գավաթ թեյ լցրեց, հարցրեց նույնիսկ, թե շաքարը բավակա՞ն է, նրան գլանակ առաջարկեց և յերկու անգամ նորից կրկնեց, թե զարմանում է՝ ինչպես է, վոր ինքը նրա հետ վաղուց չի ծանոթացել։ Ռուդինն ուզում էր մի քիչ հեռու նստել, սակայն Դարյա Միխայլովնան ցույց տվեց նրան իր բազկաթոռի մոտի փոքրիկ կիսաթոռը և թեթև կերպով թեքվելով դեպի նրա կողմը՝ սկսեց հարցուփորձ անել նրա ընտանիքի, նրա մտադրությունների և յենթադրությունների մասին։ Դարյա Միխայլովնան խոսում էր անփույթ կերպով, լսում էր ցրվածորեն։ Բայց Ռուդինը շատ լավ էր հասկանում, վոր նա սիրաշահում, նույնիսկ շողոքորթում է իրեն։ Զուր չէր նա այս առավոտյան տեսակցությունը սարքել, զուր չէր պարզ, բայց դե-

դեցիկ հագնվել՝ à la madame Recamier[1])։ Բայց Դարյա Միխայլովնան շուտով դադարեց հարցուփորձ անելը. նա սկսեց պատմել իր մասին, իր ջահելության մասին, այն մարդկանց մասին, վորոնց նա ճանաչում եր։ Ռուդինը հետաքրքրությամբ լսում եր նրա շատախոսությունը, թեպետ տարորինակ բան,— Դարյա Միխայլովնան ում մասին ել խոսում եր, առաջին տեղում ինքն եր մնում, ինքը միայնակ, իսկ այն անձնավորությունը միշտ ծածկվում, չքանում եր։ Փոխարենը Ռուդինը մանրամասն կերպով իմացավ, թե հատկապես Դարյա Միխայլովնան ինչ ե ասել այս-ինչ հայտնի աստիճանավորին, ինչ տպավորություն ե թողել այն-ինչ հռչակավոր բանաստեղծի վրա։ Դարյա Միխայլովնայի պատմություններից դատելով, կարելի եր կարծել, վոր վերջին քսանհինգամյակի բոլոր հռչակավոր մարդիկ միայն նրա մասին են յերազել, թե ինչպես տեսնվեն նրա հետ, ինչպես արժանանան նրա բարեհաճ վերաբերմունքին։ Ինքը նրանց մասին խոսում եր պարզ կերպով, առանց առանձին հիացմունքի ու գովքի, ինչպես յուրայինների մասին, վոմանց ել տարորինակ մարդիկ անվանելով։ Նա խոսում եր նրանց մասին և, իբրև շքեղ շրջանակ թանկագին քարերի շուրջը, նրանց անունները փայլուն յեզրազարդ եյին հանդիսանում գլխավոր անվան — Դարյա Միխայլովնայի անվան շուրջը…

Իսկ Ռուդինը լսում, ծխում և լուռ եր, յերբեմն միայն փոքրիկ նկատողություններ դնելով շատախոսող տիրուհու զրույցի մեջ։ Նա կարողանում և սիրում եր

---

[1]) Մադամ Ռեկամյեյի վոճով (ֆր.)։



խոսել. խոսակցություն տանելը նրա սրտով չեր, բայց նա կարողանում եր նաև լսել։ Ամեն մեկը, վորին նա չեր վախեցնում, սկզբում նրա ներկայությամբ իրեն վստահելիորեն ազատ եր զգում, այնպես հաճույքով ու խրախուսիչ կերպով եր հետևում ուրիշի պատմածին։ Նրանում շատ բարեհոգություն կար,— հատկապես այն բարեհոգությունը, վորով լցված են լինում իրենց ուրիշներից բարձր զգալու սովոր մարդիկ։ Վեճերի ժամանակ նա իր հակառակորդին սակավ եր թույլ տալիս արտահայտվել և իր շեշտակի ու կրքոտ դիալեկտիկայով ճնշում եր նրան։

Դարյա Միխայլովնան ռուսերեն եր բացատրվում։ Նա պարծենում եր մայրենի լեզվի գիտությամբ, թեպետ ֆրանսաբանություններ, ֆրանսերեն փոքրիկ բառեր նրա լեզվում հաճախ եյին պատահում։ Նա դիտավորյալ կերպով հասարակ ժողովրդական դարձվածներ եր գործ ածում, բայց վոչ միշտ հաջողակ։ Ռուդինի ականջը չեր վիրավորվում Դարյա Միխայլովնայի շրթունքներին հնչող ճառի տարորինակ խայտաբղետությունից. նա դրա համար հազիվ թե ականջ ել ունենար։

Դարյա Միխայլովնան վերջապես հոգնեց և գլուխը հենելով բազկաթոռի յետևի բարձին, աչքերը հառեց Ռուդինին և լռեց։

— Յես այժմ հասկանում եմ,— դանդաղ ձայնով սկսեց Ռուդինը,— յես հասկանում եմ, թե ինչու դուք ամեն ամառ գյուղն եք գալիս։ Ձեզ այդ հանգիստն անհրաժեշտ ե։ Գյուղական լռությունը քաղաքային կյանքից հետո թարմացնում և ամրացնում

և ձեզ։ Յես համոզված եմ, որ դուք խորապես պետք է զգաք բնության գեղեցկությունները։

Դարյա Միխայլովնան խեթ նայեց Ռուդինին։

— Բնությունը... այո... այո, իհարկե... յես սաստիկ սիրում եմ այն։ Բայց գիտե՞ք, Դմիտրի Նիկոլաևիչ, գյուղում էլ առանց մարդկանց չի կարելի։ Իսկ այստեղ համարյա ոչ-ոք չկա։ Այստեղ ամենախելոք մարդը Պիգասովն է։

— Յերեկվա բարկացկոտ ծերունի՞ն,— հարցրեց Ռուդինը։

– Այո, նա։ Սակայն գյուղում նա էլ պետք կգա. գոնե յերբեմն կծիծաղեցնի։

— Նա հիմար մարդ չէ,— առարկեց Ռուդինը,— բայց սխալ ճանապարհի վրա է։ Յես չգիտեմ, Դարյա Միխայլովնա, դուք համաձայն կլինե՞ք ինձ հետ, թե ոչ, բայց ժխտելում, ամեն ինչ ժխտելում առանձին շնորհք չկա։ Ամեն ինչ ժխտեցեք և դուք հեշտ կերպով կարող եք որպես խելոք հռչակվել․ այս խորամանկությունը հայտնի է։ Բարեհոգի մարդիկ իսկույն պատրաստ են յեզրակացնելու, թե դուք բարձր եք կանգնած այն բանից, որ ժխտում եք։ Իսկ այդ՝ հաճախ ճիշտ չէ. Նախ՝ ամեն բանում կարելի է բիծ գտնել, իսկ յերկրորդ՝ յեթե նույնիսկ դուք ճիշտ եք ասում, այդ ձեզ համար ավելի վատ է, միայն դեպի ժխտումն ուղղված ձեր խելքն աղքատանում, չորանում է։ Բավարարելով ձեր ինքնասիրությունը, դուք կզրկվեք զննելու ճշմարիտ բավականությունից։ Կյանքը—կյանքի էությունը կվրիպի, կսայթաքի ձեր մանր և մաղձոտ դիտողությունից. և դուք կվերջացնեք նրանով,



որ կսկսեք հայհոյել ու ծիծաղեցնել։ Կշտամբելու, հայհոյելու իրավունք ունի նա միայն, ով սիրում է։

— Voilà m-r Pigassoff enterré[1]) —ասաց Դարյա Միխայլովնան։ Մարդ բնորոշելու ինչ վարպետ եք դուք։ Բայց Պիգասովը յերևի ձեզ չէր հասկանա։ Իսկ սիրում է նա միայն իր անձը։

Յեվ իր անձը հայհոյում է նրա համար, որպեսզի իրավունք ունենա հայհոյելու ուրիշներին,— ավելացրեց Ռուդինը։

Դարյա Միխայլովնան ծիծաղեց։

— Հիվանդից... ինչպես է ասում... հիվանդից առողջի վրա։ Իդեպ՝ դուք ի՞նչ եք մտածում բարոնի մասին։

— Բարոնի մասի՞ն. Նա լավ մարդ է, բարեսիրտ և գիտակ... Բայց նրանում բնավորություն չկա... և նա իր ողջ կյանքում կմնա կիսա-գիտուն, կիսաշխարհիկ մարդ, այսինքն դիլետանտ, այսինքն, առանց պատեպատ ընկնելու ասած՝ ոչինչ... բայց ափսոս է։

— Ինքս նույն կարծիքի յեմ,— առարկեց Դարյա Միխայլովնան։— Յես կարդացել եմ նրա հոդվածը... Entre nous... cela a assez peu de fond[2])։

— Այստեղ ձեզ մոտ էլի ո՞վ կա, լռությունից հետո հարցրեց Ռուդինը։

— Դարյա Միխայլովնան հինգերորդ մատով թափ տվեց պախիտոսկայի[3]) մոխիրը։

— Համարյա այլևս ոչ ոք չկա. Լիպինա Ալեքսանդրա Պավլովնա, որին դուք յերեկ տեսաք, նա շատ

1) Ա՛յ, պարոն Պիգասովն էլ հենց ոչնչացած է (ֆր.)։
2) Մեր մեջ ասած... նա քիչ է բովանդակալից (ֆր.)։
3) Յեգիպտացորենի կեղևում փաթաթած ծխախոտ. Ծ. Թ.

սիրելի յե,— և միայն: Նրա յեղբայրը—նույնպես շատ լավ մարդ ե, un parfait honnête homme[1]): Իշխան Գարինին դուք ճանաչում եք: Ահա և բոլորը: Յերկու-յերեք հարևաններ էլ կան, բայց նրանք արդեն բոլորովին վոչինչ են: Կամ կոտրատվում են—սարսափելի հավակնություններ, կամ քաշվում են, կամ թե վոչ տեղին համարձակ են: Դուք գիտեք—յես տիրուհիներին չեմ տեսնում: Մեկ հարևան էլ կա. ասում են՝ շատ զարգացած, նույնիսկ գիտուն մարդ ե, բայց սարսափելի տարորինակ, ֆանտազյոր: Alexandrine-ն նրան ճանաչում ե և կարծեմ դեպի նա անտարբեր չե... Ա՛յ, դուք զբաղվեյիք նրանով. Դմիտրի Նիկոլայիչ-դա մի սիրելի եյակ ե. հարկավոր ե միայն նրան մի փոքր զարգացնել, անպատճառ պետք ե այդ կնոջը զարգացնել:

—Նա շատ համակրելի յե,—նկատեց Ռուդինը:

—Կատարյալ յերեխա յե, Դմիտրի Նիկոլայիչ, իսկական յերեխա: Նա ամուսնացած եր, mais c'est tout comme[2]): Յեթե յես տղամարդ լինեյի, միայն այդպիսի կանանց վրա կսիրահարվեյի:

— Մի՞թե:

—Անպատճառ: Այդպիսի կանայք գոնե թարմ են, իսկ շինծու կերպով թարմ ձևանալ չի կարելի:

— Իսկ ուրիշ ամեն բան ձևանալ կարելի՞ յե,—հարցրեց Ռուդինը և ծիծաղեց,—մի բան, վոր քիչ եր պատահում նրան: Յերբ նա ծիծաղում եր, դեմքը տարորինակ, համարյա ծերության արտահայտություն եր ընդունում, աչքերը կուչ եյին գալիս, քիթը կնճռոտվում եր...

1) Միանգամայն կարգին մարդ ե (ֆր.):

2) Բայց այդ վոչինչ չի փոխում (ֆր.):



— Իսկ ո՞վ ե այն, ինչպես դուք եք ասում, տարորինակ մարդը, դեպի վորը տիկին Լիպինան անտարբեր չե,—հարցրեց նա:

— Վո՞մն Լեժնյով, Միխայլո Միխայլիչ, այստեղի կալվածատերը:

Ռուդինը զարմացավ ու գլուխը բարձրացրեց.

Լեժնյով, Միխայլո Միխա՞յլիչ,—հարցրեց նա,—մի՞թե նա ձեր հարևանն ե:

— Այո: Իսկ դուք նրան ճանաչո՞ւմ եք:

Ռուդինը լռեց:

— Յես նրան ճանաչում եյի առաջ... սրանից առաջ: Նա, կարծեմ հարուստ մարդ ե,—ավելացրեց նա՝ ձեռքով շոշափելով բազկաթոռի ծոպը:

— Այո, հարուստ ե, թեպետ սարսափելի յե հագնըվում և շրջում ե արագընթաց կառքով, ինչպես գործակատար: Յես ուզում եյի նրան ինձ մոտեցնել. նա, ասում են, խելոք ե. յես էլ նրա հետ գործ ունեմ... յերևի դուք գիտեք, վոր իմ կալվածքն ինքս եմ կառավարում:

Ռուդինը գլուխը խոնարհեց:

— Այո, ինքս,—շարունակեց Դարյա Միխայլովնան,—յես վոչ մի ոտարերկրյա հիմարություն չեմ մտցնում, պահպանում եմ իմը, ռուսականը, և, տեսնում եք, կարծեմ գործերը վատ չեն գնում,—ավելացրեց նա՝ ձեռքով չորս կողմը ցույց տալով:

— Յես միշտ համոզված եյի,—նկատեց քաղաքավարի կերպով Ռուդինը,—վոր ծայրահեղորեն անարդար են այն մարդիկ, վորոնք կանանց գործնական վոչինչ չեն թողնում:

Դարյա Միխայլովնան հաճելի ժպտաց:

— Դուք շատ ներողամիտ եք,—ասաց նա,—բայց ի՞նչ եյի ուզում ասել, ինչի՞ մասին եյինք խոսում:

Այո, Լեժնյովի մասին։ Յես նրա հետ սահմանազատման գործ ունեմ։ Յես նրան մի քանի անգամ հրավիրել եմ ինձ մոտ, և նույնիսկ այսօր սպասում եմ. իսկ նա, աստված գիտե, չի գալիս... այդպիսի տարօրինակն է։

Դռան առջևի վարագույրը յետ քաշվեց և ներս մտավ ծառայողը—մի բարձրահասակ մարդ—սպիտակահեր և ճաղատ, սև ֆրակով, սպիտակ փողկապով և սպիտակ բաճկոնով։

— Ի՞նչ ես ուզում,—հարցրեց Դարյա Միխայլովնան և թեթև կերպով դառնալով դեպի Ռուդինը՝ կիսաձայն կերպով ավելացրեց—n'ect ce pas, comme il ressemble a Canning?[1]։

— Միխայլո Միխայլիչ Լեժնյովը եկել են,—զեկուցեց ծառայողը,—կհրամայե՞ք ընդունե՛լ։

— Ա՜խ, աստված իմ,—գոչեց Դարյա Միխայլովնան,—ճիշտ է թե «անունը տուր, գորգը փախ»։ Ներս խնդրիր։

Ծառայողը դուրս ելավ։

— Այդպիսի տարօրինակն է, եկավ վերջապես, այն էլ՝ վոչ պատեհ ժամանակ. մեր խոսակցությունը ընդհատեց։

Ռուդինը տեղից վեր կացավ, բայց Դարյա Միխայլովնան նրան կանգնեցրեց.

— Ո՞ւր, ուր։ Մենք ձեզ մոտ էլ կարող ենք խոսել։ Իսկ յես ցանկանում եմ, վոր դուք նրան էլ բնորոշեք, ինչպես Պիգասովին։ Յերբ դուք խոսում եք, vous gravez comme avec un burin[2]։ Մնացեք։

Ռուդինն ուզում եր մի բան ասել, բայց մտա-

---

[1] Ճիշտ չէ՞, վորքան նման է նա Կաննինգին (ֆր.)։
[2] Դուք կարծես փորիչով քանդակում եք (ֆր.)։



ծեց և մնաց։ Միխայլո Միխայլիչը, վորն արդեն ծանոթ է ընթերցողին, մտավ առանձնասենյակ։ Նա հագին նույն մախրապատույն վերարկուն եր, արևառ ձեռքերում էլ նույն հին գլխարկն եր բռնել։ Նա հանգիստ կերպով գլուխ տվեց Դարյա Միխայլովնային և մոտեցավ թեյի սեղանին։

— Վերջապես դուք շնորհ բերիք մեզ մոտ, Մուսյո Լեժնյով,—ասաց Դարյա Միխայլովնան,—խնդրում եմ նստեք։ Դուք, յես լսել եմ, ծանոթ եք,—շարունակեց նա՝ ցույց տալով Ռուդինին։

Լեժնյովը նայեց Ռուդինին և տարօրինակ կերպով ժպտաց։

— Յես ճանաչում եմ պարոն Ռուդինին, ասաց նա թեթև գլուխ տալով։

— Մենք միասին յեղել ենք համալսարանում,— կիսաձայն կերպով նկատեց Ռուդինը և աչքերը գետին գցեց։

— Մենք հետո էլ հանդիպել ենք, սառը կերպով ասաց Լեժնյովը։

Դարյա Միխայլովնան վորոշ զարմանքով նայեց յերկուսին և Լեժնյովին խնդրեց նստել։ Նա նստեց։

— Դուք ցանկանում եյիք ինձ տեսնել,—սկսեց նա,—սահմանները վորոշելու գործով։

— Այո, սահմանները վորոշելու գործով. բայց յես առանց այդ էլ ցանկանում եյի ձեզ տեսնել։ Չէ՞ վոր մենք մոտիկ հարևաններ և համարյա ազգականներ ենք։

— Շատ շնորհակալ եմ ձեզանից,—վրա բերեց Լեժնյովը.—ինչ վերաբերում է սահմանները վորոշելուն, այդ գործը ձեր կառավարչի հետ իսպառ վերջացրինք։ Նրա բոլոր առաջարկություններին յես համաձայն եմ։

— Յես այդ գիտեյի։

— Միայն նա ինձ ասաց, որ առանց ձեզ հետ անձամբ տեսնվելու թղթերն ստորագրել չի կարելի։
— Այո՛, այդպես, այդպես եմ սահմանել։ Ի դեպ, թույլ ավեք հարցնել, չէ՞ վոր բոլոր շինականները ձեզ մոտ հողատուրքով են։
Ճիշտ է։
— Յեվ դուք ինքներդ սահմանները վորոշելու մասին եք միջնորդում. այդ գովելի յե։
Լեժնյովը լռեց։
— Ա՛յ, յես ել անձնական տեսակցության եմ յեկել— ավելացրեց նա։
Դարյա Միխայլովնան քմծիծաղ տվեց։
— Տեսնում եմ, վոր յեկել եք։ Դուք այդ այնպիսի տոնով եք ասում... Ինչպես յերևում է շատ ել չեյիք ուզում ինձ մոտ գալ։
— Յես վոչ մի տեղ չեմ գնում,— սառնարյուն կերպով առարկեց Լեժնյովը։
— Վոչ մի տե՞ղ։ Իսկ Ալեքսանդրա Պավլովնայի մոտ գնո՞ւմ եք։
— Նրա յեղբոր հետ յես վաղուց եմ ծանոթ։
Նրա յեղբո՞ր հետ։ Ասենք՝ յես վոչ վոքի չեմ հարկադրում... բայց, ներեցե՛ք ինձ, Միխայլո Միխայլիչ, յես տարիքով ձեզնից մեծ եմ և կարող եմ ձեզ մի քիչ կշտամբել։ Ի՞նչ բավականություն է ձեզ համար ապրել այդպես խորթաբար, մարդկանցից խուսափելով։ Թե՞ հատկապես իմ տունը չի ձեզ դուր գալիս, յե՞ս չեմ ձեզ դուր գալիս։
— Յես ձեզ չեմ ճանաչում, Դարյա Միխայլովնա, և դուք դուր չգալ չեք կարող։ Ձեր տունը շատ գեղեցիկ է. բայց, անկեղծորեն խոստովանում եմ ձեր առաջ, յես



ինձ ճնշել չեմ սիրում։ Յես նույնիսկ կարգին ֆրակ չունեմ, ձեռնոցներ չունեմ, և ձեր շրջանին էլ չեմ պատկանում։
— Ծնունդով, կրթությամբ դուք պատկանում եք, Միխայլո Միխայլիչ. vous êtes des nôtres[1])։
— Ծնունդն ու կրթությունը մի կողմ մնան, Դարյա Միխայլովնա, այդ չէ բանը...
— Մարդ պետք է մարդկանց հետ ապրի, Միխայլո Միխայլիչ։ Ի՞նչ բավականություն՝ Դիոգինեսի պես նստել տակառում։
— Նախ՝ այնտեղ շատ լավ էր նրա համար. և յերկրորդ՝ դուք ինչ գիտեք, թե յես մարդկանց հետ չեմ ապրում։
Դարյա Միխայլովնան շրթունքները կծեց։
— Այդ ուրիշ բան է։ Ինձ կմնա միայն ափսոսալ, վոր չեմ արժանացել ընկնել այն մարդկանց շարքը, վորոնց հետ դուք ծանոթություն եք պահպանում։
— Մոսյո Լեժնյովը,— միջամտեց Ռուդինը,— կարծես չափազանցում է ազատությունը սիրելու չափազանց գովելի զգացմունքը։
Լեժնյովը վոչինչ չպատասխանեց և միայն նայեց Ռուդինին։ Փոքր լռություն տիրեց։
— Այսպես ուրեմն,— տեղից յելնելով սկսեց Լեժնյովը,— յես կարող եմ մեր գործը վերջացած համարել և ասել ձեր կառավարչին, վոր նա թղթերն ինձ ուղարկի։
— Կարող եք... թեպետ, խոստովանած, դուք այնքան անսիրալիր եք... հարկավոր էր, վոր մերժեյի ձեզ։
— Բայց ախր այդ սահմանների վորոշումը ձեզ անհամեմատ ավելի ձեռնտու յե, քան ինձ։
Դարյա Միխայլովնան ուսերը թոթվեց։

[1]) Դուք մեր շրջանից եք (Ֆր.)։

— Դուք նույնիսկ նախաճաշե՞լ չեք ուզում ինձ մոտ,— հարցրեց նա։

— Շատ շնորհակալ եմ, յես յերբեք չեմ նախաճաշում. բացի այդ, տուն եմ շտապում։

Դարյա Միխայլովնան վեր կացավ։

— Յես ձեզ չեմ պահում,— ասաց նա՝ մոտենալով պատուհանին,— չեմ համարձակվի ձեզ պահել։

Լեժնյովը հրաժեշտ տվեց։

— Գնաք բարի, մսյո Լեժնյով,— ներեցե՛ք, վոր անհանգստացրի ձեզ։

— Վոչինչ, ի՞նչ կա վոր,— առարկեց Լեժնյովը և դուրս յեկավ։

— Ինչպե՞ս է,— հարցրեց Դարյա Միխայլովնան Ռուդինին,— դրա մասին լսել եմ, վոր տարօրինակ մեկն է, բայց այս արդեն չափազանց եր։

— Դա տառապում է նույն հիվանդությունով, վորով և Պիգասովը,— օրիգինալ լինելու ցանկությամբ,— ասաց Ռուդինը.— Նա Մեֆիստոֆել է ձևանում, իսկ սա՝ ցինիկ։ Այս բոլորում կա՝ շատ յեսասիրություն, շատ ինքնասիրություն և քիչ ճշմարտություն, քիչ սեր կա։ Չե՞ վոր այդ ևս իր տեսակի հաշիվ է։ Մարդը անվրդովության, ծուլության դիմակ է դրել, մտածելով, թե մեկն ու մեկը կասի—տե՛ս մարդ, վորքա՜ն տաղանդ է իր մեջ մեռցրել։ Իսկ յեթե ավելի ուշադիր նայես, կտեսնես, վոր միջը վոչ մի տաղանդ չկա։

— Et de deux[1]),— շշնջաց Դարյա Միխայլովնան,— դուք բնորոշելու մեջ սարսափելի մարդ եք։ Ձեզնից թաքնվել չի լինի։

1) Ահա և յերկրորդի մասին (ֆր.)։



— Դուք կարծում եք,— ասաց Ռուդինը. ասենք,— շարունակեց նա,— իսկապես Լեժնյովի մասին յես չպետք է խոսեյի. յես նրան սիրում եյի, սիրում եյի իբրև ընկերոջ... բայց հետո զանազան թյուրիմացությունների պատճառով. .

— Դուք գժտվեցի՞ք։

— Վո՛չ, այլ մենք բաժանվեցինք, և բաժանվեցինք, կարծես, ընդմիշտ։

— Այ թե ինչու... յես նկատեցի, վոր նրա այցելության ընթացքում դուք ձեզ կարծես լավ չեյիք զգում... Բայց այս առավոտվա համար յես ձեզնից անչափ շնորհակալ եմ։ Յես ժամանակը շատ հաճելի անցկացրի։ Բայց պետք է պատիվ էլ գիտենալ։ Արձակում եմ ձեզ մինչև նախաճաշ, իսկ ինքս, գնում եմ գործերով զբաղվելու։ Իմ քարտուղարը դուք նրան տեսել եք—Constantin, c'est lui qui est mon secrétaire[2])—յերեվի արդեն սպասում է ինձ։ Նրան հանձնարարում եմ ձեզ։ Նա հրաշալի, չափազանց պատրաստակամ յերիտասարդ է և կատարելապես հիացած է ձեզնով։ Ցտեսություն, cher Դմիտրի Նիկոլայիչ։ Վորքա՜ն շնորհակալ եմ բարոնից, վոր ինձ ծանոթացրեց ձեզ հետ։

Յեվ Դարյա Միխայլովնան ձեռքը մեկնեց Ռուդինին։ Ռուդինն սկզբում սեղմեց, իսկ հետո մոտեցրեց շրթունքներին և դուրս յեկավ դահլիճ, դահլիճից էլ տերրասը։ Այստեղ, տերրասում նա հանդիպեց Նատալիային։

2) Կոնստանտինն իմ քարտուղարն է (ֆր.)։

# V

Դարյա Միխայլովնայի աղջիկը, Նատալյա Ալեքսեյեվնան առաջին հայացքից կարող էր դուր չգալ։ Նա դեռ չէր զարգացել, նիհար էր, թուխ, իրեն մի քիչ կորացած էր պահում։ Բայց դիմագծերը գեղեցիկ էին և կանոնավոր, թեպետ տասնյոթ տարեկան աղջկա համար շատ խոշոր էին։ Առանձնապես լավ էր նրա մաքուր և ուղիղ ճակատը՝ նուրբ, կարծես բեկված հոնքերի վերում։ Նա խոսում էր սակավ, լսում և դիտում էր ուշադիր կերպով, համարյա զննողաբար,—կարծես ուզում էր ամեն բանում իրեն հաշիվ տալ։ Նա հաճախ մնում էր անշարժ, ձեռքերը ցած էր գցում և մտքի մեջ ընկնում. այդ ժամանակ նրա դեմքին մտքերի ներքին աշխատանք էր արտահայտվում... Հազիվ նկատելի ժպիտ էր յերևում շրթունքներին ու իսկույն չքանում. խոշոր, մթին աչքերը հանդարտ բարձրանում էին... Qu'avez-vous[1]) հարցնում էր նրան m-elle Boncourt-ը և սկսում նախատել՝ ասելով, թե ջահել աղջկա համար անհարմար է մտքերի մեջ ընկնել և ցրված տեսք ընդունել։ Բայց Նատալյան ցրված չէր, ընդհակառակը՝ սովորելու մեջ ջանասեր էր, կարդում ու աշխատում էր հաճույքով։ Նա զգում էր խոր և ուժեղ, բայց գաղտնի. նա յերեխա ժամանակն էլ շատ քիչ անգամ էր լաց լինում, իսկ այժմ նույնիսկ հառաչում էր, շատ քիչ անգամ, և միայն թեթև կերպով գունատվում էր, յերբ մի բան նրան հուզում էր։ Մայրը նրան բարեբարո, խելացի աղջիկ էր համարում. կատակելով

1) Ի՞նչ պատահեց ձեզ (ֆր.)։



նրան mon honnête homme de fille[1]) էր անվանում, սակայն նրա մտավոր ընդունակությունների մասին մեծ կարծիքի չէր։ «Իմ Նատաշան, բարեբախտաբար, սառն է»,—ասում էր նա.—«ինձ չի քաշել... ավելի լավ. բախտավոր կլինի»։ Դարյա Միխայլովնան սխալվում էր։ Ասենք՝ հազվագյուտ մայրն է հասկանում իր աղջկան։

Նատալյան սիրում էր Դարյա Միխայլովնային, բայց վստահում էր նրան վոչ լիովին։

— Դու ինձնից թաքցնելու բան չունես,—ասաց մի անգամ Դարյա Միխայլովնան,—ապա թե վոչ կթաքցնես, դու քո բանը լավ գիտես...

Նատալյան նայեց մոր յերեսին ու մտածում էր. «Ինչու չպետք է իմ բանը լավ գիտենամ»։

Յերբ Ռուդինը հանդիպեց նրան տերրասում, աղջիկը m-elle Boncourt-ի հետ սենյակ էր գնում, վոր գլխարկը դնի և այգի գնա։ Նրա առավոտյան պարապմունքներն արդեն վերջացել էին։ Նատալյային այլևս փոքր աղջկա պես չէին պահում, m-elle Boncourt-ը նրան աշխարհագրությունից ու դիցաբանությունից վաղուց դասեր չէր տալիս։ Բայց Նատալյան պարտավոր էր նրա մոտ ամեն առավոտ պատմական գրքեր, ճանապարհորդություններ և ուրիշ խրատական գրվածքներ կարդալ։ Նյութերն ընտրում էր Դարյա Միխայլովնան՝ իբր թե իր առանձնահատուկ սիստեմին հետևելով։ Բայց իրոք նա Նատալյային տալիս էր այն ամենը,

1) Անթարգմանելի բառախաղ։ Իմ աղջիկը– այդ իսկական կարգին մարդը (ֆր.)։

մինչ վոր ֆրանսիացի գրավաճառն ուղարկում էր Պետերբուրգից — ինարկե, բացառությամբ Դյումա-ֆիսի և Կոմպի վեպերի։ Այդ վեպերը Դարյա Միխայլովնան ինքն էր կարդում։ M-elle Boncourt-ն իր ակնոցների միջից առանձնապես խիստ ու թթված էր նայում, յերբ Նատալիան պատմական գրքեր էր կարդում։ Պառավ ֆրանսուհու կարծիքով վողջ պատմությունը լիքն էր անթույլատրելի բաներով, թեպետ ինքը հին ժամանակի մեծ մարդկանցից գիտեր միայն Կամբիսին, իսկ նորագույն ժամանակներից՝ Լյուդովիկոս XIV-ին և Նապոլեոնին, վորին տանել չէր կարողանում։ Բայց Նատալիան այնպիսի գրքեր էլ էր կարդում, վորոնց գոյության մասին m-elle Boncourt-ը չէր էլ կասկածում։ Նա ամբողջ Պուշկինն անգիր գիտեր...

Նատալիան Ռուդինին հանդիպելով՝ թեթև կարմրեց։

— Դուք զբոսնելու յեք գնում, — հարցրեց նրան Ռուդինը։

— Այո։ Մենք գնում ենք այգի։

— Կարելի՞ յե ձեզ հետ գալ։

— Նատալիան նայեց m-elle Boncourt-ին։

— Mais certainement, monsieur, avec plaisir[1]), — շտապ վրա բերեց պառավ կույսը։

Ռուդինը գլխարկը վերցրեց և գնաց նրանց հետ։

Նատալիան սկզբում անհարմար էր զգում Ռուդինի հետ նույն շավղով գնալը։ Հետո հետզհետե թեթև զգաց իրեն։ Ռուդինն սկսեց նրան հարցուփորձ անել իր

---

1) Ինարկե, տեր, հաճույքով (ֆր.)։



պարապմունքների մասին, այլև թե՝ գյուղը դուր է գալիս, թե վոչ։ Նա պատասխանում էր վոչ առանց վախվորելու, բայց առանց այն հապճեպ ամոթխածության, վոր հաճախ ամաչկոտության տեղ են ընդունում ու դնում։ Նրա սիրտը խփում էր։

— Դուք գյուղում չե՞ք տխրում, — հարցրեց Ռուդինը՝ կողքից նայելով նրան։

— Ինչպե՞ս կարելի յե գյուղում տխրել։ Յես շատ ուրախ եմ, վոր մենք այստեղ ենք։ Յես այստեղ շատ յերջանիկ եմ։

— Դուք յերջանիկ եք... այդ մեծ խոսք է։ Ասենք հասկանալի յե — դուք ջահել եք։

Ռուդինն այդ վերջին բառը մի տեսակ տարօրինակությամբ արտասանեց։ Չես իմանում՝ նախանձո՞ւմ էր արդյոք Նատալիային, թե ափսոսում էր։

— Այո, ջահելությո՜ւն, — ավելացրեց նա, — գիտության վողջ նպատակն է՝ գիտակցաբար հասնել այն բանին, ինչ վոր ջահել ժամանակ ձրի յե ձեռք բերվում։

Նատալյան ուշադրությամբ նայեց Ռուդինին. նա չհասկացավ նրան։

— Յես այսօր ամբողջ առավոտը խոսում էի ձեր մայրիկի հետ, — շարունակեց նա, — նա արտասովոր կին է։ Յես հասկանում եմ, թե մեր բոլոր բանաստեղծներն ինչու էին գնահատում նրա բարեկամությունը։ Իսկ դուք վոտանավորներ սիրո՞ւմ եք, — մի քիչ լռելուց հետո ավելացրեց նա։

«Սա ինձ քննում է», — մտածեց Նատալիան ու ասաց. «Այո. շատ եմ սիրում»։

— Բանաստեղծությունն աստվածների լեզուն է։ Յես ինքս վոտանավորներ եմ սիրում։ Բայց բանաստեղ-

գությունը միայն վոտանավորներում չէ։ Նա լցված է ամեն տեղ, նա մեր շուրջն է... Նայեցեք այս ծառերին, այս յերկնքին — ամեն տեղից գեղեցկություն ու կյանք է բուրում, իսկ ուր գեղեցկություն ու կյանք կա, այնտեղել բանաստեղծություն կա։

— Նստենք այստեղ, նստարանի վրա, — շարունակեց նա։ — Ահա այսպես։ Չգիտեմ ինչու, ինձ թվում է, թե յերբ դուք ընտելանաք ինձ (և նա ժպտալով նայեց նրա յերեսին), մենք բարեկամներ կլինենք։ Դուք ինչպե՞ս եք կարծում։

«Սա ինձ հետ վարվում է՝ վորպես փոքր աղջկա հետ», — կրկին մտածեց Նատալիան, և չիմանալով, թե ինչ ասի, հարցրեց՝ թե մտադիր է գյուղում դեռ շատ մնալու։

— Ամբողջ ամառը, աշունը, գուցե և ձմեռը։ Յես, դուք գիտեք, հարուստ մարդ չեմ, գործերս քայքայված են. բացի դրանից էլ՝ ձանձրացել եմ տեղից տեղ թափառելուց։ Ժամանակ է հանգստանալու։

Նատալիան զարմացավ։

— Միթե դուք գտնում եք, վոր ձեր հանգստանալու ժամանակն է, — հարցրեց նա քաշվելով։

— Ռուդինը յերեսը դարձրեց դեպի Նատալիան։

— Դրանով ի՞նչ եք ուզում ասել։

— Յես ուզում եմ ասել, — ասաց նա վորոշ չափով շփոթված, — վոր հանգստանալ կարող են ուրիշները, իսկ դուք... դուք պետք է աշխատեք, պետք է ջանաք ոգտակար լինել։ Ո՞վ, յեթե վոչ՝ դուք...

— Շնորհակալ եմ այդ գովասանական կարծիքի համար, — ընդհատեց նրան Ռուդինը։ — Ոգտակար լինել... հեշտ է ասել (նա ձեռքը յերեսին քսեց)։ Հեշտ է ասել, — կրկնեց նա։ — Յեթե յես նույնիսկ խոր համոզմունք ունենայի, ինչպե՞ս կարող եմ ոգտակար լինել. յեթե նույնիսկ իմ ուժերին հավատայի, վո՞րտեղ կգտնեմ անկեղծ կերպով համակրող հոգիներ...

Յեվ Ռուդինն այնպես անհույս կերպով ձեռքը թափահարեց և այնպես տխուր կերպով գլուխը քաշ գցեց, վոր Նատալիան ինքն իրեն հարցրեց, — բավական է, նախորեյին միթե նրա հափշտակված, հույսերով լի ճառերն եր լսում ինքը։

— Բայց վո՛չ, — ավելացրեց նա՝ հանկարծ թափահարելով իր առյուծային բաշը. — սա անհեթեթություն է. և դուք իրավացի յեք։ Շնորհակալ եմ, Նատալյա Ալեքսեյեվնա, անկեղծորեն շնորհակալ եմ ձեզնից (Նատալիան բնավ չգիտեր, թե ինչու յե իրեն շնորհակալություն հայտնում)։ Ձեր մի խոսքն ինձ հիշեցրեց իմ պարտքը, ցույց տվեց իմ ճանապարհը... Այո՛, յես պետք է գործեմ։ Յես չպետք է թաքցնեմ իմ տաղանդը, յեթե միայն ունեմ։ Յես իմ ուժերը չպետք է վատնեմ միայն շատախոսելու, դատարկ, անոգուտ շատախոսելու, միայն բառերի վրա...

Յեվ նրա խոսքերը հոսեցին գետի պես։ Նա խոսում եր շատ գեղեցիկ, ջերմ ու համոզիչ. խոսում եր փոքրոգության ու ծուլության խայտառակության մասին, գործ կատարելու անհրաժեշտության մասին։ Նա ինքն իրեն կշտամբանքով եր ծածկում, ապացուցում եր, վոր առաջուց դատել այն մասին, թե ինչ ես ուզում անել, նույնքան վնասակար է, վորքան հասած պտուղը դնդասեղով ծակոտելը, վոր դա ուժերի ու հյութերի զուր կորուստ է։ Նա հավատացնում եր, թե չկա մի վեհ միտք, վոր համակրանք չգտնի, վոր անհասկանալի յեն մնում միայն այն մարդիկ, վորոնք կամ դեռ իրենք չգիտեն, թե

ինչ են ուզում, կամ չարժեն, որ իրենց հասկանան։ Նա խոսում էր երկար և վերջացրեց նրանով, որ մեկ անգամ ևս շնորհակալություն հայտնեց Նատալյա Ալեքսեյեվնային և միանգամայն անսպասելի կերպով սեղմեց նրա ձեռքը շշնջալով՝ «Դուք չքնաղ, ազնիվ էակ եք»։

Այս ազատ վարմունքը զարմացրեց m-elle Boncourt-ին, որը չնայելով իր քառասուն տարի Ռուսաստանում ապրելուն, դժվարությամբ էր ռուսերեն հասկանում և միայն զարմանում էր լեզվի գեղեցիկ արագության և սահունության վրա՝ Ռուդինի շրթունքներում։ Ասենք՝ վերջինս նրա աչքում վիրտուոզի կամ դերասանի պես էր. իսկ այսպիսի մարդկանցից, նրա կարծիքով, անկարելի էր պահանջել, որ վայելչություն պահպանեն։

Նա վեր կացավ և թափով ուղղելով իր հագուստը՝ հայտնեց Նատալյային, թե ժամանակ է տուն գնալու, մանավանդ, որ monsieur volinsoff-ը (այսպես էր անվանում Վոլինցևին) ցանկանում էր նախաճաշին լինել։

— Ահա և նա,— ավելացրեց m-elle Boncourt-ը, նայելով դեպի տանից բերող ծառուղիներից մեկը։

Իրոք. Վոլինցևը երևաց ոչ հեռվում։

Նա մոտեցավ անհաստատ քայլերով, հեռվից բարևեց բոլորին և դեմքի հիվանդոտ արտահայտությամբ դառնալով դեպի Նատալյան՝ ասաց։

— Ա՛, դուք զբոսնում եք։

— Այո,— պատասխանեց Նատալյան,— մենք արդեն տուն էինք գնում։

— Ա՛,— ասաց Վոլինցևը.— ինչ կա որ, գնանք։

Եվ բոլորը գնացին դեպի տուն։



— Ինչպե՞ս է ձեր քրոջ առողջությունը,— մի առանձին փաղաքշական ձայնով հարցրեց Ռուդինը Վոլինցևին։ Նա նախորդ երեկոյին էլ նրա հետ շատ սիրալիր էր։

— Մեծապես շնորհակալ եմ. Նա առողջ է։ Նա գուցե այսօր լինի... Դուք կարծեմ իմ մտնելու ժամանակ մի բանի մասին դատում էիք։

— Այո՛, ես և Նատալյա Ալեքսեյեվնան խոսում էինք։ Նա ինձ մի խոսք ասաց, որ վրաս սաստիկ ազդեց...

Վոլինցևը չհարցրեց, թե այդ ինչ խոսք էր, և բոլորը խոր լռությամբ վերադարձան Դարյա Միխայլովնայի տունը։

---

Ճաշից առաջ նորից սալոն կազմվեց։ Սակայն Պիգասովը չեկավ։ Ռուդինը լավ տրամադրություն չուներ, նա շարունակ հարկադրում էր Պանդալևսկուն Բեթհովենից նվագել։ Վոլինցևը լուռ էր և շարունակ հատակին էր նայում։ Նատալյան չէր հեռանում մորից և մերթ մտածմունքի մեջ էր ընկնում, մերթ գործի էր կպչում։ Բասիստովը աչքը Ռուդինից չէր հեռացնում՝ սպասելով, թե որևէ խելոք բան չի՞ ասի նա։ Այսպես բավական միօրինակ երեք ժամ անցավ։ Ալեքսանդրա Պավլովնան ճաշի չեկավ, և Վոլինցևը, հենց որ ճաշից վեր կացան, իսկույն հրամայեց լծել իր կալյասկան և առանց ոչ ոքի հրաժեշտ տալու՝ ծլկեց։

Նրա համար ծանր էր։ Նա վաղուց էր սիրում Նատալյային և պատրաստվում էր նրան առաջարկություն անելու... Աղջիկը բարեհաճ էր դեպի նա, բայց սիրտը հանգիստ էր։ Վոլինցևն այդ պարզ տեսնում էր։



Նա ավելի քնքուշ զգացմունք նրան ներշնչելու հույս էլ չուներ և սպասում էր միայն այն ակնթարթին, յերբ աղջիկը բոլորովին կընտելանար նրան ու կմոտենար։ Ի՞նչը կարող էր հուզել նրան։ Այս յերկու օրվա ընթացքում ինչ փոփոխություն նկատեց։ Նատալիան նրա հետ ճիշտ նույնպես էր վարվում, ինչպես և առաջ…

Արդյոք նրա հոգին այն միտքը համակե՞ց, թե ինքը գուցե բնավ չգիտե Նատալիայի բնավորությունը, նա դեպի ինքն ավելի օտար է քան ինքն էր կարծում,—արդյոք խանդ արթնացավ նրանում, արդյոք աղոտ կերպով ինչ-վոր վատ բան էր նախազգում…բայց նա, վորքան էլ աշխատում էր համոզել իրեն, այնուամենայնիվ միայն տանջվում էր։

Յերբ, նա մտավ իր քրոջ մոտ, այնտեղ նստած գտավ Լեժնյովին։

— Այս ինչ շուտ վերադարձար,—հարցրեց Ալեքսանդրա Պավլովնան։

— Հենց այնպես։ Ձանձրացա։

— Ռուդինն այնտե՞ղ է.

— Այնտեղ է։

Վոլինցևը գլխարկը նետեց ու նստեց։

Ալեքսանդրա Պավլովնան աշխուժորեն դարձավ դեպի նա։

— Խնդրում եմ, Սերյոժա, օգնե՛ք ինձ՝ համոզելու այս համառ մարդուն (նա ցույց տվեց Լեժնյովին), վոր Ռուդինն անսովոր խելոք և պերճախոս է։

Վոլինցևը ինչ·վոր մի բան մռլտաց։

— Յես ձեզ հետ բնավ չեմ վիճում,—սկսեց Լեժնյովը —յես պ. Ռուդինի խելքի ու պերճախոսության մասին բնավ չեմ կասկածում. յես միայն ասում եմ, վոր նա ինձ դուր չի գալիս։

— Իսկ դու նրան մի՞թե տեսել ես,— հարցրեց Վոլինցևը։

— Այսօր առավոտը տեսա Դարյա Միխայլովնայի մոտ։ Ձե՞ վոր նա այժմ նրա մեծ վեզիրն ե։ Ժամանակ կգա, տիրուհին նրանից էլ կբաժանվի. նա միայն Պանդալևսկուց չի բաժանվի,— բայց այժմ նա յե թագավորում։ Նրան տեսել եմ, ինչպե՞ս չե։ Ռուդինը նստած ե, իսկ նա ինձ ե ցույց տալիս. վորպես թե՝ տեսեք, մեզնում ինչ տարօրինակ մարդիկ կան։ Իսկ յես բուծարանի ձի չեմ, ցուցահանվելու սովոր չեմ։ Վեր կացա ու հեռացա։

— Ինչո՞ւ եյիր նրա մոտ։

— Սահմանագծման գործով. բայց այդ հենց այնպես։ Նա ուզում եր կերպարանքիս նայել։ Տիրուհի յե— պարզ ե։

— Նրա գերազանցությունը ձեզ վիրավորում ե, ա՛յ թե ինչ,— տաքացած խոսեց Ալեքսանդրա Պավլովնան.— այ թե ինչ չեք կարողանում ներել նրան։ Իսկ յես համոզված եմ, վոր խելքից բացի՝ նրա սիրտն էլ պետք ե շատ լավ լինի։ Դուք նայեցեք նրա աչքերին, յերբ նա...

— «Բարձր ազնվության մասին ե խոսում...» — վրա բերեց Լեժնյովը։

— Դուք ինձ կբարկացնեք, և յես լաց կլինեմ։ Յես ամբողջ հոգով ցավում եմ, վոր չգնացի Դարյա Միխայլովնայի մոտ ու մնացի ձեզ հետ։ Դուք դրան արժանի չեք։ Բավական ե ջղայնացնեք ինձ,— սրտաճմլիկ ձայնով ավելացրեց նա.— ավելի լավ ե՝ դուք նրա ջահելության մասին պատմեցեք ինձ։



— Ռուդինի ջահելության մասի՞ն։

— Այո։ Չե վոր դուք ինձ ասացիք, թե լավ եք ճանաչում նրան և վաղուց էլ ծանոթ եք հետը։

Լեժնյովը յելավ և անցավ սենյակով։

— Այո,— սկսեց նա.— յես նրան լավ եմ ճանաչում։ Դուք՝ ուզում եք, վոր յես նրա ջահելությունը պատմեմ ձեզ։ Համեցեք։ Նա ծնվել ե Տ...ում, աղքատ կալվածատերերից։ Նրա հայրը շուտով մեռավ։ Նա մոր մոտ միայնակ մնաց։ Վերջինս շատ բարի կին եր և նրա համար հոգին չեր խնայում։ Կերակրվում եր միայն վարսակալյուրով և ինչ փող ուներ՝ ծախսում եր տղայի վրա։ Վերջինս իր կրթությունն ստացավ Մոսկվայում— սկզբում ինչ-որ քեռու հաշվով, իսկ հետո, յերբ մեծացավ ու փետրակալեց, մի հարուստ իշխանիկի հաշվով, վորի հետ մտերմացել եր, եհ, ներեցեք, ասի... վորի հետ բարեկամացել եր։ Հետո մտավ համալսարան։ Համալսարանում յես ճանաչեցի նրան և հետը շատ մտերմացա։ Մեր այն ժամանակվա կենցաղի մասին յես հետո կխոսեմ. այժմ չեմ կարող։ Հետո նա գնաց արտասահման...

Լեժնյովը շարունակում եր ղրջել սենյակում։ Ալեքսանդրա Պավլովնան հայացքով հետևում եր նրան։

— Արտասահմանից,— շարունակեց նա,— Ռուդինը մորը շատ սակավ եր գրում. մեկ անգամ միայն այցելեց նրան՝ միայն տասն որով... պառավն այդպես էլ մեռավ առանց նրան, ուրիշի ձեռքերի վրա, բայց մինչև մահն աչքերը չհեռացրեց նրա պատկերից։ Յես գնում եյի պառավի մոտ, յերբ նա Տ...ում եր ապրում։ Բարի և շատ հյուրասեր կին եր։ Նա միշտ ինձ բալի մուրաբայով եր հյուրասիրում։ Նա իր Միտյային գժի պես

եր սիրում։ Պեչորինյան դպրոցի պարոնները ձեզ կասեն, թե մենք միշտ սիրում ենք նրանց, ովքեր իրենք սիրելու քիչ են ընդունակ։ Իսկ ինձ այնպես է թվում, թե բոլոր մայրերը սիրում են իրենց երեխաներին, մանավանդ բացականերին։ Հետո Ռուդինին ես հանդիպեցի արտասահմանում։ Այնտեղ նրա հետ մի տիկին մտերմացավ մեր ռուսներից, ինչ-որ մի կապույտ գուլպա, արդեն ոչ ջահել, ոչ էլ գեղեցիկ, ինչպես վայել է կապույտ գուլպաներին։ Ռուդինը նրա հետ շատ քաշ եկավ. վերջապես ձգեց նրան... թե ոչ, ներեցեք, կինը նրան ձգեց։ Այդ ժամանակ ես էլ նրան ձգեցի։ Ահա և բոլորը։

...Լեժնյովը լռեց, ձեռքը ճակատին քսեց և հոգնածի պես ընկավ բազկաթոռի մեջ։

— Իսկ գիտե՞ք ինչ, Միխայլո Միխայլիչ,— սկսեց Ալեքսանդրա Պավլովնան,— դուք, ես տեսնում եմ, չար մարդ եք։ Հիրավի, դուք Պիգասովից լավ չեք։ Ես հավատացած եմ, որ բոլորը, ինչ որ ասացիք, ճիշտ է, որ դուք ոչինչ չհորինեցիք. բայց այդ բոլորն ինչպե՞ս չարակամորեն ներկայացրիք։ Այդ խեղճ պառավը, նրա նվիրվածությունը, նրա միայնակ մահը, այդ տիրուհին... այդ բոլորն ինչո՞ւ համար էր։ Գիտե՞ք, որ ամենալավ մարդու կյանքը կարելի է պատկերացնել այնպիսի ներկերով,— և նկատի առեք՝ առանց ոչինչ ավելացնելու,— որ ամեն մեկը կսարսափի... Չէ՞ որ այդ էլ իր տեսակի զրպարտանք է։

Լեժնյովը ելավ և նորից անցավ սենյակով։

— Ես բնավ չէի կամենա հարկադրել ձեզ սարսափելու, Ալեքսանդրա Պավլովնա,— խոսեց նա վերջապես։ Ես զրպարտող չեմ։ Բայց.— ավելացրեց նա մի



փոքր մտածելով,— իրոք, այն ամենում, որ դուք ասացիք, ճշմարտության բաժին կա։ Ես չէի զրպարտում Ռուդինին. բայց ով գիտե.— գուցե դրանից հետո նա փոխվել է, գուցե ես նրա նկատմամբ անարդար եմ։

— Ա՜։ Տեսնո՞ւմ եք... Ուրեմն խոսք տվեք ինձ, որ դուք կվերանորոգեք ձեր ծանոթությունը նրա հետ, լավ կճանաչեք նրան և այն ժամանակ միայն կհայտնեք ինձ ձեր վերջնական կարծիքը նրա մասին։

— Համեցեք... բայց դու ինչո՞ւ ես լռել, Սերգեյ Պավլիչ։

Վոլինցևը ցնցվեց ու գլուխը բարձրացրեց, կարծես նրան արթնացրին։

— Ի՞նչ ասեմ, ես նրան չեմ ճանաչում։ Բացի դրանից, այսօր գլուխս ցավում է։

— Դու ինչ-որ գունատ ես այսօր,— նկատեց Ալեքսանդրա Պավլովնան։— Առո՞ղջ ես արդյոք։

— Գլուխս է ցավում,— կրկնեց Վոլինցևը և դուրս եկավ։

Ալեքսանդրա Պավլովնան և Լեժնյովը նայեցին նրա ետևից և հայացքներ փոխանակեցին, բայց իրար ոչինչ չասացին։ Ոչ մեկի, ոչ մյուսի համար գաղտնիք չէր այն, ինչ կատարվում էր Վոլինցևի սրտում։

## VI

— Երկու ամսից ավելի անցավ։ Այս ամբողջ ժամանակամիջոցում Ռուդինը համարյա չէր հեռանում Դարյա Միխայլովնայի մոտից։ Վերջինս առանց նրան չէր կարողանում յոլա գնալ։ Պատմել նրան իր մասին, լսել նրա դատողությունները - Դարյա Միխայլովնայի

համար պահանջ էր դարձել։ Նա մեկ անգամ ուզեց հեռանալ այն պատրվակով, թե իբր նրա փողը վերջացել է։ Նա նրան հինգ հարյուր ռուբլի տվեց։ Ռուդինը Վոլինցևից էլ յերկու հարյուր ռուբլի պարտք վերցրեց։ Պիգասովն առաջվանից ավելի սակավ էր այցելում Դարյա Միխայլովնային։ Ռուդինն իր ներկայությամբ ճնշում էր նրան։ Ասենք՝ այդ ճնշումը միայն Պիգասովը չէր զգում։

— Չեմ սիրում յես այդ խելքի տոպրակին,— հաճախ ասում էր նա,— արտահայտվում է անբնական կերպով, իսկեիսկ՝ ռուսաց վեպերից մի դեմք։ Ասում է—«յես», և հուզված կանգ է առնում...«Վորպես թե յես... յես...»։ Միշտ այնպիսի յերկար բառեր է գործածում։ Յեթե դու փռշտաս, նա իսկույն կսկսի քեզ ապացուցել, թե ինչու փռշտացիր և վոչ թե հազացիր...այնպես կգովի քեզ, կարծես աստիճան է տալիս...կսկսի ինքն իրեն հայհոյել, ցեխին հավասարեցնել, դու էլ կմտածես, թե այլևս լույս աշխարհ չի դուրս գա։ Վոլանեղինց։ Նույնիսկ կսկսի ուրախանալ, կարծես իրեն դառն ողիով է հյուրասիրել։

Պանդալևսկին վախենում էր Ռուդինից և զգույշ կերպով սիրաշահում էր նրան։ Վոլինցևը տարօրինակ հարաբերությունների մեջ էր նրա հետ։ Ռուդինը նրան ասպետ էր անվանում, մեծարում էր նրան թե յերեսին, թե նրա բացակայությամբ. բայց Վոլինցևը չկարողացավ սիրել նրան և ամեն անգամ ակամա սրտնեղանք ու անհանգուրժանք էր զգում, յերբ Ռուդինն սկսում էր հենց իր ներկայությամբ գովել իր արժանավորությունները։ «Չլինի թե ծիծաղում է վրաս», մտածում էր նա և սրտում թշնամանք տածում դեպի նա։ Վոլինցևն աշխատում էր կտրել իրեն, բայց խանդում էր նրան Նատալիայի նկատմամբ։ Հենց ինքը Ռուդինն էլ, թեպետ միշտ աղմուկով բարևում էր Վոլինցևին, թեպետ նրան ասպետ էր անվանում և նրանից փող էր պարտք վերցնում, բայց այնքան էլ հակված չէր դեպի նա։ Դժվար էր վորոշել, թե իսկապես այդ յերկու մարդիկ ինչ էյին զգում, յերբ բարեկամաբար իրար ձեռք էյին սեղմում և իրար աչքերի էյին նայում...

Բասիստովը շարունակում էր համարյա պաշտել Ռուդինին և նրա բերանից դուրս յեկած յուրաքանչյուր բառը վորսալ։ Ռուդինը նրա վրա քիչ ուշադրություն էր դարձնում։ Մեկ անգամ նրա հետ մի ամբողջ առավոտ անցկացրեց, խոսում էր նրա հետ համաշխարհային ամենակարևոր հարցերի ու խնդիրների մասին, և այսպիսով նրանում ամենակենդանի հիացմունք առաջացրեց. իսկ հետո նա թողեց նրան։ Յերևում էր, վոր նա միայն բառերով էր մաքուր ու նվիրված հոգիներ փնտրում։ Լեժնյովի հետ, վոր սկսեց Դարյա Միխայլովնայի մոտ յերթևեկել, Ռուդինը նույնիսկ վեճի չէր բռնվում և կարծես խույս էր տալիս նրանից։ Լեժնյովը նույնպես սառն էր վարվում նրա հետ, թեպետ իր վերջնական կարծիքը չէր արտահայտում նրա մասին. այդ բանը շատ էր վըրդովում Ալեքսանդրա Պավլովնային։ Ալեքսանդրա Պավլովնան յերկրպագում էր Ռուդինին, սակայն հավատում էր և Լեժնյովին։ Դարյա Միխայլովնայի տանը բոլորը յենթարկվում էյին Ռուդինի քմահաճույքներին. նրա ամենափոքրիկ ցանկությունները կատարվում էյին. Աշխատանքների որակարգը Ռուդինից էր կախված. վոչ մի partie de plaisir[1]) առանց նրան չէր կազմվում.

1) Ուրախ զբոսանք (Ֆր.)։

Պետք է ասել, որ նա մեծ սիրահար չէր ամեն տեսակ ճանկարծակի ուղևորությունների ու ձեռնարկումների և մասնակցում էր նրանց, ինչպես հասակավորները մանկական խաղին - սիրալիր և թեթևակի տաղտկալի բարեհաճությամբ։ Փոխարենը նա մտնում էր ամեն բանի մեջ. Դարյա Միխայլովնայի հետ խոսում էր կալվածքին վերաբերող կարգադրությունների մասին, գյուղացիների կրթության, անտառաբուծության, ընդհանրապես գործերի մասին. լսում էր նրա յենթադրությունները, չէր քաշվում նույնիսկ մանր մունր բաներից. բարեփոխություններ ու նորամուծություններ էր առաջարկում։ Դարյա Միխայլովնան խոսքով էր հետևում նրանով — միայն այդքան։ Տնտեսությանը վերաբերող գործերում նա հետևում էր իր կառավարչի խորհուրդներին, որը մի ծեր ու միակողմանի մարդ էր, բարեհոգի ու խորամանկ մի խարդախ։ «Ծերուկը չուլիկ է, ջանըլ՝ նինարիկ», հաճախ ասում էր նա, հանգիստ կերպով քմծիծաղ տալով ու միակ աչքը թարթելով։

Դարյա Միխայլովնայից հետո Ռուդինը ոչ ոքի հետ այնքան հաճախ ու այնքան յերկար չէր զրուցում, որքան Նատալիայի հետ։ Նա գաղտնի գրքեր էր տալիս նրան, վստահում էր իր պլանները, կարդում էր նրան իր յենթադրյալ հոդվածների ու աշխատությունների առաջին յերեսները։ Նրանց իմաստը հաճախ անմատչելի յեր մնում Նատալիայի համար։ Թեպետ թվում էր, թե Ռուդինն այնքան էլ հոգ չէր տանում, որ Նատալիան իրեն հասկանար, — միայն թե լսեր։ Նրա մտերմությունը Նատալիայի հետ այնքան էլ Դարյա Միխայլովնայի սրտովը չէր։ «Բայց», մտածում էր նա, «թող Նատալիան խոսի նրա հետ գյուղում։ Նա, որպես աղջիկ, զբաղեցնում է նրան։ Մեծ ցավ չէ, այնուամենայնիվ կխելոքանա... Պետերբուրգում յես այդ բոլորը կփոխեմ...»։

Դարյա Միխայլովնան սխալվում էր։ Նատալիան որպես փոքր աղջիկ չէր խոսում Ռուդինի հետ, — նա ագահաբար լսում էր նրա ճառերը, նա ջանք էր գնում թափանցել նրանց նշանակության մեջ, նրա դատին էր գնում իր մտքերն ու իր կասկածները։ Ռուդինը նրա դաստիարակն, նրա առաջնորդն էր։ Դեռ միայն նրա գլուխն էր յեռում... բայց յերիտասարդ գլուխը յերկար չի կարող միայն յեռալ։ Ի՜նչ քաղցր վայրկյաններ էր ապրում Նատալիան, յերբ յերբեմն այգում, նստարանի վրա, հացենու թեթև ու միջանցիկ հովում Ռուդինն սկսում էր կարդալ նրա համար Գյոթեյի Ֆաուստը, Հոֆմանի գրվածքները, կամ Բետտինի նամակները, կամ Նովալիսի յերկերը — անվերջ կանգ առնելով և բացատրելով այն, ինչ որ նրա համար մութն էր մնում։ Նա գերմաներեն վատ էր խոսում, ինչպես համարյա մեր բոլոր օրիորդները, բայց լավ էր հասկանում, իսկ Ռուդինն ամբողջովին խրված էր գերմանական բանաստեղծության մեջ, գերմանական ռոմանտիկ և փիլիսոփայական աշխարհը, և նրան էլ էր յետևից քաշում, տանում էր այն արգելված յերկրները։ Անհայտներն ու գեղեցիկներն էյին բացվում նրա ուշադիր հայացքի առաջ. այն գրքի էջերից, որ Ռուդինը պահում էր ձեռքում, հրաշալի պատկերներ, նոր ու պայծառ մտքեր գրնգուն ծփանքով հոսում էյին դեպի նրա հոգին և մեծ զգացողությունների ազնիվ խնդությամբ ցնցված նրա սրտում մեղմ կերպով բռնկվում ու այրվում էր զմայլանքի սրբազան կայծը...

---

— Ասացեք, Դմիտրի Նիկոլայիչ,— սկսեց նա մեկ անգամ՝ քարգահի յետևի պատուհանի մոտ նստած,— իհարկե, դուք ձմեռը Պետերբուրգ կգնաք։

— Չգիտեմ,— ասաց Ռուդինը՝ ծնկներին դնելով այն գիրքը, վոր թերթում եր,— յեթե միջոցներ ձեռք բերեմ, կգնամ։

Նա դանդաղ եր խոսում—նա հոգնածություն եր զգում և հենց առավոտից վոչինչ չեր արել։

— Ինձ թվում ե՝ ինչու չպետք ե միջոցներ գտնեք։

Ռուդինը գլուխը շարժեց։

— Ձեզ այդպես ե թվում։

Յեվ նա նշանակալից կերպով մի կողմ նայեց։

Նատալիան ուզում եր մի բան ասել, բայց իրեն զսպեց։

— Նայեցեք,— ասաց Ռուդինը ձեռքով ցույց տվեց պատուհանի կողմը,— տեսնո՞ւմ եք այդ խնձորենին. նա կոտրվել ե իր սեփական պտուղների ծանրությունից ու շատությունից։ Հանճարի ճիշտ խորհրդանիշ...

— Նա կոտրվել ե այն պատճառով, վոր հենարան չի ունեցել,— առարկեց Նատալիան։

— Յես ձեզ հասկանում եմ, Նատալիա Ալեքսեևնա, բայց մարդու համար այնքան ել հեշտ չե գտնել դա՝ այդ հենարանը։

— Ինձ թվում ե, ուրիշների համակրանքը... համենայն դեպս միայնությունը...

Նատալիան մի փոքր շփոթվեց ու կարմրեց։

— Յեվ ինչ պետք ե անեք ձմեռը գյուղում,— շտապ ավելացրեց նա։

— Ինչ պետք ե անեմ։ Կվերջացնեմ իմ մեծ հոդվածը՝ կյանքում և արվեստում յեղած վողբերգականի



մասին—յերեք որ առաջ պլանը ձեզ պատմեցի—և կուղարկեմ ձեզ։

— Յեվ կտպագրե՞ք։

— Վո՛չ։

— Ինչպե՞ս թե վոչ։ Ուրեմն ո՞ւմ համար պետք ե նեղություն կրեք։

— Թեկուզ հենց ձեզ համար։

Նատալիան աչքերը ցած գցեց։

— Այդ իմ ուժերի բանը չե, Դմիտրի Նիկոլայիչ։

— Ինչի՞ մասին ե, թույլ տվեք հարցնել, հոդվածը,— համեստորեն հարցրեց Բասիստովը, վոր նստած եր մի փոքր հեռու։

— Կյանքում և արվեստում յեղած վողբերգականի մասին,— կրկնեց Ռուդինը.— ա՛յ, պ. Բասիստովն ել կկարդա։ Ասենք յես հիմնական մտքի հետ բոլորովին համաձայնության դեռ չեմ յեկել։ Յես մինչև այժմ դեռ ինքս ինձ համար բավական չեմ պարզել սիրո վողբերգական նշանակությունը։

Ռուդինը հաճույքով ու հաճախ եր խոսում սիրո մասին։ Սկզբում սեր խոսքը լսելիս m-elle Boncourt-ը ցնցվում ու ականջները սրում եր, ինչպես փողի ձայն լսող զորագնդի հին ձի, իսկ հետո ընտելացավ և միայն շրթունքներն եր կծկում ու ընդմիջումներով քթախոտ քաշում։

— Ինձ թվում ե,— քաշվելով նկատեց Նատալիան,— վողբերգականը սիրո մեջ անբախտ սերն ե։

— Բոլորովին վոչ, – առարկեց Ռուդինը, — այդ ավելի շուտ սիրո կոմիկական կողմն ե... այդ հարցը բոլորովին այլ կերպ՝ պետք ե դնել... պետք ե ավելի խոր թափանցել... Սերը,— շարունակեց նա,— նրանում

ամեն ինչ գաղտնիք է. ինչպես է առաջանում, ինչպես զարգանում, ինչպես չքանում։ Մերթ յերևում է հանկարծ, անկասկածելի կերպով, ուրախ՝ ինչպես օրը. մերթ յերկար մխում է՝ ինչպես մոխրի տակի կրակ, և հոգու մեջ բոցավառվում է, յերբ ամեն ինչ ավերված է. մերթ օձի պես սողում է սրտում, մերթ հանկարծ այնտեղից դուրս է նետվում մի կողմ... Այո, այո. այդ կարևոր խնդիր է։ Վերջապես մեր ժամանակ ո՞վ է սիրում, ո՞վ կհանդգնի սիրել։

Յեվ Ռուդինը մտածմունքի մեջ ընկավ։

— Այս ինչու Սերգեյ Պավլիչը վաղուց չի յերևում,— հանկարծ հարցրեց նա։

Նատալիան կարմրատակեց և գլուխը կախեց դեպի քարգահը։

— Չգիտեմ,— շշնջաց նա։

— Այդ ինչ հիանալի, ազնվագույն մարդ է,— ասաց Ռուդինը՝ տեղից վեր կենալով։— Դա իսկական ռուս ազնվականի լավագույն օրինակներից մեկն է...

M-elle Boncourt-ը իր ֆրանսական աչքերով խեթ նայեց նրան։

Ռուդինն անցավ սենյակով։

— Դուք նկատե՞լ եք,— խոսեց նա՝ կտրուկ կերպով կրունկի վրա դառնալով,— որ կաղնու վրա, իսկ կաղնին ամուր ծառ է, հին տերևները միայն այն ժամանակ են ընկնում, յերբ նորերն սկսում են ծլել։

— Այո,— դանդաղ կերպով պատասխանեց Նատալիան,— նկատել եմ։

— Ճիշտ նույնն է պատահում հին սիրո հետ՝ ուժեղ սրտում. նա արդեն մեռել է, բայց դեռ դիմանում է. միայն ուրիշ, նոր սերը կարող է նրան դուրս վանդել։

Նատալիան վոչինչ չպատասխանեց։



«Այս ինչ է նշանակում» — մտածում եր նա։

Ռուդինը կանգնեց, մազերը թափահարեց ու հեռացավ։

Իսկ Նատալիան գնաց իր սենյակը։ Յերկար ժամանակ տարակուսած նստած եր իր մահճակալի վրա, յերկար մտածում եր Ռուդինի վերջին բառերի վրա և հանկարծ ձեռները կծկեց ու դառը լաց յեղավ։ Ինչու եր լաց լինում — աստված գիտե։ Նա ինքը չգիտեր, թե ինքն ինչու այդպես հանկարծ սկսեց արտասուք թափել։ Նա սրբում եր այդ արտասուքները, բայց նրանք նորից եյին վազում՝ վաղուց կուտակված աղբյուրից հոսող ջրի նման։

---

Հենց նույն օրը Ալեքսանդրա Պավլովնայի մոտ Լեժնյովի հետ խոսակցություն տեղի ուներ Ռուդինի մասին։ Սկզբում Լեժնյովը շարունակ լռում եր. սակայն Ալեքսանդրա Պավլովնան վճռեց մի բան իմանալ։

— Յես տեսնում եմ,— ասաց նա Լեժնյովին,— վոր Դմիտրի Նիկոլայիչն առաջվա պես դուր չի գալիս ձեզ։ Յես դիտմամբ մինչև այժմ ձեզ հարցուփորձ չեյի անում. բայց դուք արդեն կարողացաք համոզվել, թե արդյոք նրանում փոփոխություն տեղի՞ յե ունեցել, թե վոչ, և յես ցանկանում եմ իմանալ, թե նա ինչու չի դուր գալիս ձեզ։

— Համեցեք,— սովորական սառնարյունությամբ ասաց Լեժնյովը,— յեթե միայն դուք այդպես անհամբեր եք, միայն տեսեք, չբարկանաք...

— Դե, սկսեցեք, սկսեցեք։

— Ցեվ թույլ տվեք, որ ես մինչև վերջն ասեմ։

— Համեցեք, համեցեք, սկսեցե՛ք։

— Ցեվ այսպես,— սկսեց Լեժնյովը՝ դանդաղ կերպով ընկնելով բազմոցի վրա,— զեկուցում եմ ձեզ, որ Ռուդինն իրոք որ ինձ դուր չի գալիս։ Նա խելոք մարդ է...

— Հարկավ։

— Նա զարմանալի խելոք մարդ է, թեպետ ըստ էության դատարկ։

— Հե՛շտ է ասել։

— Թեպետ ըստ էության դատարկ,— կրկնեց Լեժնյովը.— բայց այդ դեռ ցավ չէ. մենք բոլորս դատարկ մարդիկ ենք։ Ես նույնիսկ նրա մեղքը չեմ համարում, որ նա հոգով բռնակալ է, ծույլ, ոչ շատ բանիմաց...

— Ալեքսանդրա Պավլովնան ձեռներն իրար զարկեց։

— Ոչ շա՜տ բանիմաց, Ռուդի՞նը,— բացականչեց նա։

— Ոչ շատ բանիմաց,— ճիշտ նույն ձայնով կրկնեց Լեժնյովը,— սիրում է ապրել ուրիշի հաշվին, դեր խաղալ, և այլն... այս բոլորը սովորական բան է։ Բայց վատն այն է, որ նա սառույցի պես սառն է։

— Նա, այդ բոցաշունչ վոգին սառն է,— ընդհատեց Ալեքսանդրա Պավլովնան։

— Այո՛, սառն ինչպես սառույց. և գիտե այդ, և բոցաշունչ է ձևանում։ Վատն այն է,— շարունակեց Լեժնյովը՝ հետզհետե աշխուժանալով,— որ նա վտանգավոր խաղ է խաղում. վտանգավոր՝ ո՛չ իրեն համար, իհարկե. ինքը մի կոպեկ, մի մազ չի մեջտեղ բերում, իսկ ուրիշները հոգի յեն դնում...



Ո՞ւմ, ինչի՞ մասին եք խոսում, ես ձեզ չեմ հասկանում,— ասաց Ալեքսանդրա Պավլովնան։

— Վատ է այն, որ նա ազնիվ չէ։ Չէ՞ որ նա խելոք մարդ է. նա պետք է գիտենա իր խոսքերի արժեքը, իսկ նրանց այնպես է արտասանում, կարծես նրա համար մի բան արժեն դրանք... Անվիճելի յե — նա պերճախոս է, սակայն նրա պերճախոսությունն ռուսական չէ։ Վերջապես պերճ խոսել ներելի յե մի պատանու, իսկ նրա տարիքում՝ ամոթ է սեփական ճառերի աղմուկով մխիթարվելը. ձևանալն ամոթ է...

— Ինձ թվում է, Միխայլո Միխայլիչ, լսողի համար միևնույն է՝ ձևանո՞ւմ եք դուք, թե ոչ...

— Ներեցե՛ք, Ալեքսանդրա Պավլովնա, միևնույն չէ։ Մեկն ինձ մի խոսք կասի, ինձ վրա խիստ կազդի, նույն բանը մի ուրիշը կասի, գուցե և ավելի գեղեցիկ, ես ականջ էլ չեմ դնի։ Ինչի՞ց է այդ։

— Այսինքն դուք չեք ականջ դնի,— ընդհատեց Ալեքսանդրա Պավլովնան։

— Այո՛, ականջ չեմ դնի,— առարկեց Լեժնյովը,— թեպետ ես գուցե և մեծ ականջներ ունեմ։ Բանն այն է, որ Ռուդինի խոսքերը խոսքեր էլ մնում են, յերբեք էլ գործ չեն դառնա, մինչդեռ հենց այդ խոսքերը կարող են պղտորել, կործանել ջահել սրտերը։

— Բայց ո՞ւմ մասին, ո՞ւմ մասին եք խոսում, Միխայլո Միխայլիչ։

Լեժնյովը կանգ առավ։

— Ցանկանո՞ւմ եք իմանալ՝ ո՛ւմ մասին եմ խոսում։ Նատալիա Ալեքսեյեվնայի մասին։

Ալեքսանդրա Պավլովնան մի վայրկյան շփոթվեց, բայց իսկույն էլ քմծիծաղ տվեց։

— Ներեցեք,— ասաց նա,— ինչ տարօրինակ մտքեր եք ունենում միշտ։ Նատալիան դեռ յերեխա չէ. և վերջապես՝ յեթե վորևէ բան էլ լինի, միթե կարծում եք, վոր Դարյա Միխայլովնան...

— Դարյա Միխայլովնան նախ՝ վոր յեսամոլ է և միայն իր համար է ապրում, և յերկրորդ՝ նա այնպես է հավատացած յերեխաներ կրթելու իր գործին, վոր մտքովն էլ չի անցնում անհանգստանալ նրանց մասին։ Հը՛, ինչպե՞ս կարելի յէ։ Մի ակնթարթ, մի վեհապանծ հայացք — և ամեն ինչ ոդը կցնդի։ Ահա թե ինչ է մտածում այդ տիրուհին, վորն իրեն և՛ մեկենաս է յերևակայում, և՛ խելոք, և՛ աստված գիտե, թե էլ ինչ, բայց իրոք՝ վոչ այլ ինչ է, յեթե վոչ մի աշխարհիկ պառավիկ։ Իսկ Նատալիան յերեխա չէ. Նա, հավատացեք, ավելի հաճախ ու ավելի խորն է մտածում, քան յես և դուք։ Յեվ հարկավոր էր, վոր այդպիսի մի ազնիվ, կրքոտ ու տաք բնավորություն այդպիսի դերասանի, այդպիսի կոկետի հանդիպեր։ Սակայն՝ այս էլ սովորական է։

— Կոկետ, այդ նրա՞ն եք դուք կոկետ անվանում։

Իհարկե. Նրան... Հապա ինքներդ դատեցեք. ի՞նչ է նրա դերը Դարյա Միխայլովնայի մոտ։ Տանը կուռք, պատգամախոս լինել, խառնվել կարգադրություններին, ընտանեկան բամբասանքներին ու անհամաձայնություններին—միթե սա տղամարդուն վայել բան է։

Ալեքսանդրա Պավլովնան զարմանքով նայեց Լեժնյովի դեմքին։

— Ձեզ չեմ ճանաչում, Միխայլո Միխայլիչ,— ասաց նա,— դուք կարմրեցիք, դուք հուզմունքի մեջ ընկաք. ըստ յերևույթին այստեղ ուրիշ բան է թաքնված...



— Ա՛յ, տեսա՞ք։ Դուք կնոջը համոզմունքով բան եք ասում, իսկ նա չի հանգստանա, մինչև մի մանրիկ, կողմնակի պատճառ չհնարի, վորը հարկադրում է քեզ այսպես և վոչ այլ կերպ խոսել։

Ալեքսանդրա Պավլովնան բարկացավ։

— Բրավո, մսյո Լեժնյով, դուք սկսում եք հետապնդել կանանց Պիգասովից վոչ պակաս. սակայն ձեր կամքն է. վորքան էլ դուք խորաթափանց լինեք, այնուամենայնիվ յես դժվար կհավատամ, վոր այսքան կարճ ժամանակում դուք կարող կլինեյիք ամենքին և ամեն ինչ հասկանալ։ Ձեր կարծիքով՝ Ռուդինը մի Տարտյուֆ է։

— Հենց բանն էլ այն է, վոր Տարտյուֆ էլ չէ։ Այն Տարտյուֆը գոնե գիտեր, թե ինչի՛ յե ձգտում, իսկ սա՝ չնայած իր խելքին...

— Ի՞նչ է, ուրեմն ի՞նչ է նա։ Վերջացրե՛ք ձեր ճառը, անարդար, նողկալի՛ մարդ։

Լեժնյովը վոտքի յելավ։

— Լսեցե՛ք, Ալեքսանդրա Պավլովնա,— սկսեց նա,— անարդարը դուք եք, վոչ թե յես։ Դուք սրտնեղում եք ինձ վրա՝ Ռուդինի նկատմամբ ունեցած իմ սուր դատողությունների համար։ Յես իրավունք ունեմ նրա մասին խիստ սուր խոսելու։ Յես գուցե էժան չեմ գնել այդ իրավունքը։ Յես նրան լավ եմ ճանաչում։ Յես նրա հետ միասին յերկար եմ ապրել։ Հիշո՞ւմ եք, յես խոստացա մի որ պատմել Մոսկվայում անցրած մեր որերի մասին։ Ինչպես յերևում է, հիմա պետք է այդ անեմ։ Բայց դուք ինձ լսելու համբերություն կունենա՞ք։

— Խոսեցե՛ք, խոսեցե՛ք։

— Դե՛հ, համեցեք։

Լեժնյովն սկսեց մանր քայլերով անցուդարձ անել սենյակում, յերբեմն կանգ առնելով և գլուխն առաջ թեքելով։

— Գուցե դուք գիտեք, բայց գուցե և չգիտեք, որ յես վաղ եմ վորբացել և արդեն տասնյոթերորդ տարուց գլխիս մեծավոր չունեի։ Յես ապրում էի Մոսկվայում, մորաքրոջս մոտ և ինչ ուզում էի, անում էի։ Փոքր ժամանակս բավական դատարկ ու ինքնահավան էի, սիրում էի ձևանալ ու պարծենալ։

Համալսարան մտնելով՝ յես ինձ վորպես դպրոցական էի պահում և շուտով էլ պատմության մեջ ընկա։ Այդ յես ձեզ չեմ պատմի, չարժե։ Յես խաբեցի և բավական զզվելի կերպով խաբեցի... ինձ դիմակազերծ արին, հանցանքի մեջ բռնեցին ու ամաչեցրին։ Յես ինձ կորցրի ու յերեխի պես լաց յեղա։ Այդ կատարվեց մի ծանոթի բնակարանում, շատ ընկերների ներկայությամբ։ Բոլորն սկսեցին ծիծաղել վրաս, բոլորը, բացի մեկ ուսանողից, վորը, նկատեցեք, ամենից շատ էր բարկանում վրաս, յերբ համառում ու սուտս չէի խոստովանում։ Խղճաց ինձ, թե ինչ էր — նա թևս ընկավ ու տարավ իր մոտ։

— Դա Ռուդինն էր,— հարցրեց Ալեքսանդրա Պավլովնան։

— Վո՛չ, դա Ռուդինը չէր... դա մի մարդ էր... նա այժմ արդեն մեռած է... Նրան կոչում էին Պոկորսկի։ Նրան մի քանի խոսքով նկարագրելու յես ույժ չունեմ. իսկ յեթե սկսեմ խոսել նրա մասին, էլ ուրիշի մասին խոսել չեմ ուզի։ Դա վսեմ, մաքուր հոգի էր, իսկ այդպիսի խելքի էլ հետո չհանդիպեցի։ Պոկորսկին ապրում էր փոքրիկ ցածրիկ սենյակում — մի հին, փայտե կիսավերնահարկում։ Նա շատ աղքատ էր և դասերով



էր մի կերպ գլուխ պահում։ Պատահում էր, վոր յերբեմն մեկ բաժակ թեյով անգամ չէր կարողանում պատվել հյուրին, իսկ նրա միակ բազմոցն այնքան էր փոս ընկել, վոր նավակի նման էր դարձել։ Բայց չնայած այս անհարմարություններին, նրա մոտ շատերն էին գալիս։ Նրան ամենքը սիրում էին. նա սրտեր էր գրավում։ Դուք չեք հավատա, թե վո՛րքան քաղցր և ուրախ էր նրա փոքրիկ սենյակում նստելը։ Նրա մոտ յես ծանոթացա Ռուդինի հետ։ Այդ ժամանակ նա արդեն հեռացել էր իր իշխանիկից։

— Ի՞նչ մի առանձին բան կար այդ Պոկորսկու մեջ,— հարցրեց Ալեքսանդրա Պավլովնան։

— Ինչպե՞ս ասեմ ձեզ։ Բանաստեղծություն և ճշմարտություն — ահա թե ինչն էր քաշում բոլորին նրա մոտ։ Պարզ ու լայն խելքի հետ միասին նա յերեխայի պես սիրելի էր և զվարճալի։ Մինչև այժմ էլ իմ ականջում հնչում է նրա պայծառ քրքիջը. միաժամանակ էլ նա

Վորպես միջգիշերյան կանթեղ
Վառվում էր բարիքի սրբության առջև...

Այսպես արտահայտվեց նրա մասին մեր խմբակի մի կիսախելագար ու անչափ սիրելի մի բանաստեղծ։

— Իսկ ինչպես էր խոսում նա,— կրկին հարցրեց Ալեքսանդրա Պավլովնան։

— Յերբ տրամադրված էր լինում, խոսում էր լավ, բայց վոչ զարմանալի։ Ռուդինը դեռ այն ժամանակ էլ քսան անգամ պերճախոս էր նրանից։

Լեժնյովը կանգ առավ և ձեռքերը խաչեց։

— Պոկորսկին և Ռուդինն իրար նման չէին։

Ռուդինի մեջ ավելի շատ փայլ ու թափ կար, ավելի շատ ֆրազներ կային, ճիշտն ասած՝ նաև շատ խանդավառություն կար։ Նա Պոկորսկուց շատ ավելի շնորհալի չէր երևում, բայց իրոք՝ նրա հետ համեմատած, աղքատիկ էր։ Ռուդինն ինչ միտք ասես, հրաշալի կերպով զարգացնում, վարպետ կերպով վիճում էր, բայց նրա մտքերը նրա գլխում չէին ծնունդ առնում. նա ուրիշներից, մանավանդ Պոկորսկուց էր վերցնում։ Պոկորսկին արտաքուստ խաղաղ էր ու փափուկ, նույնիսկ թույլ, և սիրում էր կանանց՝ մինչև խելագարություն. սիրում էր քեֆ անել և չէր թույլ տա, որ մեկն ու մեկն իրեն վիրավորի։ Ռուդինն արտաքուստ կրակոտ, համարձակությամբ ու կյանքով լի էր երևում, իսկ հոգով սառն էր և համարյա երկչոտ— քանի դեռ ինքնասիրությունը չէր վիրավորված. այս դեպքում նա անզուսպ էր։ Նա ամեն կերպ աշխատում էր նվաճել մարդկանց, բայց նրանց նվաճում էր հանուն ընդհանուր սկզբունքների և գաղափարների, և, իրոք, մեծ ազդեցություն էր ունենում շատերի վրա։ Ճիշտ է, ոչ ոք նրան չէր սիրում, գուցե միայն ես էի կապվել նրա հետ։ Նրա լուծը տանում էին։ Պոկորսկուն բոլորն ինքնաբերաբար ենթարկվում էին։ Փոխարենը Ռուդինը երբեք չէր հրաժարվում խոսել ու վիճել առաջին պատահածի հետ... Նա այնքան էլ շատ գիրք չէր կարդացել, բայց համենայն դեպս շատ ավելի էր կարդացել քան Պոկորսկին, և քան մենք բոլորս։ Դրա հետ միասին սիստեմատիկ խելք և՝ անհագին հիշողություն ուներ, իսկ այս էլ հենց ազդում է ջահելների վրա։ Սրանց եզրակացություններ տուր, հանրագումարներ, թեկուզ ոչ ճիշտ, բայց հանրագումարներ



Այս բանի համար՝ բոլորովին բարեխիղճ մարդը պետք չէ։ Փորձեցեք ջահելներին ասել, թե դուք նրանց լրիվ ճշմարտություն չեք կարող տալ, որովհետև ինքներդ չունեք... Ջահելներն այնուհետև ձեզ չեն էլ լսի։ Բայց նրանց խաբել էլ չեք կարող։ Հարկավոր է, որ դուք ինքներդ թեկուզ կիսով չափ հավատաք թե տիրապետում եք ճշմարտությանը... Հենց դրա համար էլ Ռուդինն այնքան ուժեղ կերպով ազդում էր մերոնց վրա։ Տեսեք, ես հենց նոր ասացի, թե նա քիչ էր կարդացել, բայց փիլիսոփայական գրքեր էր կարդում և նրա գլուխն այնպես էր կառուցված, որ կարդացածից իսկույն ողջ ընդհանուրն էր քաղում, կպչում էր հենց գործի արմատին, իսկ հետո նրանից մտքի պայծառ, ճշմարիտ թելեր էր փռում ամեն կողմ, բաց էր անում հոգևոր հեռանկարներ։ Մեր խումբն այն ժամանակ, խղճով ասած, բաղկացած էր անչափահաս տղաներից—այն էլ թերուս տղաներից։ Փիլիսոփայությունը, արվեստը, գիտությունը, ինքը կյանքը — այս բոլորը մեզ համար միայն բառեր էին, գուցե և հասկացողություններ— հրապուրիչ, գեղեցիկ, բայց ցրիվ ընկած, իրարից անջատ։ Այդ հասկացողությունների ընդհանուր կապը, համաշխարհային ընդհանուր օրենքը մենք չէինք գիտակցում, չէինք շոշափում, թեպետ աղոտ կերպով խոսում էինք նրա մասին, ուժ էինք գործ դնում մեզ հաշիվ տալու նրա մասին... Լսելով Ռուդինին, մեզ առաջին անգամ թվաց, թե մենք վերջապես բռնել ենք նրան, այդ ընդհանուր կապը. թե վերջապես վարագույրը բարձրացավ։ Ասենք՝ նա իր սեփականը չէր ասում,—ինչ կա որ։ Բայց ամեն բանում խիստ կարգ էր սահմանվում. ինչ որ գիտեինք, ողջ ցրիվ ընկածը

հանկարծ միացավ, դասավորվեց, ծառացավ մեր առաջ վորպես մի շենք, բոլորը լուսավորվեց, ամեն տեղ շունչ եր փչում... այլևս անիմաստ, պատահական վոչինչ չեր մնում. ամեն բանում խելացի անհրաժեշտություն ու գեղեցկություն եր արտահայտվում, ամեն ինչ պարզ և միևնույն ժամանակ խորհրդավոր նշանակություն եր ստանում. կյանքի յուրաքանչյուր առանձին յերևույթ ներդաշնակ եր հնչում և մենք ինքներս ակնածության մի տեսակ սրբազան յերկյուղով, սրտի քաղցր տրոփյունով լցված, մեզ զգում եյինք վորպես հավիտենական ճշմարտության կենդանի անոթներ, նրա գործիքներ՝ կոչված մի մեծ բանի համար... Այս բոլորը ձեզ համար ծիծաղելի չե՞ն։

— Բնավ վո՛չ,— դանդաղորեն առարկեց Ալեքսանդրա Պավլովնան,— ինչու՞ յեք այդպես կարծում: Յես ձեզ այնքան ել լավ չեմ հասկանում, սակայն ինձ համար ծիծաղելի չե։

— Դրանից հետո մենք, իհարկե, կարողացանք խելոքանալ,— շարունակեց Լեժնյովը,— այդ բոլորն այժմ մեզ յերեխայություն կարող ե թվալ... Բայց կրկնում եմ, այդ ժամանակ Ռուդինին մենք շատ բան եյինք պարտական: Պոկորսկին անհամեմատ բարձր եր նրանից, այդ անվիճելի յե: Պոկորսկին մեզ բոլորի կրակ և ուժ եր ներշնչում, բայց յերբեմն նա լիովին թոշնած եր զգում ու լռում եր: Նա ջղային, անառողջ մարդ եր, բայց փոխարենը, յերբ փռում եր իր թևերը, աստված իմ, ուր չեր թռչում. հենց յերկնքի խորքն ու կապուտակությունը: Իսկ Ռուդինի մեջ, այդ գեղեցիկ ու բարեկազմ յերիտասարդի մեջ մանր բաներ շատ կային. Նա նույնիսկ բամբասում եր. Նրա մոլուցքն եր ամեն



բանի խառնվել. ամեն ինչ վորոշել ու պարզաբանել: Նրա հոգատար գործունեությունը յերբեք չեր թուլանում... քաղաքական բնավորություն ե: Յես խոսում եմ նրա մասին այնպես, ինչպես ճանաչում եյի այն ժամանակ: Բայց դժբախտաբար նա չի փոխվել: Փոխարենը նա իր հավատալիքներում ել չի փոխվել... յերեսուն հինգ տարում... ամեն մեկն ել չի կարող ասել իր մասին:

Նստեցեք,— ասաց Ալեքսանդրա Պավլովնան,— ինչ եք ճոճանակի պես շրջում սենյակում:

— Այսպես ավելի լավ ե ինձ համար,— առարկեց Լեժնյովը,— և, ընկնելով Պոկորսկու խմբակը, զեկուցում եմ ձեզ, Ալեքսանդրա Պավլովնա, յես բոլորովին վերածնվեցի, մեղմացա, հարցուփորձում եյի, սովորում, ուրախանում, ակնածում եյի— մի խոսքով կարծես մի տաճար եյի մտել: Յեվ իսկապես, յերբ հիշում եմ մեր ժողովները աստված ե վկա, նրանցում լավ, նույնիսկ սրտառուչ բաներ շատ կային: Դուք յերևակայեցեք— հինգ-վեց տղաներ եյին իրար ընկել, մի ճարպամոմ ե վառվում, անչափ վատ թեյ և տրվում, դրա հետ ել հնից ել հին պաքսիմատ. հապա նայեցեք մեր բոլորի դեմքերին, լսեցեք մեր ճառերը: Յուրաքանչյուրի աչքերում հիացմունք. մեր այտերն եյին այրվում,— սրտերն եյին տրոփում, խոսում ենք աստծու, ճշմարտության, մարդկության ապագայի, բանաստեղծության մասին. յերբեմն դատարկաբանում ենք, յերբեմն չնչին բաներով ենք հիանում. բայց ինչ վնաս... Պոկորսկին նստած ե՝ վոտները ծալած, գունատ այտը հենել ե ձեռքին, իսկ աչքերն ուղղակի լույս են տալիս: Ռուդինը կանգնած ե սենյակի մեջտեղում ու խոսում ե, խոսում ե շատ գեղեցիկ, իսկ և իսկ յերիտասարդ Դեմոսթենես՝ աղմկող ծովի առաջ. գզգզված բանաստեղծ Սուբբոտինն և ժամանակ առ ժամանակ կարծես յերազում

ընդհատվող բացականչություններ թողնում. քառասունամյա մի բուրշ (գերմանական ուսանողական մի ընկերության անդամ. Թ.), գերմանացի պաստորի վորդի Շլեգելը, հռչակված մեր մեջ վորպես խորագույն մտածող, եր հավիտենական, վոչ մի բանով չխանգարվող լռության վողորմածությամբ, կարծես առանձնապես հանդիսավորությամբ անխոս է դարձել. ինքը, ուրախ Շչիտովը, մեր ժողովների Արիստոֆանը հանդարտվել ու միայն ժպտում է. յերկու-յերեք ըմպանակներ կում են զմայլած բավականությամբ... Իսկ գիշերը թռչում է մեղմ ու սահուն կերպով՝ կարծես թևեր առած։ Ահա և առավոտն է գորշանում ու մենք ցրվում ենք՝ զգացված, ուրախ, ազնիվ, զգաստ (գինու մասին այդ ժամանակ խոսք էլ չէր լինում), հոգու մի տեսակ հաճելի հոգնածությամբ... Հիշում եմ, ամբողջովին խանդաղատանք կտրած, գնում ես դատարկ փողոցներով, նույնիսկ աստղերին մի տեսակ վստահությամբ ես նայում, կարծես նրանք ավելի մոտ ու ավելի հասկանալի յեն դարձել... Եհ, հրաշալի ժամանակ եր, և չեմ ուզում հավատալ, վոր նա զուր անցավ։ Ասենք՝ զուր էլ չանցավ, չանցավ նույնիսկ նրանց համար, վորոնց հետո կյանքը փչացրեց... Քանի՜ անգամ եմ պատահել այդպիսի մարդկանց, հին ընկերներիս։ Թվում է, թե մարդն իսպառ գազան է դարձել, սակայն հարկավոր է միայն արտասանել Պոկրովսկու անունը — և առաքինության բոլոր մնացորդները նրանում կշարժվեյին, կարծես դու կեղտոտ ու մութ սենյակում անուշահոտ ջրով լիքը մոռացված մի սրվակ բաց արիր...

Լեժնյովը լռեց. նրա անգույն դեմքը կարմրատակեց։

— Բայց ախր ինչո՞ւ դուք կռվեցիք Ռուդինի հետ,



— ասաց Ալեքսանդրա Պավլովնան՝ զարմանքով նայելով Լեժնյովին։

— Յես նրա հետ չեմ կռվել. յես նրանից բաժանվեցի, յերբ արտասահմանում վերջնականապես ճանաչեցի նրան։ Իսկ Մոսկվայում արդեն կարող եյի կռվել նրա հետ։ Այն ժամանակ նա ինձ հետ վատ խաղ խաղաց։

— Ի՞նչ։

— Այ թե ինչ։ Յես... ինչպե՞ս ասել... ինձ չի սազում... բայց յես միշտ սիրահարվելու ընդունակ եյի։

— Դո՞ւք։

— Այո։ Տարօրինակ է, այնպես չէ՞։ Մինչդեռ այդպես է... Եհ, այդպես, յես այն ժամանակ սիրահարվեցի մի շատ սիրունիկ աղջկա վրա... Ի՞նչ եք այդպես նայում ինձ։ Յես իմ մասին կարող եմ ձեզ շատ ավելի զարմանալի բան պատմել։

— Ի՞նչ բան, թույլ տվեք իմանալ։

— Թեկուզ այ թե ինչպիսի բան։ Յես մոսկովյան ժամանակ տեսակցության եյի գնում... ի՞նչ եք կարծում՝ ո՞ւմ... իմ այգու ծայրում գտնվող մի ջահել լորենու... գրկում եյի նրա նուրբ ու բարեկազմ բունը և ինձ թվում եր, թե վողջ բնությունն եմ գրկում. իսկ սիրտս այնպես եր լայնանում և տոչորվում, կարծես վողջ բնությունն եր հոսում նրա մեջ... ահա թե ինչպես եյի յես... Հապա ի՞նչ։ Դուք կարծում եք յես վոտանավորներ չեյի՞ գրում։ Գրում եյի, նույնիսկ «Մանֆրեդի» նմանությամբ մի ամբողջ դրամա յեմ հորինել։ Գործող անձանց թվում մի ուրվական՝ կրծքին արյունով, և վոչ իր արյունը, նկատեցեք, այլ ընդհանրապես վողջ մարդկության արյունը... Այո, այո, մի՛ հաճեք զարմանալ... Բայց յես սկսեցի պատմել իմ սիրո մասին։ Յես ծանոթացա մի աղջկա հետ...

— Յեվ դադարեցիք լորինուն տեսակցության գնալ,—հարցրեց Ալեքսանդրա Պավլովնան։

— Դադարեցի։ Այդ աղջիկը շատ բարի ու շատ սիրուն մի եյակ եր՝ ուրախ, պարզ աչքերով և զրնգուն ձայնով։

— Դուք լավ եք նկարագրում,—ծիծաղելով նկատեց Ալեքսանդրա Պավլովնան։

— Իսկ դուք շատ խիստ քննադատ եք,—առարկեց Լեժնյովը,—Ե՛հ, ապրում եր այդ աղջիկն իր ծեր հոր հետ... Բայց յես մանրամասնությունների մեջ չեմ մտնի։ Կասեմ ձեզ միայն, վոր այդ աղջիկը միշտ շատ բարի չեր. քեզ համար յերեք քառորդ բաժակ թեյ կլցներ այն ժամանակ, յերբ դու միայն կես բաժակ ես խնդրել։ Առաջին հանդիպման յերրորդ որը յես արդեն այրվում եյի, իսկ յոթներորդ որը յես չդիմացա ու ամեն ինչ խոստովանեցի Ռուդինին։ Սիրահարված յերիտասարդը, անկարելի յե, վոր բերանից խոսք չթռցնի։ Իսկ յես Ռուդինին ամեն ինչ խոստովանում եյի։ Յես այդ ժամանակ ամբողջովին նրա ազդեցության տակ եյի, և այդ ազդեցությունը, կասեմ առանց պատեպատ ընկնելու, շատ բանում շատ բարենպաստ եր։ Նա առաջինը չարհամարհեց ինձ, տաշեց ինձ։ Պոկրովսկուն յես սաստիկ սիրում եյի և նրա հոգեկան մաքրության առաջ վորոշ վախ եյի զգում։ Իսկ Ռուդինին յես մոտ եյի կանգնած։ Իմանալով իմ սիրո մասին, նա աննկարագրելի հիացմունքի մեջ ընկավ,—շնորհավորեց, գրկեց ինձ, և իսկույն էլ սկսեց հասկացնել ինձ, բացատրել ինձ իմ նոր դրության վողջ կարևորությունը։ Յես ականջներս կախել եյի... Հո գիտեք, թե նա ինչպես ե կարողանում խոսել։ Նրա խոսքերն անսովոր կերպով ազդեցին վրաս։ Յես դեպի ինձ զարմանալի հարգանք զգացի, լուրջ դեմք ընդունեցի և ծիծաղելը թողեցի։ Հիշում եմ, յես նույնիսկ սկսեցի ավելի զգույշ ման գալ, կարծես կրծքիս տակ մի անոթ կար՝ թանգագին հեղուկով լի, վոր վախենում եյի թե կարող եմ թափել... Յես շատ բախտավոր եյի, մանավանդ վոր գեղի ինձ ակնհայտ կերպով բարյացակամ եյին։ Ռուդինը ցանկացավ ծանոթանալ իմ առարկայի հետ, համարյա յես եյի պնդում, վոր նրան ներկայացնեմ։

— Ե՛, տեսնում եմ, տեսնում եմ այժմ, թե ինչ ե պատահել,—ընդհատեց Ալեքսանդրա Պավլովնան,—Ռուդինը խլել ե ձեր առարկան և դուք մինչև այժմ նրան ներել չեք կարողանում... Գրազ կգամ, վոր չսխալվեցի...

— Յեվ գրազը տանուլ կտաք, Ալեքսանդրա Պավլովնա, դուք սխալվում եք։ Ռուդինը չխլեց իմ առարկան, նա չեր էլ ուզում խլել, բայց և այնպես խորտակեց իմ բախտավորությունը։ Թեպետ, սառը դատելով, յես այժմ պատրաստ եմ դրա համար նրան շնորհակալություն հայտնել։ Բայց այն ժամանակ քիչ եր մնում գժվեյի։ Ռուդինը բնավ չեր ուզում վնասել ինձ. ընդհակառակը՝ վորպես հետեվանք իր անիծված սովորության՝ կյանքի յուրաքանչյուր շարժումը—թե իր, թե ուրիշի—խոսքով կպցնել, ինչպես թիթեռը գնդասեղով, նա սկսեց հենց մեզ բացատրել մեզ համար մեր հարաբերությունները, թե ինչպես պետք ե մեզ պահենք, բռնակալորեն հարկադրում եր մեզ, վոր մեր զգացմունքների ու մտքերի մասին հաշիվ տանք մեզ. գովում եր, կշտամբում եր մեզ, նույնիսկ գրագրության մեջ մտավ մեզ հետ, յերեվակայեցեք... Յեվ իսպառ գլխահան արեց մեզ։ Յես այդ ժամանակ հազիվ թե

ամուսնանալը իմ ընկերոջ հետ (այդքան առողջ միտք դեռ մեջս մնում եր), բայց գոնե յես ու նա միքանի ամիս փառավոր ժամանակ կանցկացնեինք—Պավելի և Վիրգինիայի պես։ Այնինչ թյուրիմացություններ մեջ ընկան, լարված վիճակ,—մի խոսքով՝ անհեթեթություններ։ Վերջացավ նրանով, վոր Ռուդինը մի գեղեցիկ առավոտ յեկավ այն համոզման, վոր իրեն, իբրև բարեկամի, իբրև ընկերոջ պարտք անհրաժեշտ ե այդ բոլորի մասին հայտնել ծերունի հորը, և նա այդ արեց։

— Մի՞թե,—բացականչեց Ալեքսանդրա Պավլովնան։

— Այո, և նկատեցե՛ք, իմ համաձայնությամբ արեց, —այ թե ինչն եր զարմանալին... Մինչև այժմ ել հիշում եմ, թե այդ ժամանակ ինչ քաոս եր իմ գլխում. ուղղակի ամեն ինչ պտտվում ու տեղաշարժվում եր գլխումս, ինչպես կամերա-օբսկուրայում.—սևն սպիտակ եր թվում, սպիտակը՝ սև, սուտը՝ ճշմարիտ, յերևակայությունը՝ պարտք...Ո՜, նույնիսկ հիմա ամաչում եմ մտաբերել։ Ռուդինը չեր վհատում... վորտեղի՜ց... ամեն տեսակ թյուրիմացությունների ու խառնիճաղանջությունների վրայից սլանում եր, ինչպես ծիծեռնակը լճակի վրա։

— Յեվ այդպես, դուք բաժանվեցի՞ք ձեր աղջկանից,—հարցրեց Ալեքսանդրա Պավլովնան՝ գլուխը միամիտ կերպով մի կողմ թեքելով և հոնքերը բարձրացնելով։

— Բաժանվեցինք... Յեվ լավ չբաժանվեցինք, վիրավորական ձևով, անհարմար, հրապարակով, վորի կարիքը չկար... Յես ինքս լաց յեղա, նա ել լաց յեղավ, և ինչ ասես, վոր չպատահեց... Գորդյան հանգույց եր ստեղծվել. պետք յեղավ կտրել, մինչև



ցավալի չեր։ Բայց աշխարհում ամեն բան լավ ե դասավորվում։ Նա մի լավ մարդու հետ ամուսնացավ և այժմ փառավոր ապրում ե...

— Բայց խոստովանվեցե՛ք, դուք այնուամենայնիվ չկարողացաք ներել Ռուդինին...—ասաց Ալեքսանդրա Պավլովնան։

— Ինչ եք ասո՛ւմ,—ընդհատեց Լեժնյովը,— նրան արտասահման ճանապարհելիս յես յերեխայի պես լաց եի լինում։ Սակայն, ճիշտն ասած, սերմը հոգուս մեջ հենց այն ժամանակ ընկավ։ Յեվ յերբ հետո յես հանդիպեցի նրան արտասահմանում... Էհ, այդ ժամանակ յես ել արդեն ծերացել եի... Ռուդինն իմ առաջ կանգնեց իր իսկական լույսով։

— Որինակ, ինչ գտաք նրանում։

— Այն բոլորը, ինչ վոր ասացի ձեզ մեկ ժամ առաջ։ Բայց նրա մասին բավական ե։ Գուցե ամեն ինչ բարեհաջող կանցնի։ Յես միայն ուզում եի ապացուցել ձեզ, վոր յեթե յես նրան խիստ եմ դատում, այդ այն պատճառով չե, վոր նրան չեմ ճանաչում... Ինչ վերաբերում ե Նատալիա Ալեքսեյևնային, յես ավելորդ բառեր չեմ վատնի, բայց դուք ուշադրություն դարձրեք ձեր յեղբոր վրա։

— Իմ յեղբոր վրա՞։ Իսկ ի՞նչ կա վոր։

— Մի նայեցե՛ք նրա վրա։ Մի՞թե դուք վոչինչ չեք նկատում։ Ալեքսանդրա Պավլովնան գլուխը խոնարհեց։

— Դուք իրավացի եք,—մրմնջաց նա—ճիշտ վոր... յեղբայրս... բավական ժամանակ ե, յես նրան չեմ ճանաչում... բայց մի՞թե դուք կարծում եք...

— Լռությո՛ւն։ Նա կարծես այստեղ ե գալիս,—շշնջաց Լեժնյովը,—իսկ Նատալիան յերեխա չե, հավա-

տացեք ինձ, Թեպետ, դժբախտաբար, յերեխայի պես անփորձ եմ։ Դուք կտեսնեք, այդ աղջիկը մեզ բոլորիս կզարմացնի։

— Ինչպե՞ս։

— Ա՛յ, թե ինչպես... Գիտե՞ք արդյոք, վոր հենց այդպիսի աղջիկներն են ջրախեղդ լինում, թույն ընդունում և այլն։ Մի՛ նայեք, վոր նա այնպես հանդարտ է։ Կրքերը նրանում ավելի ուժեղ են, իսկ բնավորությունը նույնպես, ո՜յ, ո՜յ...

— Ե՛, այդտեղ արդեն, ինձ թվում է, թե դուք բանաստեղծության մեջ եք ընկնում։ Ասենք՝ այնպիսի սառնարյուն մարդուն, ինչպիսին դուք եք, յես էլ հրաբուխ կթվամ։

— Ո՛, վո՛չ,—ժպտալով ասաց Լեժնյովը,—իսկ գալով բնավորությանը, դուք, փառք աստծու, բոլորովին բնավորություն չունեք։

— Ա՞յդ ինչ հանդգնություն է։

— Ա՞յս, այս, ներեցեք, մեծագույն հաճոյախոսություն է...

— Վոլինցևը ներս մտավ և կասկածելի կերպով նայեց Լեժնյովին ու քրոջը։ Վերջերս նա նիհարել էր։ Նրանք յերկուսն էլ սկսեցին խոսել նրա հետ, սակայն նա նրանց կատակներին հազիվ ժպիտով պատասխանեց և նայում էր, ինչպես մեկ անգամ Պիգասովն արտահայտեց նրա մասին, վշտոտ նապաստակի պես։ Ասենք՝ յերեվի դեռ աշխարհում մի մարդ չի յեղել, վոր կյանքում գոնե մեկ անգամ դրանից վատ նայած լինի։ Վոլինցևն զգաց, վոր Նատալիան նրանից հեռանում էր, իսկ նրա հետ միասին կարծես գետնին էլ էր փախչում նրա վոտների տակից։



## VIII

Մյուս օրը կիրակի յեր և Նատալիան ուշ վեր կացավ։ Նախորյակին նա մինչև յերեկո շատ լռակյաց էր։ Նա ծածուկ ամաչում էր իր արտասուքներից և շատ վատ էր քնել։ Կիսահագնված, նստած իր փոքրիկ դաշնամուրի առաջ, նա յերբեմն հազիվ լսելի ակկորդներ էր վերցնում, վոր m-elle Boncourt-ին չարթնացնի, յերբեմն ճակատը կպցնում էր սառն ստեղներին ու յերկար ժամանակ մնում էր անշարժ։ Նա շարունակ մտածում էր—վոչ թե իրեն՝ Ռուդինի մասին, այլ նրա ասած վորևէ խոսքի մասին և ամբողջովին թաղվում էր իր մտքերի մեջ։ Յերբեմն նա հիշում էր Վոլինցևին։ Նատալիան գիտեր, վոր նա իրեն սիրում է. բայց միտքն իսկույն նրան լքում էր։ Նա տարօրինակ հուզմունք էր զգում։ Առավոտը նա շտապ հագնվեց, իջավ ցած և վողջունելով մորը, հարմար ժամանակ գտավ ու միայնակ գնաց այգի... Օրը ջերմ էր, պայծառ, ճաճանչափայլ որ, չնայելով մանրամաղ անձրևին։ Պարզ յերկնքով, առանց կարողանալու արևի յերեսը ծածկել, ցածր, ծխանման ամպեր էին սահում և ժամանակ առ ժամանակ հանկարծակի ու վայրկենական հեղեղի առատ հոսանքներ էին թափում դաշտերի վրա։ Խոշոր, փայլուն կաթիլները թափվում էին արագ, մի տեսակ չոր աղմուկով, կարծես ադամանդ լի-

նեյին։ Արևը խաղում եր նրանց առկայծող ցանցի միջով։ Խոտը, վոր մի փոքր առաջ որորվում եր քամուց, ագահաբար խոնավությունը կլանելով, չեր շարժվում։ Ցողված ծառերն իրենց տերևներով միասին թույլ կերպով որորվում եյին։ Թռչունները չեյին դադարում յերգելուց, և հաճելի յեր լսել նրանց անվերջ ճռվողյունը՝ տեղացող անձրևի թարմ աղմուկի և քչքչոցի հետ միասին։ Փոշոտ ճանապարհները մխում ու թեթևորեն փայլում եյին անձրևաշիթերի սուր հարվածների տակ։ Բայց ահա մի ամպի կտոր սահեց, թեթև քամի փչեց, խոտն սկսեց զմրուխտի ու վոսկու գույնով շողշողալ... Ծառերի տերևներն իրար կպչելով՝ թափանցիկանում եյին... ամեն կողմից ուժգին բուրմունք բարձրացավ։

Յերկինքը համարյա բոլորովին մաքրվել եր, յերբ Նատալիան այգի գնաց։ Այնտեղից թարմություն ու զովություն եր փչում, այն հեզիկ ու յերջանիկ լռությունը, վորին մարդու հոգին արձագանքում ե գաղտուկ համերաշխությամբ ու անորոշ ցանկությունների քաղցր տանջանքով...

Նատալիան գնում եր լճակի յերկայնքով, արծաթագույն բարդիների յերկար ծառուղիով։ Հանկարծ, կարծես գետնից դուրս գալով, նրա առաջ բուսավ Ռուդինը։

Նատալիան շփոթվեց։ Ռուդինը նայեց նրա յերեսին։

— Դուք մենա՞կ եք,—հարցրեց նա։

— Այո, յես մենակ եմ,—պատասխանեց Նատալիան,—բայց յես մեկ րոպեյով դուրս յեկա... Ժամանակ ե, վոր տուն գնամ։

— Յես ձեզ կճանապարհեմ։



Յեվ նա գնաց նրա հետ միասին։

— Դուք, կարծես, տխուր եք,—խոսեց Ռուդինը։

— Յե՞ս։ Իսկ յես ուզում եյի ձեզ նկատել, թե իմ կարծիքով դուք լավ չեք տրամադրված։

— Գուցե... ինձ պատահում ե։ Այդ ինձ ավելի ներելի յե, քան ձեզ։

— Ինչո՞ւ վոր։ Միթե դուք կարծում եք, վոր յես պատճառ չեմ ունենա տխրելու։

— Ձեր տարիքում պետք ե կյանքից վայելք ըստանալ։

Նատալիան լուռ կերպով միքանի քայլ արեց։

— Դմիտրի Նիկոլայիչ,—խոսեց նա։

— Ի՞նչ ե։

— Հիշո՞ւմ եք... այն համեմատությունը, վոր յերեկ արիք... հիշո՞ւմ եք... կաղնու հետ։

— Այո, հիշում եմ, ի՞նչ կա վոր։

Նատալիան գաղտագողի նայեց Ռուդինին։

— Դուք ինչո՞ւ... ի՞նչ եյիք ուզում ասել այդ համեմատությամբ։

Ռուդինը գլուխը խոնարհեց և հայացքը հառեց դեպի հեռուն։

— Նատալիա Ալեքսեյեվնա,—սկսեց նա իրեն հատուկ զսպված և նշանակալից արտահայտությամբ, վոր լսողին միշտ հարկադրում եր մտածել, թե Ռուդինը նույնիսկ մեկ տասներորդ մասը չարտահայտեց այն բոլորի, վոր կուտակված եր նրա հոգում.— Նատալիա Ալեքսեյեվնա, դուք կարող եյիք նկատել, վոր յես իմ անցյալի մասին քիչ եմ խոսում։ Միքանի լարեր կան, վորոնց յես յերբեք չեմ դիպչում։ Իմ սիրտը... ում ինչ կարիք ունի իմանալու, թե ինչ ե կատարվել

նրանում։ Ցուցադրել այդ, յես միշտ սրբապղծություն եմ համարել։ Բայց ձեզ հետ յես սրտաբաց եմ։ Դուք իմ մեջ վստահություն եք առաջացնում... Չեմ կարող ձեզնից թաքցնել, վոր յես սիրել ու տանջվել եմ, ինչպես ամենքը... Յե՞րբ և ինչպե՞ս — այդ մասին չարժե խոսել։ Սակայն սիրտս շատ ուրախություն և շատ դառնություն է զգացել...

Ռուդինը մի փոքր լռեց։

— Այո, ինչ վոր ձեզ ասացի յերեկ,— շարունակեց նա,— կարող է վորոշ չափով ինձ, իմ այժմյան դրությանը վերաբերել։ Բայց, այնուամենայնիվ, այդ մասին խոսել չարժե։ Կյանքի այդ կողմն ինձ համար արդեն չքացել է։ Ինձ այժմ միայն մնում է քաշ գալ տոթ ու փոշոտ ճանապարհով, կայարանից կայարան ցնցող սայլակով... Յե՞րբ կհասնեմ, և կհասնե՞մ արդյոք,— աստված գիտե... Ավելի լավ է ձեր մասին խոսենք։

— Մի՞թե, Դմիտրի Նիկոլայիչ,— ընդհատեց նրան Նատալիան,— դուք կյանքից վոչինչ չեք սպասում։

— Ո, վո՛չ, յես շատ բան եմ սպասում, բայց վոչ ինձ համար... Գործունեությունից, գործունեության յերանությունից յես յերբեք չեմ հրաժարվի, բայց վայելքից յես հրաժարվել եմ։ Իմ հույսերը, իմ յերազանքները և իմ անձնական յերջանկությունն ընդհանուր վոչինչ չունեն։ Սերը (այս խոսքի վրա նա ուսերը թոթվեց)... սերն ինձ համար չէ. յես... նրան արժանի չեմ։ Այն կինը, վոր սիրում է, իրավունք ունի պահանջելու ամբողջ մարդուն, իսկ յես արդեն ամբողջովին նվիրվել չեմ կարող։ Դրա հետ միասին՝ դուր գալը պատանիների գործ է. յես շատ եմ ծեր։ Ի՞նչ իմ բանն է ուրիշների գլուխը պտտեցնել։ Աստված տա, վոր իմը կարողանամ ուսերիս վրա տանել։



— Յես հասկանում եմ,— շշնջաց Նատալիան,— ով բարձր նպատակի յե ձգտում, այլևս իր մասին չպետք է մտածի։ Բայց մի՞թե կինը չի կարող այդպիսի մարդուն գնահատել։ Ինձ թվում է, ընդհակառակը, կինն ավելի շուտ յեսամոլից յերես կդարձնի... Բոլոր ջահելները, այդ պատանիները, ձեր կարծիքով բոլորն էլ յեսամոլներ են, բոլորը միայն իրենցով են զբաղված, նույնիսկ յերբ սիրում են։ Հավատացեք՝ կինը վոչ միայն ընդունակ է ինքնազոհողությունը հասկանալու, այլև կարող է ինքն իրեն զոհել։

Նատալիայի այտերը թեթև կերպով կարմրեցին, նրա աչքերը փայլեցին։ Ռուդինի հետ ծանոթ լինելուց առաջ նա յերբեք այսքան յերկար ճառ չէր ասել, այն էլ այսքան կրակով։

— Դուք միայն մեկ անգամ չէ, վոր լսել եք իմ կարծիքը կնոջ կոչման մասին,— ներողամիտ ժպիտով առարկեց Ռուդինը,— դուք գիտեք, վոր, իմ կարծիքով, միայն Ժաննա դ'Արկը կարող եր փրկել Ֆրանսիան... Բայց այդ չէ բանը։ Յես ուզում եյի խոսել ձեր մասին։ Դուք կանգնած եք կյանքի շեմքում։ Դատել ձեր ապագայի մասին և՛ ուրախալի յե, և՛ անօգուտ չէ... Լսեցե՛ք, դուք գիտեք, վոր յես ձեր բարեկամն եմ։ Յես ձեզնում համարյա հարազատի մասնակցություն եմ ընդունում... Այդ պատճառով էլ, հույս ունեմ, դուք իմ հարցն անհամեստ չեք գտնի.— ասացե՛ք— ձեր սիրտը մինչև այժմ բոլորովին հանգի՞ստ է։

Նատալիան ամբողջովին կարմրատակեց և վոչինչ չասաց։ Ռուդինը կանգ առավ, նա ևս կանգ առավ։

— Դուք չե՞ք բարկանում ինձ վրա,— հարցրեց նա։

— Վո՛չ,— շշնջաց Նատալիան,— բայց յես բնավ չեյի սպասում...

— Ասենք՝ դուք կարող եք չպատասխանել ինձ։ Ձեր գաղտնիքն ինձ հայտնի չէ։

Նատալիան համարյա վախեցած նայեց նրան։

— Այո․․ այո… ես գիտեմ, թե ով է ձեզ դուր գալիս։ Եվ ես պետք է ձեզ ասեմ, որ ավելի լավ ընտրություն անել չէիք կարող։ Նա հրաշալի մարդ է․ նա կարող է ձեզ գնահատել․ կյանքը նրան չի տրորել․ նա հասարակ է և հոգով պարզ… նա ձեր երջանկությունը կկազմի։

— Ո՞ւմ մասին եք խոսում, Դմիտրի Նիկոլայիչ։

— Իբր թե չեք հասկանում, թե ում մասին եմ խոսում։ Հասկանալի է—Վոլինցևի մասին, Ե՞, միթե ճիշտ չէ։

Նատալիան մի փոքր շուռ եկավ Ռուդինից։ Նա բոլորովին իրեն կորցրեց։

— Միթե նա չի՞ սիրում ձեզ։ Ներեցե՛ք, նա ձեզանից աչք չի հեռացնում, հետևում է ձեր յուրաքանչյուր շարժմանը, այո և, վերջապես, մի՞թե կարելի է սերը թաքցնել։ Եվ մի՞թե դուք էլ բարյացակամ չեք նրա նկատմամբ։ Ես որքան կարողացել եմ նկատել, ձեր մայրիկին էլ նա նույնպես դուր է գալիս… Ձեր ընտրությունը…

— Դմիտրի Նիկոլայիչ,—ընդհատեց նրան Նատալիան՝ շփոթմունքով ձեռքը մոտիկ թփին մեկնելով,—ինձ համար, ճիշտն ասած, շատ անհարմար է խոսել այդ մասին, բայց հավատացնում եմ ձեզ… դուք սխալվում եք…

— Ես սխալվո՞ւմ եմ,—կրկնեց Ռուդինը։—Չեմ կարծում։ Ես ձեզ հետ նոր եմ ծանոթացել, բայց ձեզ լավ եմ ճանաչում։ Ի՞նչ է նշանակում այն փոփոխությունը, որ տեսնում եմ ձեր մեջ, տեսնում եմ պարզ։



Մի՞թե դուք նույնն եք, ինչպես տեսա ձեզ վեց շաբաթ առաջ։ Ո՛չ, Նատալիա Ալեքսեյևնա, ձեր սիրտը հանգիստ չէ։

— Գուցե,—պատասխանեց Նատալիան հազիվ լսելի կերպով,—բայց դուք այնուամենայնիվ սխալվում եք։

— Այդ ի՞նչպես,—հարցրեց Ռուդինը։

— Թողե՛ք ինձ, մի՛ հարցնեք ինձ—առարկեց Նատալիան և արագ քայլերով ուղևորվեց դեպի տուն։

Նա ինքը սարսափ զգաց այն ամենից, ինչ որ հանկարծ զգաց իր մեջ։

Ռուդինը հետևից հասավ և կանգնեցրեց նրան։

— Նատալիա Ալեքսեյևնա,—ասաց նա,—այս խոսակցությունն այսպես վերջանալ չի կարող․ նա ինձ համար էլ շատ կարևոր է։ Ի՞նչպես հասկանալ ձեզ։

— Թողե՛ք ինձ,—կրկնեց Նատալիան։

— Նատալիա Ալեքսեյևնա, ի սեր աստծու։

Ռուդինի դեմքին շփոթմունք երևաց։ Նա գունատվեց։

— Դուք ամեն բան հասկանում եք, ինձ էլ պետք է հասկանաք,—ասաց Նատալիան, ձեռքն ազատեց նրանից ու առանց հետ նայելու գնաց։

— Մեկ բառ միայն,—նրա հետևից կանչեց Ռուդինը։

Նա կանգնեց, բայց շուռ չեկավ։

— Դուք ինձ հարցնում էիք, թե ինչ էի ուզում ասել երեկվա համեմատությամբ։ Դեհ, իմացե՛ք, ես ձեզ չեմ ուզում խաբել։ Ես ասում էի իմ մասին, իմ անցյալի մասին, և ձեր մասին։

— Ի՞նչպես․ իմ մասի՞ն։

— Այո, ձեր մասին․ կրկնում եմ,—չեմ ուզում ձեզ

խաբել... Դուք այժմ գիտեք, թե ինչ զգացմունքի, ինչ նոր զգացմունքի մասին եյի խոսում այն ժամանակ... Մինչև այսօր յես յերբեք սիրտ չեյի անի...

Նատալիան հանկարծ յերեսը ձեռներով ծածկեց և վազեց դեպի տուն։

Նա այնպես էր ցնցվել Ռուդինի հետ ունեցած խոսակցության լուծումով, վոր նույնիսկ Վոլինցևին չնկատեց, վորի մոտով վազելով անցավ։ Վերջինս մեջքը ծառին հենած՝ անշարժ կանգնած էր։ Մեկ քառորդ ժամ առաջ նա յեկել էր Դարյա Միխայլովնայի մոտ, գտել էր նրան հյուրասենյակում, յերկու խոսք ասել և աննկատելի կերպով հեռացել ու գնացել էր Նատալիային գտնելու։ Առաջնորդվելով սիրահարված մարդկանց հատուկ հոտառությամբ, նա ուղիղ այգի գնաց և նրան ու Ռուդինին հենց այն վայրկյանին տեսավ, յերբ Նատալիան խլեց նրանից իր ձեռքը։ Վոլինցևի աչքերը մթնեցին, Նատալիային հայացքով ճանապարհելով նա ծառից հեռացավ և յերկու քայլ արեց, ինքն էլ չիմանալով, թե ուր և ինչու։ Ռուդինը տեսավ նրան, յերբ հավասարվեց նրան։ Յերկուսն էլ իրար աչքերի նայեցին, բարևեցին և լուռ հեռացան։

«Դա այդպես չի վերջանա»,—մտածում եյին յերկուսն էլ։

Վոլինցևը գնաց այգու բոլորովին ծայրը։ Նա զգում էր դառնություն և անախորժություն՝ սրտին կապար էր ընկած, և ժամանակ առ ժամանակ արյունը բարձրանում էր գլխին։ Նորից սկսեց անձրև կաթկթել։ Ռուդինը վերադարձավ իր սենյակը։ Նա էլ հանգիստ չէր։ Մտքերը նրանում հողմի պես



պտույտ եյին անում։ Ջահել, մաքուր հոգու դյուրահավատ և անսպասելի հպումը ձեմ չէր կարող հուզել։

Սեղանի շուրջը կարծես ամեն ինչ կարգին չէր։ Նատալիան ամբողջովին գունատ, իրեն հազիվ էր պահում աթոռի վրա և աչքերը չէր բարձրացնում։ Վոլինցևը սովորականի պես նստած էր նրա մոտ և ժամանակ առ ժամանակ հարկադրված խոսում էր նրա հետ։ Այնպես պատահեց, վոր Պիգասովն այդ օրը ճաշում էր Դարյա Միխայլովնայի մոտ։ Սեղանի շուրջը նա ամենից շատ էր խոսում։ Ի միջի այլոց նա սկսեց ապացուցել, վոր մարդկանց էլ շների պես կարելի յե բաժանել պոչատների և յերկայնապոչերի։ Մարդիկ պոչատ են լինում,—ասում էր նա,—ի ծնե, և սեփական մեղքի պատճառով։ Պոչատների բանը վատ է լինում,—նրանց վոչինչ չի հաջողվում, նրանք ինքնավստահություն չեն ունենում։ Իսկ այն մարդը, վոր յերկար, բրդոտ պոչ ունի,—բախտավոր է։ Նա կարող է պոչատից և՛ վատ լինել, և՛ թույլ, բայց ինքնավստահ է. պոչը կփռի, բոլորը կհիանան։ Յեվ այ թե ինչն է զարմանքի արժանի,—չէ՞ վոր պոչը մարմնի բոլորովին ավելորդ մասն է, համաձայնեցեք։ Ինչի՞ կարող է պետք գալ պոչը։ Իսկ բոլորն էլ ըստ պոչի յեն դատում ձեր արժանավորությունների մասին։

— Յես,— ավելացրեց նա հառաչելով,—պատկանում եմ պոչատների թվին, և վոր ամենից ցավալին է, յես եմ կտրել իմ պոչը։

— Այսինքն դուք ուզում եք ասել,—անփույթ կերպով նկատեց Ռուդինը,—վոր ի դեպ՝ ձեզնից շատ առաջ ասել է լա-Ռոշֆուկոն, ինքդ վստահ յեղիր քեզ վրա, ուրիշները քեզ կհավատան։ Այստեղ պոչ խառնելն էլ ինչի համար էր—չեմ հասկանում։

— Թույլ տվեք յուրաքանչյուրին,— կտրուկ կերպով ասաց Վոլինցևը և նրա աչքերը վառվեցին,— թույլ տվեք յուրաքանչյուրին արտահայտվել այնպես, ինչպես նա յե մտածում: Բռնակալության մասին են խոսում... Իմ կարծիքով՝ այսպես կոչված խելոք մարդկանց բռնակալությունից վատ բան չկա: Սատանան տանի դրանց:

Վոլինցևի արտառոց վարմունքը բոլորին զարմացրեց: Բոլորը լռեցին: Ռուդինը նայեց նրան, բայց նրա հայացքին չդիմացավ, շուռ յեկավ, ժպտաց ու բերանը չբացեց:

«Էհե՛, ուրեմն դու ես պոչատ ես»— մտածեց Պիգասովը: Յերկուղից Նատալիայի թուքը ցամաքեց: Դարյա Միխայլովնան յերկար ժամանակ տարակուսանքով նայում եր Վոլինցևին և վերջապես առաջինը խոսեց— սկսեց պատմել իր բարեկամ մինիստր N N-ի արտասովոր շան մասին:

Վոլինցևը ճաշից հետո շուտով գնաց: Հրաժեշտ տալով Նատալիային, նա չհամբերեց և ասաց.

— Դուք ինչո՞ւ յեք այդպես շփոթված. կարծես հանցավոր լինեք: Դուք վոչ-վոքի առաջ հանցավոր լինել չեք կարող...

Նատալիան վոչինչ չհասկացավ, այլ միայն նրա հետևից նայեց: Թեյից առաջ Ռուդինը մոտեցավ նրան և կռանալով սեղանի վրա՝ իբր թե լրագրեր ե ջոկջըկում, շշնջաց.

— Այս բոլորը կարծես յերազ լինի, ճիշտ չե՞: Յես անպայման պետք ե առանձին տեսնեմ ձեզ... թեկուզ մեկ րոպե: Նա դարձավ դեպի m-elle Boncourt-ը.— Ահա,— ասաց նրան,— այն ֆելյետոնը, վոր դուք



փնտրում եյիք,— և նորից կռանալով դեպի Նատալիան՝ շշուկով ավելացրեց. ժամի տասին մոտ աշխատեցե՛ք լինել տեռրասի մոտի յասամանե տաղավարում, յես ձեզ կսպասեմ...

Յերեկոյի հերոսը Պիգասովն եր: Ռուդինը մարտադաշտը նրան եր զիջել: Նա շատ եր զվարճացնում Դարյա Միխայլովնային. սկզբում նա պատմում եր իր մի հարևանի մասին, վոր յերեսուն տարի շարունակ իր կնոջ ձեռքին փալաս լինելով, այնքան եր կնանացել, վոր մեկ անգամ Պիգասովի ներկայությամբ, մի ծանծաղ ջրափոսիկ անցնելիս, ձեռքը հետևը տարավ և դեպի կողքը քաշեց սերթուկի փեշերը, ինչպես կանայք են վարվում իրենց շրջազգեստի հետ: Հետո դարձավ դեպի մի այլ կալվածատեր, վորն սկզբում մասոն եր յեղել, հետո մելանխոլիկ եր դարձել, հետո ել ուզում եր բանկիր դառնալ:

— Այդ ինչպե՞ս եյիք մասոն դարձել՝ Ֆիլիպ Ստեպանիչ,— հարցրեց նրան Պիգասովը:

— Հայտնի յե, ինչպես. յես հինգերորդ մատիս վրա յերկար յեղունգ եյի պահում:

Բայց Դարյա Միխայլովնան ամենից շատ ծիծաղեց, յերբ Պիգասովն սկսեց դատել սիրո մասին և հավատացնել, թե իր համար ել եյին հառաչում, թե մի կրակոտ գերմանուհի իրեն նույնիսկ «ախորժալի Աֆրիկանչիկ ու խռպոտիկ» եր անվանում: Դարյա Միխայլովնան ծիծաղում եր, իսկ Պիգասովը չեր ստում: Նա, իրոք, կարող եր պարծենալ իր հաղթանակներով: Նա պնդում եր, թե, վոր կնոջը կուզես, վրադ սիրահարեցնելուց հեշտ բան չկա: Հարկավոր ե միայն տասն որ շարունակ կրկնել նրան, թե շրթունքներում դրախտ կա,

ձիկ աչքերում յերանություն, և թե հնացած կանայք նրա առաջ հասարակ փալասներ են. և տասնմեկերորդը նա ինքը ձեզ կասի, թե իր շրթունքներում դրախտ կա, աչքերում յերանություն, և կսիրի ձեզ: Աշխարհում ամեն ինչ լինում է: Ո՞վ գիտե, գուցե և Պիգասովն իրավացի յեր:

---

Տասի կիսին Ռուդինն արդեն տաղավարումն եր:

Հեռավոր ու դժգույն յերկնքում աստղերը նոր եյին յերևում: Արևմուտքը դեռ կարմրին եր տալիս. այնտեղ յերկնակամարն ել ավելի պարզ ու մաքուր եր թվում: Լուսնի կիսաշրջանը վոսկու պես փայլում եր լացող կեչու սև ցանցի արանքից: Մյուս ծառերը կամ կանգնած եյին վորպես խոժոռ հսկաներ՝ աչքանման հազարավոր լուսածերպերով, կամ միաձուլվում, միապաղաղ մռայլ զանգված եյին դառնում: Վոչ մի տերև չեր շարժվում. յասամանների ու ակացիաների վերին ճյուղերը կարծես ինչ վոր բան եյին լսում և ձգվում եյին տաք օդում: Տունը մոտերքում մթնում եր: Կարմրագույն լույսի բծերով նկարվում եյին նրա վրա լուսավորված յերկար լուսամուտները: Հեզիկ ու խաղաղ եր յերեկոն. բայց այդ լռության մեջ զսպված, քնքուն հառաչանք եր զգացվում:

Ռուդինը կանգնած եր ձեռները կրծքին խաչած և լսում եր լարված ուշադրությամբ: Սիրտը զարկում եր ուժգին, և նա ակամա պահում եր շնչառությունը: Վերջապես նա թեթև ու շտապ քայլերի ձայն լսեց և տաղավար մտավ Նատալիան:



Ռուդինը նրա կողմը նետվեց, բռնեց նրա ձեռքերը: Նրանք սառուցի պես սառն եյին:

— Նատալիա Ալեքսեյեվնա.—ասաց նա դողդոջուն շշուկով,—յես ուզում եյի ձեզ տեսնել... Յես չկարողացա վաղվան սպասել: Յես պետք ե ձեզ ասեմ՝ մի բան, վոր չեյի կասկածում, մի բան, վոր չեյի գիտակցում նույնիսկ այսոր առավոտ,—յես ձեզ սիրում եմ:

Նատալիայի ձեռքերը թույլ կերպով ցնցվեցին նրա ձեռքերի մեջ:

— Յես սիրում եմ ձեզ,—կրկնեց նա,—և ինչպես կարողացա այսքան յերկար խաբվել, ինչպե՞ս շուտ չեմ գլխի ընկել, վոր սիրում եմ ձեզ... Իսկ դուք, Նատալիա Ալեքսեյեվնա, ասացեք, դուք...

Նատալիան հազիվ եր շունչ քաշում:

— Դուք տեսնում եք, յես այստեղ յեկա,—ասաց վերջապես նա:

— Վո՛չ, ասացեք, դուք սիրում եք ինձ:

— Ինձ թվում ե... այո...—շշնջաց նա:

Ռուդինն ավելի ամուր սեղմեց նրա ձեռքերը և ուզում եր նրան դեպի ինքը քաշել...

Նատալիան արագ կերպով դիտեց շուրջը:

—Թողեք ինձ. յես սարսափում եմ, ինձ թվում ե, թե մեկը մեզ լսում ե... ի սեր աստծու, զգույշ յեղեք: Վոլինցևը գլխի յե ընկնում:

—Աստված նրա հետ. դուք տեսնում եք, յես այսոր նրան նույնիսկ չպատասխանեցի... Ա՜խ, Նատալիա Ալեքսեյեվնա, յես վորքա՜ն յերջանիկ եմ... Այժմ արդեն վոչինչ մեզ չի անջատի:

Նատալիան նայեց նրա աչքերին:

—Թողեք ինձ,—շշնջաց նա, ժամանակ ե, վոր յես...

— Մի, ակնթարթ...— սկսեց Ռուդինը...
— Վո՛չ. թողեք, թողեք ինձ...
— Դուք կարծես ինձնից վախենում եք։
— Վո՛չ. բայց ժամանակ է, վոր յես...
— Դե գոնե մեկ անգամ ել կրկնեցեք...
— Դուք ասում եք՝ դուք բախտավո՞ր եք,— հարցրեց Նատալիան։
— Յե՛ս։ Աշխարհում ինձանից ավելի յերջանիկ մարդ չկա։ Մի՞թե դուք կասկածում եք։
Նատալիան գլուխը բարձրացրեց։ Շատ եր գեղեցիկ նրա զուսպ դեմքը. ազնիվ, ջահել և հուզված՝ տաղավարի խորհրդավոր ստվերում, գիշերային յերկնքի սփռած աղոտ լույսի տակ։
— Դե՛հ, իմացեք,— ասաց նա,— յես ձերն եմ լինելու։
Ո՛, աստված... գոչեց Ռուդինը։
Բայց Նատալիան խուսափեց ու հեռացավ։ Ռուդինը մի փոքր կանգնեց, հետո տաղավարից դանդաղորեն դուրս յեկավ։ Լուսինը պարզ լուսավորում եր նրա յերեսը։ Նրա շրթունքներին ժպիտ եր խաղում։
— Յես յերջանիկ եմ,— ասաց նա կիսաձայն,— այո, յես յերջանիկ եմ,— կրկնեց նա՝ կարծես ուզելով ինքն իրեն համոզել։
Նա ուղղեց իր իրանը, թափահարեց գանգուրները և շտապ գնաց այգի՝ ձեռքերն ուրախ թափահարելով։
Այդ միջոցին յասամանի տաղավարում թփերը կամաց հետ քաշվեցին և յերևաց Պանդալևսկին։ Նա զգույշ կերպով շուրջը նայեց, գլուխը թափահարեց, շրթունքները սեղմեց և զգալի կերպով արտասանեց. «Ա՛յ թե ինչ. այս բանը պետք է տեղեկացնել Դարյա Միխայլովնային» և անհայտացավ։



# VIII

Տուն վերադառնալով՝ Վոլինցևն այնքան հուսալքված ու մռայլ եր, այնքան տհաճությամբ եր պատասխանում իր քրոջը և այնքան շուտ փակվեց իր առանձնասենյակում, վոր քույրը վճռեց Լեժնյովի հետևից սուրհանդակ ուղարկել։ Բոլոր դժվար դեպքերում նա միշտ նրան եր դիմում։ Լեժնյովը պատվիրեց ասել նրան, վոր կգա հաջորդ որը։
Վոլինցևն առավոտն ել ուրախ չեր։ Նա ուզում եր թեյից հետո աշխատանքի գնալ, բայց մնաց, պառկեց բազմոցի վրա և սկսեց գիրք կարդալ— մի բան, վոր նրա հետ հաճախ չեր պատահում։ Վոլինցևը դեպի գրականությունը հակում չեր զգում, իսկ վոտանավորներից ուղղակի վախենում եր։ «Սա հասկանալի չե»,— ինչպես վոտանավոր, շատ անգամ ասում եր նա և, վորպես իր խոսքերի հաստատություն, բերում եր Այբուլատ բանաստեղծի հետևյալ տողերը։

Յեվ մինչ վախճանը տխուր որերի
Վոչ փորձը հպարտ, վոչ ել միտքը
Իրենց ձեռքերով անհետ չեն ջնջի
Կյանքի արյունոտ հիշատակները։

Ալեքսանդրա Պավլովնան անհանգիստ նայում եր իր յեղբորը, բայց հարցերով նրան չեր անհանգստացնում։ Կառքը մոտեցավ սանդուղքներին. «Ե՛,— մտածեց նա,— փառք աստծու, Լեժնյովն է...» Սպասավորը մտավ և զեկուցեց Ռուդինի գալստյան մասին։
Վոլինցևը գիրքը գցեց հատակին ու գլուխը բարձրացրեց.



—Ո՞վ է յեկել,—հարցրեց նա:

—Ռուդինը, Դմիտրի Նիկոլայիչը,—կրկնեց սպասավորը:

Վոլինցևը կանգնեց:

—Խնդրեմ,—ասաց նա,—իսկ դու, քույր,—ավելացրեց նա, դառնալով դեպի քույրը,—թող մեզ:

—Ախր ինչո՞ւ համար,—սկսեց նա:

—Յես գիտեմ,—ընդհատեց նա դյուրագրգիռ կերպով,—յես քեզ խնդրում եմ:

Ներս մտավ Ռուդինը: Վոլինցևը սենյակի մեջտեղում կանգնած՝ սառը կերպով բարևեց և ձեռք չմեկնեց նրան:

—Դուք ինձ չեյիք սպասում, խոստովանեցե՛ք,—սկսեց Ռուդինը և գլխարկը դրեց պատուհանը:

Նրա շրթունքները թեթև կերպով դողում եյին: Նա անհարմարություն եր զգում, սակայն աշխատում եր թաքցնել իր շփոթմունքը:

—Յես ձեզ չեյի սպասում, ճիշտ է,—ասաց Վոլինցևը,—յերեկվա օրից հետո յես ավելի շուտ կսպասեյի վորևե մեկին, վոր ձեզնից հանձնարարություն բերեր:

—Յես հասկանում եմ՝ ինչ եք ուզում ասել,—ասաց Ռուդինը՝ նստելով:—Շատ ուրախ եմ ձեր անկեղծության համար. այդպես շատ ավելի լավ է: Յես ինքս յեկել եմ ձեզ մոտ՝ վորպես ազնիվ մարդու մոտ:

—Չի՞ կարելի արդյոք առանց հաճոյախոսության,—նկատեց Վոլինցևը:

—Յես ցանկանում եմ բացատրել ձեզ, թե ինչու յեմ յեկել:

—Մենք ծանոթներ ենք, ինչու՞ չպիտի գաք. և

բացի դրանից՝ դուք հո առաջին անգամ չե՞ք ինձ ձեր այցելությանն արժանացնում։

— Յես յեկա ձեզ մոտ որպես ազնիվ մարդ՝ ազնիվ մարդու մոտ,— կրկնեց Ռուդինը,— և ուզում եմ ձեր անփական դատաստանին դիմել... Յես կատարելապես վստահում եմ ձեզ...

Ինչումն է բանը,— խոսեց Վոլինցևը, որը դեռ կանգնած էր իր առաջվա դիրքով և մռայլ կերպով նայում էր Ռուդինին՝ յերբեմն բեխերի ծայրերը ձգելով։

— Թույլ տվեք... յես, ի հարկե, յեկել եմ, որ բացատրվեմ. բայց և այնպես այդ չի կարելի միանգամից։

— Ինչու՞ չի կարելի։

— Այստեղ յերրորդ անձնավորություն կա խառն։

— Ի՞նչ յերրորդ անձնավորություն։

— Սերգեյ Պավլիչ, դուք ինձ հասկանում եք։

— Դմիտրի Նիկոլայիչ, յես ձեզ բնավ չեմ հասկանում։

— Դուք ցանկանում եք...

— Յես ցանկանում եմ, որ դուք առանց ակնարկների խոսեք— վրա բերեց Վոլինցևը։

Նա սկսում էր բարկանալ՝ առանց կատակ անելու։

Ռուդինը մռայլվեց։

— Համեցեք... մենք միայնակ ենք... Պետք է ձեզ ասեմ,— բայց յերևի դուք արդեն գուշակում եք (Վոլինցևն անհամբերությամբ ուսերը թոթվեց)— պետք է ձեզ ասեմ, որ յես սիրում եմ Նատալյա Ալեքսեյևնային և իրավունք ունեմ յենթադրելու, որ նա էլ ինձ է սիրում։

Վոլինցևը գունատվեց, բայց ոչինչ չպատասխանեց, գնաց դեպի պատուհանն ու շուռ յեկավ։



— Դուք հասկանում եք, Սերգեյ Պավլիչ,— շարունակեց Ռուդինը,— որ յեթե յես համոզված չլինեյի...

— Ներեցե՛ք,— շտապ կերպով ընդհատեց Վոլինցևը,— յես բնավ չեմ կասկածում... Ի՞նչ կա որ, բարով վայելեք։ Միայն զարմանում եմ, թե վո՞ր սատանան ձեզ թելադրեց այդպիսի առաջարկով շնորհ բերել ինձ մոտ... Յես ինչացու՞ յեմ այդտեղ։ Իմ ի՞նչ գործն է, թե ո՛ւմ եք սիրում դուք, և ո՛վ է ձեզ սիրում։ Յես ուղղակի չեմ հասկանում։

Վոլինցևը շարունակում էր պատուհանին նայել. նրա ձայնը խուլ էր հնչում։

Ռուդինը վեր կացավ։

— Յես ձեզ կասեմ, Սերգեյ Պավլիչ, թե ինչու վճռեցի ձեզ մոտ գալ, թե ինչու յես իրավունք չհամարեցի ինձ՝ թաքցնել ձեզնից մեր... մեր փոխադարձ տրամադրությունը։ Յես չափազանց խոր հարգանք եմ տածում դեպի ձեզ— ահա թե ինչու յեկա։ Յես չեյի ցանկանում... մենք յերկուսս չեյինք ցանկանում ձեր առաջ կատակերգություն խաղալ... Ձեր զգացմունքը Նատալյա Ալեքսեյևնայի նկատմամբ ինձ հայտնի յեր։ Հավատացե՛ք, յես իմ արժեքը գիտեմ. յես գիտեմ թե նրա սրտում ձեզ փոխարինելու համար յես որքան քիչ եմ արժանի։ Բայց յեթե վիճակված է, որ այդ կատարվի, մի՞թե խորամանկություն անելը, խաբելը, ձևանալը ավելի լավ է։ Մի՞թե ավելի լավ է թյուրիմացությունների յենթարկվելը, կամ նույնիսկ այնպիսի տեսարանի հնարավորությունը, որպիսին յերեկ ճաշի ժամանակ տեղի ունեցավ։ Սերգեյ Պավլիչ ինքներդ ասացե՛ք։

Վոլինցևը ձեռները խաչեց կրծքին, կարծես աշխատելով ինքն իրեն զսպել։

—Սերգեյ Պավլովիչ,—շարունակեց Ռուդինը,—յես վշտացրի ձեզ, յես այդ զգում եմ... սակայն հասկացեք մեզ... հասկացեք, որ ուրիշ միջոց չունեյինք մեր հարգանքը ձեզ ցույց տալու, ապացուցելու, որ մենք գիտենք գնահատել ձեր անկեղծ առաքինությունը։ Պարզություն, կատարյալ պարզություն՝ ում հետ ուզում է լինի, անտեղի կլիներ, բայց ձեզ հետ՝ պարտադիր է դառնում։ Մեզ համար հաճելի յե մտածել, որ մեր գաղտնիքը ձեր ձեռքում է...

Վոլինցևը հարկադրաբար քրքջաց։

—Շնորհակալություն վստահության համար,—բացականչեց նա,—թեպետ, խնդրում եմ նկատի ունենալ, յես չեյի ուզի ո՛չ ձեր գաղտնիքն իմանալ, ո՛չ իմը ձեզ հայտնել։ Իսկ դուք այդ գաղտնիքը տնօրինում եք ինչպես ձեր ունեցվածքը։ Բայց, ներեցե՛ք. դուք խոսում եք ընդհանուրի անունից։ Ուրեմն յես կարո՞ղ եմ յենթադրել, որ Նատալիա Ալեքսեյևնային հայտնի յե ձեր այցելությունը և այդ այցելության նպատակը։

Ռուդինը մի փոքր շփոթվեց։

—Ոչ. Նատալիա Ալեքսեյևնային յես չհայտնեցի իմ նպատակը, բայց գիտեմ, որ նա համաձայն է իմ մտքերին։

—Այդ բոլորը շատ գեղեցիկ,—մի փոքր լռությունից հետո ասաց Վոլինցևը և մատներով սկսեց ապակու վրա թմբկահարել,—թեպետ, ճիշտն ասած, շատ ավելի լավ կլիներ, յեթե դուք ավելի պակաս հարգեցիք ինձ։ Խոստովանում եմ՝ ձեր հարգանքն ինձ բնավ պետք չէ։ Բայց այժմ ի՞նչ եք ուզում ինձանից։



—Յես ոչինչ չեմ ուզում կամ, ո՛չ. յես մեկ բան եմ ուզում. յես ուզում եմ, որ դուք ինձ նենգ ու խորամանկ մարդ չհամարեք, որ դուք ինձ հասկանաք... Յես հույս ունեմ, որ այժմ դուք չեք կարող կասկածել իմ անկեղծության մեջ... Յես ուզում եմ, Սերգեյ Պավլիչ, որ մենք որպես բարեկամներ բաժանվեյինք. որ դուք, առաջվա պես ձեռք մեկնեյիք ինձ։

Յեվ Ռուդինը մոտեցավ Վոլինցևին։

—Ներեցե՛ք ինձ, ողորմած տեր,—խոսեց Վոլինցևը շուռ գալով և մեկ քայլ հետ գնալով,—յես պատրաստ եմ կատարելապես իրավացի համարել ձեր մտադրությունները, այդ բոլորը շատ գեղեցիկ, յենթադրենք, թե նույնիսկ վսեմ, սակայն մենք հասարակ մարդիկ ենք, աննաշխ քաղցրաբլիթ ենք ուտում։ Մենք անկարող ենք հետևել այնպիսի մեծ մտքերի թռիչքին, ինչպիսին ձերն է... ինչ որ ձեզ անկեղծ է թվում, մեզ անհամեստ ու աներես է թվում... ինչ որ ձեզ համար հասարակ ու պարզ է, մեզ համար խառնակ ու մութն է... Դուք պարծենում եք նրանով, ինչ որ մենք թաքցնում ենք։ Մենք ինչպե՞ս կարող ենք ձեզ հասկանալ։ Ներեցե՛ք ինձ,—յես ոչ կարող եմ ձեզ բարեկամ հաշվել, ոչ էլ ձեռք տալ։ Սա գուցե և մանր բան է, բայց ախր յես էլ մանր եմ։

Ռուդինը գլխարկը պատուհանից վերցրեց։

—Սերգեյ Պավլիչ,—ասաց նա տխրամած,—մնաք բարև. յես խաբվեցի իմ սպասելիքներում։ Իմ այցը, ճիշտ որ, բավական տարօրինակ է, բայց հույս ունեյի, որ դուք... (Վոլինցևն անհամբեր շարժում արավ...)։

Ներեցե՛ք, յես դրա մասին այլևս չեմ խոսի։ Կշռելով այդ բոլորը, յես տեսնում եմ, վոր կարծես դուք էլ իրավացի յեք և ուրիշ կերպ վարվել չեյիք կարող։ Մնաք բարև և թույլ տվեք, գոնե մեկ անգամ, վերջին անգամ, հավաստիացնել ձեզ իմ մտադրությունների մաքրության մեջ... Ձեր համեստության մեջ յես համոզված եմ...

—Այդ արդեն չափից դուրս է,—գոչեց Վոլինցևը և բարկությունից սկսեց դողդողալ։—Յես բնավ ձեր վստահությունը չեմ խնդրել, ուստի և հույս դնել իմ համեստության վրա դուք վոչ մի իրավունք չունեք։

Ռուդինն ուզում եր մի բան ասել, սակայն միայն ձեռները թափահարեց, գլուխ տվեց ու դուրս գնաց. իսկ Վոլինցևն ընկավ բազմոցի վրա և յերեսը դեպի պատը դարձրեց։

—Կարելի՞ է քեզ մոտ գալ,—դռան մոտից լսվեց Ալեքսանդրա Պավլովնայի ձայնը։

Վոլինցևն իսկույն չպատասխանեց և ծածուկ կերպով ձեռքը յերեսին քսեց։

—Վո՛չ, Սաշա,—մի քիչ փոխված ձայնով խոսեց նա,—մի քիչ էլ սպասիր։

Կես ժամից հետո Ալեքսանդրա Պավլովնան նորից մոտեցավ դռանը։

—Միխայլո Միխայլիչն է յեկել,—ասաց քույրը,—ուզո՞ւմ ես տեսնել նրան։

—Ուզում եմ,—պատասխանեց Վոլինցևը,—նրան այստեղ ուղարկիր։

Լեժնյովը ներս մտավ։

—Ի՞նչ է, հիվա՞նդ ես,—հարցրեց նա՝ նստելով բազմոցի մոտի բազկաթոռի վրա։



Վոլինցևն արմունկին հենվելով բարձրացավ, յերկար-յերկար նայեց իր բարեկամի յերեսին և իսկույն հաղորդեց իր ամբողջ խոսակցությունն Ռուդինի հետ բառ առ բառ։ Մինչ այդ նա յերբեք չեր ակնարկել Լեժնյովին իր զգացմունքների մասին՝ դեպի Նատալիան, թեպետ գուշակում եր, վոր նրանք նրա համար ծածուկ չեյին։

—Ե՜, յեղբայր, դու զարմացրիր ինձ,—ասաց Լեժնյովը, հենց վոր Վոլինցևն իր պատմությունը վերջացրեց,—նրանից շատ տարորինակություններ էյի սպասում յես, բայց այդ մեկն արդեն... Ասենք, այստեղ էլ կճանաչեմ նրան։

—Ներեցեք, այդ ուղղակի լկտիություն է,—ասում եր հուզված Վոլինցևը.—քիչ եր մնում յես պատուհանից դուրս շպրտեյի նրան։ Նա իմ առաջ պարծենա՞լ եր ուզում, ինչ է, թե՞ վախենում եր։ Յեվ ինչի համար. ինչպես կարելի յե վճռել գնալ մի մարդու մոտ...

Վոլինցևը ձեռները դրեց գլխի հետևն ու լռեց։

—Վո՛չ, յեղբայր, այդ չէ,—հանդիստ կերպով առարկեց Լեժնյովը,—ա՛յ, դու ինձ չես հավատա, մինչդեռ նա այդ բանն արել է լավ դրդապատճառից։ Հիրավի... այդ և՛ ազնիվ է, և սրտաբաց, դե, առիթ յեղած դեպքում էլ պերճախոսությունը գործի կդնի։ Իսկ մեզ, ա՛յ թե ինչ է հարկավոր, ա՛յ թե առանց ինչի չենք կարող ապրել։ Ո՛հ, նրա լեզուն—նրա թշնամին է... Բայց՝ փոխարենը և նրա ծառան է։

—Դու չես կարող յերևակայել, թե նա ինչ հանդիսավորությամբ մտավ ու սկսեց խոսել...

—Ի հարկե, առանց դրան անկարելի յէ։ Նա սեր-

թուկը կոճկելիս էլ կարծես սրբազան պարտք է կատարում։ Ես նրան մի անմարդաբնակ կղզում կնստեցնեյի և անկյունից կնայեյի, թե ինչ կաներ այնտեղ։ Մինչդեռ շարունակ պարզության մասին է ճառում։

—Եղբա՛յր, մի ասա ինձ, ի սեր աստծո,—հարցրեց Վոլինցևը,—ինչ բան է այդ, փիլիսոփայությո՞ւն է, ինչ է։

—Ինչպես ասեմ քեզ։ Մի կողմից կարծես փիլիսոփայություն է նման, իսկ մյուս կողմից՝ բոլորովին այդ չէ։ Փիլիսոփայության վրա ամեն մի անհեթեթություն գցել նույնպես չի կարելի։

Վոլինցևը նայեց նրա վրա։

—Չե՞ր ստում արդյոք, ինչ ես կարծում։

—Ո՛չ, զավակս, չէր ստում։ Բայց—գիտե՞ս ինչ. դրա մասին դատելը բավական է։ Արի, եղբայրս, մի-մի ծխախոտ ծխենք ու այստեղ կանչենք Ալեքսանդրա Պավլովնային... Նրա մոտ և խոսելն է հեշտ, և լռելն է հեշտ։ Նա մեզ թեյ կխմեցնի։

—Ճիշտ որ,—վրա բերեց Վոլինցևը։—Սաշա, մտի՛ր—ձայն տվեց նա։

Ալեքսանդրա Պավլովնան ներս մտավ։ Նա բռնեց նրա ձեռքը և ամուր սեղմեց իր շրթունքներին։

---

Ռուդինը վերադարձավ տուն հոգու խռովահույզ և տարօրինակ դրությամբ։ Նա զայրանում էր իր վրա, կշտամբում էր իրեն իր աններելի չմտածվածության և տղայամտության համար։ Մեկն իզուր չէ ասել, թե՝ հենց նոր գործած հիմարությունը գիտակցելուց ավելի ճնշիչ բան չկա։



Զզջումը կրծում էր Ռուդինին։

«Սատանան ինձ դրդեց», շշնջում էր նա ատամների արանքում, «գնալ այդ կալվածատիրոջ մոտ. ա՛յ թե միտք էր, հա՛։ Միայն հանդգնություններ հանդիպելու...»։

Իսկ Դարյա Միխայլովնայի տանը տարօրինակ բան էր կատարվում։ Ինքը տանտիրուհին ամբողջ առավոտը չերևաց և ճաշի էլ դուրս չեկավ։ Պանդալևսկու հավաստիացումով, որ նրա մոտ մտնելու թույլտվություն ունեցող միակ անձնավորությունն էր, նրա գլուխը ցավում էր։ Ռուդինը Նատալիային էլ համարյա չտեսավ։ Նա նստած էր իր սենյակում m-lle Boncourt-ի հետ... Սեղանատանը հանդիպելով Ռուդինին՝ նա այնպես տխուր նայեց նրա վրա, որ նրա սիրտը դողաց։ Նատալիայի դեմքը փոխվել էր, կարծես երեկվանից նրան մի դժբախտություն էր պատահել։ Անորոշ նախազգացումների թախիծն սկսեց տանջել Ռուդինին։ Որպեսզի մտքերը մի կերպ ցրվեր, նա սկսեց Բասիստովով զբաղվել, շատ խոսեց նրա հետ և նրանում մի տաք, կենդանի երիտասարդ գտավ՝ խանդավառ հույսերով և դեռ անարատ հավատով։ Երեկոյան դեմ Դարյա Միխայլովնան երկու ժամով հայտնվեց հյուրասենյակում։ Նա Ռուդինի հետ սիրալիր էր, բայց իրեն մի տեսակ հեռու էր պահում, և մերթ ծիծաղում էր, մերթ մռայլվում, խոսում էր քթում և ավելի շատ ակնարկներով... Պալատական տիկնոջ հոտ էր փչում նրանից։ Նա վերջերս կարծես մի քիչ սառել էր դեպի Ռուդինը։ «Այս ինչ հանելուկ է», մտածում էր վերջինս՝ կողքից նայելով նրա հետ թեքված գլխին։

Այս հանելուկը լուծելու համար նա շատ չսպասեց։ Գիշերվա ժամը տասներկուսին իր սենյակը վերադառնալիս անցնում էր մութ միջանցքով։ Հանկարծ մեկը նրա ձեռքը մի տոմս կոխեց։ Նա հետ նայեց. իր մոտից հեռանում էր մի աղջիկ — ինչպես նրան թվաց, Նատալիայի աղախինը։ Նա յեկավ իր սենյակը, հեռացրեց սպասավորին, բացեց տոմսը և կարդաց Նատալիայի ձեռքով գրած հետևյալ տողերը.

«Առավոտյան ժամը յոթին մոտ, վոչ ուշ, յեկեք կաղնուտի հետևի Ավդյուխինի լճակի մոտ։ Վորևե այլ ժամանակ անկարելի յե։ Այդ կլինի մեր վերջին տեսակցությունը, և ամեն ինչ վերջացած կլինի, յեթե... Յեկեք։ Պետք է վճռել...

Հ. Գ.։ Յեթե յես չգամ, ուրեմն մենք այլևս չենք տեսնվի, այդ դեպքում յես ձեզ իմաց կտամ...»

Ռուդինը մտքի մեջ ընկավ. տոմսը ձեռքում պտտեցնում էր, դրեց բարձի տակ, հանվեց, պառկեց, բայց շուտ չքնեց. քնած էր թեթև քնով, և դեռ ժամի հինգը չկար, յերբ արթնացավ։



## IX

Ավդյուխինի լճակը, վորի մոտ Նատալիան Ռուդինին տեսակցություն եր նշանակել, վաղուց եր դադարել լճակ լինելուց։ Յերեսուն տարի առաջ ջուրն այդ լճակը քանդել եր և այդ որից անուշադրության եյին մատնել։ Միայն ձորակի ուղիղ և հարթ հատակից, վոր յերբեմն ծածկված եր պարարտ տիղմով, և թմբի մնացորդներից կարելի յեր գուշակել, վոր այստեղ լճակ է յեղել։ Հենց այստեղ ել կալվածք է յեղել։ Նա շատ վաղուց է անհայտացել։ Յերկու հսկա սոճիներ հիշեցնում եյին նրա մասին։ Քամին միշտ աղմկում ու մռայլ կերպով շնգշնգում եր նրանց բարձր ու վտիտ կանաչի մեջ... Ժողովրդի մեջ խորհրդավոր լուրեր եյին պտտում մի սարսափելի վոճրագործության մասին, վոր իբր թե տեղի յեր ունեցել նրանց արմատի մոտ։ Ասում եյին նաև թե նրանցից վոչ մեկն առանց վորևե մեկին մահ պատճառելու վայր չի ընկնելու, թե առաջ այստեղ մի յերրորդ սոճի յե յեղել, վորը փոթորկի ժամանակ վայր է ընկել և մի աղջիկ է տակովն արել։ Լճակի շուրջն ընկած վողջ տեղը պիղծ եր համարվում։ Դատարկ և մերկ, բայց խուլ ու մռայլ — նույնիսկ արև որը — նա ավելի մռայլ ու խուլ եր թվում զառամած կաղնուտի մոտիկությունից, վորը

վաղուց մարել և չորացել էր։ Հսկա ծառերի նոսրավուն գորշ կմախքները մի տեսակ տրտում ուրվականների պես խոյանում էին թփերի ցածր տանիքների վրա։ Սարսափելի չէր նրանց նայելը. թվում էր, թե չար ծերուկներ են հավաքվել ու մի վատ բան են խորհում։ Նեղ, հազիվ հարթված ճանապարհը ոլորվում էր մի կողմում։ Առանց հատուկ կարիքի ոչ ոք չէր անցնում Ավդյուխինի լճակի մոտով։ Նատալիան դիտավորյալ էր ընտրել այդ առանձնացած վայրը։ Դարյա Միխայլովնայի տանից մինչև այդտեղ կես վերստից ավելի չէր։

Արևը վաղուց էր ծագել, երբ Ռուդինն Ավդյուխինի լճակի մոտ եկավ, բայց ուրախ առավոտ չէր։ Համատարած կաթնագույն ամպերը ծածկել էին ողջ երկինքը. քամին սուլելով ու ոռնալով, արագ կերպով քշում էր նրանց։ Ռուդինն սկսեց հետ ու առաջ անել կպչուն կռատուկով և սևացած եղինճով ծածկված թմբի վրա։ Նա հանգիստ չէր։ Այս տեսակցությունները, այս նոր զգացումները զբաղեցնում, բայց և հուզում էին նրան՝ մանավանդ երեկվա տոմսից հետո։ Նա տեսնում էր, որ գործի վախճանը մոտենում է, և գաղտնի ալեկոծվում էր հոգով, թեպետ ոչ ոք այդպիսի բան չէր մտածի՝ տեսնելով, թե ինչ կենտրոնացած վճռականությամբ էր նա ձեռքերը խաչել կրծքին ու աչքերով շուրջը նայում։ Պիգասովը մեկ անգամ նրա մասին զուր չէր ասել, թե նրան, ինչպես չինական կուռքին, միշտ գերակշռում էր գլուխը։ Սակայն մի գլխով, որքան էլ նա ուժեղ լինի, մարդ չի կարող իմանալ նույնիսկ այն, ինչ իր մեջ է կատարվում... Ռուդինը, խելացի, խորաթափանց Ռուդինը, անկարող



էր հաստատապես ասել, թե արդյոք ինքը սիրում է Նատալիային, տառապում է արդյոք և կտառապի՞, եթե անջատվի նրանից։ Ինչո՞ւ նույնիսկ Լովելաս չձևանալով — այս արդարամտությունը նրան պետք է տալ — խեղճ աղջկանը գլխահան արեց։ Ինչո՞ւ էր գաղտնի հուզմունքով սպասում նրան։ Սրան մեկ պատասխան կա. — ոչ ոք այնպես հեշտ չի հափշտակվում, որքան ոչ կրքոտ մարդիկ։

Նա քայլում էր թմբի վրայով, իսկ Նատալիան նրա մոտ էր շտապում ուղիղ դաշտով, թաց խոտերի վրայով։

— Օրիորդ, օրիորդ, դուք ձեր ոտները կթրջեք,— ասում էր նրա աղախին Մաշան, որ հազիվ էր հասնում նրա հետևից։

Նատալիան նրան չէր լսում և վազում էր առանց հետ նայելու։

— Ա՜խ, երանի մեզ չտեսնեն,— կրկնում էր Մաշան.— այն էլ զարմանալի է, թե մենք տանից ինչպես դուրս եկանք։ Այնպես լինի, որ մամզելը չարթնանա... Լավ որ հեռու չէ... Ա՛յ, նրանք արդեն սպասում են,— ավելացրեց նա՝ հանկարծ տեսնելով թմբի վրա պատկերանման կանգնած Ռուդինի բարեկազմ կերպարանքը.— բայց զուր են նրանք այդպես բաց տեղում կանգնել, լավ կլիներ հովիտ իջնեին։

Նատալիան կանգ առավ։

— Մաշա, սպասիր այստեղ, սոճիների մոտ,— ասաց նա և իջավ դեպի լճակը։

Ռուդինը մոտեցավ նրան ու զարմացած կանգ առավ։ Նա այդպիսի արտահայտություն նրա դեմքին

դեռ յերբեք չէր տեսել։ Հոնքերը կիտած էյին, շըրթունքները սեղմած, աչքերը նայում էյին ուղիղ և խիստ։

—Դմիտրի Նիկոլայիչ,—սկսեց նա—մենք ժամանակ կորցնել չենք կարող։ Յես յեկել եմ հինգ րոպեյով։ Յես պետք է ձեզ ասեմ, վոր մայրս ամեն բան գիտե։ Պ. Պանդալևսկին յերրորդ օրը մեզ տեսել և մեր տեսակցության մասին պատմել է նրան։ Նա միշտ լրտես է յեղել մորս մոտ։ Յերեկ մայրս ինձ կանչեց իր մոտ...

—Աստվա՜ծ իմ,—գոչեց Ռուդինը,—այդ սարսափելի յե... ի՞նչ ասաց ձեր մայրը։

—Նա չբարկացավ վրաս, չնախատեց ինձ, այլ միայն հանդիմանեց ինձ թեթևամտության համար։

—Միա՞յն։

—Այո. և հայտարարեց ինձ, թե ինքն ավելի շուտ կհամաձայնի ինձ մեռած տեսնել, քան՝ ձեր կինը։

—Մի՞թե նա այդ ասաց։

—Այո. և դարձյալ ավելացրեց, թե դուք ինքներդ բնավ չեք ուզում ամուսնանալ ինձ հետ, թե դուք հենց այնպես, տաղտուկից եք հետևիցս ընկել, և թե ինքն այդ բանը ձեզնից չէր սպասում, թե՝ մեղավորն ինքն է, ինչու յե թույլ տվել ինձ այդքան հաճախ տեսնվել ձեզ հետ... թե՝ նա հույս է դնում իմ խելամտության վրա, թե՝ յես իրեն շատ եմ զարմացրել... լավ էլ չեմ հիշում այն բոլորը, ինչ վոր նա ասաց ինձ։

Նատալիան այս բոլորն ասում էր մի տեսակ մեղմ, համարյա անշշուկ ձայնով։



—Իսկ դուք, Նատալիա Ալեքսեյեվնա, դուք ի՞նչ պատասխանեցիք նրան,—հարցրեց Ռուդինը։

—Յես ինչ պատասխանեցի նրան,—կրկնեց Նատալիան,—դո՛ւք այժմ ի՞նչ եք մտադիր անելու։

—Աստված իմ, աստված իմ—վրա բերեց Ռուդինը,—այդ անգթությո՜ւն է։ Այդպես շո՜ւտ... Այդպիսի հանկարծակի հարվա՜ծ... Յեվ ձեր մայրն այդքան զայրացա՞վ։

—Այո... այո. նա ձեր մասին լսել անգամ չի ուզում։

—Այդ սարսափելի յե։ Ուրեմն վոչ մի հույս չկա՞։

—Վոչ մի։

—Ինչո՞ւ համար ենք մենք այդպես դժբախտ... Զզվելի Պանդալևսկի... Դուք ինձ հարցնում եք, Նատալիա Ալեքսեյեվնա, թե յես ինչ եմ մտադիր անելու։ Գլուխս պտույտ է գալիս, յես վոչինչ հասկանալ չեմ կարող... Յես միայն իմ դժբախտությունն եմ զգում... զարմանում եմ, թե դուք ինչպես եք կարողանում սառնասրտություն պահպանել...

—Դուք կարծում եք, ինձ համար հե՞շտ է,—ասաց Նատալիան։

Ռուդինն սկսեց քայլել թմբի վրա։ Նատալիան նրանից աչք չէր հեռացնում։

—Ձեր մայրը ձեզ հարցուփորձ չարա՞վ,—հարցրեց նա վերջապես։

—Նա ինձ հարցրեց, թե արդյոք յես սիրում եմ ձեզ։

—Հետո... և դուք։

Նատալիան լռեց։

—Յես չստեցի։

Ռուդինը բռնեց նրա ձեռքը։

—Միշտ, ամեն բանում ազնի՛վ և մեծահոգի՛։ Ո՛, աղջկա սիրտ—դա մաքուր վոսկի յե։ Բայց մի՞թե ձեր մայրն այդպես վճռական կերպով հայտարարեց իր կամքը մեր ամուսնության անկարելիության մասին։

—Այո՛, վճռական կերպով։ Յես արդեն ասացի, թե նա համոզված է, վոր դուք ինքներդ մտադիր չեք ինձ հետ ամուսնանալու։

—Ուրեմն նա ինձ խաբեբա յե համարում։ Ինչո՞վ եմ արժանացել դրան։

Յեվ Ռուդինն իր գլուխը բռնեց։

—Դմիտրի Նիկոլայևիչ,—շշնջաց Նատալիան,—մենք զուր ժամանակ ենք վատնում։ Հիշեցե՛ք, յես վերջին անգամ եմ տեսնվում ձեզ հետ։ Յես յեկել եմ այստեղ վոչ լաց լինելու, վոչ գանգատվելու. դուք տեսնում եք՝ յես լաց չեմ լինում. յես յեկել եմ խորհուրդ հարցնելու։

—Բայց յես ի՞նչ խորհուրդ կարող եմ ձեզ տալ, Նատալիա Ալեքսեյեվնա։

—Ի՞նչ խորհուրդ։ Դուք տղամարդ եք, յես սովոր եմ ձեզ հավատալ. յես մինչև վերջը կհավատամ ձեզ։ Ասացե՛ք ինձ—ի՞նչ են ձեր մտադրությունները։

—Իմ մտադրությունները՞։ Ձեր մայրը յերևի ինձ կմերժի տանից։

—Գուցե։ Նա դեռ յերեկ հայտարարեց ինձ, վոր ստիպված կլինի ծանոթությունը խզել ձեզանից... Բայց դուք իմ հարցին չեք պատասխանում։

—Ո՞ր հարցին։

—Դուք ի՞նչ եք կարծում—մենք այժմ ի՞նչ պետք է անենք։



Մենք ի՞նչ պետք է անե՞նք,—վրա բերեց Ռուդինը,—հասկանալի յե, պետք է հնազանդվենք։

—Հնազանդվենք,—դանդաղ կերպով կրկնեց Նատալիան, և նրա շրթունքները գունատվեցին։

—Հնազանդվել ճակատագրին,—շարունակեց Ռուդինը,—ի՞նչ արած. յես չափազանց լավ գիտեմ, թե այդ վորքան է դառը, ծանր, անտանելի, բայց՝ դատեցեք ինքներդ, Նատալիա Ալեքսեյեվնա, յես աղքատ եմ... Ճիշտ է, յես կարող եմ աշխատել, բայց յեթե նույնիսկ հարուստ մարդ լինեյի, դուք կարո՞ղ եք տանել բռնի բաժանումը ձեր ընտանիքից, ձեր մոր զայրույթը... Վո՛չ, Նատալիա Ալեքսեյեվնա, դրա մասին հարկ չե նույնիսկ մտածել։ Յերևում է, վոր մեզ վիճակված չի միասին ապրել, և այն յերջանկությունը, վորի մասին յես յերազում եյի, ինձ համար չե։

Նատալիան հանկարծ յերեսը ձեռներով ծածկեց ու լաց յեղավ։ Ռուդինը մոտեցավ նրան։

—Նատալիա Ալեքսեյեվնա, սիրելի՛ Նատալիա,—ասաց նա ջերմագին կերպով,—լաց մի՛ լինեք, ի սեր աստծո, մի՛ տանջեք ինձ, մխիթարվեցե՛ք...

Նատալիան գլուխը բարձրացրեց։

—Դուք ինձ ասում եք, վոր յես մխիթարվեմ,—սկսեց նա, և աչքերը փայլեցին արտասուքի միջից.—յես նրա համար չեմ լալիս, ինչի համար դուք եք կարծում... ինձ համար այդ չե ցավալին։ Ինձ համար ցավալին այն է, վոր յես ձեզնում խաբված եմ... Ինչպե՞ս։ Յես գալիս եմ ձեզ մոտ խորհրդի, և այն էլ ինչ րոպեյի, և ձեր առաջին խորհուրդն է՝ հնազանդվել... Հնազանդվել։ Ահա թե դուք ինչպես եք կիրառում ձեր

դատողությունների ազատության, զոհերի մասին, վա-րոնք…

Նրա ձայնը կտրվեց։

—Բայց Նատալյա Ալեքսեյեվնա,—վրդովված կեր-պով սկսեց Ռուդինը,—հիշեցեք… ես չեմ հրաժարվում իմ խոսքերից… միայն…

—Դուք ինձ հարցնում եյիք,—շարունակեց նա նոր ուժով,—թե ես ինչ պատասխանեցի մորս, երբ նա ինձ հայտարարեց, թե ավելի շուտ ինքը կհամաձայ-նի իմ մահը տեսնել, քան՝ ամուսնությունս ձեզ հետ։ Ես նրան պատասխանեցի, թե ավելի շուտ կմեռնեմ, քան ուրիշի հետ կամուսնանամ… Իսկ դուք ասում եք— հնազանդվե՛լ… Նշանակում է՝ նա իրավացի էր. դուք կարծես անգործությունից, տաղտուկից կատակում եյիք ինձ հետ…

—Երդվում եմ ձեզ, Նատալյա Ալեքսեյեվնա… հավատացնում եմ ձեզ…—պնդում էր Ռուդինը։ Բայց Նատալյան նրան չէր լսում։

—Ինչո՞ւ դուք ինձ չկանգնեցրիք. ինչո՞ւ դուք ինքներդ… Թե՞ գուցե դուք արգելքներ չեյիք սպա-սում։ Ես ամաչում եմ խոսել այդ մասին… Բայց, չէ՞ որ արդեն ամեն ինչ վերջացած է։

—Ձեզ անհրաժեշտ է հանգստանալ, Նատալյա Ալեքսեյեվնա,—սկսեց Ռուդինը,—մենք պետք է եր-կուսով մտածենք, թե ինչ միջոցներ…

—Դուք այնքան հաճախ եյիք խոսում ինքնազո-հողության մասին,—ընդհատեց նա,—բայց գիտե՞ք արդյոք, որ եթե դուք այսօր, հենց հիմա ասեյիք՝ «Ես քեզ սիրում եմ, բայց ամուսնանալ չեմ կարող, ես պատասխանատու չեմ ապագայի համար, ձեռքդ



տուր ինձ և արի իմ հետևից»—գիտե՞ք, որ կգայի ձեր հետևից, գիտե՞ք, որ ես ամեն բան կանեյի։ Բայց; ճիշտ է, խոսքից մինչև գործ դեռ հեռու է, և դուք հիմա վախեցաք ճիշտ այնպես, ինչպես վախե-ցաք երրորդ օրը, ճաշի ժամանակ, Վոլինցևի առաջ։

Ռուդինի երեսը կարմրատակեց։ Նատալյայի անսպասելի խանդավառությունը նրան զարմացրեց. սակայն նրա վերջին խոսքերը վիրավորեցին նրա ինքնասիրությունը։

—Դուք այժմ շատ եք գրգռված, Նատալյա Ալեք-սեյեվնա,—սկսեց նա,—դուք չեք կարող հասկանալ, թե որքան անգթորեն եք վիրավորում ինձ։ Ես հույս ու-նեմ, որ ժամանակին դուք ինձ իրավացի կհամարեք. դուք կհասկանաք, թե ինչ արժեր ինձ համար հրա-ժարվել այն բախտավորությունից, որը, ինչպես դուք ինքներդ եք ասում, ինձ վրա ոչ մի պարտա-կանություն չէր դնում։ Ձեր հանգստությունն աշխար-հում ինձ համար ամեն բանից թանկ է, և ես ամենից ստոր մարդը կլինեյի, եթե ուզենայի օգտվել…

—Գուցե, գուցե,—ընդհատեց Նատալյան,—գուցե դուք իրավացի եք, իսկ ես չեմ հասկանում, թե ինչ եմ ասում։ Բայց ես մինչև այժմ ձեզ հավատում եյի, ձեր յուրաքանչյուր խոսքին հավատում եյի… Այսու-հետև, խնդրում եմ, կշռեցեք ձեր խոսքերը, նրանց քա-մուն մի՛ տաք։ Երբ ես ձեզ ասացի, թե սիրում եմ ձեզ, գիտեյի, թե ինչ է նշանակում այդ խոսքը, ես ամեն բանի պատրաստ եյի… Այժմ ինձ մնում է շնոր-հակալություն հայտնել ձեզ դասի համար և հրաժեշտ տալ։

—Կանգ առեք, ի սեր աստծո, Նատալյա Ալեք-

անկեղծ, աղաչում եմ ձեզ։ Յես արժանի չեմ ձեր ար-
համարհանքին, յերդվում եմ։ Դուք ևս մտեք իմ դրու-
թյան մեջ։ Յես պատասխանում եմ ձեր և իմ տեղ։
Յեթե յես ամենանվիրված սիրով չսիրեյի ձեզ,—աստ-
ված իմ, իսկույն կառաջարկեյի ձեզ փախչել ինձ հետ...
Վաղ, թե ուշ, ձեր մայրը կներեր մեզ... և այն ժամա-
նակ... բայց նախքան սեփական յերջանկության մա-
սին մտածելը...

Նա կանգ առավ։ Նատալիայի ուղիղ նրան հա-
ռած հայացքը շփոթեցնում եր նրան։

—Դուք աշխատում եք ինձ ապացուցել, վոր դուք
ազնիվ մարդ եք, Դմիտրի Նիկոլայիչ,—շշնջաց Նա—
յես դրանում չեմ կասկածում։ Դուք ընդունակ եք հաշ-
վի համար գործել, բայց միթե յես դրանում համոզվել
եյի ցանկանում, միթե դրա համար եմ յեկել այստեղ...

—Յես չեյի սպասում, Նատալյա Ալեքսեյեվնա...

—Ա՜խ, այ թե դուք յերբ բերնից թռցրիք. այո,
դուք այս բոլորը չեյիք սպասում,—դուք ինձ չեյիք
ճանաչում։ Մի՛ անհանգստանաք... դուք ինձ չեք սի-
րում, իսկ յես վոչ վոքի չեմ հարկադրում։

—Յես ձեզ սիրո՜ւմ եմ,—բացականչեց Ռուդինը։

Նատալիան ուղղվեց։

—Գուցե. բայց դուք ինչպե՞ս եք սիրում ինձ։ Յես
ձեր բոլոր խոսքերը հիշում եմ, Դմիտրի Նիկոլայիչ։
Հիշում եք, դուք ինձ ասում եյիք—առանց լրիվ իրա-
վահավասարության սեր չկա։ Դուք ինձ համար շատ
բարձր եք... դուք իմ զույգը չեք... Յես տեղին եմ
պատժված։ Ձեզ ավելի արժանի պարապմունքներ են
սպասում։ Յես այս որը չեմ մոռանա... Մնաք բարև...





—Նատալիա Ալեքսեյեվնա, դուք գնում եք։ Մի՞թե մենք այդպես պետք է բաժանվենք։

Ռուդինը ձեռքը մեկնեց դեպի նա։ Նատալիան կանգ առավ. նրա պաղատագին ձայնը կարծես տատանեց վերջինիս։

—Ո՛չ,—ասաց նա վերջապես,—յես զգում եմ, վոր մեջս ինչ-վոր բան կոտրվեց... Յես եկա այստեղ, յես խոսում եյի ձեզ հետ՝ կարծես տենդում լինեյի. պետք է ուշքի գալ։ Այդ չպետք է լինի. դուք ինքներդ ասացիք—այդ չի լինի։ Աստված իմ, յերբ այստեղ եյի գալիս, յես մտքով հրաժեշտ եյի տալիս իմ տանը, իմ ամբողջ անցյալին.—և ի՞նչ դուրս յեկավ. Ես հանդիպեցի այստեղ՝ մի փոքրոգի մարդու... Յեվ դուք վորտեղի՞ց գիտեյիք, վոր յես անկարող կլինեմ դիմանալ ընտանիքից անջատ ապրելուն։ «Ձեր մայրը համաձայն չե... Այդ սարսափելի՜ է»։ Ահա այն բոլորը, ինչ վոր լսեցի ձեզնից։ Այդ դո՞ւք եք, դո՞ւք եք այդ, Ռուդին։ Ո՛չ։ Մնաք բարև... Ա՜խ, յեթե դուք ինձ սիրեյիք, յես կզգայի հենց հիմա, այս ակնթարթին... Ո՛չ, ո՛չ, մնաք բարև...

Նա արագ կերպով շուռ յեկավ ու վազեց Մաշայի մոտ, վորը վաղուց սկսել եր անհանգստանալ և նրան նշաններ անել։

—Դուք եք վախենում, վոչ թե յես,—գոչեց Ռուդինը Նատալիայի հետևից։

Նատալիան այլևս ուշադրություն չեր դարձնում նրա վրա և դաշտով տուն եր շտապում։ Նա բարեհաջող կերպով վերադարձավ իր ննջարանը, բայց հենց վոր վոտքը շեմքից ներս դրեց, ուժերը նրան դավաճանեցին, և նա անզգա կերպով ընկավ Մաշայի ձեռների վրա։



Իսկ Ռուդինը դեռ յերկար կանգնած եր թմբի վրա։ Վերջապես նա ուշքի յեկավ, դանդաղ քայլերով հասավ շավղին և դանդաղ կերպով առաջ գնաց նրանով։ Նա շատ եր ամոթահարված... ու վիրավորված։ «Ինչպիսի՜ն է»,—մտածում եր նա,—«տասնութ տարում։ Ո՛չ, յես նրան չեյի ճանաչում... Նա հրաշալի աղջիկ ե։ Ի՜նչ կամքի ուժ... Նա իրավացի յե... Նա արժանի յե վոչ այնպիսի սիրո, վորպիսին յես եյի զգում դեպի նա։ Զգում եյի»... հարցրեց ինքն իրեն։ «Միթե յես այլևս սեր չե՞մ զգում։ Ա՛յ թե այդ բոլորն ինչպես պետք է վերջանար։ Վորքա՜ն խղճուկ ու վոչինչ եյի յես նրա առաջ»։

Արշավակառքի թեթև չրխկոցը Ռուդինին հարկադրեց աչքերը բարձրացնել։ Իր անդավաճան վարգուն ձիով նրա դիմացն եր գալիս Լեժնյովը։ Ռուդինը լուռ բարևեց նրան, հանկարծակի մտքով զարկված պես ճանապարհը շեղեց և գնաց դեպի Դարյա Միխայլովնայի տան կողմը։

Լեժնյովը թույլ տվեց, վոր նա անցնի, նայեց նրա հետևից և մի փոքր մտածելուց հետո նույնպես իր ձին դարձրեց և վերադարձավ Վոլինցևի մոտ, ուր անց եր կացրել գիշերը։ Նա նրան քնած գտավ, չպատվիրեց նրան արթնացնել և, թեյի սպասելով, նստեց պատշգամբում ու սկսեց ծխամորճ ծխել։

---

## X

Վոլինցևն արթնացավ տասներորդ ժամին և իմանալով, որ Լեժնյովը նստած է իր պատշգամբում, շատ զարմացավ և հրամայեց նրան իր մոտ խնդրել։

— Ի՞նչ է պատահել,— հարցրեց նրան,— չէ՞ որ դու ուզում էիր ձեր տուն գնալ։

— Այո, ուզում էի, բայց Ռուդինին պատահեցի... Միայնակ քայլում էր դաշտում, դեմքն էլ այնպես հուզված։ Ցես էլ հետ դարձա։

— Վերադարձար նրա համար, որ Ռուդինին պատահեցի՞ր։

Այսինքն, ճիշտն ասած, ինքս էլ չգիտեմ, թե ինչու վերադարձա, երևի նրա համար, որ քեզ հիշեցի. ուզեցի քեզ հետ մի քիչ նստել. իսկ մեր տուն դեռ կհասնեմ։

Վոլինցևը դառը կերպով ծիծաղեց։

— Այո՛, այժմ Ռուդինի մասին չի կարելի մտածել՝ առանց իմ մասին էլ մտածելու։ Սպասավո՛ր,— բարձրաձայն կանչեց նա,— թեյ տուր մեզ։

Բարեկամները սկսեցին թեյ խմել։ Լեժնյովը սկսեց խոսել տնտեսության, շտեմարանները թղթով ծածկելու նոր ձևի մասին...

Հանկարծ Վոլինցևը բազկաթոռից վեր թռավ և



այնպիսի ուժով խփեց սեղանին, որ գավաթներն ու պնակները զնգզնգացին։

Ո՛չ, – բացականչեց նա,— ես այդ բանը տանելու ուժ չունեմ այլևս։ Ցես մարտի կհրավիրեմ այդ խելքի տոպրակին, և թող նա ինձ գնդակահարի, եթե ոչ՝ ես կաշխատեմ նրա գիտուն ճակատին գնդակ կպցնել։

Ի՞նչ պատահեց քեզ, ի՞նչ պատահեց,— փնթփնթաց Լեժնյովը.— ինչպե՞ս կարելի է այդպես գոռալ։ Ցես ծխամորճս վայր գցեցի... Ի՞նչ պատահեց քեզ։

— Այ, այն, որ ես նրա անունը սառնարյուն կերպով լսել չեմ կարող. արյունս տակնուվրա է լինում։

Բավական է, եղբայր, բավական է, ինչպե՞ս չես ամաչում,— վրա բերեց Լեժնյովը՝ գետնից ծխամորճը բարձրացնելով.— Թող։ Նրա էլ...

Նա ինձ վիրավորեց,— շարունակեց Վոլինցևը սենյակում երթևեկելով։— Այո՛, նա ինձ վիրավորեց։ Ինքդ պետք է ասածիս հետ համաձայնես։ Սկզբում ես ինձ կորցրի, նա ինձ շշմեցրեց. և ո՞վ կարող էր սպասել։ Բայց ես կապացուցեմ, որ ինձ հետ կատակ անել չի կարելի... Ցես նրան, այդ նզովված փիլիսոփային կաքավի պես կգնդակահարեմ։

— Դրանով շատ բան կշահես, ինչպե՞ս չէ։ Իսկ քրոջդ մասին դեռ չեմ խոսում։ Պարզ է, կիրքը քեզ հուզել է... Էլ ինչպե՞ս պետք է քրոջդ մասին մտածես։ Մյուս անձնավորության նկատմամբ ի՞նչ ես մտածում. փիլիսոփային սպանելով քո գործերը կուղղե՞ս։

Վոլինցևն ընկավ գահավորակի մեջ։

— Ուրեմն կհեռանամ մի ուրիշ տեղ. եթե ոչ

այստեղ թախիծն ինձ ուղղակի մաշում, տրորում է, ուղղակի տեղ չեմ գտնում։

Կհեռանամ... այդ ուրիշ բան է. այո, դրա հետ յես համաձայն եմ։ Ցավ գիտե՞ս՝ ինչ եմ առաջարկում քեզ. գնանք միասին. Կովկաս կամ հենց Մալորոսիա՝ խմորագնդիկներ (галушка) ուտելու։ Գեղեցիկ բան կլինի, յեղբայր։

Այո, իսկ քրոջս ում հետ թողնեմ։

—Իսկ ինչո՞ւ Ալեքսանդրա Պավլովնան էլ չգա մեզ հետ։ Աստված վկա, շատ լավ կլինի։ Հետևել, սիրել աշխատել նրան—այդ արդեն յես ինձ վրա եմ վերցնում։ Վոչ մի պակասություն չի զգա, իսկ յեթե ուզենա, ամեն յերեկո պատուհանի տակ սիրո յերգեր կերգեմ։ Կառապաններին ոդեկոլոնով կթրջեմ, ճանապարհին ծաղիկներ կտնկեմ։ Իսկ յես ու դու, յեղբայր, ուղղակի կվերածնվենք։ Այնքան հաճույք կստանանք, վոր հաստափոր դարձած կվերադառնանք, և այլևս վոչ մի ձեր մեզ վրա չի ազդի։

—Դու շարունակ կատակում ես, Միշա։

—Բնավ չեմ կատակում։ Այդ մի փայլուն միտք էր, վոր գլուխս յեկավ։

—Վո՛չ, դատարկ բան,—կրկին գոռաց Վոլինցևը—յես նրա հետ կռվել, կռվել եմ ուզում...

—Դարձյալ. այստեղ դու, յեղբայր, ուղեղի հիվանդություն ունես...

Սպասավորը ներս մտավ՝ ձեռքին մի նամակ։

—Ումի՞ց է,—հարցրեց Լեժնյովը։

—Դմիտրի Նիկոլայիչ Ռուդինից. Լասունսկիների սպասավորը բերեց։

—Ռուդինի՞ց,—կրկնեց Վոլինցևը։—Ո՞ւմ տալու։



—Ձեզ։

—Ինձ... տուր այստեղ։

Վոլինցևը վերցրեց, արագ կերպով բացեց և սկսեց կարդալ։ Լեժնյովն ուշադրությամբ նայում էր նրան։ Տարօրինակ, համարյա ուրախալի զարմանք էր պատկերանում Վոլինցևի դեմքին։ Նա ձեռները ցած գցեց։

—Ի՞նչ բան է,—հարցրեց Լեժնյովը։

Կարդա՛,—կիսաձայն կերպով ասաց Վոլինցևը և նամակը մեկնեց նրան։

—Լեժնյովն սկսեց կարդալ։ Ահա թե ինչ էր գրում Ռուդինը.

«Վողորմած տեր, Սերգեյ Պավլովի՛չ։

«Յես այսոր մեկնում եմ Դարյա Միխայլովնայի տանից, և մեկնում եմ ընդմիշտ։ Այս բանը ձեզ, յերևի, կզարմացնի, մանավանդ յերեկվա տեղի ունեցածից հետո։ Չեմ կարող բացատրել ձեզ, թե հատկապես ինչն է հարկադրում ինձ՝ այդպես վարվել. բայց, չգիտեմ ինչու, ինձ թվում է, թե յես պետք է մեկնումիս մասին ձեզ հայտնեմ։ Դուք ինձ չեք սիրում և նույնիսկ ինձ վատ մարդ եք համարում։ Յես մտադիր չեմ արդարանալ, ինձ կարդարացնի ժամանակը։ Իմ կարծիքով՝ անարժան և անօգուտ բան է մի տղամարդու համար՝ ապացուցել կանխակալ կարծիք ունեցող մի մարդու. նրա կանխակալ կարծիքների անարդարությունը։ Ով կամենա ինձ հասկանալ, նա ինձ կների, իսկ ով հասկանալ չի ուզի կամ չի կարող, նրա մեղադրանքները ինձ չեն դիպչի։ Յես ձեր նկատմամբ սխալվեցի։ Իմ աչքում դուք առաջվա պես մնում եք վորպես ազնիվ և մաքուր մարդ. բայց յես կարծում էի, թե դուք կարող եք բարձր մնալ այն միջավայրից, վորտեղ դաս-

գացել եք... Յես սխալվեցի։ Ի՞նչ արած։ Վո՛չ առաջին, վո՛չ վերջին անգամն ե։ Կրկնում եմ ձեզ՝ յես մեկնում եմ։ Ձեզ բախտավորություն եմ ցանկանում։ Համաձայնեցե՛ք, վոր այս ցանկությունը միանգամայն անշահախնդիր ե, և հույս ունեմ, վոր այժմ դուք բախտավոր կլինեք։ Գուցե ժամանակով դուք փոխեք ձեր կարծիքն իմ մասին։ Յերբևիցե մենք կտեսնվե՞նք արդյոք,— չգիտեմ, սակայն՝ համենայն դեպս միշտ եմ ձեզ անկեղծ հարգող

Դ. Ռ.

«Հ. Գ.: Ձեզ ունեցած իմ յերկու հարյուր ռուբլի պարտքը կուղարկեմ, հենց վոր հասնեմ գյուղ՝ Տ... նահանգը։ Խնդրում եմ նույնպես՝ Դարյա Միխայլովնայի մոտ այս նամակի մասին չխոսել։

«Հ. Հ. Գ.: Դարձյալ մեկ վերջին, բայց կարևոր խնդիր. վորովհետև յես մեկնում եմ, ուստի հույս ունեմ, վոր Նատալյա Ալեքսեյեվնայի մոտ դուք չեք հիշի իմ ձեզ արած այցելության մասին...»։

—Դե, ի՞նչ կասես,—հարցրեց Վոլինցևը, հենց վոր Լեժնյովը նամակը վերջացրեց։

—Ի՞նչ ասել,—վրա բերեց Լեժնյովը,—բայց յեթե զուտ արևելյանի բացականչել՝ «Ալլահ, ալլահ» և զարմանքից մատը դնել բերանը։ Ահա այն բոլորը, ինչ վոր կարելի յե անել։ Նա մեկնում ե. դե, բարի ճանապարհ. բայց ա՛յ թե ինչն ե հետաքրքիրը—ախր այս նամակը գրելն ել ե նա պարտք համարել և յեկել ե քեզ մոտ պարտքի զգացմունքից դրդված... Այդ պարոններն ամեն քայլափոխում պարտք ունեն, և միշտ պարտք — պարտքեր,—ավելացրեց Լեժնյովը՝ ծաղրանքով ցույց տալով post-scriptum-ը[1]։

—Իսկ ի՜նչ ֆրազներ ե գործածում,—բացականչեց Վոլինցևը,—իմ նկատմամբ նա սխալվել ե. նա սպասել ե, վոր յես ինչ-վոր միջավայրից բարձր կկանգնեմ... տեր, ինչ անմտություն. վոտանավորներից ել վատ։

Լեժնյովը վոչինչ չպատասխանեց. միայն աչքերն եյին ժպտում.

Վոլինցևը վեր կացավ։

—Յես ուզում եմ Դարյա Միխայլովնայի մոտ գնալ,—ասաց նա,—ուզում եմ իմանալ, թե ինչ ե նշանակում այս բոլորը...

—Սպասի՛ր, յեղբայր, թող դեռ նա կորչի։ Ինչու դու նորից ընդհարվես նրա հետ։ Նա հո չքանում ե, ել ինչ ես ուզում։ Ավելի լավ ե՝ գնա պառկի՛ր ու քնի՛ր։ Հավանաբար դու վողջ գիշերը կողքից կողք ես դարձել։ Իսկ այժմ գործերդ լավանում են...

—Այդ ինչի՞ց ես յեզրակացնում։

—Հենց այնպես. ինձ թվում ե։ Ճիշտ եմ ասում, քնի՛ր, իսկ յես կգնամ քրոջդ մոտ,—կնստեմ հետը։

—Յես բնավ քնել չեմ ուզում։ Ինչու համար քնեմ... ավելի լավ ե կգնամ դաշտերը նայելու,—վերարկուի փեշերը քաշելով ասաց Վոլինցևը։

—Այդ ել լավ ե։ Գնա՛, յեղբայր, գնա՛, դաշտերը տե՛ս...

Յեվ Լեժնյովն անցավ դեպի Ալեքսանդրա Պավլովնայի բաժինը։

---

1) Հետ գրությունը (լատ.)։

Նա Ալեքսանդրա Պավլովնային հյուրասենյակում գտավ։ Սա սիրալիր կերպով վողջունեց Լեժնյովին, վորի գալու համար նա միշտ ուրախանում էր. բայց դեմքը տխուր մնաց։ Նրան անհանգստացնում էր Ռուդինի յերեկվա այցելությունը։

—Դուք յեղբորս մոտի՞ց եք գալիս,—հարցրեց նա Լեժնյովին.—այսոր ինչպե՞ս է նա։

—Վոչինչ, գնաց դաշտերը նայելու։

Ալեքսանդրա Պավլովնան լուռ էր։

—Ասացե՛ք, խնդրեմ,—սկսեց նա՝ ուշադրությամբ զննելով թաշկինակի յեզրը,—դուք չգիտե՞ք, թե ինչու...

—Ինչու յեր յեկել Ռուդինը,—կցեց Լեժնյովը.—գիտեմ. նա յեկել էր հրաժեշտ տալու։

Ալեքսանդրա Պավլովնան գլուխը բարձրացրեց։

—Ինչպե՞ս թե հրաժեշտ տալու։

—Այո։ Միթե դուք չեք լսել։ Նա մեկնում է Դարյա Միխայլովնայի մոտից։

—Մեկնո՞ւմ է։

Ընդմիշտ, գոնե ինքն այդպես է ասում։

—Բայց, ներեցե՛ք, ինչպե՞ս հասկանալ այդ՝ այն բոլորից հետո...

—Այդ արդեն ուրիշ բան է։ Այդ չի կարելի հասկանալ, բայց այդպես է։ Յերևի նրանց մեջ բան է պատահել։ Լարը շատ է ձգել, կտրվել է։

– Միխայլո Միխայլիչ,—սկսեց Ալեքսանդրա Պավլովնան,—յես վոչինչ չեմ հասկանում. ինձ թվում է, թե դուք ծիծաղում եք վրաս...

—Աստված է վկա՝ վոչ... Ձեզ ասում եմ նա մեկնում է, և նույնիսկ այդ մասին գրավոր հայտնել է իր ծանոթներին։ Յեվ, յեթե կուզեք, այդ վորոշ տեսակետից վատ չէ. սակայն նրա մեկնումը խանգարեց մի գործնական ձեռնարկության իրականացման, վորի մասին յես և ձեր յեղբայրն սկսել եյինք խոսել։

—Ի՞նչ է. ինչ ձեռնարկություն է։

—Այ թե ինչ։ Յես առաջարկում եյի ձեր յեղբորը բավականության համար գնալ, ճանապարհորդել, ձեզ էլ հետները տանել. իսկ հատկապես ձեզ հետևել, սիրաշահելը յես եյի վերցնում ինձ վրա...

—Այ գեղեցիկ բան,—բացականչեց Ալեքսանդրա Պավլովնան,—յերևակայում եմ, թե ինչպես կհետևեյիք ինձ։ Դուք ինձ սովից կսպանեյիք։

Դուք այդպես եք ասում, Ալեքսանդրա Պավլովնա, վորովհետև ինձ չեք ճանաչում։ Դուք կարծում եք, թե յես մի անտաշ դմբո յեմ, կատարյալ դմբո, մի փայտե կտոր. սակայն հայտնի՞ է ձեզ, վոր յես ընդունակ եմ շաքարի պես հալվելու, որերով ծնկի յեկած մնալու։

—Ա՛յ, խոստովանում եմ, այդ յես կտեսնեյի։

Լեժնյովը հանկարծ վեր կացավ։

—Ամուսնացե՛ք ինձ հետ, Ալեքսանդրա Պավլովնա, և դուք այդ բոլորը կտեսնեք։

Ալեքսանդրա Պավլովնան մինչև ականջները կարմրատակեց։

—Այդ ի՞նչ ասացիք, Միխայլո Միխայլիչ,—կրկնեց նա շփոթված։

—Ասացի այն,—պատասխանեց Լեժնյովը.—ինչ վոր շատ վաղուց և հազար անգամ կար լեզվիս վրա։ Յես վերջապես բերնիցս թռցրի, և դուք կարող եք վարվել, ինչպես գիտեք։ Իսկ վորպեսզի ձեզ չճնշեմ, յես այժմ դուրս կգամ։ Յեթե դուք ցանկանում եք իմ

կինը լինել... Հեռանում եմ։ Յեթե ձեզ համար անհաճո չէ, դուք միայն հրամայեցեք ինձ կանչել, յես արդեն կհասկանամ...

Ալեքսանդրա Պավլովնան ուզում եր նրան պահել, բայց նա շտապ դուրս յեկավ, առանց գլխարկի գնաց պարտեզ, հենվեց ցանկապատին և սկսեց մի կողմ նայել։

—Միխայլո Միխայլիչ,—նրա հետևից հնչեց աղախնի ձայնը,—համեցեք տիրուհու մոտ։ Նրանք պատվիրեցին ձեզ կանչել։

Միխայլո Միխայլիչը շուռ յեկավ, ի մեծ զարմանք աղախնի՝ յերկու ձեռքով բռնեց նրա գլխից, համբուրեց ճակատը և գնաց Ալեքսանդրա Պավլովնայի մոտ։

---



## XI

Տուն վերադառնալով Լեժնյովի հետ հանդիպումից անմիջապես հետո Ռուդինը փակվեց իր սենյակում և յերկու նամակ գրեց—մեկը Վոլինցևին (արդեն հայտնի մեր ընթերցողին), մյուսը՝ Նատալիային։ Նա շատ յերկար նստեց այս յերկրորդ նամակը գրելու վրա, նրանում շատ բան ջնջեց ու փոփոխեց և խնամքով արտագրելով փոստաթղթի բարակ թերթի վրա, կարելույն չափ փոքր ծալեց և գրպանը դրեց։ Վիշտը դեմքին, նա միքանի անգամ սենյակում հետ ու առաջ արավ, նստեց պատուհանի առջև դրված բազկաթոռի վրա, ձեռքով հենվեց։ Արտասուքը կամաց յերևաց նրա կոպերին... Նա կանգնեց, բոլոր կոճակները կոճկեց, սպասավորին կանչեց և պատվիրեց Դարյա Միխայլովնային հարցնել, թե ինքը կարո՞ղ է տեսնել նրան։

Սպասավորը շուտով վերադարձավ և զեկուցեց, թե Դարյա Միխայլովնան հրամայել է նրան խնդրել Ռուդինը գնաց նրա մոտ։

Դարյա Միխայլովնան նրան ընդունեց իր առանձնասենյակում՝ ինչպես առաջին անգամ—յերկու ամիս սրանից առաջ։ Բայց այժմ նա միայնակ չեր. նրա մոտ նստած եր Պանդալևսկին—համեստ, թարմ, մաքուր և սրտահույզ՝ ինչպես միշտ։

Դարյա Միխայլովնան սիրալիր կերպով հանդիպեց Ռուդինին, Ռուդինն ել նրան սիրալիր բարևեց, բայց փոքրիշատե փորձված մարդը յերկուսի ժպտացող դեմքերից էլ հենց առաջին հայացքից կհասկանար, վոր նրանց մեջ, յեթե չի էլ արտահայտվել, գոնե մի անհաճո բան տեղի յե ունեցել։ Ռուդինը գիտեր, վոր Դարյա Միխայլովնան իր վրա բարկացած ե. Դարյա Միխայլովնան ել կասկածում եր, վոր նրան արդեն ամեն բան հայտնի յե։

Պանդալևսկու զեկուցումը նրան շատ եր հուզել։ Աշխարհիկ գոռոզությունը նրանում շարժվել եր։ Ռուդինը, այդ աղքատ, վոչ-աստիճանավոր և դեռ անհայտ մարդը համարձակվել եր տեսակցություն նշանակել նրա աղջկան, Դարյա Միխայլովնա Լասունսկայայի աղջկան։

—Ասենք թե նա խելոք ե, նա հանճար ե,—ասում եր նա։—Ուրեմն ինչ ե նշանակում այդ։ Սրանից հետո ամեն մեկը կարող ե իմ փեսան դառնալու հույս ունենալ։

—Յես յերկար ժամանակ աչքերիս չեյի հավատում,—կցեց Պանդալևսկին,—զարմանում եմ,—մարդ ինչպես չճանաչի իր տեղը։

Դարյա Միխայլովնան շատ եր հուզվել և Նատալիային լավ հասել եր նրանից։

Նա Ռուդինին խնդրեց նստել. նա նստեց, բայց վոչ վորպես նախկին Ռուդին, վոր համարյա տեր եր տանը, նույնիսկ վոչ վորպես լավ ծանոթ, այլ վորպես հյուր, այն էլ վոչ վորպես մոտիկ հյուր։ Այս բոլորը մի ակնթարթում կատարվեց... Այսպես ջուրը հանկարծ ամուր սառույցի յե փոխվում։



—Յես յեկա ձեզ մոտ, Դարյա Միխայլովնա,—սկսեց Ռուդինը,—շնորհակալություն հայտնելու ձեր հյուրասիրության համար։ Յես այսոր տեղեկություն ստացա իմ գյուղակից և պետք ե անպատճառ հենց այսոր գնամ այնտեղ։

Դարյա Միխայլովնան շեշտակի նայեց Ռուդինին։

«Նա կանխեց ինձ. յերևի գլխի յե ընկել»,—մտածում եր նա։ «Նա ինձ ազատում ե ծանր բացատրությունից. ավելի լավ։ Կեցցեն խելոք մարդիկ»։

—Միթե,—ասաց նա բարձրաձայն.—ախ, վորքան անհաճո յե այդ. եհ, ինչ արած։ Հույս ունեմ այս ձմեռ Մոսկվայում տեսնել ձեզ։ Շուտով մենք ինքներս ենք գնալու այստեղից։

—Յես չգիտեմ, Դարյա Միխայլովնա, կհաջողվի ինձ Մոսկվայում լինել, թե վոչ. բայց յեթե միջոցներս թույլ տան, պարտք կհամարեմ ներկայանալ ձեզ։

«Ոհո, յեղբայր», իր հերթին մտածեց Պանդալևսկին։ «Վաղուց եյիր այստեղ իբրև տեր տնօրինում, իսկ այժմ ահա թե ինչպես հարկ յեղավ արտահայտվելու»։

—Դուք յերևի ձեր գյուղից անբավարար տեղեկություններ եք ստացել,—ասաց Պանդալևսկին սովորական ընդմիջումներով։

—Այո,—չոր կերպով վրա բերեց Ռուդինը։

—Գուցե անբերրիություն։

—Վոչ... ուրիշ բան ե... Հավատացեք, Դարյա Միխայլովնա,—ավելացրեց Ռուդինը,—յես յերբեք չեմ

մոռանա այն ժամանակը, որ յես անցկացրել եմ ձեր տանը։

—Յես ևս, Դմիտրի Նիկոլայևիչ, միշտ հաճույքով եմ հիշելու մեր ծանոթությունը ձեզ հետ... Ե՞րբ եք գնում։

—Այսօր, ճաշից հետո։

—Այդպես շուտ... Եհ, ձեզ բարի ճանապարհ եմ ցանկանում։ Ի դեպ. յեթե ձեր գործերը ձեզ չխանգարեն, գուցե դուք մեզ դեռ այստեղ գտնեք։

—Հազիվ թե կարողանամ,—ասաց Ռուդինն ու տեղից վեր կացավ։—Ներեցեք ինձ,—ավելացրեց նա,—յես չեմ կարող իսկույն վճարել ձեզ իմ պարտքը, բայց հենց որ գյուղը հասնեմ...

—Թողեք, Դմիտրի Նիկոլայևիչ,—նրան ընդհատեց Դարյա Միխայլովնան.—չեք ամաչում. բայց ժամը քանիսն է,—հարցրեց նա։

Պանդալևսկին բաճկոնի գրպանից հանեց էմալով պատած ոսկե ժամացույցը և զգույշ կերպով վարդագույն այտը դնելով ամուր և սպիտակ օձիքին՝ նայեց նրան։

—Ժամի յերկուսից անց է յերեսուներեք րոպե,—շշնջաց նա։

—Ժամանակ է հագնվելու,—նկատեց Դարյա Միխայլովնան.—ցտեսություն, Դմիտրի Նիկոլայևիչ։

Ռուդինը վեր կացավ։ Նրա և Դարյա Միխայլովնայի մեջ տեղի ունեցած խոսակցությունը մի առանձին դրոշմ եր կրում։ Դերասաններն այդպես են կրկնում իրենց դերերը, դիվանագետները կոնֆերանսներում նախորոք պայմանավորված ֆրազներով այդպես են մտքեր փոխանակում...



Ռուդինը դուրս յեկավ։ Նա այժմ փորձով գիտեր, թե աշխարհիկ մարդիկ ինչպես են, ոչ թե նետում, այլ ուղղակի վայր են գցում իրենց համար անպետք դարձած մարդուն. ինչպես իրենց ձեռնոցը՝ պարահանդեսից հետո, ինչպես կանֆետի վրայի թուղթը, ինչպես վիճակախաղի չշահած տոմսը։

Նա շտապ կերպով իրերը դարսեց և սկսեց անհամբեր կերպով սպասել մեկնելու վայրկյանին։ Տանը գտնվողները բոլորը զարմացան, յերբ իմացան նրա մտադրությունը։ Մարդիկ նույնիսկ նրան նայում եյին տարակուսանքով։ Բասիստովը չեր թագցնում իր ցավը։ Նատալիան պարզ կերպով խուսափում եր Ռուդինից։ Նա աշխատում եր հայացքներով չհանդիպել նրան. սակայն Ռուդինը կարողացավ իր նամակը նրա ձեռքը դնել։ Ճաշի ժամանակ Դարյա Միխայլովնան մեկ անգամ ևս կրկնեց, թե հույս ունի Մոսկվա մեկնելուց առաջ տեսնել նրան, բայց Ռուդինը նրան ոչինչ չպատասխանեց։ Նրա հետ ամենից հաճախ Պանդալևսկին եր խոսում։ Ռուդինը շատ կուզեր նրա վրա ընկնել և ծեծել նրա կարմրավուն ու ծաղկուն դեմքը։ M-ell Boncourt-ը հաճախ եր նայում Ռուդինին՝ աչքերի խորամանկ ու տարօրինակ արտահայտությամբ։ Այդպիսի արտահայտություն կարելի յե յերբեմն տեսնել ծեր, շատ խելոք որսաշների աչքերում... Թվում եր, թե նա մտածում եր. «Ահա թե ինչպես վարվեցին քեզ հետ»։

Վերջապես խփեց ժամի վեցը, և մոտ բերին Ռուդինի ուղեկառքը։ Նա սկսեց արագ-արագ հրաժեշտ տալ ամենքին։ Նրա հոգեկան դրությունը շատ վատ եր։ Նա չեր սպասում, թե այս տանից այսպես կգնա.

կարծես արտաքսում էին նրան... «Ինչպե՞ս կատարվեց այս բոլորը և ինչ հարկ կար շտապելու։ Բայց վերջը մեկ է»,—ահա թե ինչ էր մտածում նա, երբ հարկադրված ժպիտով գլուխ էր իջեցնում դեպի ամեն կողմ։ Վերջին անգամ նա նայեց Նատալիային, և նրա սիրտը թրթռաց։ Աղջկա աչքերը հառած էին նրան տխուր, հրաժեշտային կշտամբանքով...

Նա շտապ վազեց սանդուղքով դեպի ներքև, թռավ ուղեկառքը։ Բասիստովը հանձն առավ ուղեկցել նրան մինչև առաջին կայարանը և նրա հետ միասին նստեց։

—Դուք հիշու՞մ եք,—սկսեց Ռուդինը՝ հենց որ ուղեկառքը բակից դուրս ելավ լայնատարած մեծ ճանապարհը.—հիշու՞մ եք, թե ինչ է ասում դոն-Կիշոտն իր զինակցին, երբ դուրս է գալիս դքսուհու պալատից. «Ազատությունը,—ասում է նա,—իմ բարեկամ Սանչո, մարդու ամենաթանկագին ստացվածքներից մեկն է. և երջանիկ է նա, ում երկինքը մեկ կտոր հաց է շնորհել, ով այդ հացի կտորի համար ուրիշներին պարտական չի մնում»։ Ինչ որ այն ժամանակ դոն-Կիշոտն էր զգում, ես այժմ եմ զգում... Աստված տա, իմ բարի Բասիստով, որ մի օր էլ դուք ապրեք այդ զգացմունքը։

Բասիստովը սեղմեց Ռուդինի ձեռքը, և ազնիվ պատանու սիրտն ուժգին զարկեց նրա հուզված կրծքի տակ։ Ռուդինը մինչև կայարան խոսում էր մարդու արժանիքի մասին, իսկական ազատության մասին, խոսում էր ջերմագին, ազնվորեն ու ճշգրիտ. և երբ հասավ հրաժեշտի վայրկյանը, Բասիստովը չդիմացավ, ընկավ նրա պարանոցովն ու հեկեկաց։ Ռուդինի արտասուքներն էլ հոսեցին, սակայն նա նրա համար չէր արտասվում, որ բաժանվում է Բասիստովից. Նրա արտասուքներն ինքնասիրական արտասուքներ էին։



---

Նատալիան գնաց իր սենյակը և կարդաց Ռուդինի նամակը.

«Սիրելի Նատալիա Ալեքսեևնա.—գրում էր նա,—ես վճռեցի մեկնել։ Ուրիշ ելք չունեմ։ Ես վճռեցի մեկնել, քանի դեռ պարզ կերպով չեն ասել ինձ, որ ես հեռանամ։ Իմ մեկնումով վերջանում են բոլոր թյուրիմացությունները։ Իսկ ցավող ինձ համար հազիվ թե մեկն ու մեկը գտնվի։ Ի՞նչ արած... Միշտ այդպես է։ Բայց ինչու՞ գրել ձեզ։

«Ես բաժանվում եմ ձեզնից հավանորեն ընդմիշտ և իմ մասին ավելի վատ հիշատակ թողնել ձեզ մոտ, քան որին արժանի եմ, չափազանց դառը կլիներ։ Ահա թե ինչու եմ գրում ձեզ։ Ես չեմ ուզում ոչ արդարանալ, ոչ էլ բացի ինձնից մեկ ուրիշի մեղադրել։ Ես ուզում եմ կարելույն չափ բացատրվել։ Վերջին օրերի դեպքերն այնքա՜ն անսպասելի, այնքա՜ն հանկարծակի էին...

«Այսօրվա տեսակցությունն ինձ համար անմոռանալի դաս կլինի։ Այո, դուք իրավացի եք.—ես ձեզ չէի ճանաչում, բայց կարծում էի, թե ճանաչում եմ։ Իմ կյանքի ընթացքում ես ամեն տեսակ մարդկանց հետ գործ եմ ունեցել, ես մոտիկ եմ եղել շատ կանանց և աղջիկների, սակայն ձեզ հանդիպելով, ես առաջին անգամ հանդիպեցի կատարելապես ազնիվ և

շիտակ հոգու։ Սա ինձ համար սովորական չեր և յես չկարողացա ձեզ գնահատել։ Յես դեպի ձեզ եյի ձգտում մեր ծանոթության առաջին որից. դուք այդ կարող եյիք նկատել։ Յես ձեզ հետ ժամեր ժամերի հետևից եյի անցկացնում, և ձեզ չճանաչեցի. հազիվ թե աշխատում ել եյի ճանաչել ձեզ... Յեվ յես կարող եյի յերևակայել, թե սիրում եմ ձեզ։ Այս հանցանքի համար յես այժմ պատժված եմ։

«Յես առաջ ել սիրում եյի մի կնոջ. նա ել ինձ եր սիրում... Իմ զգացմունքը դեպի նա բարդ եր, ինչպես և նրանը՝ դեպի ինձ. բայց վորովհետև նա ինքը պարզ, հասարակ չեր, այդպիսի զգացմունքն եր տեղին եր։ Այդ ժամանակ ճշմարտությունը յես չիմացա... յես նրան այժմ ել չճանաչեցի, յերբ առաջս եր կանգնած... Յես նրան ճանաչեցի վերջապես, բայց շատ ուշ... Անցածը չես վերադարձնի... Մեր կյանքերը կարող եյին միանալ, բայց չեն միանա յերբեք։ Ինչպես ապացուցեմ ձեզ, թե կարող եյի սիրել ձեզ իսկական սիրով, սրտի և վոչ թե յերևակայության սիրով, յերբ ինքս ել չգիտեմ, թե ընդունակ եմ այդպիսի սիրո։

«Բնությունն ինձ շատ բան ե տվել,—յես այդ գիտեմ և կեղծ ամաչկոտությունից դրդված համեստություն չեմ անի ձեր առաջ, մանավանդ այժմ, այսպիսի դառն և ինձ համար այսպիսի ամոթալի վայրկյաններում... Այո, բնությունն ինձ շատ բան ե տվել. սակայն յես կմեռնեմ՝ առանց ուժերիս արժանի վորևե բան անելու, առանց վորևե ոգտավետ հետք թողնելու ինձանից հետո։ Իմ վողջ հարստությունը զուր ե կորչում, և յես իմ սերմերի պտուղը չեմ տեսնի։ Ինձ պակասում ե... ինքս չեմ կարող ասել, թե հատկապես ինչ ե պակասում ինձ... Յերևի ինձ այն ե պակասում, առանց վորի չի կարելի մարդանց սրտերը շարժել, ինչպես նաև կանացի սրտին տիրել. իսկ միայն մտքերին տիրելը և՛ անկայուն ե, և՛ անոգուտ։ Տարորինակ, համարյա կոմիկական ե իմ ճակատագիրը։ Յես անձնատուր եմ լինում ամբողջովին, ագահաբար, լիովին—և չեմ կարողանում անձնատուր լինել։ Յես կվերջացնեմ նրանով, վոր կզոհեմ ինձ վորևե դատարկ բանի համար, վորին նույնիսկ չեմ ել հավատա... Աստված իմ։ Յերեսունհինգ տարեկան հասակում դեռ նոր պատրաստվել մի բան անելու...

«Յես դեռ վոչ վոքի առաջ այսպես չեմ արտահայտվել. սա իմ խոստովանությունն ե։

«Բայց բավական ե իմ մասին, ուզում եմ խոսել ձեր մասին, ձեզ մի քանի խորհուրդներ տալ. ուրիշ բանի այլևս պետք չեմ... Դուք դեռ ջահել եք, բայց վորքան ել ապրելու լինեք, հետևեցեք միշտ ձեր սրտի ներշնչումներին. չենթարկվեք վոչ ձեր, վոչ ուրիշի խելքին։ Հավատացեք, վորքան պարզ, վորքան նեղ ե այն շրջանակը, վորով ընթանում ե կյանքը, այնքան լավ ե. բանն այն չե, վոր նրանում նոր կողմեր փնտրվեն, այլ այն, վոր նրա բոլոր անցումները կատարվեն իր ժամանակին։ «Յերանի նրան, ով ջահելությունից ջահել ե յեղել»... Բայց յես նկատում եմ, վոր այս խորհուրդներն ավելի շատ ինձ են վերաբերում, քան ձեզ։

«Խոստովանում եմ ձեր առաջ, Նատալյա Ալեքսեյևնա, ինձ համար շատ ծանր ե։ Յես յերբեք ինձ չեմ խաբել այն զգացմունքի հատկության մեջ, վոր

ներշնչել եմ Դարյա Միխայլովնային, սակայն հույս եմ ունեցել, վոր գոնե ժամանակավոր կայան եմ գտել... Այժմ նորից պետք է աշխարհում թափառել։ Ի՞նչն ինձ կփոխարինի ձեր խոսակցությունը, ձեր ներկայությունը, ձեր ուշադիր ու խելացի հայացքերին... Յես եմ մեղավոր։ Սակայն համաձայնեցեք, վոր ճակատագիրը կարծես դիտմամբ ծիծաղում եր մեզ վրա։ Սրանից մեկ շաբաթ առաջ յես հազիվ գլխի ընկա, վոր սիրում եմ ձեզ։ Յերրորդ օրը, յերեկոյան, այգում, յես ձեզնից առաջին անգամ լսեցի... բայց ինչու հիշեցնել ձեզ այն, ինչ վոր այն ժամանակ դուք ասացիք. և ահա յես մեկնում եմ այսօր, մեկնում եմ խայտառակությամբ, ձեզ հետ ունեցած դաժան բացատրությունից հետո, ինձ հետ վոչ մի հույս չտանելով... Յեվ դուք դեռ չգիտեք, թե յես ինչ աստիճանի հանցավոր եմ ձեր առաջ... Իմ մեջ մի տեսակ հիմար սրտաբացություն, մի տեսակ շատախոսություն կա... Բայց ինչու խոսել դրա մասին։ Յես մեկնում եմ ընդմիշտ։

(Այստեղ Ռուդինը Նատալիային պատմել է իր այցելությունը Վոլինցևին, բայց. մտածել ու ջնջել է այդ ամբողջը, և Վոլինցևին գրած նամակում ավելացրել է յերկրորդ post-scriptum-ը)։

«Յես մնում եմ աշխարհում միայնակ, վորպեսզի նվիրվեմ, ինչպես դուք դաժան ծաղրով ասացիք այսօր առավոտյան, ինձ ավելի հարմար պարապմունքների։ Ավաղ. յեթե յես իսկապես կարողանայի նվիրվել այդ պարապմունքներին, վերջապես հաղթել իմ ծուլությունը.. Բայց վո՛չ. յես մնում եմ նույն անավարտ արարածը, ինչպես յեղել եմ մինչև այժմ... Առաջին խոչընդոտը — և յեվ յես ամբողջովին փշրվեցի. ձեզ



հետ պատահածն այդ բանն ապացուցեց ինձ։ Յեթե յես գոնե զոհաբերեյի՛ սերս իմ ապագա գործին, իմ կոչմանը։ Սակայն յես ուղղակի վախեցա այն պատասխանատվությունից, վոր ընկնում եր վրաս, և դրա համար էլ յես իսկապես արժանի չեմ ձեզ։ Յես չարժեմ, վոր դուք ինձ համար կտրվեք ձեր շրջանից... Բայց, ով գիտե, գուցե և լավ այս եր։ Այս փորձությունից գուցե յես ավելի մաքուր ու ավելի ուժեղ դուրս գամ։

«Կատարյալ յերջանկություն եմ ցանկանում ձեզ։ Մնաք բարև։ Յերբեմն հիշեցեք ինձ։ Հույս ունեմ, վոր դուք դեռ կլսեք իմ մասին։

Ռուդին»։

Նատալիան Ռուդինի նամակը ցած դրեց իր ծընկներին և յերկար ժամանակ աչքերը հատակին հառած նստած եր անշարժ։ Այս նամակը բոլոր հնարավոր պատճառաբանություններից ավելի պարզ ապացուցում եր նրան, թե ինքն իրավացի յեր, յերբ առավոտյան Ռուդինից բաժանվելիս ակամա բացականչել եր, թե նա իրեն չի սիրում։ Բայց դրանից նա չթեթևացավ։ Նա նստած եր անշարժ. նրան թվում եր, թե ինչ·վոր մութ ալիքներ առանց ճղփյունի կուտակվել են իր գլխին, և ինքը, սառչելով ու անզգայանալով՝ դեպի հատակն է գնում։ Առաջին հիասթափությունն ամեն մեկի համար ծանր է. բայց իրեն խաբել չցանկացող և թեթևամտությունից ու չափազանցությունից զերծ անկեղծ հոգու համար նա համարյա անհանդուրժելի յե։ Նատալիան հիշեց իր մանկությունը, յերբ յերեկոյան զբոսնելիս ինքն աշխատում եր յերկնքի պայ-

ծառ կողմի ուղղությամբ գնալ, ուր վերջալույսն էր վառվում, և ոչ թե մութ կողմի։ Այժմ իր առջև կյանքը մութն էր, ինքն էլ մեջքն է դարձրել դեպի լույսը…

Նրա աչքերին արցունքներ չերևացին։ Արցունքը միշտ չի բարերար լինում։ Նրանք մխիթարական են և բուժիչ, երբ երկար ժամանակ եռալով կրծքի տակ՝ դուրս են հոսում վերջապես, սկզբում ուժեղ, հետո հետզհետե ավելի թեթև, ավելի քաղցր. թախծի համր տանջանքը նրանցով է լուծվում… Բայց կան սառն արցունքներ, ժլատ կերպով հոսող արցունքներ. նրանց կաթիլ-կաթիլ դուրս է մղում սրտից ծանր ու անշարժ բեռան պես նրա վրա ընկած վիշտը։ Նրանք անմխիթարական են և ոչ մի թեթևություն չեն բերում։ Կարիքն է լալիս այդպիսի արցունքներով, և դեռ նա չի եղել դժբախտ, ով այդպիսի արցունք չի թափել։ Նատալիան այսօր ճանաչեց նրանց։

Երկու ժամ անցավ։ Նատալիան իր ուժերը ժողովեց, վեր կացավ, աչքերը սրբեց, մոմը վառեց, նրա բոցի վրա Ռուդինի նամակն ամբողջովին այրեց և մոխիրը պատուհանից դուրս գցեց։ Հետո բախտի վրա հուսալով՝ բացեց Պուշկինն ու կարդաց առաջին պատահած տողերը (նա այդպես հաճախ էր գուշակում նրանով)։ Ահա թե ինչ վիճակվեց նրան—

Ով զգացել է, նա հանգիստ չունի
Ուրվականիցը անդարձ օրերի…
Նա կախարդումներ այլևս չունի,
Նրան կրծում է իժը հուշերի,
Ինչպես նաև զղջումը սրտի…



Նա կանգնեց, սառը ժպիտով նայեց իր վրա հայելու մեջ, և գլխով վերից ցած մի թեթև շարժում անելով՝ իջավ հյուրասենյակ։

Դարյա Միխայլովնան հենց որ նրան տեսավ, տարավ առանձնասենյակ, նստեցրեց իր մոտ, փաղաքշանքով այտերը շոյեց, և ուշադրությամբ, համարյա հետաքրքրությամբ նայեց նրա աչքերին։ Դարյա Միխայլովնան գաղտնի տարակուսանք էր զգում. առաջին անգամ նրա գլխում անցավ, որ ինքն իր աղջկան չի ճանաչում։ Պանդալևսկուց լսելով Ռուդինի հետ ունեցած նրա տեսակցության մասին, նա ոչ այնքան բարկացավ, որքան զարմացավ, թե խելացի Նատալիան ինչպես է կարողացել այդպիսի քայլ անել։ Բայց երբ նրան կանչեց իր մոտ և սկսեց նախատել նրան, այն էլ ոչ այնպես, ինչպես պետք էր սպասել եվրոպացի կնոջից, այլ ճղճղան ու տգեղ կերպով, այդ ժամանակ Նատալիայի հաստատուն պատասխանները, նրա հայացքների ու շարժումների վճռականությունը շփոթեցրին, նույնիսկ վախեցրին Դարյա Միխայլովնային։

Ռուդինի հանկարծակի, նույնպես ոչ բոլորովին հասկանալի մեկնումը նրա սրտի վրայից մեծ ծանրություն վերցրին. սակայն նա արցունքներ, ուշաթափություններ էր սպասում… Նատալիայի արտաքին հանգստությունը կրկին նրան շշկլացրեց։

— Ե, ինչ, զավակս,— սկսեց Դարյա Միխայլովնան,— ինչպե՞ս ես այսօր։

Նատալիան իր մորը նայեց։

— Չէ՞ որ նա գնաց… քո առարկան։ Դու չգիտե՞ս, թե նա ինչու այդպես շուտ մեկնեց։

— Մայրի՛կ,— ցածր ձայնով խոսեց Նատալիան,— ձեզ խոսք եմ տալիս, վոր յեթե դուք նրան չներեք, ինձանից յերբեք վոչինչ չեք լսի։

— Ուրեմն խոստովանում ես, վոր դու իմ առաջ հանցավոր ես յեղել։

Նատալիան գլուխը կախ գցեց և կրկնեց.

— Դուք ինձնից յերբեք վոչինչ չեք լսի։

— Դե տես, հա՛,— ժպտալով վրա բերեց Դարյա Միխայլովնան։— Յես քեզ հավատում եմ։ Իսկ յերրորդ որը հիշո՞ւմ ես արդյոք, ինչպես... Ե՛հ, չեմ ասի։ Վերջացած, վճռված, թաղված է։ Այնպես չէ՞։ Ահա, յես կրկին կճանաչեմ քեզ. յեթե վոչ՝ յես բոլորովին շվարել եյի։ Դե, համբուրի՛ր ինձ, խելոքս...

Նատալիան Դարյա Միխայլովնայի ձեռքը մոտեցրեց իր շրթունքներին, իսկ Դարյա Միխայլովնան համբուրեց նրա խոնարհած գլուխը։

— Միշտ լսի՛ր իմ խորհուրդները, մի՛ մոռանար, վոր դու Լասունսկայա յես և իմ աղջիկը,— ավելացրեց նա,— և դու յերջանիկ կլինես։ Իսկ այժմ գնա։

Նատալիան լուռ դուրս յեկավ։ Դարյա Միխայլովնան նայեց նրա հետևից ու մտածեց. «Նա ինձ է քաշել— նույնպես հրապուրվելու է,— mais elle aura moins d'abandon»[1]։ Յեվ Դարյա Միխայլովնան խորասուզվեց անցյալի հիշողությունների մեջ... հեռավոր անցյալի...

Հետո պատվիրեց կանչել m-lle Boncourt-ին, և յերկուսով փակված՝ յերկար նստած եր նրա հետ։ Նրան ազատ արձակելով, կանչեց Պանդալևսկուն։ Անպատ-

[1] Բայց նա ավելի զգույշ կլինի (Ֆր.)։



ճառ ուզում եր իմանալ Ռուդինի մեկնելու իսկական պատճառը... բայց Պանդալևսկին նրան բոլորովին հանգստացրեց։ Այդ նրա մասնագիտությունն եր։

---

Հաջորդ որը Վոլինցևը քրոջ հետ ճաշի յեկավ։ Դարյա Միխայլովնան միշտ շատ սիրալիր եր նրանց հետ, իսկ այս անգամ առանձնապես եր շոյում։ Նատալիայի համար անտանելի ծանր եր. բայց Վոլինցևն այնքան ակնածանքով և այնքան քաշվելով եր խոսում նրա հետ, վոր Նատալիան իր հոգու խորքում չեր կարող շնորհակալ չլինել նրանից։

Որն անցավ խաղաղ, բավական տխուր, սակայն բոլորն ել հեռանալով՝ զգում եյին, վոր նախկին հունի մեջ են ընկել։ Իսկ այդ շատ բան եր նշանակում, շա՜տ-շատ։

Այո, բոլորն ընկել եյին նախկին հունը... բոլորը, բացի Նատալիայից։ Վերջապես միայնակ մնալով՝ նա դժվարությամբ իլեն գցեց իր մահճակալի մոտ և, ջարդված ու հոգնած, յերեսով ընկավ բարձի վրա։ Ապրելը նրան այնքան դառը, զզվելի ու ստոր թվաց, նա այնքան ամաչեց ինքն իրենից, իր սիրուց, իր վշտից, վոր այդ վայրկյանին յերևի կհամաձայներ մեռնել... Նրան դեռ շատ ծանր որեր, անքուն գիշերներ, տանջող հուզումներ եյին սպասում. բայց նա յերիտասարդ եր, կյանքը նրա համար դեռ նոր եր սկսվում, իսկ կյանքը վաղ թե ուշ, իրենը կվերցնի։ Ինչ հարված ել հասնելու լինի մարդուն, նա հենց նույն որը, շատ-շատ՝ հաջորդ որը—ներեցեք արտահայտության կոպ-

տության համար—կուտի, և ահա ձեզ առաջին մխիթարանքը...

Նատալիան տառապում էր տանջալից կերպով, նա տառապում էր առաջին անգամ... Սակայն առաջին տառապանքները, ինչպես առաջին սերը, չեն կրկնվում և փառք աստծու։



## XII

Մոտ երկու տարի անցավ։ Եկան մայիսյան առաջին օրերը։ Իր տան պատշգամբում նստած էր Ալեքսանդրա Պավլովնան, բայց արդեն ոչ Լիպինա, այլ Լեժնյովա։ Նա մեկ տարուց ավելի էր, ինչ ամուսնացել էր Միխայլո Միխայլիչի հետ։ Նա առաջվա պես սիրուն էր, միայն վերջին ժամանակները չաղացել էր։ Պատշգամբի առաջ, որտեղից սանդուղքները էին տանում դեպի պարտեզը, անցուդարձ էր անում ծծմայրը, ձեռքին կարմրաթշիկ մի մանուկ՝ սպիտակ շինելիկով և սպիտակ ծոպավոր գլխարկով։ Ալեքսանդրա Պավլովնան հենց շարունակ նրան էր նայում։ Երեխան չէր ճղճղում, այլ լրջորեն ծծում էր իր մատը և հանդիսավոր կերպով շուրջն էր նայում։ Միխայլո Միխայլիչի արժանավոր տղա լինելն արդեն ցոլանում էր նրանում։

Պատշգամբում, Ալեքսանդրա Պավլովնայի մոտ նստած էր մեր հին ծանոթը—Պիգասովը։ Մեր նրանից բաժանվելուց հետո նա նկատելի կերպով սպիտակել, կռացել, նիհարել և խոսելիս էլ ֆշշում էր,—նրա առաջնատամներից մեկը վայր էր ընկել, ֆշշոցը նրա խոսակցությանն ավելի թունոտ էր դարձնում... Տարիների հետ նրանում զայրույթը չէր պակասել, բայց

տրամադրությունները բթացել էին ու ինքն էլ առաջվանից ավելի չէր նույն բանը կրկնում: Միխայլո Միխայլիչը տանը չէր, նրան սպասում էին թեյի: Արևն արդեն մայր էր մտնում: Այնտեղ, ուր նա մայր էր մտնում, յերկնակամարի վրա բաց վարդագույն, կիտրոնի գույնի մի շերտ էր ձգվում. Նրանց հակադիր կողմում յերկուսն էին—մեկն ավելի ցած՝ կապտավուն, մյուսն ավելի բարձր՝ կարմրաշուշանագույն: Թեթև ամպիկները հալվում էին վերևում: Ամեն ինչ կայուն յեղանակ էր խոստանում:

Հանկարծ Պիգասովը ծիծաղեց:

—Ինչու յեք ծիծաղում, Աֆրիկան Սեմյոնիչ,—հարցրեց Ալեքսանդրա Պավլովնան:

—Հենց այնպես... Յերեկ, լսում եմ, մի գյուղացի ասում է կնոջը,—իսկ կինն այնպես էր շատախոսում.—մի՛ ճռռա... Այդ ինձ շատ դուր յեկավ: Մի՛ ճռռա: Յեվ իսկապես. ինչի՞ մասին կարող է դատել կինը: Յես, դուք գիտեք, յերբեք ներկա յեղողների մասին չեմ խոսում: Մեր ծերերը մեզնից խելոք են յեղել: Նրանց հեքիաթներում գեղեցկուհին նստած է պատուհանի տակ, ճակատին աստղ, իսկ ինքն առանց ծպտունի: Ա՛յ, այսպես է պետք: Յեթե վոչ՝ ինքներդ դատեցեք—մեր առաջնորդի կինը կարծես ատրճանակ կրակեց ճակատիս. ինձ ասում է, թե իմ տենդենցիան իրեն դուր չի գալիս: Տենդենցիա՜: Միթե և՛ նրա համար, և՛ բոլորիս համար ավելի լավ չէր լինի, յեթե բնության մի բարերար կարգադրությամբ հանկարծ նա զրկվեր լեզվից:

—Իսկ դուք միշտ նույնն եք, Աֆրիկան Սեմյոնիչ, միշտ հարձակվում եք մեզ՝ խեղճերիս վրա: Գի-



տե՞ք արդյոք, վոր այդ յուրատեսակ դժբախտություն է, ճշմարիտ: Յես ցավում եմ ձեզ:

—Դժբախտությա՞ն: Այդ ի՞նչ եք բարեհաճում ասել: Նախ՝ իմ կարծիքով աշխարհում միայն յերեք դժբախտություն կա—ձմեռը ցուրտ բնակարանում ապրել, ամառը նեղ կոշիկներ հագնել և գիշերել այնպիսի սենյակում, ուր յերեխա յե ճվում, վորին պարսկական փոշով քնացնել չի լինում: Յերկրորդ՝ իմացեք վոր յես այժմ ամենից հանդիստ մարդն եմ դարձել, թեկուզ գեղագիտության որինակ հանիր ինձնից: Ահա թե վորքան բարոյական եմ պահում յես ինձ:

—Խոսք չունեմ ասելու, լա՜վ եք պահում ձեզ: Հենց յերեկ Յելենա Անտոնովնան ձեզնից գանգատվում էր ինձ,

—Ա՜յ թե ի՞նչ. իսկ նա ինչ էր ասում ձեզ, թույլ տվեք իմանալ:

—Նա ինձ ասում էր, թե դուք ամբողջ առավոտվա ընթացքում, նրա բոլոր հարցերին միայն պատասխանել եք՝ «ինչ է, ինչ է», այն էլ այնպիսի՜ ճղղան ձայնով:

Պիգասովը ծիծաղեց:

—Բայց այդ լավ միտք էր, համաձայնվեցե՛ք, Ալեքսանդրա Պավլովնա... հը՞:

—Զարմանալի՜. միթե կարելի յե կնոջ հետ այդպես անքաղաքավարի լինել, Աֆրիկան Սեմյոնիչ:

—Ի՞նչպես, ձեր կարծիքով Յելենա Անտոնովնան կի՞ն է:

—Իսկ ձեր կարծիքով ի՞նչ է:

—Թմբուկ, ներեցե՛ք, սովորական թմբուկ, այ, վորին խփում են փայտերով...

—Հա՛,—խոսքը փոխելու համար ընդհատեց Ալեք-

սանդրա Պավլովնան.— ասում են ձեզ կարելի յե շնորհավորել։

—Ի՞նչը։

—Դատավճռի ավարտումը։ Գլինովյան հովիտները ձեզ են թողել...

—Այո, ինձ են թողել,— մռայլ կերպով ասաց Պիգասովը։

—Դուք այնքան տարի դրան եյիք ձգտում, իսկ այժմ կարծես դժգոհ եք։

—Զեկուցում եմ ձեզ, Ալեքսանդրա Պավլովնա,— դանդաղ կերպով խոսեց Պիգասովը,— ոչինչ ավելի վատ ու վիրավորական չի կարող լինել, քան ուշ վրա հասած բախտավորությունը։ Այնուամենայնիվ նա ձեզ հաճույք պատճառել չի կարող, սակայն փոխարենը զրկում ե ձեզ բախտը հայհոյելու և անիծելու իրավունքից, ամենաթանկագին իրավունքից։ Այո, տիկին, ուշացած բախտավորությունը դառն ու վիրավորական բան ե։

Ալեքսանդրա Պավլովնան միայն ուսերը թափահարեց։

—Դայակ,— սկսեց նա,— կարծում եմ Միշային քնացնելու ժամանակն ե։ Բեր այստեղ։

Եվ Ալեքսանդրա Պավլովնան զբաղվեց իր տղայով, իսկ Պիգասովը փնթփնթալով հեռացավ պատշգամբի մյուս ծայրը։

Հանկարծ մոտերքում, այգու մոտով անցնող ճանապարհին իր արշավակառքով յերևաց Միխայլո Միխայլիչը։ Նրա ձիու առջևից վազում եյին յերկու ահագին բակապահ շներ՝ մեկը դեղին, մյուսը գորշ. սրանց նա նոր եր սկսել պահել։ Նրանք անդադար իրար



կծոտում ու անբաժան բարեկամությամբ եյին ապրում։ Դռնից նրանց դիմացը յելավ պառավ թավ շնիկը, բերանը բացեց, կարծես ուզում եր հաչել, սակայն վերջացրեց նրանով, որ հորանջեց ու պոչը բարեկամաբար շարժելով հետ գնաց։

—Հապա տես, Սաշա,— հեռվից գոռաց Լեժնյովը իր կնոջը,— ում եմ բերում քեզ մոտ...

Ալեքսանդրա Պավլովնան մեկեն չճանաչեց իր մարդու հետևում նստած մարդուն։

Ա՜, պ. Բասիստով, վերջապես բացականչեց նա։

—Նա յե, նա յե,— պատասխանեց Լեժնյովը.— և —ինչ փառավոր լուրեր եմ բերել. սպասիր, իսկույն կիմանաս։

Եվ նա մտավ բակը։

Մի քանի վայրկյանից հետո նա Բասիստովի հետ հայտնվեց պատշգամբում։

—Ուռա՜,— բացականչեց նա ու գրկեց կնոջը,— Սերյոժան ամուսնանում ե։

—Ո՞ւմ հետ,— հուզմունքով հարցրեց Ալեքսանդրա Պավլովնան։

—Հասկանալի յե, որ Նատալիայի հետ... Ահա բարեկամս ե այդ տեղեկությունը բերել Մոսկվայից— դու ել նամակ ունես... Լսում ես, Միշուկ,— տղային ձեռքն առնելով, ավելացրեց նա.— մորեղբայրդ ամուսնանում ե... ա՜խ դու չարագործ սառնարյուն, այստեղ ել միայն աչքերն ե թարթում։

—Նրանք քնել են ուզում,— նկատեց դայակը։

—Այո-ս,— մոտենալով Ալեքսանդրա Պավլովնային ասաց Բասիստովը՝ յես այսօր եմ յեկել Մոսկվա-

ցեց, Դարյա Միխայլովնայի հանձնարարությամբ՝ կալվածքի հաշիվները վերստուգելու: Ահա և նամակ:

Ալեքսանդրա Պավլովնան շտապ կերպով բացեց իր եղբոր նամակը, որը միայն միքանի տող էր: Ուրախության առաջին հույզի ազդեցության տակ նա հայտնում էր քրոջը, թե առաջարկ է արել Նատալիային, ստացել է նրա համաձայնությունը, այլև Դարյա Միխայլովնայի համաձայնությունը, խոստանում էր առաջին փոստով ավելին գրել և հեռակա կերպով բոլորին գրկում ու համբուրում էր: Երևում էր, որ գրել էր մի տեսակ արբեցման մեջ:

Թեյ բերին, Բասիստովին նստեցրին: Հարցերը նրա վրա կարկուտի պես տեղացին: Նրա բերած տեղեկությունը բոլորին, նույնիսկ Պիգասովին ուրախացրեց:

—Ասացեք, խնդրեմ,—ասաց իմիջիայլոց Լեժնյովը,—մենք լսել էինք ինչ-որ պարոն Կորչագինի մասին: Ուրեմն այդ դատարկ բան էր:

(Կորչագինը գեղեցիկ երիտասարդ էր, աշխարհիկ առյուծ, չափազանց գոռոզ ու ծանրակշիռ. Նա իրեն անսահման վեհապանծ էր պահում, կարծես ոչ թե կենդանի մարդ էր, այլ իր սեփական արձանը՝ կառուցված հասարակական նվիրատվությամբ):

Ո, ոչ. ոչ բոլորովին դատարկ բան,—ժպտալով վրա բերեց Բասիստովը,—Դարյա Միխայլովնան շատ բարյացակամ էր դեպի նա, իսկ Նատալիա Ալեքսեևնան լսել անգամ չէր ուզում նրա մասին:

—Ախր ես նրան ճանաչում եմ,—մեջ ընկավ Պիգասովը,—նա իսկական հիմար է, ճռճռան հիմար... ներեցեք ինձ: Եթե բոլոր մարդիկ նրա նման լինե-



յին, ապրելու համար պետք կլիներ մեծ փող վերցնել... Ներեցեք ինձ:

—Գուցե,—առարկեց Բասիստովը,—բայց բարձր շրջանում նա վերջին դերերից չի խաղում:

—Ե՛, միևնույն է,—բացականչեց Ալեքսանդրա Պավլովնան,—աստված իրեն հետ: Ա՜խ, որքան ուրախ եմ եղբորս համար... Նատալիան էլ ուրախ է, երջանի՞կ:

—Այո-ս, նա հանգիստ է՝ ինչպես միշտ—դուք նրան ճանաչում եք,—բայց կարծես գոհ է:

Երեկոն անցավ հաճելի և կենդանի խոսակցություններով: Ընթրիքի նստեցին:

—Հա, ի դեպ,—հարցրեց Լեժնյովը Բասիստովին՝ նրա համար լաֆիտ լցնելով,—դուք չգիտե՞ք որտեղ է Ռուդինը:

—Հիմա հաստատ չգիտեմ: Անցած ձմեռ նա կարճ ժամանակով Մոսկվա եկավ, հետո մեկ ընտանիքի հետ Սիմբիրսկ ուղևորվեց. մենք միառժամանակ նամակագրություն ունեինք. իր վերջին նամակում նա ինձ տեղեկացնում էր, թե Սիմբիրսկից գնում է,—չէր ասում ուր—և ահա այդ ժամանակից ես նրա մասին ոչինչ չեմ լսում:

—Չի կորչի,—մեջ մտավ Պիգասովը,—մի որևէ տեղ նստել ու քարոզում է: Այդ պարոնը միշտ իրեն համար երկու կամ երեք երկրպագուներ կգտնի, որոնք բերանները բաց՝ կլսեն նրան ու փոխարինաբար փող կտան: Կտեսնեք, նա կվերջացնի նրանով, որ կմեռնի Ցարևոկոկշայսկում կամ Չուխլոմում, կեղծամավոր մի շատ ծերացած աղջկա ձեռների վրա, որ-

րը նրա մասին կմտածի վորպես աշխարհի ամենահանճարեղ մարդու մասին։

—Դուք շատ խիստ եք արտահայտվում նրա մասին,—կիսաձայն ու անբավական կերպով նկատեց Բասիստովը։

—Բնավ վոչ խիստ,—առարկեց Պիգասովը,—յես միանգամայն իրավացի յեմ։ Իմ կարծիքով նա ուղղակի վոչ այլ ինչ է, քան յեթե պնակալեզ։ Յես մոռացա ձեզ ասել,—դառնալով դեպի Լեժնյովը,—շարունակեց նա,—ախր յես ծանոթացա այն Տերլախովի հետ, վորի հետ Ռուդինն արտասահման եր գնացել։ Ինչպես չե, ինչպես չե։ Ինչ վոր նա պատմեց ինձ նրա մասին, դուք յերևակայել չեք կարող—ուղղակի ծիծաղից մեռնելու բան։ Զարմանալին այն է, վոր Ռուդինի բոլոր հետևորդներն ու բարեկամները ժամանակով նրա թշնամիներն են դառնում։

—Խնդրեմ ինձ հանեք այդպիսի բարեկամների թվից,—տաքացած ընդհատեց նրան Բասիստովը։

—Ե՛, դո՛ւք—այլ բան եք։ Ձեր մասին խոսք ե՛լ չկա։

—Իսկ ի՞նչ է պատմել ձեզ Տերլախովը,—հարցրեց Ալեքսանդրա Պավլովնան։

—Շատ բան է պատմել, բոլորը չեմ հիշի։ Բայց ամենից լավն ահա թե ինչ անեկդոտ է պատահել Ռուդինին։ Անընդհատ զարգանալով ու զարգանալով (այդ պարոնները միշտ զարգանում են. ուրիշները, որինակ ուղղակի քնում կամ ուտում են, իսկ նրանք քնելու կամ ուտելու զարգացման մոմենտում են գտնվում. այդպես չե՞, պ. Բասիստով։ Բասիստովը վոչինչ չպատասխանեց)... Յեվ այսպես, շարունակ զարգանալով



Ռուդինը փիլիսոփայության ճանապարհով այն յեզրակացության է հասնում, վոր ինքը պետք է սիրահարվի։ Սկսում է փնտռել այնպիսի յեզրակացության արժանի առարկա։ Բախտը նրան ժպտում է։ Ծանոթանում է մի շատ սիրուն մոդիստուհի ֆրանսուհու հետ։ Դեպքը տեղի յե ունենում Հռենոսի վրա ընկած մի գերմանական քաղաքում, նկատեցեք։ Նա սկսում է գնալ-գալ մոդիստուհու մոտ, զանազան գրքեր տանել նրա համար, խոսել բնության ու Հեգելի մասին։ Կարո՞ղ եք յերևակայել մոդիստուհու դրությունը։ Նա Ռուդինին աստղաբաշխի տեղ է ընդունում։ Դե, դուք գիտեք, նա, վոչինչ, շնորհքով ջահել է,—օտարերկրացի, ռուս—դուր է գալիս։ Յեվ ահա վերջապես տեսակցություն է նշանակում, այն էլ շատ բանաստեղծական տեսակցություն—գետի վրա՝ գոնդոլում։ Ֆրանսուհին համաձայնում է, լավ զուգվում է և գոնդոլով գնում է նրա հետ։ Այսպես նրանք յերկու ժամ զբոսնում են։ Ձեր կարծիքով այս ամբողջ ժամանակը նա ինչո՞վ է զբաղվում.—հարդարում է ֆրանսուհու գլուխը, մտածկոտ կերպով նայում յերկինքին և միքանի անգամ կրկնում, թե դեպի նա հայրական քնքշություն է զգում։ Ֆրանսուհին տուն է վերադառնում կատաղած և ինքն էլ ամեն բան պատմում է Տերլախովին։ Ահա թե ինչ պարոն է նա։

Յեվ Պիգասովը ծիծաղեց։

—Դուք հին ցինիկ,—սրտնեղությունով նկատեց Ալեքսանդրա Պավլովնան,—իսկ յես ավելի ու ավելի յեմ համոզվում, վոր Ռուդինի մասին նույնիսկ նրանք, վորոնք հայհոյում են նրան, վոչինչ վատ ասել չեն կարող։

—Ոչ մի վատ բան. ներեցեք։ Իսկ մշտապես նրա ուրիշի հաշվով ապրելը, նրա փոխառումները... Միխայլո Միխայլիչ, նա յերևի ձեզնից էլ է պարտք արել։

—Լսեցեք, Աֆրիկան Սեմյոնիչ,—սկսեց Լեժնյովը և նրա դեմքը լուրջ արտահայտություն ընդունեց,—լսեցեք—դուք գիտեք, իմ կինն էլ գիտե, վոր վերջերս յես դեպի Ռուդինն առանձնապես լավ չեմ յեղել տրամադրված և դեռ հաճախ էլ դատապարտել եմ նրան։ Այդ բոլորով հանդերձ (Լեժնյովը շամպայն լցրեց բաժակները) ահա թե ինչ եմ առաջարկում ձեզ,—մենք հենց նոր խմեցինք մեր թանկագին յեղբոր և նրա հարսնացվի կենացը. այժմ առաջարկում եմ ձեզ խմել Դմիտրի Ռուդինի կենացը։

Ալեքսանդրա Պավլովնան ու Պիգասովը զարմանքով նայեցին Լեժնյովի վրա, իսկ Բասիստովն ամբողջովին ցնցվեց, ուրախությունից կարմրեց և աչքերը չռեց։

—Յես նրան լավ եմ ճանաչում,—շարունակեց Լեժնյովը,—նրա թերությունները ինձ լավ հայտնի յեն. դրանք ավելի յեն դրսևորվում հենց նրա համար, վորովհետև նա ինքը մանր մարդ չէ։

—Ռուդինը հանճարեղ բնավորություն է,—մեջ մտավ Բասիստովը։

—Նրանում հանճարեղություն, թերևս, կա,—առարկեց Լեժնյովը,—իսկ բնավորություն... Նրա ամբողջ դժբախտությունն էլ այն է, վոր հենց բնավորություն չկա նրանում... Սակայն բանն այդ չէ։ Յես ուզում եմ խոսել նրանում յեղած լավի, հազվագյուտի մասին։ Նրանում խանդավառություն կա, իսկ այդ,



հավատացեք ինձ՝ սառնարյուն մարդուս, մեր ժամանակ ամենաթանկ հատկությունն է։ Մենք բոլորս անտանելի լրջմիտ, անտարբեր ու դանդաղաշարժ ենք դարձել. մենք քնել, մենք սառել ենք, և շնորհակալություն նրան, ով թեկուզ մեկ վայրկյան կշարժի, կջերմացնի մեզ։ Ժամանակ է։ Հիշում ես, Սաշա, յես մեկ անգամ քեզ հետ խոսում եյի նրա մասին և կշտամբում եյի նրան սառնության մեջ։ Յես այն ժամանակ և իրավացի եյի, և անիրավացի։ Սառնությունը նրա արյան մեջ է, վոչ թե գլխում. այդ նրա մեղքը չէ։ Նա դերասան չէ, ինչպես յես եյի անվանում նրան, փչան չէ, խարդախ չէ։ Նա ուրիշի հաշվով ապրում է վոչ վորպես խարդախ մարդ, այլ վորպես յերեխա... Նա, այո, կմեռնի մի տեղ չքավորության ու աղքատության մեջ, բայց միթե դրա համար էլ պետք է քարկոծել նրան։ Նա ինքը վոչինչ չի անի հենց նրա համար, վոր նրա մեջ բնավորություն, արյուն չկա. բայց ով իրավունք ունի ասելու, թե նա օգուտ չի բերի, արդեն չի բերել, թե նրա խոսքերը շատ բարի սերմեր չեն գցել յերիտասարդ հոգիների մեջ, վորոնց բնությունը, ինչպես նրան, չի մերժել գործունեյության ուժ, իր մտքերն իրագործելու կարողություն։ Հենց յես, ինքս առաջինն եմ այդ բոլորն զգացել ինձ վրա... Սաշան գիտե, թե Ռուդինը ջահել ժամանակ ինչ եր ինձ համար։ Հիշում եմ, յես նույնպես պնդում եյի, թե Ռուդինի խոսքերը չեն կարող ազդել մարդկանց վրա, բայց յես այն ժամանակ ասում եյի իմ այժմյան տարիքն ունեցող՝ ինձ նման մարդկանց մասին, արդեն ապրած և կյանքից փշրված մարդկանց մասին։ Խոսակցության մեջ մի կեղծ հըն-

ջյան, և նրա ամբողջ ներդաշնակությունը մեզ համար չքացավ, իսկ ջահել մարդու մեջ, բարեբախտաբար, լրջությունն այնպես չի զարգացած, այնքան չի յերես առած։ Յեթե իր լամծի էությունը նրան գեղեցիկ է թվում, այլևս ինչ՛ն է պետք տոնը։ Տոնը նա ինքն իր մեջ կգտնի։

—Բրավո, բրավո,—բացականչեց Բասիստովը,—Վորքա՜ն իրավացի յեք ասված։ Իսկ ինչ վերաբերում է Ռուդինի ազդեցությանը, յերդվում եմ, վոր այդ մարդը վոչ միայն կարողանում եր ցնցել քեզ, այլև տեղից շարժել քեզ, նա վոչ միայն չեր թույլ տալիս, վոր կանգ առնես, այլ մինչև հիմքը տակնուվրա յեր անում, այրում եր քեզ։

—Դուք լսում եք,—շարունակեց Լեժնյովը, դառնալով դեպի Պիգասովը։—Այլևս ինչ ապացույց է հարկավոր ձեզ։ Դուք հարձակվում եք փիլիսոփայության վրա։ Նրա մասին խոսելիս, դուք բավականաչափ արհամարհական բառեր չեք գտնում։ Յես ևս նրան առանձնապես չեմ մեծարում ու վատ եմ հասկանում, սակայն մեր գլխավոր դժբախտությունը փիլիսոփայությունից չի բղխում։ Փիլիսոփայական խարդախ հերյուրանքներն ու ցնդաբանությունները յերբեք չեն պատվաստվի ռուսին․ այդտեղ նրա միտքը շատ առողջ է, բայց հո չի կարելի թույլ տալ, վոր փիլիսոփայության անվան տակ հարձակվեն դեպի ճշմարտություն ու գիտակցություն տանող յուրաքանչյուր ազնիվ ձգտումի վրա։ Ռուդինի դժբախտությունն այն է, վոր նա Ռուսաստանը չի ճանաչում, և այդ իսկապես մեծ դժբախտություն է։ Ռուսաստանն առանց մեզնից յուրաքանչյուրի՝ յոլա կգնա, բայց մեզնից վոչ վոք



առանց նրան չի կարող յոլա գնալ։ Վայ նրան, ով այդպես մտածում է, կրկնակի վայ նրան, ով, իրոք, առանց նրան է յոլա գնում։ Կոսմոպոլիտիզմը բարբանջանք է․ կոսմոպոլիտը զերո յե, զերոյից ել վատ է։ Ժողովրդից դուրս չկա վոչ գեղարվեստ, վոչ ճշմարտություն, վոչ կյանք, վոչինչ չկա։ Առանց դեմքի նույնիսկ իդեալական կերպարանք չկա, միայն գռեհիկ, սոսկ կերպարանքն է հնարավոր առանց դեմքի։ Սակայն նորից եմ ասում, վոր այդ Ռուդինի մեղքը չե․ այդ նրա ճակատագիրն է, դառն ու ծանր ճակատագիր, վորի համար մենք նրան չենք մեղադրի։ Իսկ մեզ շատ հեռու կտաներ, յեթե ուզենայինք քննել և իմանալ, թե ինչու յեն մեզնում Ռուդիններ հանդես գալիս։ Իսկ նրա մեջ յեղած լավի համար մենք նրանից շնորհակալ կլինենք։ Այս ավելի հեշտ է, քան նրա նկատմամբ անարդար լինելը․ իսկ մենք նրա նկատմամբ անարդար եյինք։ Նրան պատժելը մեր գործը չե, պետք ել չե։ Նա ինքն իրեն շատ ավելի անգթորեն է պատժել, քան արժանի յեր... Տա աստված, վոր դժբախտությունը դուրս քշեր նրանից վողջ վատը և թողներ միայն գեղեցիկը։ Խմում եմ Ռուդինի կենացը։ Խմում եմ իմ լավագույն տարիների ընկերոջ կենացը, խմում եմ ջահելության, նրա հույսերի, նրա ձգտումների, նրա դյուրահավատության և ազնվության համար․ այն բոլորի համար, վորից քսան տարեկան հասակում մեր սրտերը զարկվեցին, և վորից ավելի լավ բան մենք այնուամենայնիվ վոչինչ չիմացանք և չենք իմանա կյանքում... Խմում եմ քեզ համար, վոսկե ժամանակ, խմում եմ Ռուդինի կենացը։

Բոլորը Լեժնյովի հետ բաժակ զարկեցին։ Բասիստովը տաքացած՝ քիչ էր մնում իր բաժակը ջարդեր և մինչև տակը դատարկեց, իսկ Ալեքսանդրա Պավլովնան սեղմեց Լեժնյովի ձեռքը։

—Ես, Միխայլո Միխայլիչ, չեմ էլ կասկածել, վոր դուք այսպես պերճախոս եք լինել,—նկատեց Պիգասովը.—հենց իրենից՝ պ. Ռուդինից հետ չեք մնա. Նույնիսկ յես էլ ազդվեցի։

—Ես բնավ պերճախոս չեմ,—առարկեց Լեժնյովը՝ վոչ առանց սրտնեղելու.—իսկ ձեզ վրա ազդելը, կարծում եմ, դժվար է։ Բայց, բավական է Ռուդինի մասին։ Եկե՛ք ուրիշ բանից խոսենք... Հա... ի՞նչ էր... Պանդալևսկին դեռ Դարյա Միխայլովնայի մոտ է ապրում — Բասիստովին դառնալով ավելացրեց նա։

—Ինչպե՞ս չէ, դեռ նրա մոտ է։ Դարյա Միխայլովնան նրա համար շատ ձեռնտու տեղ է գտել։

Լեժնյովը քմծիծաղ տվեց։

—Ա՛յ, դա չքավորության մեջ չի մեռնի. այդ կարելի յե յերաշխավորել։

Ընթրիքը վերջացավ։ Հյուրերը ցրվեցին։ Իր ամուսնու հետ առանձին մնալով՝ Ալեքսանդրա Պավլովնան ժպիտով նայեց նրա յերեսին։

—Այսոր դու ինչ լավն եյիր, Միշա,—շշնջաց նա՝ ձեռքով նրա ճակատը շոյելով,—ինչ խելոք ու ազնվաբար եյիր խոսում։ Բայց խոստովանիր, վոր դու մի փոքր հափշտակվեցիր Ռուդինի օգտին, ինչպես առաջ նրա դեմ եյիր հափշտակվում...

—Ընկածին չեն խփում... իսկ յես այն ժամանակ վախենում եյի, վոր նա կարող է քեզ գլխահան անել։



—Վո՛չ,—պարզասիրտ կերպով առարկեց Ալեքսանդրա Պավլովնան,—նա ինձ միշտ գիտուն էր թվում, և յես վախենում եյի նրանից ու չեյի իմանում, թե նրա ներկայությամբ ինչ խոսեմ։ Իսկ Պիգասովն այսոր բավական չարամիտ կերպով եր ծիծաղում նրա վրա, խոստովանիր։

—Պիգասովը,—խոսեց Լեժնյովը,—յես հենց նրա համար եյի այնպես ջերմ պաշտպանում Ռուդինին, վոր Պիգասովն այստեղ եր։ Նա համարձակվում է Ռուդինին պնակալեզ անվանել։ Իսկ իմ կարծիքով նրա, Պիգասովի դերը հարյուր անգամ վատ է։ Անկախ կացություն ունի, ամեն բան ծաղրում է, իսկ ինքն ինչպես է թեքվում դեպի մեծամեծներն ու դեպի հարուստները։ Գիտե՞ս արդյոք, վոր այդ Պիգասովը, վոր այդպիսի չարախնդությամբ հայհոյում է ամենքին ու ամեն ինչ, և փիլիսոփայության վրա յե հարձակվում, և կանանց... գիտե՞ս արդյոք, վոր յերբ ծառայում եր, կաշառքներ եր վերցնում, այն էլ ինչպե՛ս. այ, հենց այդպիսի մարդ է։

—Մի՞թե,—բացականչեց Ալեքսանդրա Պավլովնան,—այդ յես բնավ չեյի սպասում... Լսի՛ր, Միշա,—մի փոքր լռելուց հետո ավելացրեց նա,—ի՛նչ եմ ուզում հարցնել քեզ...

—Ի՞նչ։

—Ի՞նչ ես կարծում, յեղբայրս արդյոք բախտավոր կլինի՞ Նատալիայի հետ։

—Ինչպե՞ս ասեմ... բոլոր հավանականությունները կան... Հրամայողը կլինի Նատալիան,—մեր մեջ թագցնելու հարկ չկա,—նա ավելի խելոք է. բայց յեղբայրդ շատ լավ մարդ է, և վողջ հոգով սիրում է

Նատալիային։ Եվ ինչ ես ուզում։ Ա՛յ, օրինակ, մենք իրար սիրում ու բախտավոր ենք. ճիշտ չէ՞ միթե։

Ալեքսանդրա Պավլովնան ժպտաց ու սեղմեց Միխայլո Միխայլիչի ձեռքը։

---

Ճիշտ նույն օրը, յերբ մեր բոլոր պատմածները տեղի էին ունենում Ալեքսանդրա Պավլովնայի տանը, Ռուսաստանի հեռավոր նահանգներից մեկում, որվա խիստ շոգին, մեծ ճանապարհով մի վառթար, խարխլե ծածկասայլ էր գնում, որին լծված էին տեղացիների յերեք ձի։ Սայլաթառի վրա, վոտները թեք կերպով սայլի առջևի փայտին հենած, ամբամբում էր ծակ չուխավոր մի ծեր գյուղացի, որ հենց մի գլուխ ձգում էր պարանի սանձերը և թափահարում էր փոքրիկ մտրակը. իսկ սայլի մեջ լղարիկ ճամպրուկի վրա նստած էր մի բարձրահասակ մարդ՝ գլխարկով և հին, փոշոտ թիկնոցով։ Դա Ռուդինն էր։ Նա նստած էր գլուխը քաշ գցած և գլխարկի հովարն աչքերին քաշած։ Սայլի անհավասար ցնցումները նրան մի կողմից մյուս կողմն էին գցում. նա բոլորովին անզգա յեր թվում, կարծես ննջում էր։ Վերջապես նա ուղղվեց։

—Յե՞րբ ենք կայարան հասնելու,—հարցրեց նա թառի վրա նստած գեղջուկին։

—Ա՛յ, շուտով, տեր,—ասաց գեղջուկը և սանձերն ավելի ուժգին քաշեց,—հենց որ զառիվերը բարձրանանք, յերկու վերստ կմնա, ոչ ավել... Եյ, դո՛ւ Մտածի՛ր... յես քեզ մտածել ցույց կտամ,—ավելացրեց նա բարձր ձայնով և քաշեց աջ կողքում լծած ձին։

—Դու, կարծես, շատ վատ ես գնում,—նկատեց Ռուդինը,—մենք առավոտվանից քաշ ենք գալիս և ոչ մի կերպ չենք հասնում։ Գոնե մի բան յերգիր.

—Ի՞նչ կարող ես անել, տեր։ Ձիերը, դուք ինքներդ տեսնում եք, հալից ընկած են... բացի այդ՝ շոգ է։ Իսկ մենք յերգել չենք կարող. մենք պոստավարներ չենք... Գառնո՛ւկ, այ գառնո՛ւկ,—հանկարծ գոչեց գեղջուկը՝ դառնալով մուգ դարչնագույն սվիտկա հագած և ծամված տրեխներով մի անցորդի,—մի կողմ քաշվի՛ր, գառնուկ։

—Կառապանիս նայեցե՛ք... Նրա հետևից փրնթփնթաց անցորդը և կանգ առավ։ Մոսկովյան վոսկո՛ր,—ավելացրեց նա հանդիմանությամբ լի ձայնով, գլուխը թափահարեց ու կաղալով առաջ գնաց։

—Ո՞ւր ես գնում, միջին ձիուն ձգելով՝ ծոր տվեց գեղջուկը.—Ա՛խ դու, խորամանկ, կատարյալ խորամանկ...

Տանջված ձիերը վերջապես մի կերպ փոստատան բակը հասան։ Ռուդինը դուրս ցնկավ սայլակից, վճարեց գեղջուկին (որ նրան գլուխ չտվեց և փողը յերկար ժամանակ ափում շուռ ու մուռ էր տալիս՝ հասկացնելու, թե ողու փող քիչ է հասնում) և ճամպրուկն ինքը տարավ կայարանասենյակը։

Իմ մի ծանոթը, որ իր կյանքում շատ է շրջել Ռուսաստանում, դիտողություն է արել, թե յեթե կայարանասենյակի պատերին այնպիսի նկարներ են կախած, որոնք «Կովկասյան գերի» բանաստեղծությունից տեսարաններ կամ ռուս գեներալներ են ներկայացնում, ուրեմն շուտ կարելի յե ձի ստանալ։ Իսկ յեթե նկարների վրա հայտնի խաղամոլ Ժորժ դե-Ժերմանի կյանքն է ներկայացրած, այդ դեպքում ճանապարհորդը շուտ մեկնելու հույս չպետք է ունենա։ Նա

ժամանակ կունենա հաճույքով նայել խաղամոլի յերիտասարդ ժամանակի դանգուր մազափնջին, սպիտակ քացովի բաճկոնին, և չափազանց նեղ ու կարճ շալվարին, նրա մոլեգնած դեմքին, յերբ նա արդեն ծերացած ժամանակ մի թեք տանիքավոր խրճիթում բարձրացրած աթոռով իր վորդուն ե սպանում։ Այն սենյակը, ուր Ռուդինը մտավ, հենց այդ նկարներն եյին կախած «Յերեսուն տարում կամ Թուղթ խաղացողի կյանքից» վերցրած։ Նրա կանչին հայտնվեց քնաթաթախ վերակացուն (ի դեպ՝ մեկն ու մեկը տեսե՞լ ե վոչ քնաթաթախ վերակացու) և, չսպասելով նույնիսկ Ռուդինի հարցին, ալարկոտ ձայնով հայտարարեց, վոր ձի չկա։

—Դուք ինչպե՞ս եք ասում, թե ձիեր չկան,—ասաց Ռուդինը,—և չգիտեք ել, թե յես ուր եմ գնում։ Յես այստեղ յեկել եմ տեղացիների ձիերով։

—Մենք դեպի վոչ մի կողմ ձի չունենք,—պատասխանեց վերակացուն,—իսկ դուք ուր եք գնում։

—... սկ։

—Ձի չկա։—կրկնեց վերակացուն և դուրս յեկավ։

Ռուդինը սրտնեղած մոտեցավ պատուհանին և գլխարկը գցեց սեղանի վրա։ Նա քիչ եր փոխվել, բայց դեղնել եր վերջին յերկու տարում։ Մազերի մեջ տեղ-տեղ սպիտակ թելեր եյին փայլում, աչքերն ել, վոր դեռ շատ գեղեցիկ եյին, կարծես անփայլ եյին դարձել։ Մանր կնճիռները—դառն ու հուզիչ զգացումների հետքերը—ընկած եյին շրթունքների շուրջը, այտերին, քունքերին։

Նրա հագուստը հին եր ու մաշված, և վոչ մի տեղ սպիտակեղեն չեր յերևում։ Ըստ յերևույթին նրա



ծաղկման շրջանն անցել եր։ Նա, ինչպես այգեպաններն են արտահայտվում, սերմ եր դառնում։

Նա սկսեց կարդալ պատերի մակագրությունները... տխրող ճանապարհորդների հայտնի զվարճալիքը... հանկարծ դուռը ճռաց ու ներս մտավ վերակացուն...

—Դեպի ...սկ ձի չկա և դեռ յերկար ժամանակ չի կարող լինել,—ասաց նա,—իսկ այ, դեպի ...ով կա։

—Դեպի ...ով,—խոսեց Ռուդինը,—բայց ներեցեք, այդ իմ ճանապարհի վրա չե։ Յես Պենզա յեմ գնում, իսկ ...ովը կարծեմ Տամբովի ճանապարհի վրա չե։

—Ի՞նչ կա վոր։ Դուք Տամբովից կարող եք գնալ կամ թե չե ... ովից մի կերպ կթեքվեք։

Ռուդինն սկսեց մտածել։

—Թող լինի,—ասաց վերջապես նա,—Պատվիրեցեք ձիերը լծել։ Ինձ համար միևնույն ե, Տամբով կգնամ։

Շուտով ձիերը տվին։ Ռուդինը դուրս բերեց իր ճամպրուկը, բարձրացավ սայլակը, նստեց, առաջվա պես կուչ յեկավ։ Նրա կուչ յեկած ֆիգուրում ինչ-վոր անոգնական և թախծալիորեն հնազանդ մի բան կար... և յեռաձի կառքը, բոժոժներն ընդմիջումներով զնգզնգացնելով, չշտապող վազքով առաջ գլորվեց։

## ՎԵՐՋԱԲԱՆ

Անցավ ևս մի քանի տարի։

Աշնանային սառն օր էր։ Նահանգական Ս. քաղաքի գլխավոր հյուրանոցի արտաքին սանդուխքին մի կառք մոտեցավ։ Նրա միջից թեթև կերպով ձգվելով ու տնքտնքալով մի պարոն դուրս յեկավ՝ վոչ այնքան հասակավոր, բայց արդեն մարմնի այնպիսի պարարտություն ձեռք բերած, վորին սովոր ենք պատկառելի անվանել։ Սանդուխքներով յերկրորդ հարկը բարձրանալով, նա կանգ առավ լայն միջանցքի մուտքի մոտ և իր առջև վոչ վոքի չտեսնելով, բարձր ձայնով համար հարցրեց։ Դուռը մի տեղ թրխկաց, ցածրիկ շիրմայի հետևից դուրս թռավ մի յերկար սպասավոր, և արագ քայլվածքով առաջ անցավ՝ միջանցքի կիսախավարում փայլելով իր վողորկ մեջքով ու հետ ծալած թևքերով։ Համար մտնելով, յեկվորը վրայից ցած գցեց շինելն ու շարֆը, նստեց բազմոցի վրա, և արմունկներով հենվելով ծնկներին, նախ քնից վերկացածի պես շուրջը դիտեց, հետո պատվիրեց կանչել իր ծառային։ Սպասավորը մի խոնարհ շարժում արեց ու չքացավ։ Այս յեկվորը վոչ այլ վոք էր, բայց յեթե Լեժնյովը։ Նորակոչիկների հավաքը նրան գյուղից կանչել էր Ս...



Լեժնյովի ծառան—ջահել-ջահել, գանգրահեր ու կարմիր այտերով, կապույտ լաթագոտիով գոտկավորված գորշ շինելով, փափուկ թաղիքե վոտնամաններով մտավ սենյակ։

—Ահա և տեղ հասանք, յեղբայր,—ասաց Լեժնյովը,—իսկ դու շարունակ վախենում եյիր, թե շրջանակն անիվից դուրս կպրծնի։

—Հասանք,—շինելի օձիքի տակից ծիծաղել ջանալով՝ վրա բերեց ծառան,—բայց ինչու այդ շրջանակը դուրս չպրծավ...

—Վոչ վոք չկա այստեղ,—հնչեց մի ձայն միջանցքում։

Լեժնյովը ցնցվեց և սկսեց ականջ դնել։

Եյ, ով կա այդտեղ,—կրկնեց ձայնը։

Լեժնյովը վեր կացավ, մոտեցավ դռանը և արագ կերպով բացեց։

Նրա առաջ կանգնած էր մի բարձրահասակ մարդ՝ համարյա բոլորովին սպիտակած ու կռացած, բրոնզե կոճակներով հին պլիսե սերթուկ հագին։

Լեժնյովն իսկույն ճանաչեց նրան։

—Ռուդի՛ն,—գոչեց նա հուզված։

Ռուդինը շուռ յեկավ։ Նա չկարողացավ վորոշել Լեժնյովի դիմագծերը, վոր մեջքը դեպի լույսն էր արել և տարակուսանքով նրան էր նայում։

—Դուք ինձ չե՞ք ճանաչում, խոսեց Լեժնյովը։

—Միխայլո Միխայլի՛չ... բացականչեց Ռուդինը և ձեռքը մեկնեց, բայց շփոթվեց և հետ քաշեց։

Լեժնյովն շտապեց իր յերկու ձեռքերով բռնել նրա ձեռքը։

—Մոտեք, մոտեք ինձ մոտ,—ասաց նա Ռուդինին և ներս տարավ նրան իր համարը։

—Ինչպես փոխվել եք դուք,—ասաց նա, մի փոքր լռելով և ակամա ձայնն իջեցնելով։

—Այո, ասում են,—վրա բերեց Ռուդինը՝ հայացքը սենյակում շրջեցնելով։—Տարիքը... Իսկ դա, դուք—վոչինչ։ Ինչպես է ձեր ամուսնու—Ալեքսանդրա... առողջությունը։

—Շնորհակալություն,—լավ է։ Բայց ինչպես եք այստեղ ընկել։

—Յե՞ս։ Յերկար պատմելու բան է։ Ճիշտն ասած՝ այստեղ պատահաբար եմ մտել։ Ծանոթներից մեկին եյի փնտրում։ Ի դեպ՝ յես շատ ուրախ եմ...

—Դուք վորտե՞ղ եք ճաշում։

—Յե՞ս. չգիտեմ։ Մի վորևե պանդոկում։ Յես հենց այսոր էլ այստեղից պետք է դուրս գամ։

—Պե՞տք է։

Ռուդինը նշանակալից կերպով ժպտաց։

—Այո-ս, պետք է։ Ինձ ուղարկում են մեր գյուղը՝ այնտեղ ապրելու։

—Ինձ հետ միասին կճաշեք։

Ռուդինն առաջին անգամ ուղիղ նայեց Լեժնյովի աչքերին։

—Դուք ինձ առաջարկում եք ձեզ հետ ճաշե՞լ,—ասաց նա։

—Այո, Ռուդին, ինչպես առաջ, ընկերաբար։ Կամենու՞մ եք։ Չեյի սպասում, վոր կհանդիպեմ ձեզ և աստված գիտե, թե մեկ էլ յերբ կտեսնվենք։ Հենց այնպես հո չենք բաժանվելու իրարից։

—Համեցե՞ք, յես համաձայն եմ։



Լեժնյովը սեղմեց Ռուդինի ձեռքը, ձայնեց ծառային, ճաշ պատվիրեց և հրամայեց մեկ շիշ շամպայն դնել սառցի մեջ։

---

Ճաշի ընթացքում Լեժնյովն ու Ռուդինն առաջուց պայմանավորվածի պես շարունակ իրենց ուսանողական ժամանակի մասին եյին խոսում, հիշեցին շատ բան ու շատերին—մեռածներին ու կենդանիներին։ Սկզբում Ռուդինը հաճույքով չեր խոսում, բայց միքանի ըմպանակ գինի խմեց և արյունը նրանում յեռաց։ Վերջապես սպասավորը վերջին տեսակ կերակուրը բերեց։ Լեժնյովը վեր կացավ, դուռը փակեց, և դառնալով սեղանի մոտ, նստեց ուղիղ Ռուդինի դիմաց և կզակը կամացուկ հենեց յերկու ձեռքերին։

—Դե, այժմ,—սկսեց նա,—պատմեցեք ինձ այն բոլորը, ինչ վոր իմ ձեզ չտեսնելու որից մինչև այժմ պատահել է ձեզ։

Ռուդինը նայեց Լեժնյովին։

«Աստված իմ»,—մտածում եր նորից Լեժնյովը,—«ինչպե՞ս է փոխվել. խե՜ղճ»։

Ռուդինի դիմագծերը քիչ եյին փոխվել, մանավանդ այն ժամանակից հետո, յերբ մենք տեսանք նրան կայարանում, թեպետ մոտեցող ծերության կնիքն արդեն դրոշմվել եր նրանց վրա։ Բայց նրանց արտահայտությունն այլ կերպ եր դարձել։ Այլ կերպ եյին նայում աչքերը. Նրա ամբողջ եյության մեջ, նրա մերթ դանդաղող, մերթ անկապ կերպով ուժգին շարժումներում, նրա կարծես ջարդված, սառած խոսակցության մեջ արտահայտվում եր վերջնական հոգնածություն,

գաղտնի ու խաղաղ վիշտ՝ շատ տարբեր այն կրակեղծ թախծից, որով նա ցուցամոլում էր, ինչպես առհասարակ նրանով ցուցամոլում է հույսերով ու վստահելի ինքնասիրությամբ լցված ջահելությունը։

—Պատմեմ ձեզ ամեն բան, ինչ որ պատահել է ինձ հետ,—խոսեց Ռուդինը։—Բոլորը պատմել չի կարելի, չարժի էլ... Շատ եմ տանջվել, միայն մարմնով չէ, որ թափառել եմ, հոգով եմ թափառել։ Աստված իմ, ինչում և ումնում ասես, որ չեմ հիասթափվել։ Ո՛ւմ հետ ասես, որ չեմ մոտեցել... Այո, ո՛ւմ հետ,—կրկնեց Ռուդինը—նկատելով, որ Լեժնյովը մի առանձին վշտակցությամբ է նայում իր դեմքին։ Քանի՜ անգամ են իմ սեփական խոսքերը զզվելի թվացել ինձ—չեմ ասում միայն իմ շրթունքներում, այլև այն մարդկանց շրթունքներում, որոնք համակարծիք յեն յեղել ինձ հետ։ Քանի՜ անգամ եմ անհամբերությունից, յերեխայի գրգռականությունից անցել ձիու բութ անըզգայության, որը պոչն էլ չի շարժում, յերբ մտրակն է նրան հերձում... Քանի՜ անգամ եմ ուրախացել, հուսադրվել, թշնամացել ու ստորացել զուր տեղը։ Քանի՜ անգամ եմ դուրս թռել որպես բազե, և վերադարձել որպես խխունջ՝ սողալով, որի խեցին տրորել, ջարդել են... Որտե՞ղ չեմ յեղել, ո՞ր ճանապարհներով չեմ անցել... Իսկ լինում են ճանապարհները ցեխոտ,—ավելացրեց Ռուդինը և թեթև կերպով շուռ յեկավ... Դուք գիտեք... շարունակեց նա։

—Լսեցե՛ք,—ընդհատեց նրան Լեժնյովը,—մի ժամանակ մենք իրար դու էինք ասում... Ուզո՞ւմ ես—հինը վերանորոգենք... Խմենք դու-ի կենացը։

Ռուդինը ցնցվեց, տեղից բարձրացավ, իսկ աչքերում մի բան փայլեց, որ բառերն արտահայտել չեն կարող։

— Խմե՛նք,—ասաց նա,—շնորհակալություն քեզ, յեղբայր, խմե՛նք։

Լեժնյովն ու Ռուդինը մի-մի ըմպանակ խմեցին։

— Դու գիտես,—նորից սկսեց Ռուդինը՝ ժպտալով և «դու» բառը շեշտելով.—մեջս մի տեսակ որդ կա, որ կրծում և ուտում է ինձ, և մինչև վերջը հանգիստ չի թողնի ինձ։ Նա ինձ հրում է դեպի մարդիկ, որոնք սկզբում յենթարկվում են իմ ազդեցությանը, իսկ հետո...

Ռուդինը ձեռքը շարժեց օդում։

— Այն օրից, յերբ յես բաժանվեցի ձեզնից... քեզնից, շատ բան եմ զգացել ու կրել... սկսել եմ ապրել, քանի անգամ նոր բանի յեմ կպել—և ահա տեսնում ես։

— Տոկունություն չես ունեցել... կարծես ինքն իրեն ասաց Լեժնյովը։

— Ինչպես ասում ես՝ տոկունություն չեմ ունեցել։ Յես յերբեք որևէ բան կառուցել չեմ կարողացել և դժվար էլ է, յեղբայր, կառուցելը, յերբ ոտներիդ տակ հող չկա, յերբ ինքդ պետք է քո հիմքն ստեղծես։ Իմ բոլոր արկածները, այսինքն՝ իմ բոլոր անհաջողությունները յես քեզ չեմ նկարագրի։ Քեզ միայն յերկու-յերեք դեպք կհաղորդեմ... իմ կյանքից այն դեպքերը, յերբ կարծես հաջողությունն արդեն ժպտում էր ինձ, ավելի ճիշտը՝ յերբ յես ինքս էի սկսում հաջողության հույս ունենալ,—որ բնավ միևնույն բաները չեն...

Ռուդինը հետ գցեց իր սպիտակած և արդեն նոս-

քրացած գանգուրները ձեռքի այն միևնույն շարժումով, վորով նա մի ժամանակ հետ եր գցում իր մութ և խիտ գանգուրները։

— Դե, լսի՛ր,—սկսեց նա,—Մոսկվայում յես մտերմացա մի բավական տարորինակ պարոնի հետ։ Նա շատ հարուստ եր և ընդարձակ կալվածներ ուներ։ Չեր ծառայում։ Գլխավորը—նրա միակ կիրքը դեպի գիտությունը, ընդհանրապես դեպի գիտությունն ունեցած սերն եր։ Մինչև այժմ յես չեմ կարողանում հասկանալ, թե ինչու յե այդ կիրքը նրանում յերևան յեկել։ Այդ նրան այնքան եր սազում, վորքան թամքը՝ կովին։ Նա ինքը մտքի բարձրության վրա հազիվ եր պահում իրեն և խոսել համարյա չեր կարողանում, միայն աչքերն եր արտահայտիչ կերպով ման ածում և նկատելի կերպով գլուխն եր շարժում։ Յես, յեղբայր, նրանից ավելի անտաղանդ և նրա բնույթից ավելի խղճուկ վոչինչ չեմ տեսել։ Սմոլենսկի նահանգում այդպիսի տեղեր կան—ավազ և ուրիշ վոչինչ, հազվադյուտ դեպքերում ել խոտ, վորը վոչ մի կենդանի չի ուտում։ Ձեռքից վոչինչ չեր գալիս,—ամեն բան ձեռքից սողում, հեռու յեր ընկնում, իսկ նրա խելքը գնում եր բոլոր հեշտ բաները դժվար դարձնելու համար։ Յեթե այդ նրա կարգադրությունից կախված լիներ, նրա մոտ մարդիկ կռունկով կուտեյին, հիրավի։ Նա անխոնջ կերպով աշխատում, գրում ու կարդում եր։ Նա գիտությանը հետևում եր մի տեսակ համառ հաստատակամությամբ, սարսափելի համբերությամբ։ Անհագին ինքնասիրություն ուներ, յերկաթի յել բնավորություն ուներ։ Նա ապրում եր միայնակ և տարորինակ մարդու համբավ ուներ։ Յես նրա հետ ծանոթացա ու...



դուր յեկա նրան։ Յես, խոստովանում եմ, շատ հավանեցի նրան, բայց նրա յեռանդն ինձ հուզում եր։ Դրա հետ միասին՝ նա այնպիսի միջոցներ ուներ, նրա միջոցով վորքան բարիք կարելի յեր գործել, վորքան եյական բարիք գործել... Յես բնակություն հաստատեցի նրա մոտ և վերջապես հետը գնացի նրա գյուղը։ Պլաններս, յեղբայր, հսկայական եյին։ Յես յերազում եյի զանազան կատարելագործումների, նորամուծությունների մասին...

— Ինչպես Լասունսկայայի մոտ, հիշում ես,— բարեհոգի ժպիտով նկատեց Լեժնյովը։

— Վո՛չ։ Յես այնտեղ գիտեյի հոգուս մեջ, վոր իմ խոսքերից վոչինչ չի դուրս գա, իսկ այստեղ... այստեղ իմ առջև բոլորովին այլ դաշտ եր բացվում։ Յես հետս հողագիտական գրքեր տարա... ճիշտ ե, յես դրանցից վոչ մեկը մինչև վերջը չկարդացի... և գործի կպա։ Սկզբում գործը չեր գնում, ինչպես սպասում եյ եյի, իսկ հետո կարծես գնում եր։ Իմ նոր բարեկամը միշտ լռում ու նայում եր, չեր խանգարում ինձ, այսինքն՝ վորոշ չափով չեր խանգարում ինձ։ Նա ընդունում և կատարում եր իմ առաջարկները, սակայն համառությամբ, դժվարությամբ, գաղտնի անվստահությամբ և միշտ դեպի իր կողմն եր տաշում։ Նա իր յուրաքանչյուր միտքը շատ թանկ եր գնահատում։ Ջանք գործ դնելով հասնում եր այդ մտքին, ինչպես պստիկ միջատը՝ քոլի ծայրին. և նստում, նստում ե նրա վրա— կարծես թևերը փռում ու թռչելու յե պատրաստվում, բայց հանկարծ վայր ե ընկնում ու նորից բարձրանում... Այս բոլոր համեմատություններից մի զարմանար, դեռ այն ժամանակ դրանք յեռում եյին իմ հո-

գում։ Ահա այդպես ել թփռտացել եմ յերկու տարի։ Զնայելով իմ բոլոր ջանքերին, գործը վատ եր առաջ գնում։ Յես սկսեցի հոգնել, թարեկամս ձանձրացնում եր ինձ. յես սկսեցի խայթել նրան. Նա հաստ վերմակի նման ճնշում եր ինձ։ Նրա անվստահությունը փոխարկվեց խուլ գրգռվածության, չարակամ զգացմունք պաշարեց մեզ յերկուսիս, մենք այլես վոչ մի բանի մասին չեյինք կարողանում խոսել. Նա աննկատելի կերպով, բայց անընդհատ աշխատում եր ապացուցել ինձ, վոր չի յենթարկվում իմ ազդեցությանը, իմ կարգադրությունները կամ աղավաղվում, կամ բոլորովին վոչնչացվում եյին... Վերջապես յես նկատեցի, վոր յես պարոն կալվածատիրոջ մոտ մասավոր վարժությունների տեսակետից վորպես ձրիակյաց եմ։ Դառն եր ինձ համար զուր տեղը ժամանակ և ուժեր վատնելը։ Դառն եր զգալ, վոր յես նորից ու նորից խաբված եմ իմ սպասելիքներում։ Յես շատ լավ գիտեյի, թե մեկնելով ինչ եյի կորցնում, բայց չեյի կարող ինքս ինձ հետ հաշտվել, և մի օր, մի գզվելի ու ծանր տեսարանի հետևանքով, վորին յես վկա յեղա, և վորն իմ բարեկամին չափազանց աննպաստ կողմից ցուցադրեց, յես նրա հետ վերջնականապես կռվեցի ու հեռացա. Թողեցի այդ բծախնդիր աղային, վորը թխված եր տափաստանային ալյուրի և գերմանական դոշաբի խառնուրդից...

— Այսինքն թողեցիր առույա հացի կտորը,— ասաց Լեժնյովը և յերկու ձեռքը դրեց Ռուդինի ուսին։

— Այո, յես դատարկ տարածության մեջ նորից թեթև ու մերկ հայտնվեցի, այսինքն թռիր՝ ուր կուզես... Ե՛հ, խմենք։



— Քո կենացը,— ասաց Լեժնյովը, բարձրացավ ու համբուրեց Ռուդինի ճակատը։ Քո կենացը և Պոկորսկու հիշատակին... Նա նույնպես կարողանում եր մուրացկան մնալ։

— Ահա, այս ել քեզ իմ արկածների առաջին համարը,— մի փոքր անց սկսեց Ռուդինը։— Շարունակեմ, ինչ ե։

— Շարունակիր, խնդրում եմ։

— Ե՞հ, խոսել ել չեմ ուզում։ Հոգնել եմ խոսելուց, յեղբայր... սակայն, թող այդպես լինի... Դես ու դեն թափառելուց հետո, ի դեպ՝ յես կարող եյի քեզ պատմել, թե ինչպես յես քարտուղարության ընկա մի բարեհոգի բարձրաստիճան անձի մոտ, և թե դրանից ինչ դուրս յեկավ. բայց այդ մեզ հեռու կտաներ... Դես ու դեն թափառելուց հետո, յես վերջապես վճռեցի... մի ծիծաղիր, խնդրեմ... գործի մարդ, գործնական դառնալ։ Այդպիսի առիթ հանդիպացավ, յես մտեցա մեկի հետ... դու գուցե լսած լինես նրա մասին... Կուրբեև... Վո՞չ։

— Վո՛չ, չեմ լսել։ Բայց ների՛ր, Ռուդին, ինչպե՞ս ե, վոր դու, քո խելքով, գլխի չես ընկել, վոր քո գործըն այն չե, վոր դառնաս... ների՛ր բառախաղի համար... գործի մարդ։

— Գիտեմ, յեղբայր, վոր այն չե, ի դեպ՝ հապա վո՞րն ե... Բայց յեթե դու Կուրբեևին տեսնեյիր։ Դու, խնդրում եմ, նրան վորպես մի դատարկ շատախոս չներկայացնես։ Ասում են՝ յես մի ժամանակ պերճախոս եմ յեղել։ Յես նրա առաջ ուղղակի վոչինչ եյի։ Նա զարմանալի գիտուն մարդ եր, իմացող, արդյունաբերական և առևտրական ձեռնարկություններում գլուխ,

յեղբայր, ստեղծագործող գլուխ։ Գլխում շարունակ ամենահանդուգն, ամենաանսպասելի նախագծեր եյին յեռում։ Յես և նա միացանք և վճռեցինք մեր ուժե-րը հանրոգուտ գործի վրա դնել...

— Ի՞նչ գործի, թույլ տուր իմանալ։

Ռուդինն աչքերը ցած գցեց։

— Դու կծիծաղես։

— Ինչու, վո՛չ, չեմ ծիծաղի։

— Մենք վճռել եյինք Կ. նահանգի մեկ գետը նա-վարկելի դարձնել,— անհարմար ժպիտով ասաց Ռու-դինը։

— Ա՜յ թե ինչ. ուրեմն այդ Կուրբեևը կապիտա-լի՞ստ եր։

— Նա ինձնից չքավոր եր,— վրա բերեց Ռուդինը և հանդարտ կերպով խոնարհեց իր ծեր գլուխը։

Լեժնյովը քրքջաց, բայց հանկարծ կանգ առավ և բռնեց Ռուդինի ձեռքը։

— Ներիր ինձ, յեղբայր, խնդրում եմ,— ասաց նա,— բայց այդ յես յերբեք չեյի սպասի։ Հետո. ձեր այդ ձեռնարկությունն այնպես ել մնաց թղթի վրա՞։

— Վոչ բոլորովին։ Իրագործման սկիզբը յեղավ։ Մենք բանվորներ վարձեցինք և... գործի կպանք։ Բայց այստեղ տարբեր խոչընդոտներ հանդիպեցին.— նախ՝ ջրաղացատերերը մեզ վոչ մի կերպ չեյին ուզում հասկանալ, բացի դրանից ել՝ մենք առանց մեքենայի չեյինք կարողանում ջրին հաղթահարել. իսկ մեքե-նայի համար փող չկար։ Վեց ամիս մենք գետնափոր-ներում եյինք ապրում։ Կուրբեևը միայն հացով եր սնվում, յես ել կուշտ չեյի ուտում։ Ասենք՝ յես դրա համար չեմ ցավում,— բնությունն այնտեղ հրա-



շալի յեր։ Մենք չարչարվեցինք, չարչարվեցինք, համո-զեցինք առևտրականներին, նամակներ գրեցինք, շրջա-բերականներ։ Վերջացավ նրանով, վոր յես իմ վերջին գրոշը դրի այդ նախագծի վրա։

— Ե՛,— նկատեց Լեժնյովը,— յես կարծում եմ քո վերջին գրոշը դնելը դժվար չեր։

— Դժվար չեր, ճիշտ ե։

Ռուդինը նայեց պատուհանին։

— Իսկ նախագիծը, աստված ե վկա, վատ չեր և կարող եր ահագին ոգուտներ բերել։

Ի՞նչ յեղավ այդ Կուրբեևը,— հարցրեց Լեժնյովը։

— Նա՞։ Նա այժմ Սիբիրումն ե, վոսկի արդյունա-բերող ե դարձել։ Յեվ դու կտեսնես — նա իրեն համար կարողություն կդիզի, նա չի կորչի։

— Գուցե. բայց դու, այ, հավանորեն քեզ համար կարողություն չես դիզի։

— Յե՞ս։ Ի՞նչ արած։ Ասենք՝ յես գիտեմ. քո աչքում յես միշտ դատարկ մարդ եմ յեղել։

— Դո՞ւ։ Բավական ե, յեղբայր... Ժամանակ կար, ճիշտ ե, յերբ միայն քո մութ կողմերն եյին աչքիս ընկնում. սակայն այժմ, հավատա ինձ, սովորել եմ գնահատել քեզ։ Դու քեզ համար հարստություն չես դիզի... իսկ յես դրա համար սիրում եմ քեզ...

Ռուդինը թույլ կերպով ծիծաղեց։

— Իսկապե՞ս։

— Յես դրա համար քեզ հարգում եմ,— կրկնեց Լեժնյովը,— հասկանո՞ւմ ես արդյոք ինձ։

Յերկուսն ել լռեցին։

— Ի՜նչ արած. անցնե՞մ յերրորդ համարին,— հարց-րեց Ռուդինը։

— Շնորհ արա։

— Խնդրեմ։ Երրորդ և վերջին համարը։ Այս համարից ես միայն նոր եմ ազատվել։ Բայց ես քեզ չձանձրացրի՞ արդյոք։

— Խոսիր, խոսիր։

— Տեսնո՞ւմ ես,— սկսեց Ռուդինը,— ես մեկ անգամ պարապ ժամանակ մտածեցի… պարապ ժամանակ ես միշտ շատ եմ ունեցել… ես մտածեցի.— գիտություն շատ ունեյի, բարիքի ցանկություն՝ որքան ուզես… Լսի՛ր, չէ՞ որ դու էլ ես չես ժխտի, որ ինձանում բարիքի ցանկություն՝ որքա՜ն ուզես…

— Իհարկե՛։

— Մնացած բոլոր կետերում ես շատ կամ քիչ չափով կորցրել եմ… Ինչո՞ւ չգտնեմ մանկավարժ, կամ՝ պարզ ասած — ուսուցիչ, քան այսպես ղուր ապրեմ…

Ռուդինը կանգ առավ և հառաչեց։

— Փոխանակ զուր ապրելու, ավելի լավ չէ՞ աշխատեմ տալ ուրիշներին այն, ինչ որ ես գիտեմ, գուցե նրանք իմ գիտելիքներից որոշ օգուտ քաղեն։ Վերջապես իմ ընդունակությունները սովորական չեն, լեզվի յեմ տիրապետում… Ահա և վճռեցի ինձ այս նոր գործին նվիրել։ Տեղ գտնելն ինձ համար բավական հոգս էր,— մասնավոր դասեր տալ չէյի ուզում, ստորին դպրոցներում ես անելիք չունեյի։ Վերջապես կարողացա դասատվի պաշտոն գտնել այստեղի գիմնազիայում։

— Ինչի՞ դասատվի,— հարցրեց Լեժնյովը։

— Ռուսական բանահյուսության դասատվի. կասեմ քեզ, որ ես ոչ մի գործի այնքան տաք չեմ կպել, որքան այս գործին։ Պատանիության վրա ազդելու միտքն ինձ ոգևորում էր։ Երեք շաբաթ նստեցի ներածական դասախոսությունը կազմելու վրա։

— Չունե՞ս այդ,— ընդհատեց Լեժնյովը։

— Ո՛չ, չգիտեմ ուր է կորել։ Վատ դուրս չեկավ և դուր յեկավ։ Կարծես այժմ՝ տեսնում եմ իմ ունկնդիրների դեմքերը,— բարի, յերիտասարդ, անկեղծ ուշադրություն, մասնակցություն, նույնիսկ հիացմունքի արտահայտությամբ։ Ամբիոն բարձրացա, տենդոտ կերպով դասախոսությունս կարդացի. կարծում եյի՝ այն բավական կլինի ավելի քան մեկ ժամի համար, բայց ես քսան րոպեյում վերջացրի։ Հենց այդտեղ էլ նստած էր տեսուչը — մի չոր ծերուկ՝ արծաթե ակնոցներով ու կարճ կեղծ ժամով։ Նա յերբեմն գլուխը դեպի իմ կողմն էր կռացնում։ Երբ ես վերջացրի ու բազկաթոռից ցած թռա, նա ինձ ասաց. «Լավ է, միայն մի փոքր բարձր է, քիչ էլ մութն է, նյութի մասին էլ քիչ բան ասվեց»։ Իսկ գիմնազիստները հարգալից հայացքով ճանապարհեցին ինձ… իսկապես։ Այ թե ինչով է թանկ յերիտասարդությունը։ Երկրորդ դասախոսությունը ես բերի գրած, յերրորդը նույնպես… հետո սկսեցի հանպատրաստից ստ՛ ղծագործել։

— Յեվ հաջողություն ունեցա՞ր,— հարցրեց Լեժնյովը։

— Մեծ հաջողություն ունեցա։ Լսողները խմբերով եյին գալիս։ Ինչ որ հոգուս մեջ կար, ես տալիս եյի նրանց։ Նրանց մեջ յերեք-չորս տղաներ կային՝ իրոք որ զարմանալի, մյուսներն ինձ վատ եյին հասկանում։ Սակայն պետք է խոստովանել, որ նրանք էլ, որոնք ինձ հասկանում եյին, յերբեմն

իրենց հարցերով ինձ շփոթեցնում եյին։ Բայց յես չեյի վհատվում. սիրելը — սիրում եյին ինձ բոլորը։ Կրկնությունների ժամանակ յես բոլորին լիառատ թվանշաններ եյի դնում։ Բայց այստեղ իմ դեմ բանսարկանք սկսվեց... բայց վո՛չ... վոչ մի բանսարկանք չկար, այլ յես ուղղակի իմ շրջանը չեյի ընկել։ Յես նեղում եյի ուրիշներին, ինձ ել նեղում եյին։ Յես գիմնազիստներին այնպես եյի կարդում, ինչպես ուսանողների համար ել միշտ չեյին կարդում։ Իմ ունկնդիրներն իմ դասախոսություններից քիչ բան եյին ստանում... փաստերն ինքս վատ գիտեյի։ Դրան ավելացրած այն, վոր յես ինձ համար նշանակած անելիքների շրջանակով չեյի բավականանում։ Այս արդեն, դու գիտես, իմ թուլությունն ե։ Յես արմատական բարեփոխություններ եյի ուզում, և յերդվում եմ քեզնով, այդ բարեփոխությունները և՛ գործնական եյին, և՛ հեշտ։ Յես հույս ունեյի այդ բոլորն անցկացնել դիրեկտորի միջոցով — մի բարի և ազնիվ մարդ, վորի վրա յես սկզբում ազդեցություն ունեյի։ Նրա կինն ինձ ոգնում եր։ Յես, յեղբայր, կյանքումս այդպիսի կանանց շատ չեմ պատահել։ Նա արդեն մոտ քառասուն տարեկան եր, բայց հավատում եր բարուն, տասնուհինգ տարեկան աղջկա պես սիրում եր ամեն գեղեցիկ բան, և չեր վախենում արտահայտել իր համոզմունքները ում մոտ ել լիներ։ Յես յերբեք չեմ մոռանա նրա ազնիվ հիացմունքն ու մաքրությունը։ Նրա խորհրդով յես պլան գրեցի... Բայց այստեղ իմ վոտքի տակը քանդեցին, սևացրին ինձ նրա առաջ։ Առանձնապես ինձ վնասեց մաթեմատիկայի ուսուցիչը — մի փոքրիկ մարդ, սուր, թունոտ և վոչնչի չհավատա-



ցող — Պիգասովի պես, միայն նրանից շատ ավելի գործունյա... Ի դեպ՝ ինչպե՞ս ե Պիգասովը, կենդանի՞ յե։

— Կենդանի յե և, յերևակայիր, ամուսնացել ե մի քաղքենուհու հետ, վորը, ասում են, ծեծում ե նրան։

— Տեղն ե։ Իսկ Նատալիա Ալեքսեևնան առողջ ե։

— Այո։

— Բախտավո՞ր ե։

— Այո՛։

Ռուդինը լռեց։

— Հա, ինչի՞ մասին եյի խոսում... Այո՛, մաթեմատիկայի ուսուցչի մասին։ Նա ատում եր ինձ, իմ դասախոսությունները համեմատում եր հրթիռի հետ, յուրաքանչյուր վոչ բոլորովին պարզ արտահայտությունից կպչում եր, նույնիսկ մեկ անգամ շփոթեցրեց ինձ XVI դարի մի հիշատակարանի նկատմամբ... իսկ վոր գլխավորն ե, նա կասկածի տակ եր առնում իմ մտադրությունները։ Իմ վերջին սապնաբշտիկը դիպավ նրան, վորպես գնդասեղի, և պայթեց։ Տեսուչը, վորի հետ յես հենց սկզբից համերաշխ չեղա, իմ դեմ հանեց դիրեկտորին։ Տեղի ունեցավ միջադեպ. յես չուզեցի զիջել, տաքացա, գործը հասավ իշխանության. յես հարկադրված եյի հրաժարական տալ։ Յես սրանով չսահմանափակվեցի, ուզեցի ցույց տալ, վոր ինձ հետ չի կարելի այդպես վարվել... Բայց ինձ հետ կարելի յեր ուզածի պես վարվել... Յես հիմա այստեղից պետք ե մեկնեմ։

Լռություն տիրեց։ Յերկու բարեկամները նստել եյին՝ գլուխները կախ։

Առաջինը խոսեց Ռուդինը։

— Այո, յեղբայր, — սկսեց նա, — յես այժմ կարող

եմ Կոլցովի հետ միասին ասել. «Իմ յերիտասար-դություն. մինչև ո՞ւր ինձ հասցրիր, կյանքս կաշ-կանդեցիր, վոր այլևս քայլ անելու տեղ չմնաց»... Մինչդեռ՝ մի՞թե յես վոչ մի բանի պետք չեյի, մի՞թե ինձ համար աշխարհում վոչ մի գործ չկա։ Հաճախ եմ յես այդ հարցն ինձ տվել, և վորքան էլ աշխա-տել եմ ինձ ստորացնել իմ սեփական աչքում, չեմ կարողացել մեջս այնպիսի ուժի ներկայություն զգալ, վոր բոլոր մարդկանց տված չէ։ Այս ուժերն ինչու-յեն անպտուղ մնում։ Յեվ ա՛յ թե ելի ինչ—հիշում ես, յերբ յես ու դու արտասահմանում եյինք, յես այդ ժամանակ ինքնավստահ եյի և կեղծ... Կարծես յես այն ժամանակ պարզ չեյի գիտակցում, թե ինչ եմ ուզում. արբում եյի բառերով և հավատում եյի յերազներիս։ Բայց այժմ, յերդվում եմ, կարող եմ բարձր ամենքի առաջ արտահայտել, թե ինչ եմ ուզում։ Յես թագցը-նելու վոչինչ չունեմ, յես միանգամայն, և բառի իս-կական իմաստով, բարեմիտ մարդ եմ. յես ինձ զգում եմ, ուզում եմ հանգամանքներին հարմարվել, քիչ եմ ուզում, ուզում եմ մոտավոր նպատակի հասնել, թե-կուզ չնչին օգուտ բերել։ Վո՛չ. չի հաջողվում։ Ի՞նչ է նշանակում այս։ Ի՞նչն է խանգարում ինձ՝ ապրել և գործել, ինչպես ուրիշները... յես այժմ միայն սրա մասին եմ յերազում։ Բայց հազիվ կարողանում եմ վո-րոշ դրության մեջ ընկնել, վորոշ կետի վրա կանգնել, ճակատագիրն այդպես էլ հեռու յե վանում ինձ նրա-նից... Յես սկսել եմ վախենալ նրանից—իմ ճակատա-գրից... Այս բոլորն ինչի՞ց է։ Լուծիր ինձ համար այդ հանելուկը։

— Հանելո՞ւկը,—կրկնեց Լեժնյովը,—այո՛, այդ ճըշ-



մարիտ է։ Դու ինձ համար ես միշտ հանելուկ ես յե-ղել։ Նույնիսկ ջահել ժամանակ, յերբ վորևէ մանրիկ վարմունքից հետո, հանկարծ այնպիսի խոսք եյիր ասում, վոր սիրտ էր ցնցվում, հետո՝ նորից եյիր սկսում... Դե, դու գիտես, թե ինչ եմ ուզում ասել... Նույնիսկ այն ժամանակ յես քեզ չեյի հասկանում, դրա համար էլ դադարեցի քեզ սիրել... Քեզնում այն-քան շատ ուժ կա, ձգտումդ դեպի իդեալ այնքան ան-խոնջ է...

Բառե՛ր, բոլորը բառեր։ Գործեր չկային,—ընդ-հատեց Ռուդինը։

— Գործեր չկային. ախր ի՞նչ գործեր...

— Ինչ գործե՞ր։ Ինչպես հիշում ես, Պրյաժենցևը կույր տանտիկնին և նրա բոլոր ընտանիքին իր աշ-խատանքով կերակրում էր... Ահա քեզ գործ։

— Այո՛, բայց բարի խոսքը նույնպես գործ է։

Ռուդինը լուռ նայեց Լեժնյովին և գլուխը հան-դարտ օրորեց։

Լեժնյովը ուզում էր մի բան ասել և ձեռքը յերե-սին քսեց։

— Այդպես ուրեմն, դու գյուղն ես գնում,—հարց-րեց նա վերջապես։

— Գյուղը։

— Բայց մի՞թե քո գյուղը մնացել է։

Ինչ-վոր մի բան մնացել է։ Յերկուսուկես հոգի։ Մեռնելու համար անկյուն կա։ Յերևի դու այս րո-պեյիս մտածում ես. «Այստեղ էլ առանց ֆրազների յոլա չգնաց»։ Ֆրազն ինձ սպանեց, նա կերավ ինձ. մինչև վերջը յես նրանից բաժանվել չկարողացա։ Բայց այն, ինչ վոր ասացի, ֆրազ չէ։ Ֆրազներ չեն,

յեղբայր, այս սպիտակ մազերը, այս կնճիռները, այս պատռված արմունկները փրազներ չեն։ Դու միշտ խիստ էիր իմ նկատմամբ, և դու իրավացի էիր. իսկ այժմ խստության ժամանակ չէ, յերբ ամեն ինչ վերջացած է, և՛ կանթեղում յուղ չկա, և՛ կանթեղն է ջարդված, և՛ ուր որ է՝ պատրույգը կմխա... Վերջապես մահը պետք է հաշտեցնի, յեղբա՛յր։

Լեժնյովը վեր թռավ։

— Ռուդի՛ն,—բացականչեց նա,—ինչու յես դու այդ ասում ինձ։ Ինչո՞վ եմ արժանացել դրան։ Յես ի՞նչ մի առանձին դատավոր եմ, և ինչ մարդ կլինեյի, յեթե քո ներս ընկած այտերն ու կնճիռները տեսնելով, փրազ խոսքը գլուխս բերեյի։ Ուզում ես իմանալ, թե յես ինչ եմ մտածում քո մասին։ Համեցեք։ Յես մտածում եմ—ահա մի մարդ... իր ընդունակություններով ինչե՛ր ասես՝ չէր հասնի. այժմ յերկրային ինչ բարիք ասես՝ չէր ունենա —յեթե ցանկանար... Իսկ յես նրան հանդիպում եմ քաղցած, անոթևան...

— Յես կարեկցություն եմ հարուցում քո մեջ,—խուլ կերպով շշնջաց Ռուդինը։

— Վո՛չ, դու սխալվում ես։ Դու ինձ հարգանք ես ներշնչում—ահա թե ինչ։ Ո՞վ է քեզ խանգարել տարիներ տարիների հետևից անցկացնել քո բարեկամ այդ կալվածատիրոջ մոտ, որը—խորապես համոզված եմ, յեթե միայն դու ցանկանայիր քծնել, հարմարվել նրան, քո դրությունը կկայունացներ։ Ինչու դու չե-մե՛ր կարող յերկար մնալ գիմնազիայում. ինչու դու, տարօրինակ մարդ, ինչ մտքերով էլ գործ ես սկսել, ամեն անգամ անպատճառ վերջացրել ես նրանով, որ դու-



Տապալել ես քո անձնական շահերը, արմատներ չես թողել չար, թեկուզ պարարտ հողում։

— Յես յերնջնակ (перекати-поле) եմ ծնվել,—շարունակեց Ռուդինն՝ ընկճված ծիծաղով։—Յես կանգ առնել չեմ կարող։

— Այդ ճիշտ է, բայց դու չես կարող կանգ առնել վոչ թե նրա համար, վոր մեջդ վորդ է ապրում, ինչպես սկզբում ասացիր ինձ... Մեջդ վորդ չի ապրում, և վոչ էլ պարապ անհանգստության վոգի. մեջդ դեպի ճշմարտությունը յեղած կրակն է վառվում, և ըստ յերևույթին, չնայած բոլոր բարբաջանքներին, նա քեզնում ավելի ուժեղ է վառվում, քան շատերի մեջ, վորոնք իրենց նույնիսկ յեսամոլ չեն կոչում, իսկ քեզ հավանորեն բանսարկու յեն անվանում։ Յես առաջինը քո տեղ վաղուց կստիպեյի լռել մեջս այդ վորդին և կհաշտվեյի ամեն բանի հետ. իսկ քեզնում նույնիսկ մաղձ չի ավելացել, և դու, յես հավատացած եմ, հենց այսօր, իսկույն պատրաստ ես պատանու պես նոր աշխատանքի կպչել։

Վո՛չ, յեղբայր, յես այժմ հոգնած եմ,—ասաց Ռուդինը,—ինձնից այդքանը բավական է։

— Հոգնած եմ։ Ուրիշը վաղուց մեռած կլիներ։ Դու ասում ես մահը հաշտեցնում է, իսկ կյանքը, կարծում ես, չի՞ հաշտեցնում։ Ով ապրել է և ներողամիտ չի դարձել դեպի ուրիշները, այդպիսին ինքն արժանի չի ներողամտության։ Իսկ ո՞վ կարող է ասել, թե ինքը ներողամտության կարիք չունի։ Դու արել ես, ինչ վոր կարող էիր, պայքարել ես, քանի կարող էիր... Ավելին ի՞նչ ես ուզում։ Մեր ճանապարհները բաժանվեցին...

տնում սենյակում, կանգնեց պատուհանի առաջ, մտա-ծեց ու կիսաձայն կերպով ասաց՝ «Ահեղծ» և սեղանի առաջ նստելով՝ սկսեց կնոջը նամակ գրել։

Իսկ դուրսը քամի բարձրացավ, վորը վոռնում էր ջարդուշաղ վոռնոցով, ծանր ու չար կերպով զարկ-վելով ընդացող ապակիներին։ Հասավ յերկար, աշ-նանային գիշերը։ Լավ է նրա համար, ով այսպիսի գիշերներին նստած է իր տան հարկի տակ, ով տաք անկյուն ունի... Յեվ թող աստված ոգնի բոլոր անո-թևան թափառականներին։

---

Մի շոգ կեսորի, 1848 թվականի հունիսի 26-ին, Փարիզում, յերբ արդեն «ազգային արհեստանոցների» ապստամբությունը համարյա ճնշված էր, սուրբ Անտո-նիոսի արվարձանի նեղ նրբանցքներից մեկում գծային զորքի մեկ գումարտակ վերցնում էր բարիկադը։ Թըն-դանոթային միքանի կրակոցներ արդեն ջարդուփշուր եյին արել նրան։ Նրա կենդանի մնացած պաշտպան-ները լքում եյին նրան ու միայն սեփական փրկու-թյան մասին եյին մտածում, յերբ հանկարծ նրա ամենաբարձր տեղում, շուռ տված հանրակառքի ջարդ-ված թափքի (кузов) վրա յերևաց մի բարձրահասակ մարդ՝ հին սերթուկով, կարմիր շարֆով գոտևորված, ալխատակ, գզգզված մազերի վրա ծղոտե գլխարկով։ Մի ձեռքում նա կարմիր դրոշակ էր բռնել, մյուսում՝ ծուռ և բութ սուր, և բարակ ու լարված ձայնով ինչ-վոր բան էր կանչում, վեր մագլցելով և դրոշակն ու սուրը ճոճելով։ Վենսենյան հրաձիգը նշանի առավ նրան և կրակեց... Բարձրահասակ մարդը վայր գցեց դրոշակը և, ինչպես պարկ, յերեսնիվայր գլորվեց ներքև, կար-



ծես մեկին յերկրպագում էր... Գնդակն անցավ նրա հենց սրտի միջից։

Tiens!—ասաց փախչող մի insurgés մյուսին.—On vient de tuer le Polonais![1])

— Bigre![2])—պատասխանեց նա, և յերկուսն էլ նետվեցին տան նկուղը, վորի բոլոր կրկնափեղկերը ծածկած եյին և պատերը փայլում եյին գնդակների և ռումբերի հետքերով։

Այդ «Polonais»-ը Դմիտրի Ռուդինն էր։

---

1) Տես, լեհին սպանեցին (Ֆր.)։ Insurgé—ապստամբ (Ֆր.)։
2) Գրողը տանի (Ֆր.)։

Խմբագիր՝ Աշ. ՂԱԶԱՐՅԱՆ
Տեխ. խմբ.՝ Ս. ԱԼԹՈՒՆՅԱՆ
Սրբագրիչ՝ Խ. ԱՅՎԱԶՅԱՆ

Գլավլիտի լիազոր՝ Ն. 2207
Հրատ. 4574, պատվեր № 298, տիրաժ 5000
Հանձնված է արտադրության 20 հունվարի 1939 թ.
Ստորագրված է տպագրության համար 5 հուլիսի 1939 թ.

---

Պետհրատի 2-րդ տպարան, Երևան, Նալբանդյան № 5

ՀՀ Ազգային գրադարան
NL0316793